Այսնյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

№ 22-23 (158-159) • 27 օգոստոսի 2008թ. • էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru • Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Հիսուն տարի առաջ՝ 1958թ. օգոստոսի 21-ին, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության հրամանագրով Քաջարան քաղաքատիպ ավանը դասվեց ՀՍՍՌ շրջանային ենթակայության քաղաքների շարքը:



Լուսանկարը՝ Ա. Ավետիսյանի

Քաջարան քաղաքի հիմնը

խոսքը եւ երաժշտությունը՝

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Լեռների լանջին թիկնած քարե հրաշք,
Ուսերիդ ամպերի ճերմակ շղարշ,
Քեզ են վստահված հայոց գանձերն անգին,
Որ պահես ու դաս սերունդներին:
Ողջ աշխարհն է հիմա քեզ ճանաչում,
Ջանգերիդ ղողանջի հետ անունդ է ամենուր հնչում,
Դու հնուց ի վեր հայրենի միշտ քաջերի ավան,
Որ դարձել ես չքնաղ մի Քաջարան:

Քեզ համար թող արեւը միշտ ժպտա անմար,
Երկնքում ասպղերդ թող կապեն կամար,
Քո գրկում ապրած օրերը թող դարեր դառնան,
Որ ապրես հավերժ, հպարտ իմ Քաջարան:

Թող մեզ հետ հավիտյան քայլի բարին,
Մեր համառ աշխատանքով մենք կհաղթենք չարին,
Եվ թող Ձորք ու Գանձասար՝ այս անունները հին,
Մեծ փառքի ճամփա հարթեն հերոս քո որդիներին:

Քեզ համար թող արեւը միշտ ժպտա անմար,
Երկնքում ասպղերդ թող կապեն կամար,
Քո գրկում ապրած օրերը թող դարեր դառնան,
Որ ապրես հավերժ, հպարտ իմ Քաջարան:

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքներն ենք յղում Քաջարանի քաղաքային իշխանութիւններին, հոգեւոր, կրթական եւ մշակութային հաստատութեանց ղեկավարներին եւ բոլոր բնակիչներին՝ Քաջարանին քաղաքի կարգավիճակ շնորհելու 50-ամեայ տարեդարձի ուրախ առիթով:

Հինգ տասնամեակ առաջ Քաջարանը հիմնադրուեց իբրեւ արդիւնաբերական քաղաք, որով նոր էջ բացուեց Սիւնեաց աշխարհի հարուստ պատմութեան մէջ:

Այսօր ուրախութեամբ ենք անդրադառնում, որ քաղաքը շուրջ կէսդարեայ իր պատմութեամբ հարուստ է յիշարժան գործերով եւ իր արժանաւոր զաւակների ջանքերով այսօր էլ շարունակում է առաջընթաց արձանագրել՝ որպէս Հայաստանի արդիւնաբերական կենտրոններից մէկը:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Քաջարանում արւում է կարելին՝ հոգեւոր ու մշակութային կեանքն արթուն պահելու համար, որպէսզի Մեր զաւակները, հաստատուն իրենց լուսաւորչադրոշմ հաւատքի մէջ, նախանձախնդիր ոգով պահպանեն մեր ժողովրդի ազգային-եկեղեցական արժէքները՝ դրանք իբրեւ նուիրական աւանդ թողնելով սերունդներին:

Սիրելի՛ քաջարանցիներ,

Մաղթում ենք, որ այս տօնակատարարութիւնները նոր առիթ դառնան՝ միասնական ուժերով շարունակելու հայրենաշէն գործունէութիւնը՝ ի խնդիր Քաջարանի բարգաւաճման եւ Ձեր բարօր կեանքի:

Թող Աստուած խաղաղութեան եւ առաջընթացի մէջ անսասան ու անվրդով պահի ազգս հայոց, Եկեղեցիս Հայաստանեայց եւ հայրենի մեր երկիրը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թերթի սույն՝ միացյալ համարը տպագրվել է Քաջարանի քաղաքապետարանի պատվերով, «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հովանավորությամբ:

N_158-159 (22-23).indd 1 20.12.11 5:25:52 PM

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԱԿՈՒՆՔ



ԱՀԱ ԵՎ ՍԿԻԶԲԸ.
Սիսակ նահապետը՝ Հայկից սերված

(ծնվել է մ.թ.ա. 2100թ.)

4108 տարի հետո Սիսակ նահապետի նկարը առաջին անգամ ստեղծագործել է կապանցի գեղանկարիչ Ռուբեն (Ռուբակ) Կոստանդյանը «Սյունյաց երկիր» թերթի պատվերով (թուղթ, ակրիլ, տեմպերա, պաստել, բրոնզ, 45x57, գրաֆիկական աշխատանք):

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Հայոց պատմություն
հատված

… Իսկ Գեղամը տարիներ անցնելուց հետո… գնաց արեւելյան հյուսիսում եղած մյուս լեռան հետեւի կողմը, մի ծովակի ափ: Նա շենացնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ եւ իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շեները Գեղարքունի, ինչպես կոչվում է նաեւ ծովը: Այստեղ նա ծնավ իր Սիսակ որդուն, որ մի սեգ ու թիկնավետ, վայելչակազմ, կորովախոս գեղեցիկ աղեղնավոր էր: Նրան է տալիս իր ստացվածքի մեծ մասը եւ բազմաթիվ մարդիկ իրեն ծառա եւ նրա ժառանգության սահման է կտրում ծովից դեպի արեւելք մինչեւ դաշտ, որտեղ Երասխը, սեպացած լեռները ճեղքելով, երկար ու նեղ ձորերով անցնելով ահագին շառաչյունով թափվում է դաշտը: Սիսակն այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով եւ աշխարհը իր անունով կոչում է Սյունիք: Վերջերը Վաղարշակ, հայոց առաջին թագավորը, գտնելով սրա սերունդներից անվանի մարդիկ՝ այս աշխարհին տեր է նշանակում, որ Սիսական ցեղն է:

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունիքի պատմություն
հատվածներ

Ծագման եւ նախնական կազմավորման, թե որտեղի՞ց սերվեց Սիսական նախարարական տոհմը՝ Աղամից հետո:

Աստվածապատվեր հրամանով կաշկանդված պրպտող ժամանակագիրների (համար) անվիճելի օրենքով, որ ասում է՝ «ձեզ չի վերաբերում իմանալ ժամերն ու ժամանակները, որ հայրը սահմանեց իր իշխանության մեջ», միայն հետագա (մարդկանց) անուններին ու ծննդաբանությանը հետամուտ կլինենք ստույգ շարադրանքով՝ մարդկության սկզբնավորումից մինչեւ Սիսական տոհմի նահապետության սկիզբը: Եվ սա նրա համար, որ չկարծես, թե այս տոհմի մարդիկ խառնիճաղանջ ամբոխներից են կամ ինչ-որ առաջադիմության պատճառով եւ կամ պատահաբար են ստացել նախաթոռ նահապետությունը, այլ աստվածաստեղծ մարդու նախասկզբնական ազնիվ տոհմից սկսած ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով հասան նախարարության:

Սյունյաց աշխարհի սահմանների ցուցադրումը. նաեւ՝ թե մարդկանց պեպքերի համար ինչ հարստություն ունի, որքա՞ն են գավառներն ու անառիկ բերդերը:

Ունի տասներկու գավառ. առաջինը, որի մեջ հենց «Սյունյաց իշխանների եւ հայրապետների գահն է, Ծղուկ գավառն է՝ անվանված Ծղուկ գավառապետի (անունից): Երկրորդը Վայոց ձորն է, որ ընդհանուր աղետից, ողբ ու վայնասուններից կոչվեց Վայոց ձոր: Երրորդը՝ Գեղարքունին, որ Հայկյան Գեղամի (անունից) կոչվեց Գեղարքունի: Չորրորդը՝ Սոթք գավառը, որ մշտական բուքերի եւ ցրտաշունչ եղանակների պատճառով կոչվեց Սոթք: Հինգերորդը՝ Աղահեճ գավառը, որ այժմ կոչվում է Քաշաթաղ եւ Խոժոռաբերդ: Վեցերորդը՝ Հաբանդ գավառը: Յոթերորդը՝ Բաղք գավառը, որ այժմ կոչվում է Աճեն, դա Բաղակի անունից այդպես (անվանվեց): Ութերորդը՝ Կովսական գավառը, որն այժմ Գրհամ են կոչում: Իններորդը՝ Արեւիք գավառը, որ այժմ կոչվում է Տաշտոն եւ Մեղրի: Տասներորդը՝ Ջորք գավառը, որ ունի Բաղաբերդ անմատչելի ամրոցը, եւ այժմ կոչվում է Կապան: Տասնմեկերորդը՝ Երնջակ գավառը եւ Գողթնը: Տասներկուերորդը՝ Ճահուկ գավառը, որը եւ Շահապոնք կոչվող ձորն է:

Ահա սրանք են Սյունիքի տասներկու գլխավոր գավառները: Բայց ունի ուրիշ շատ գավառներ էլ, որոնք չհիշատակեցինք: Կան գավառներ, որոնց անունները փոխված են, ուրիշներն էլ այլ եւ այլ գավառների են բաժանված: Իսկ այստեղ (գտնվող) անառիկ ամրոցները, որ անհասանելի են մարդկանց մուտքին, եւ միայն տերը կարող է մատչելի դարձնել (հետեւյալներն են)՝ Բաղաբերդ. դա այն է, որ Սիսակի սերունդներից մի մարդ՝ Բաղակ անունով, այս գավառն ստանալով ժառանգության բաժին, Բաղակի ապառաժը շինում է ամրոց, որը կոչվում է Բաղակի քար, բերդն ամրացնում է եւ անվանում Բաղաբերդ. եւ գավառն էլ իր անունով կոչվեց Բաղաց գավառ: Իսկ նույն (Սիսակի սերնդի) նահապետների կանանցից մեկը՝ Երնջիկ անունով, շինում է խիստ անմատչելի Երնջակ ամրոցը, եւ իր անունով գավառն ու բերդը կոչվում են Երնջակ: Բերդում տեղադրում են նաեւ նահանգի գանձերի եւ հարկերի տունը: Մարդկանց մեքենայությունների հանդեպ անսասան ու հաստատուն մյուս ամրոցները՝ Հայրաբերդ, Գրհամ, Մայրի, Շլորուտ, Կքեբերդ, Բարկուշատա բերդ, Անդոկա բերդ, Գեղարքունվո բերդ, Բղենո բերդ, Վանանդա բերդ, Բորոդանա բերդ, Հանբադա բերդ, որը Սիսակի նույն տոհմի Ջագ նահապետը շինեց մի գետի վրա եւ իր անունով ձորը կոչեց Ջագեձոր, բերդն էլ Ջագեձորո բերդ, Քաշեթաղուց բերդ, Խոժոռաբերդ, Որոտն բերդ, Սյունյաց բերդ, Բորտո բերդ, Շահապոնից բերդ՝ շինված եւ նույն ձորն էլ իր անունով Շահապոնից ձոր անվանված պարսիկ Շահապի կողմից, որ գաղթի պատճառով եկել էր Սյունյաց նահապետների մոտ: Իսկ Վայոց ձորում՝ Կապույտ բերդ, Հրասեկա բերդ՝ կառուցված Հրասեկի կողմից, չափազանց ամրություններով եւ աստվածաստեղծ պարիսպներով ամրացված. Սուլեմա բերդ Սուլեմ տանուտերի կողմից շինված, եւ ուրիշ շատերը, որոնք ավելորդ համարեցինք հիշատակել: Ունի Նախիջեւան մայրաքաղաքը:

Եվ ահա այսքանը որպես տեղեկություն քեզ համար՝ մեր Սիսական աշխարհի բնական հարստությունների, սահմանների, բերդերի եւ գավառների մասին:

Սիսական տոհմի նախապատմության մասին, թե ինչպես սահմանվեց հայոց թագավոր Վաղարշակի կողմից:

Մեզ համար այժմ փափագելի է թողնել հների դատարկաբան առասպելները եւ ձեռք զարկել միայն Սյունյաց վեհափառ տերերի ու Սիսակի ցեղի երջանկավետ բարեբախտություններին եւ նախաթոռ տիրապետություններին, որովհետեւ չարչարանքները շատ են, բայց ոչ մի օգուտ չկա. (ուստի) անօգուտից հեռու պահենք մեր մտքի ծգտումը, որ պիտանիները միայն մեջտեղ գալով կերպարանավորվեն մեզ համար:

Եվ այսպես, սկսած նախնի Սիսակից՝ այս նահապետության իշխանությունը ակներեւ հարազատությամբ որդիները հայրերից հաջորդաբար փոխանցեցին երկար ու ձիգ ժամանակներով: Բազմաթիվ ու մեծամեծ քաջագործություններ ցույց տվեցին հայոց թագավորների (մղած) պատերազմներում եւ բազում ու մեծամեծ պարգեւներով եւ գահերով մեծարվեցին պարսից, հայոց, այլեւ հունաց իսկ թագավորների կողմից: Եվ այնքան անվանի եղան, որ մինչեւ անգամ արտոնվեց նրանց արծաթե գահույք ունենալ եւ մարգարտե վարսակալ օգտագործել ու վարազագիր մատանին դնել, նաեւ կարմիր կոշիկ (հագնել) ու բռնել ոսկե գավազան՝ վրան նշված տոհմի անունը եւ պատվաստիճանը: Եվ այսպես հասան մինչեւ Վաղարշակին, որին իր եղբայր Արշակը հայոց վրա թագավոր դարձրեց՝ Հայաստանում Արշակունյաց ցեղի թագավորության սկզբնավորման ժամանակ: Սա Վաղարշակ Առաջինն էր, որը չկամեցավ խառնակ ձեւով ու ոչ տոհմիկ մարդկանցով վարել իր թագավորությունը, որովհետեւ մինչեւ այն ժամանակ նախնիներից ոչ մեկը հոգ չէր տարել կարգ ու կանոնի եւ թագավորական օրենքների գեղեցիկ հարմարեցման մասին, այլ ըստ հաջողության ու դիպվածի ամեն ոք բարձրանում էր եւ ամեն ոք նսեմանում:

Սա կարգ ու կանոն է սահմանում՝ գեղեցիկ կարգավորումներով ու գովելի օրենքներով, նախ սկսելով գլխից՝ Բագրատունիներին առաջարկում է թագադիր լինել, ու նրանց անվանում է ասպետներ, շնորհում է գրավել առաջնակարգ բարձ՝ բոլորից վերեւ: Եվ ապա սրանց հետ Ջեռեսին քանանացիների սերնդից, Գնթունիների ցեղից, կարգում է իրեն զգեստներ հագցնող եւ դնում արքունի հանդերձների վրա: Սրանց նման էլ ուրիշներին նույնպես (նշանակում է) ըստ արքունի տան կարիքների: Իսկ արեւելյան կողմից սահմանում է մեծ եւ առաջին Սիսական տոհմի նահապետությունը, սրա հետ էլ Կադմյանը: Եվ հրաման է տալիս Սիսականներին՝ լինել հրամանատար արքունի բոլոր զորքերին ու իր թագավորության երկրորդը եւ պատերազմով շարունակ դեմ կանգնել Հոնաց դռանը: Այս նահապետության առաջին (նահապետի) անունը Սիսակ էր: Իսկ սրանց սերնդից ընտրելով մի շատ քաջ, գեղեցիկ ու քաղցրաբարո մարդու՝ Եռան (Առան) անունով, նահապետ է կարգում Առանա մեծ դաշտի վրա, Երասխից մինչեւ Հունարակերտ: Եվ քաղցր բարքի պատճառով նրան Աղու էին կանչում, որտեղից էլ աշխարհը նրա անունով Աղվանք կոչվեց: Ահա սա էլ մի փոքր տեղեկություն քեզ, որ իմանաս, թե սրանից ոչ միայն սյունեցիները, այլեւ աղվանները եւս ունեցել են նախնի՝ նրանցինի պես հնագույն:

Սյունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Սյունիքի մարզպետ ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ուղերձը քաջարանցիներին

Սիրելի՛ հայրենակիցներ
Հոգու թելադրանքով եւ հաճելի զգացումով եմ ջերմ ողջույններս ու շնորհավորանքներս հղում ձեզ՝ նշանակալից տարելիցի՝ Քաջարանին քաղաքի կարգավիճակ շնորհելու 50-ամյակի կապակցությամբ: Բոլորիդ մաղթում եմ անձնական երջանկություն եւ աշխատանքային ու ստեղծագործական հաջողություններ:

Տասնամյակների հեռվից ավելի տեսանելի է այն գործի վեհությունը, որի արդյունքում մեր երկրի քարտեզի վրա երեւան եկավ Քաջարանը: Ուստիեւ՝ Սյունյաց աշխարհի անունից երախտագիտություն եմ հայտնում նախորդ սերնդի բոլոր այն ներկայացուցիչներին՝ նախագծողներից մինչեւ երկրաբաններ, ճարտարագետներ ու բանվորներ, որոնց խիզախությամբ եւ տքնանքով Կապուտջուղի ստորոտում ծնունդ առավ հանքարդյունաբերության հայրենական կենտրոնը:

Քաջարանը ծնվեց, կարելի է ասել, բոլոր սյունեցիների համատեղ ու նվիրական աշխատանքով. մարզի գրեթե բոլոր համայնքների ներկայացուցիչները ժամանակին անդամագրվեցին այդ կառույցին եւ իրենց համեստ ներդումը բերեցին նոր քաղաքի ու նոր ձեռնարկության ստեղծման գործին: Այնպես որ՝ տոնը ոչ միայն Քաջարանինն է ու քաջարանցիներինը, այլեւ ողջ հանրապետությանը:

Քաջարանի ծնունդն ու կեսդարյա անցած ճանապարհը վերահաստատեցին դարերի քարմաղով անցած այն բանաձեւը, որ մեր լինելիության գրավականը մեր միասնությունն է ու համերաշխությունը: Չլինեին մեր ժողովրդի մեկտեղված աշխատանքն ու հաստատակամությունը, չէր հառնի նոր քաղաքը: Քաջարանը դարձավ այն բնօրրանը, որտեղ ձեւավորվեց, հասակ առավ ու համաշխարհային համբավ ձեռք բերեց Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը, որն այսօր էլ, ինչպես նախորդ ժամանակներում, շարունակում է մնալ հայրենական տնտեսության առաջատարներից: Ընդ որում՝ Սյունիքի մարզի ու պղնձամոլիբդենայինի միջեւ հետաքրքիր ու խորունկ մի աղերս կա. սոցիալ-տնտեսական ու տարածաշրջանային բազմաթիվ հարցեր մեզանում լուծվել ու լուծվում են լեռնագործների հոգատար ձեռքով, ինչը գնահատելի է ու երախտագիտության արժանի, ինչը, վստահ ենք, շարունակություն է ունենալու: Քաջարանն այսօր միաժամանակ հանրապետությունում հայտնի է իբրեւ ռազմավարական հանգրվան, իբրեւ տնտեսական-մշակութային կենտրոն, իբրեւ մեր նոր պետության հավերժորեն բաբախող զարկերակ:

Քաջարանը մեր հանրապետության այն համայնքներից է, որ ակտիվ մասնակցություն ունեցավ (եւ ունենում է) հայոց անկախ պետականության վերականգնմանն ու ամրապնդմանը, ինչի վերաբերյալ բազում վկայություններ կան:

Համոզմունք ունեմ, որ իր գոյության վեցերորդ տասնամյակը թեւակոխող Քաջարանը դեռ շատ ասելիք ունի իրեն ծնող ժողովրդին եւ իր ասելիքն այդ կմատուցի ըստ պատշաճի:

Տոնական այս օրը ուզում եմ համոզմունք հայտնել նաեւ, որ մենք՝ սյունեցիներս, արժանի շարունակողը կլինենք (ինչպես որ կանք) մեր նախորդ սերունդների հերոսական արարումների եւ մեր ամենօրյա գործունեությամբ կզորացնենք Սյունյաց օրհնյալ հողը՝ ի փառս Հայաստանի Հանրապետության:

Ձեզ, սիրելի՛ հայրենակիցներ, կրկին շնորհավորում եմ Քաջարան քաղաքի հոբելյանի առիթով:

Թող օրեցօր նորացող քաղաքի բարի երթը շարունակվի գալիքում:

Շնորհավոր ծնունդդ, Քաջարա՛ն:

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն ՄԱՔՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆԻ ուղերձը Քաջարանի հոբելյանի առիթով

Սիրելի՛ համաքաղաքացիներ
Դեռեւս տարեսկզբից մեկնարկած միջոցառումներով Քաջարանը հանդիսավորությամբ նշում է իր՝ քաղաքի կարգավիճակ ստանալու կեսդարյա հոբելյանը: Տոնակատարությունները, կարծում եմ, կշարունակվեն մինչեւ տարեվերջ:

Խորհուրդն այս տոնի խորն է ու անեղծ: Ուզում ենք, պարզապես, հարգանքի տուրք մատուցել բոլոր այն մարդկանց, ում գորովանքով ու քրտնաջան աշխատանքով 20-րդ հարյուրամյակի կեսերին լույս աշխարհ եկավ ու հավերժության այցետոմս ստացավ Քաջարան քաղաքը: Ուզում ենք այսօրվա սերնդակիցների լույսը կրկին սփռել մեր անցնելիք ճանապարհին: Ուզում ենք նորովի ոգեկոչել մեր մեծ ուխտը՝ արժանապատիվ տերը լինելու անկախացած մեր երկրի:

Ես այն սերնդի ներկայացուցիչն եմ, ով երջանկություն ունեցավ անմիջականորեն ականատես եւ ինչոր փուլից մասնակից լինել քաղաքաշինական մտքի ու արարումի այդ պոռթկումին: Եվ այսօր մեծագույն երախտագիտությամբ եմ վերհիշում բազմաթիվ ազգերի հարյուրավոր ներկայացուցիչների՝ տարբեր հանգամանքների թելադրությամբ այստեղ հայտնված, ովքեր Քաջարանի հիմնադրումն ու կառուցումը համարեցին իրենց կյանքի գործը: Մեծագույն ակնածանքով եմ հիշում մեր համերկրացիներին, ովքեր Սյունիքի գրեթե բոլոր համայնքներից, հանրապետության այլ շրջաններից սրտի թելադրանքով եկան Քաջարան ու իրենց գիտելիքներն ու կարողությունները նվիրաբերեցին քաղաքի կառուցմանը:

Ուրեմնեւ՝ հարգանք ու պատիվ բոլոր այն մարդկանց, ովքեր դեռեւս 1940-ական թվականներից մասնակցեցին քաղաքի կառուցմանը, ովքեր քաղաքը դարձրին մեր նոր հանրապետության ծաղկուն համայնքներից մեկը, ովքեր այսօր բնակվում են այստեղ եւ արժանապատվորեն շարունակում նախորդ սերունդների լավագույն ավանդույթները:

Քաղաքը ծնվեց ու կայացավ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ստեղծմանն ու զարգացմանը համընթաց: Այդուհանդերձ, քաղաքն ու կոմբինատը դարձան ոչ թե երկվորյակներ, այլեւ միեւնույն օրգանիզմի, միեւնույն երեւույթի՝ փոխլրացնող ու անկապտելի բաղադրիչներ: Հիմա տասնամյակների հեռավորությունից կարող ենք ասել, որ այդ երեւույթը, այդ օրգանիզմը՝ Քաջարան անվամբ, պատվով կատարեց պատմական իր առաքելությունը: Զանգեզուրի պղնձամոլիբդենայինն իր արժանի տեղը գտավ լեռնահանքային արդյունաբերության համաշխարհային համբավ ունեցող ձեռնարկությունների շարքում: Պղնձամոլիբդենայինն այսօր ամենաակտիվ մասնակցությունն է ունենում հայոց նոր պետության կառուցմանը: Դրա վառ դրսեւորումներից մեկն այն է, որ Քաջարանում եւ հանրապետության տարբեր վայրերում հազարավոր մարդիկ ապահովված են կայուն աշխատանքով:

Քաջարանի կոմբինատը ծնվեց, հասակ առավ բազմաթիվ երկրաբանների, հետախույզների, հանքագործների, մեքենավարների նվիրական աշխատանքի շնորհիվ, որոնց անվան եւ հիշատակի առջեւ տոնական այս օրերին նույնպես գլուխ եմ խոնարհում:

Քաջարանը ձեւավորվեց այնտեղ գտնվող Քաջարան, Ողջի, Վերին Հանդ, Հանքավան եւ գյուղական այլ բնակավայրերի հիման վրա: Նոր Քաջարանը ներառեց ոչ միայն այդ գյուղերի բնակիչներին, այլեւ բազմաթիվ ներգաղթած հայերի, հանրապետության տարբեր շրջանների ու բազմաթիվ ազգությունների ներկայացուցիչների՝ արդյունքում ձեւավորելով մի նոր հանրություն: Հենց այդ հանգամանքը հիմք է տալիս հայտարարելու, որ 50-ամյա Քաջարանն ի սկզբանե դարձավ մեր ազգային վերածնության խորհրդանիշներից մեկը:

Քաջարանի անցած ճանապարհը դյուրին չի եղել: Նրան բաժին են ընկել բոլոր այն դժվարությունները, որ կրեց մեր ժողովուրդը 1940-ականներից ի վեր: Այնպես որ՝ քաջարանցին ոչ միայն լավ լեռնագործ է ու շինարար, այլեւ հայրենիքին նվիրված մարդ, ինչը վկայող բազում փաստեր կան եւ՛ Մեծ հայրենականի, եւ՛ 1988-ի ազգային զարթոնքի, եւ՛ Արցախյան գոյամարտի, եւ՛ անկախ պետականության վերականգնման շրջանում:

Մի անքննելի ճշմարտություն եւս, ինչի մասին քանիցս ենք խոսել: Հայոց կենաց ծառը մնայուն է եղել նախեւառաջ հոգեւոր-մշակութային արմատներով: Եվ Հայաստան երկիրը ֆիզիկական ու աշխարհագրական հասկացություն չէ լոկ, այլ՝ հոգու տարածություն: Դրա դրսեւորումներից է նաեւ Քաջարանը, որն անցած տարիներին դարձել է ոչ միայն հանքարդյունաբերության կենտրոն, այլեւ ժամանակակից բնակավայր՝ քաղաքային բոլոր ենթակառուցվածքներով, հոգեւոր, կրթական, մշակութային, մարզական եւ գեղագիտական բոլոր բաղադրիչներով:

Հոբելյանական այս օրերին, սակայն, մեր հայացքն առավել շատ հառած է գալիքին: Մենք տեսնում ենք այն խնդիրները, որ ծառացած են Քաջարանի, Սյունիքի մարզի ու երկրի առջեւ: Մենք պատկերացնում ենք մեր կոչումը, մեր առաքելությունը Հայոց պետության հանդեպ, մանավանդ որ ժամանակը մեզ հնարավորություններ է ընձեռել ազգային մեր իղձերն իրականացնելու համար:

Սիրելի՛ հայրենակիցներ
Նշանավոր այս իրադարձության՝ Քաջարանին քաղաքի կոչում շնորհելու 50-ամյակի կապակցությամբ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության եւ իմ սրտանց շնորհավորանքներն ու ջերմ մաղթանքներն եմ հղում բոլորիդ:

Տոնակատարությունը, համոզված եմ, նոր ուժ կհաղորդի բոլորիս՝ հայոց պետականության կայացման, մեր լեռնաշխարհի զարգացման ու ամրապնդման ճանապարհին:

Քաջարանի բարի ու ազգանպաստ երթին՝ հարատեւություն:

Շնորհավոր տոնդ, Քաջարա՛ն:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մշտական արժեքներ. քաղաքն ունի նոր խորհրդանիշներ

Հուշակոթողի նախագիծը

Քաջարանի կենտրոնում վեր է խոյանում նոր կոթող՝ նվիրված քաղաքի 50-ամյակին: Թե՛ «Քաջարան-50» հուշակոթողի, թե՛ քաղաքի երկու մուտքերի հեղինակը ճարտարապետ Յուրա Գեւորգյանն է:

Հեղինակն ասում է, թե քանի որ կոթողը նվիրված է քաղաքի հոբելյանին, իր ձեւով, չափերով, համաչափությամբ խորհրդանշում է 50-ամյակը: Այն տեղադրված կլինի քաղաքապետարանի մերձակա այգում, որտեղ նախատեսված է շատրվան կառուցել: Բացի բուն կոթողից, որը հնգանիստ է (ամեն մի կողմը 10 տարի է խորհրդանշում), այլ սիմվոլներ էլ կան, 5 թիվը ողջ համալիրում անընդհատ կրկնվում է. դեպի հարթակը տանող 50 աստիճան կա, կոթողը հինգ աստիճան բարձրանում է, սկսվում է բուն սյունը՝ էլի հնգանիստ, շարվածքը աստիճանաբար փոքրանում է: Հիմնական սյունը 4.20մ բարձրություն ունի, հետո նորից է սկսում փոքրանալ, էլի 5 աստիճան է սկսվում: Եվ այն ավարտվում է արույրե հավերժության նշանով: **«Այն օգտագործվել է ուրարտական ժամանակներում: Խալդ աստծո պատկերներում նրա ձեռքին այդ նշանով գավազան կա, որը իշխանության, հզորության նշան է: Պարզապես այնտեղ այն երեք թեւ ունի, ես հինգն եմ օգտագործել»,** – բացատրում է Յու. Գեւորգյանը:

Շինության աստիճանները, հարթակները երեսպատված են բազալտի քարերով, իսկ բուն սյունը տեղական (Վահանավանքի) մարմարացված կրաքարից է:

Քաջարանի հիմնական մուտքը (Կապանից եկող ճանապարհին) նույնպես

Շարունակությունը՝ էջ 6

N_158-159 (22-23).indd 3 20.12.11 5:25:54 PM

Այսնյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այսնյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ.

«Ցանկանում եմ հյուրերին ցույց տալ՝ ինչ է նշանակում աշխատող, արարող համայնք»

Քաջարանի հոբելյանական տարվան նախապատրաստման, իրականացված եւ իրականացվող աշխատանքների, համայնքի խնդիրների, ձեռքբերումների եւ ապագայի մասին է զրույցը քաղաքապետ Վարդան Գեւորգյանի հետ:

Լուսանկարը՝ Ա.Այնապետի

– Պարո՛ն Գեւորգյան, ինչպե՞ս է Քաջարանը պատրաստվում նշել քաղաքի տոնը:

– Դեռեւս 2007 թվականից ենք սկսել նախապատրաստական աշխատանքները, դրանք շարունակվել են 2008-ին: Քաղաքում ամենատարբեր ուղղություններով եւ տարբեր ոլորտներում շինարարական, վերանորոգման, արդիականացման աշխատանքներ են կատարվել: Քաջարանում ձեւավորվել է 50-ամյակին նախապատրաստվելու հոբելյանական հանձնաժողով, դրա կազմում ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր պարտականությունները:

– Ի՞նչ կոնկրետ աշխատանքներ են կատարվել քաղաքում՝ հոբելյանը պատշաճորեն նշելու համար:

– Հիմնանորոգվում է «ԶՊՄԿ» ՓԲԸ մարզահամալիրը, այնտեղ ջեռուցման համակարգ է անցկացվում: Մարզահամալիրը հանդիսավորությամբ կբացվի, ու այնտեղ կանցկացվի ՀՀ ազգային մարզաձեւերի փառատոնի եզրափակիչը: Մարզադաշտի ծածկը, նստատեղերն են նորոգվում, ցանկապատ է անցկացվում: Մշակույթի պալատում են աշխատանքներ կատարվել. բեմահարթակը, լուսավորության, ջեռուցման համակարգերն են նորացվել: Նորոգվել է քաղաքի պատմության թանգարանը:

Սկսվել է քաղաքապետարանի վարչական շենքի հիմնանորոգումը, Շիրվանզադեի պուրակի բարեկարգումը, որտեղ նաեւ մանկական խաղահրապարակ է կառուցվում: Օգոստոսի վերջին քաղաքապետարանի մերձակա տարածքում պատրաստ կլինի «Քաջարան-50» հուշակոթողը: Քանի որ տոնին մեզ մոտ հյուրեր կլինեն նաեւ եղբայր քաղաք Ժոդինոյից, կբացվի «Բարեկամության» հուշակոթողը, N1 միջն. դպրոցի մերձակայքում կհիմնենք «Բարեկամության» ծառուղի, հուշակոթողներ կտեղադրվեն քաղաքի տարբեր փողոցներում: Բարեկարգ տեսքի են բերվում քաղաքի պուրակները, շատրվանները, ավարտին է հասցվել քաղաքի լուսավորության համակարգի անցկացումը, հիմնանորոգվել է զոհված ազատամարտիկների հուշահամալիրը:

– Բացի շինարարական աշխատանքներից, ուրիշ ի՞նչ ուղղությամբ է գործ արվել:

– Հանդիսությունների օրը տոնական համերգ է լինելու մարզադաշտում, տոնական ճաշկերույթ, տոնական հրավառություն: Սրանից բխող՝ քաղաքի հոբելյանը խորհրդանշող կազմակերպական մեծ ու փոքր հարցեր են լուծվել. պատրաստվել են «Քաջարան-50» հուշամեդալներ, կրծքանշաններ, ժապավեններ, դրոշներ, քաղաքի մասին պատմող բուկլետներ, միջոցառումների գունավոր ծրագրեր, հրավիրատոմսեր, հրատարակվել է «Քաջարան» գիրքը, քաղաքի խորհրդանիշով գրիչներ ու հագուստներ, պատվոգրեր, թողարկվել են քաղաքին շնորհավորող գովազդային պաստառներ, որ պատրաստել են մեր գործընկերները:

Մշակույթի գործիչներ ենք հրավիրել մայրաքաղաքից. Երեւանից տիկնիկային թատրոնը բացօթյա ներկայացում կցուցադրի, երգիչներ կլինեն Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնից, մարզադաշտում ելույթ կունենան ժամանակին այստեղ հանդես եկած հայ երգարվեստի երախտավորները, ներկա կլինի ե՛ւ այսօրվա, ե՛ւ նախկին սերունդը:

– Այս ամենը նախեւառաջ ֆինանսական միջոցներ է պահանջում, ո՞վ է օգնում ձեզ:

– Որոշ աշխատանքներ իրականացվում են անմիջապես քաղաքապետարանի միջոցներով: Մնացածները կատարվում են «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի եւ «Քաջարան» հիմնադրամի հատկացումների շնորհիվ: Տոնակատարության շրջանակներում արդեն մոտ մեկ մլրդ դրամ է ծախսվել Քաջարանում:

– Նախեւառաջ ի՞նչ է հոբելյանական այդ օրը քաջարանցիների համար, ի՞նչ եք ուզում արտահայտել կամ ցույց տալ:

– Քաջարանն այլեւս 50 տարեկան չի լինելու, մեկ էլ նման շուքով երեւի քաղաքի 75-ամյակը կնշվի:

Քաջարանը երիտասարդ քաղաք է՝ այլ քաղաքների հետ համեմատած: Այո՛, այստեղ եղել են բնակատեղիներ, գյուղեր, որ դարերի պատմություն ունեն, բայց քաղաքը ստույգ 50 տարեկան է:

Ցանկացած տոնի, նույնիսկ ընտանեկան տոնակատարությունների պատրաստվելու ժամանակ դու վերանորոգում ես քո տունը, նախապատրաստվում ես հյուրեր ընդունելու, դա նաեւ առիթ է, որ տանդ համար մի բան անես: Ես, երբ խոսել եմ մեր եւ կոմբինատի գործընկերների հետ, ասել եմ՝ պարզ է, որ յուրաքանչյուրը մի նվեր պիտի բերի, բայց խնդրել եմ, որ անձնական, սիմվոլիկ հուշանվերներ չբերեն, այլ քաղաքի համար որեւէ գործ անեն, որը հուշ կմնա քաղաքի 50-ամյակի կապակցությամբ. դա կարող է լինել բարեկարգում կամ քաղաքում որեւէ կոթողի տեղադրում:

Այդ օրը նաեւ ցանկանում եմ հյուրերին, այցելուներին ցույց տալ՝ ինչ է նշանակում աշխատող, արարող համայնք, ինչ է նշանակում արտագաղթ չունենալ, սոցիալական խնդիրների լուծում, ինչ է նշանակում տեղական ինքնակառավարում. Քաջարանն իր տեսակով եզակի քաղաք է:

– Եվ ինչո՞վ է այն տարբերվում Հայաստանի մյուս քաղաքներից:

– Հիսունամյա տարեգրության ընթացքում կարողացել ենք յուրատեսակ հավաքական կերպար դառնալ: Քաջարանում այսօր ընտանիքներ կարելի է գտնել Հայաստանի բոլոր բնակավայրերից: Բայց այսօր արդեն այդ բոլորի բնավորությունները մնացել են հեռվում. այստեղ ձեւավորվել է մի լավ հոգեբանություն՝ քաջարանցու հոգեբանությունը:

Ինչ վերաբերում է տոնին, ուզում եմ, որ 50-ամյակն օգտագործենք եւ մեծարենք աշխատավոր մարդուն… Վերջին մեդալը Բրեժնեւն է տվել քաջարանցիներին՝ 1966թ.՝ Լենինի շքանշան կոմբինատին, որը ԽՍՀՄ բարձրագույն պարգեւն էր: Եվ ուզում եմ՝ հոբելյաններն առիթ դառնան, որ քաղաքներից յուրաքանչյուրն ըստ իր արժանիքների մեծարվի: Ինչու չէ, Քաջարան քաղաքի դրոշի վրա այդ օրը թող մի շքանշան կախվի… Ու թող դա ավանդույթ դառնա, համայնքներ կան, որ պիտի մեծարվեն իրենց ներդրման համար:

– Ինչքա՞ն բնակչություն ունի այսօր Քաջարանը՝ ե՛ւ հաշվառված, ե՛ւ փաստացի:

– Վերջին պաշտոնական տվյալները 2001-ի մարդահամարինն են՝ 9125, բայց փաստացի 12-13 հազարից պակաս չի լինի: Շատերն են բնակվում այստեղ, բայց հաշվառված չեն: Միայն 2000 հոգի ընտրությունների ժամանակ Կապան է գնում: Քաջարանում արտագաղթ չի եղել, հիմա էլ չկա, բայց ներգաղթ միշտ էլ եղել է, շարունակում են գալ Հայաստանի տարբեր բնակավայրերից. միայն անցած տարվա հունվարի մեկից մինչ այսօր 320 հոգի է կոմբինատում աշխատանքի ընդունվել Սիսիանից, Գորիսից, Ջոդից, Վեդիից…

– Եվ ինչպե՞ս են այդ մարդիկ տեղավորվում: Գիտենք, որ Քաջարանում միշտ բնակֆոնդի խնդիր է եղել:

– Շատ դժվար է բնակարան գտնելն այստեղ, նույնիսկ վարձով տուն հնարավոր չէ գտնել:

– Փաստորեն, քաղաքը զարգանում է, բնակչությունը՝ մեծանում, բայց նոր քաղաք չի կառուցվում: Ինչպե՞ս եք պատկերացնում Քաջարանի ապագան, դեպի ո՞ւր պիտի այն զարգանա, ի վերջո, կգա օրը, երբ այսքան բնակչություն ի վիճակի չեք լինի տեղավորել:

– Քաջարանի ապագան տեսնում եմ այս նույն տարածքում, բայց Քաջարանի բնակարանային խնդիրների լուծումը՝ Քաջարան-Կապան ճանապարհին ընկած հատվածում որեւէ տեղ: Միանշանակ, ժամանակ է գալու, որ այդ խնդիրը հրատապ է դառնալու: Այսօր ընտանիքներ կան, որոնց զավակները չեն ամուսնանում, որովհետեւ տեղավորվել հնարավոր չէ, սա լուրջ խնդիր է: Քաղաքում 2360 բնակարան կա, այսօր այդ բնակարանները զբաղված են արդեն: Մինչդեռ խորհրդային տարիներին Քաջարանը եզակի քաղաք էր, որտեղ ցանկացած մարդ գալիս, դիմում էր գրում, բնակարանի բանալին տալիս էին, փականագործին էլ ուղարկում, որ բնակարանը կարգի բերի:

– Այդ դեպքում, եթե քաջարանցիների կենսամակարդակը հանրապետությունում համեմատաբար բարձր է համարվում, ինչո՞ւ անհատական բնակարանաշինություն չի ընթանում այստեղ:

– Հիմա արդեն սկսել են անհատական տներ կառուցել մոտակա տարածքներում՝ Բաբիկավան, Անդոկավան, Ջագեձոր: Կոմբինատի քաղաքականությունն էլ այն է, որ առայժմ խրախուսվի անհատական բնակարանաշինությունը:

– Ամե՞ն քաջարանցու է հողհատկացում կատարվում, որ ցանկանում է տուն կառուցել:

– Մեր վարչական սահմաններում չենք կարող, որովհետեւ տարածք չունենք, բայց ներքեւում՝ Գեղիում կամ Ջագեձորում, տարածքներ կան, որտեղ կարելի է տուն կառուցել:

– Դրանք գյուղերն են, ստացվում է՝ նրանք արդեն քաղաքից դո՞ւրս կգան:

– Այս հարցին տարբեր մոտեցումներ կան: Տարիներով մտածում էինք՝ Կապանից վերեւ ունենալ մեկ համայնք… Բայց դա նշանակում է գյուղեր վերացնել, իսկ այսօր Լեռնաձոր գյուղը կամ Քաջարան գյուղը վերացնել չի կարելի, կոլորիտային գյուղեր են ու պիտի մնան: Ամեն դեպքում ներքեւի ձորերում պիտի բնակարանաշինություն ընթանա, իսկ Քաջարանի տեղափոխման մասին զրույցները սին են. բացառվում է, որ Քաջարանը մոտակա 200 տարում տեղափոխվի, այն լուրջ եւ թանկ քաղաք է. այստեղ այնքա՜ն ներդրումներ են կատարվել:

– Վերջին տարիներին հանրապետության բոլոր համայնքները գլխավոր հատակագիծ ունեցան: Քաջարանն ունի՞ գլխավոր հատակագիծ:

– 1964թ. առաջին անգամ քաղաքը հատակագիծ ունեցավ, բայց հիմա գլխավոր հատակագիծ չունենք: Անկեղծ ասած, ինքս չեմ ուզում դա, որովհետեւ, եթե հիմա գլխավոր հատակագիծ ունենանք, հետագայում տարածք չենք կարող ակնկալել: Հատակագիծ ունենալիս պիտի առիթն օգտագործենք ու քաղաքին այլ տարածքներ կցենք:

– Այդ դեպքում ինչո՞վ եք առաջնորդվում այսօր քաղաքում կառուցապատման, զարգացման խնդիրներ լուծելիս:

– Մարզպետարանի քաղաքաշինության բաժնի հրահանգներով: Չունենք հատակագիծ, բայց Քաջարանում գոտիավորում կա:

– Պարո՛ն Գեւորգյան, Քաջարանը ձեւավորվել է

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

Կոմբինատի հիմքի վրա եւ տարիներով իբրեւ քաղաք-ձեռնարկություն էր ընկալվում: Բայց Քաջարանը կարծես վաղուց հաղթահարել է դա... Քաղաքն արդեն չի կարելի միայն կոմբինատով ճանաչել. Ձեր կարծիքով քաղաքն ինքնուրույն դեմք ունի՞:

– Հիսունամյակի կարեւորագույն խնդիրներից մեկը նաեւ քաղաքի ուրույն դեմքն ու դիմագիծը ցուցադրելն է: Այո՛, կոբինատը մեր արժեքն է, մեր զարկերակն է, բայց այսօր ՀՀ տարածքում ստեղծվել են տեղական ինքնակառավարման մարմիններ, այսինք՝ մարդիկ պիտի իմանան, որ Քաջարանը նախեւառաջ կայացած համայնք է: ՏԻՄ-կոմբինատ համագործակցության արդյունքն ակնառու եւ տեսանելի է: Սա եզակի համագործակցություն է, ՀՀ-ում նման երկրորդ օրինակը չգիտեմ:

– Կարո՞ղ եք կոմբինատ-քաղաքապետարան համագործակցությունը բնորոշող թվեր ներկայացնել:

– 2002թ. եմ ընտրվել քաղաքապետ, եւ մինչեւ օրս «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն 20 մլրդ դրամի ներդրում է կատարել քաղաքում՝ ամենատարբեր ոլորտներում... Ընդհանրապես չգազիֆիկացված քաղաքն ամբողջապես գազիֆիկացված է: Ընդ որում, ցանցը գտնվում է քաղաքապետարանի բալանսում, մեր սեփականությունն է: Միակ քաղաքն է, որտեղ ջրամատակարարման համակարգը նույնպես քաղաքապետարանի սեփականությունն է, կոյուղին, լուսավորության համակարգը մեր բալանսում են: Այսինքն՝ ինչ ներդրում որ արված է, համայնքային ունեցվածք է, չենք տվել ոչ մեկին ու չենք տալու:

– Եվ այդ նշված 20 մլրդ-ը ի՞նչ ուղղություններով է ներդրվել:

– Տարվա վերջին, բացի այն, որ բյուջեի քննարկում է ընթանում, նաեւ կոմբինատի տնօրինության հետ քննարկում ենք տարվա մեջ իրականացվելիք շինարարական, կրթական, մշակութային, սոցիալական ծրագրեր: Ծրագրերի մեծ մասը հիմնականում իրականացվում է «Քաջարան» բարեգործական հիմնադրամի միջոցով, որը կոմբինատի եւ քաղաքապետարանի ֆինանսական հարաբերությունները կազմակերպելու առումով եղավ Քաջարանում ձեւավորված հետաքրքիր եւ ամենաարդյունավետ կառույցը: Մենք, կարելի է ասել, այստեղ ունենք մեր «բանկը», այսինքն՝ բացի այն, որ կոմբինատը ուղղակիորեն գումար է տալիս, պետությունը լրավճար է տալիս, ես հավաքում եմ սեփական եկամուտները, ունենք նաեւ այդ գեղեցիկ կառույցը եւ եռակողմ պայմանագրով՝ քաղաքապետարան-կոմբինատ-կապալառու, քաղաքապետարան-հիմնադրամ-կապալառու տարբեր ոլորտներում աշխատանքներ են արվում: Դրանք ինքնանպատակ չեն, ձգտում ենք, որ ամեն կատարված աշխատանք գեղեցիկ եւ որակյալ լինի: Օրինակ, եթե տանիքներ ենք վերանորոգել, նպատակը զուտ այն չի եղել, որ տանիքից չկաթի, այլ, որ դրանք լինեն թիթեղյա, ու քաղաքին վերեւից նայողն էլ տեսնի, թե ինչ գեղեցիկ է Քաջարանը: Ամեն տարի աշխատանքներ են կատարվում, բայց արվածը պետք է պահպանել, ու կոմբինատը, ըստ կնքված պայմանագրի, նաեւ ամսական 5.5 մլն դրամ է տրամադրում փողոցային լուսավորության, փողոցների մաքրության, կանաչապատ գոտիների պահպանության, ծառատունկի եւ այլ ընթացիկ աշխատանքների համար:

Ամենակարեւորը, որ կոմբինատի տնօրինությունը գիտակցում է պատասխանատվությունն այն համայնքի առջեւ, որտեղ գործում է ընկերությունը:

– Ամենամյա աշխատանքներից հետո քաղաքում, այնուամենայնիվ, չլուծված հարցեր մնացե՞լ են:

– Դե, հիմնականը բնակարանների հարցն է, որի մասին խոսեցինք. այն իսկապես հրատապ է: Դա էլ մեծ ծախսերի հետ է կապված, որովհետեւ քաղաքը միայն շենքը չէ: Եթե ուզում ես որեւէ բնակավայր կառուցել, այնտեղ պիտի լինեն դպրոց, մանկապարտեզ, այլ ենթակառուցվածքներ...

Մնացած հարցերը՝ տանիք, վերելակ, ասֆալտապատում, այլ բարեկարգումներ, մեզ համար մշտապես լուծվող, ընթացիկ հարցեր են: Բարեկարգ համայնք է, բանկեր կան, խանութների, սպասարկման այլ ոլորտներում խնդիրներ չկան: Միայն որպես աշխատավարձ քաղաքում ամսական 800 մլն դրամ է շրջանառվում:

Բայց ամենակարեւոր խնդիրներից մեկը Քաջարանում կանանց աշխատատեղերի բացակայությունն է:

– Եվ այդ խնդրի ի՞նչ լուծում եք տեսնում:

– Դժվար լուծվող հարց է: Նախկինում Քաջարանում կային «Ռելեյի», «Սպին» գործարանների մասնաճյուղերը, կար տրիկոտաժի ֆաբրիկան, որտեղ կանայք էին աշխատում: Կարծում եմ՝ սննդարտադրության հիմքի վրա որեւէ ձեռնարկություն պետք է հիմնվի: Բայց իմ մտահոգությունը բուհավարտ կանայք են: Մնացածները, ոնց էլ լինի, որեւէ աշխատանք գտնում են, բայց բարձրագույն կրթությամբ կանայք չեն կարողանում մասնագիտությամբ աշխատանք գտնել:

– Այսինքն՝ Քաջարանի ուսանողները, ի տարբերություն այլ քաղաքների ուսանողների, ավարտելուց հետո վերադառնո՞ւմ են Քաջարան:

– Միանշանակ, տարեկան ամենաքիչը 100 հոգի ավարտում եւ հետ է գալիս Քաջարան: Դեռ մի ուրիշ միտում էլ կա՝ ամուսնացած աղջիկները փեսաներին են բերում, տղաները՝ հարսներին: Այսինքն՝ ուսանողության առումով էլ քաղաքից արտահոսք չկա:

– Սոցիալական ենթակառուցվածքները նորմալ գործո՞ւմ են քաղաքում:

– Սոցիալական խնդիրները հստակ բաժանված են ըստ պատասխանատուների. կոմբինատի արհմիությունը գործում է, կոմբինատի տնօրինության կողմից օժանդակությունները կան, քաղաքապետարանի կողմից օժանդակությունը կա: Այսօր հստակ գիտեմ, որ կենսաթոշակառուի բուժման խնդիրը լուծված է, կամ եթե Քաջարանում որեւէ մեկը բուժման, վիրահատության խնդիր ունի, անկախ նրանից կոմբինատում է աշխատում, թե ոչ, այն կարող է կազմակերպել Քաջարանում կամ Երեւանի բժշկական կենտրոններում, որոնց հետ կոմբինատը պայմանագրեր ունի: Կամ, ասենք, կյանք է, եթե հուղարկավորության հետ կապված հարցեր կան, փոխհատուցումը տրվում է: Այսինքն մարդն այստեղ սոցիալապես պաշտպանված է. ե՛ւ կոմբինատը, ե՛ւ քաղաքապետարանը, ե՛ւ հիմնադրամն իրենց կարողացածն անում են:

– Ընդունելության օրեր ունե՞ք:

– Հատուկ օրեր չկան, ես ամեն աշխատանքային օր էլ ընդունելություն եմ կատարում, քաղաքացին ամեն օր կարող է դիմել ինձ:

– Եվ ի՞նչ խնդիրներով են հիմնականում դիմում:

– Տարբեր բնույթի, բայց հիմնականում գալիս են ավտոտնակի կամ խանութի տեղ ուզելու, այսինքն՝ կառուցապատման խնդիրների համար:

Կարծում եմ՝ նման քաղաքում քաղաքացիների հետ պաշտոնապես շփվելու համար օրեր, ձեւեր սահմանելու կարիք չկա: Տեղյակ եմ քաղաքի ողջ անցուդարձին, ճանաչում եմ քաղաքի բոլոր երեխաներին, իրենք էլ ինձ են ճանաչում: Մեզ համար համայնքային ենթակայության, ոչ համայնքային ենթակայության կառույց հասկացություններ չկան: Մարզպետարանը, նախարարությունները թող իրենց գործառույթները կատարեն, բայց կրթական, առողջապահական կազմակերպությունները բոլորն էլ հավասարապես մերն են եւ մեր ուշադրության կենտրոնում:

– Պարո՛ն Գեւորգյան, փաստորեն, համայնքը բավականին երիտասարդ է, նշեցիք, որ ուսանողությունը վերադառնում է, ակտիվ կյանք կա այստեղ, քաղաքում մեծ գումարներ են շրջանառվում, բայց տարիներով խնդիր է եղել երիտասարդության ժամանցի կազմակերպումը. այս ոլորտում առաջընթաց կա՞:

– Այսօր, եթե երիտասարդը ցանկանա զբաղմունք գտնել աշխատանքից հետո, կգտնի: Հիմա սրճարան էլ ունենք, խաղասրահներ էլ կան, համակարգչային սրահներ էլ: «Երիտասարդության ժամանցի կազմակերպում» հասկացությունը, կարծում եմ, պետք է հանվի... Երիտասարդությունն ինքն է տնօրինում իր ժամանակը: Պայմաններն այսօր կան, բացառվում է, որ մեզ դիմեն, թե ուզում են մշակույթի պալատի դահլիճում այսինչ բանը կազմակերպել, դեմ լինենք կամ խաղահրապարակում ցանկանան որեւէ միջոցառում անցկացնել, չօգնենք... Մենք ենք մարզագույք, մարզահագուստ գնում, տրամադրում, որ խաղան...

– Քաջարանը հիմնականում տեխնոկրատ քաղաք է, մշակութային կյանք կա՞ այստեղ, կա՞ն ստեղծագործող անհատներ, որոնց մասին կարող ենք ասել՝ Քաջարանի մշակութային դեմքն են:

– Կարծում եմ՝ այսօր «Քաջարանի մշակույթ» հասկացությունը ճիշտ չէ... Մշակույթն ազգային երեւույթ է, այլ հարց է, թե ոնց ես հաղորդակցվում դրա հետ: Օրինակ, դպրոցներում մշտապես դասաժամերի ավարտից հետո միջոցառումներ են լինում, բայց դրանք համայնքային միջոցառումներ են, ոչ թե՞ մշակույթ: Իսկ համայնքային միջոցառումներ տարբեր առիթներով եւ տարբեր վայրերում շատ-շատ են կազմակերպվում: Ինչու չէ, ստեղծագործող անհատներ էլ կան, բայց մշակույթի հետ հաղորդակցությունը Քաջարանում դեռ խորհրդային տարիներից այսպես է եղել. միշտ դրսից են եկել՝ Մոսկվայից, Երեւանից եւ այլ վայրերից, եկել են լավագույնները: Հիմա էլ ենք այդ ճանապարհով գնում...

– Եթե տարածքում լեռնահանքային արդյունաբերություն կա, չեն կարող բնապահպանական խնդիրներ չլինել, շարունակո՞ւմ եք ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային ինստիտուտի հետ հետազոտություններ կատարել:

– Ինստիտուտի հետ հետազոտությունները շարունակվում են, գիրք է լույս տեսել դրանց արդյունքում՝ «Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի վիճակի էկոլոգաերկրաքիմիական գնահատում» վերնագրով: Ի դեպ, այս գիրքն էլ, որի համահեղինակներից եմ, նվիրել ենք քաղաքի 50-ամյակին:

Երբ դեռ կոմբինատում էի աշխատում, ծանր էի տանում, որ ԶԼՄ-ներում ձեռնարկության մասին բնապահպանական առումով բացասական հրապարակումներ էին լինում: Բնապահպանական վճարումներից համայնքային բյուջեին մասհանումներն օրենքով կարգավորված են, եւ ծրագիր էինք ներկայացրել դրանք նպատակային օգտագործելու համար: Դրան գումարած այն, որ այդ ուղղությամբ առավել շատ գումար կոմբինատն է հատկացնում, եւ ինքն էլ առանձին է այդ ոլորտում աշխատանքներ կատարում: Ու հիմա ձեռքի տակ ունենք գիտական ուսումնասիրությունների հիման վրա ստեղծված հիմնավոր փաստաթուղթ եւ հնչած մեղադրանքներին, քննադատություններին կարող ենք պատասխանել:

– Եվ ի՞նչ է պարզվել, ի՞նչն է մտահոգիչ:

– Այո՛, այսօր բնապահպանական որոշ խնդիրներ կան... Տեղային բնույթ կրող արտանետումներ, բայց օրինակ, երբ այսօր Երեւանում բնական ֆոնի մեջ վնասակար տարրերից արճիճ կա, Քաջարանում չկա: Բայց սնդիկի առկայություն է նկատվում, հիմնականում կենտրոնացված է արդեն մարված պոչամբարներում, որը կապ չունի կոմբինատի հետ, կոմբինատի աշխատանքի ընթացքում սնդիկ չի գործածվում:

Ուսումնասիրել ենք ջուրը, պոչամբարներում արածող կովերի կաթը, այդ տարածքների ցանքատարածություններեի բույսերի մեջ վնասակար նյութերի պարունակությունը, հողերի աղտոտումը ծանր մետաղներով:

– Եվ ինչպե՞ս եք օգտագործում ուսումնասիրությունների արդյունքները, մասնագետների հետ քննարկո՞ւմ եք, թե ինչ կարելի է անել հետեւանքները մեղմացնելու համար:

– Այո՛, գրքում նաեւ միջոցառումների ծրագիր է նշված, առաջարկվում են քայլեր, որ պետք է կատարվեն այս կամ այն մտահոգիչ երեւույթը չեզոքացնելու համար:

Առաջարկություն ենք ներկայացրել ԿԳ նախարարություն, որ թույլատրեն մեր միջնակարգ դպրոցներում մտցնել «Քաջարան. բնությունը եւ էկոլոգիան» առարկայական ծրագիրը, ու դա պիտի անցնեն մեր մշակած դասագրքով, հավանաբար 2009-ից:

– Եվ, իբրեւ վերջաբան, որտեղի՞ց եք տոնակատարություններին հյուրեր սպասում:

– Հյուրեր կլինեն թե՛ մարզի տարբեր քաղաքներից, թե՛ հանրապետությունից, թե՛ արտերկրից, կգան մեր քաղաքի ու կոմբինատի բարեկամներն ու գործընկերները, պաշտոնյաներ, արվեստի գործիչներ եւ այլն: Բացի այդ, հանրային հեռուստատեսությամբ հայտարարություն կտանք եւ դրսում բնակվող բոլոր քաջարանցիներին կհրավիրենք տոնախմբությանը:

Սա ավանդական տոն կդառնա եւ միշտ կնշվի՝ իբրեւ քաղաքի ծննդյան օր:

Իբրեւ վերջաբան, շնորհավորում եմ իմ սիրելի քաջարանցիներին հոբելյանական այս գեղեցիկ տոնի կապակցությամբ, մաղթում եմ անկոտրում կամք, հաստատակամություն՝ հանուն մեր երկրի զարգացման, տարածաշրջանի տնտեսության հզորացման: Կարծում եմ, որ այսօր կան բոլոր նախադրյալները, որպեսզի Քաջարանը ոչ միայն իր արդյունաբերական ներուժով, այլեւ իր հզորությամբ, մարդկային արժանիքներով կարողանա համայն աշխարհին ներկայանալ որպես կազմակերպված, լավ ու բարեկեցիկ համայնք: Շնորհավորում եմ բոլորիս, թող բարին լինի մեզ հետ:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն

Սիրելի՛ քաջարանցիներ
Այունյաց աշխարհի բարձրավանդակում՝ Ողջի գետի ափամերձ բացվածքներում սփռված Քաջարան քաղաքն այսօր անմնացորդ խանդավառությամբ տոնում է իր վերակերտման ու հիմնադրման 50-ամյա հոբելյանը: Անհիշելի ժամանակներից Քաջարանի Գանձասար երկնաբաց հանքում պահպանված ձուլարանների հետքերը, հանքախորշերը եւ հանքանյութերի թափվածքները վկայում են, որ այստեղ պղինձ ու երկաթ են ձուլել դեռեւս բրոնզեդարում: Դարերի բեռն ուսած Քաջարանն այսօր վերափոխվել է, վերակերտվել եւ դարձել գեղատեսիլ մի քաղաք: Այդ յուրօրինակ գեղեցկությունն ամբողջացրել է տեղում օրեցօր բարգավաճող Զանգեզուրի պղնձամոլիբդենային ձեռնարկությունը, որի համբավը տարածվել է Հայաստանի սահմաններից դուրս եւ միջազգային մեծ համարում ունի: Հիրավի, Քաջարանն իր հանքարդյունաբերական ձեռքբերումներով Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության մեջ նոր էջ է բացել: Նրա ներդրումների ու բարեգործությունների ծավալն արդեն անցել է տարածաշրջանի սահմանները եւ բերկրանք ու ոգեւորություն պարգեւել բազմաթիվ համայնքների ու ջերմացրել մարդկանց սրտերը:

Տոնելով քաջարանի 50-ամյա հոբելյանը՝ քաջարանցիները, ինչու ոչ, նաեւ ամբողջ հայ ժողովուրդն այսօր ուրախանալու մեծ առիթ ունեն, քանի որ Հայաստանի Հանրապետության այս գողտրիկ անկյունում զարգանում, բարգավաճում, վերափոխվում ու վերածնվում է մի քաղաք, որն ապագա սերունդներին ներկայանալու է արդիական կառույցների գեղեցկությամբ ու նոր նվաճումներով:

Ձեզ հետ տոնելով քաղաքի կեսդարյա հոբելյանը՝ համակված ձեր ուրախությամբ, պաշտպանության նախարարության ամբողջ անձնակազմի եւ անձամբ իմ անունից Քաջարանի 50-ամյակի առիթով շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում բարեկեցություն, խաղաղություն, բեղմնավոր ու ստեղծագործական նախաձեռնություններ՝ հանուն մեր երկրի հետագա հզորացման եւ բարգավաճման:

Պաշտպանության նախարար՝

ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար

Իմ եւ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի անունից ջերմորեն շնորհավորում եմ Քաջարանի 50-րդ հոբելյանը՝ մաղթելով քաղաքին նոր նվաճումներ եւ հաջողություններ, իսկ քաղաքի բնակիչներին՝ խաղաղություն, բարեկեցություն, սեր եւ համերաշխություն ընտանիքներում, ստեղծագործ աշխատանք, իրենց աշխատասիրությանը եւ ձգտումներին համապատասխան արժանավայել կյանք, ինչպես նաեւ մեծ հույս, հավատ եւ վստահություն իրենց քաղաքի, մեր հայրենիքի ապագայի հանդեպ:

Քաջարանը Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության խոշոր կենտրոնն է: Որպես քաղաք՝ այն ձեւավորվել եւ կայացել է նաեւ շնորհիվ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ստեղծման եւ գործունեության: Եվ ահա, քաղաքի եւ կոմբինատի կյանքն ու կենսագրությունը միաձուլվել, դարձել են մաքառումի եւ արարումի, մարդու մտավոր եւ ֆիզիկական կարողությունների, ինչպես նաեւ հայրենասիրության լավագույն դրսեւորումների արդեն իսկ կեսդարյա պատմություն:

Մեր անկախ պետության կայացման առաջին դժվարին տարիներին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հիրավի հայրենանվեր գործունեությամբ հաջողվեց ոչ միայն ապահովել Քաջարանի բնականոն կյանքը, այլեւ լուծել Սյունիքի մարզի, ամբողջ հանրապետության խնդիրների, այդ թվում նաեւ սոցիալական, զգալի մասը:

Այսօր Հայաստանի արդյունաբերության առաջատար Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հռչակը հատել է մեր երկրի սահմանները, իսկ Քաջարան քաղաքը շահեկանորեն առանձնանում է իր բարեկեցիկ կյանքով:

Մեկ անգամ եւս շնորհավորելով Քաջարան քաղաքի հոբելյանը՝ մաղթում եմ նրան հայ ժողովրդի՝ դարերից եկող փորձի, կենսունակության, աշխատասիրության, իմաստության եւ գիտելիքի պահպանում ու զարգացում, դարեր թեւակոխող նոր հարուստ պատմության կերտում եւ հավերժ երիտասարդություն:

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ էներգետիկայի ու բնական պաշարների նախարար

Քաջարանը՝ որպես բնակավայր, շատ ավելի հին պատմություն ունի, սակայն քաղաքի կարգավիճակ այն ստացել է 1958 թվականին: Այսօր արդեն լեռնագործների այդ քաղաքը համարվում է Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության մայրաքաղաքը: Մեծ է Քաջարանի եւ քաջարանցիների ներդրումը Հայաստանի զարգացող տնտեսության, մասնավորապես հանքարդյունաբերության մեջ: Բավական է միայն նշել, որ հանրապետության ամենախոշոր լեռնամետալուրգիական ձեռնարկությունը՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», մեր պետության բյուջեի առաջին հարկատուն է:

50-ամյա Քաջարանը հանրապետության այն եզակի բնակավայրերից է, որտեղից երբեւէ արտագաղթ չի եղել, դեռ ավելին, անցած տարիների ընթացքում տարբեր բնակավայրերից մարդիկ տեղափոխվել են Քաջարան, որտեղ գտել են բարեկարգ համայնք, բարձր աշխատավարձով աշխատանք ու բարեկեցիկ կյանք: Այս բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ մոտ 10 հազար բնակչություն ունեցող Քաջարանն այսօր սոցիալական լուրջ խնդիրներ չունի, իսկ նման արդյունքի հասնում են միայն աշխատասիրության շնորհիվ, ինչը բնորոշ է քաջարանցիներին:

Կրկին շնորհավորում եմ Քաջարանի կեսդարյա հոբելյանը, քաջարանցիներին մաղթում եմ անամպ ու խաղաղ երկինք, ստեղծագործ աշխատանք ու հաջողություն:

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱԺ պատգամավոր

Անցյալում քաղաքի հիմնումը իշխանների ու արքաների կամքով էր, մեր ժամանակներում փոքրավուն բնակավայրերը միավորվում ու վերածում են քաղաքի:

Խորհրդային դարում մեր պապերը ձեռնարկեցին մերձկապուտջուղյան ընդերքի հարստությունն ի սպաս դնել ժողովրդին: Ողջի գետի վերնագավառի հինավուրց գյուղերը մեկտեղվեցին որպես քաղաքատիպ ավան, եւ արդյունաբերական Քաջարանի համբավն աշխարհով մեկ եղավ:

Քաջարանն իմ ծննդավայրն է, եւ հայրենի եզերքում մանկուց ունկնդիր եմ եղել քաղաքի մետաղաբույր շնչառությանը, հասակ առել հանքաշխարհի ավանդույթներով:

Քաջարանցու իդեալը հանքաշխարհի մարդն է: Եթե անգամ նա բժիշկ է, մանկավարժ կամ արվեստագետ, իր մասնագիտության տեսադաշտում հայտնաբերում, սատարում եւ մեծարում է լեռնագործին: Քաջարանյան սփյուռքը հիմնականում կազմում են տեխնիկական մտավորականության, ուսյալ երիտասարդության ներկայացուցիչները:

Մեր ժամանակներում, լինելով հանրապետության հանքարդյունաբերության առաջատարը, լեռնագործների քաղաքը պետբյուջեի հիմնական համալրողն է՝ նորօրյա եւ գալիք ժամանակների Գանձասարի հնարավորություններով:

Բնակչության կենցաղի կազմակերպմամբ եւ սոցիալական խնդիրների բարեհաջող լուծմամբ Քաջարանը նորահայտ ու մրցունակ քաղաք է: Մարդկանց բարեկեցիկ կյանքը խթան եւ ուղենիշ է մեր երկրի հետագա զարգացման, աղքատության դեմ պայքարի համապետական խնդիրների կենսագործման ճանապարհին:

Ընդունի՛ր իմ սրտագին շնորհավորանքը, լեռնագործ-ճարտարագետների, հանքաբան-գիտունների, վաստակաշատ աշխատավորության քաղա՛ք-հոբելյար: Համոզված եմ, որ քո փառապանծ 50-ամյակը փարոս կլինի երկրի լուսաողող ապագայի կերտման հաստատուն ընթացքի վրա:

Քաջարանի հետ մեր գործընկերությունը ստացվում է

ԳՅՈՒՆՏԵՐ ՊԻԼԱՐՍԿԻ

«Քրոնիմետ» խմբի նախագահ

Դարգելի՛ քաջարանցիներ

Հաճելի առիթով եմ ձեզ դիմում. հիսուն տարի առաջ Քաջարանը դարձավ քաղաք: Այդ կապակցությամբ իմ անկեղծ շնորհավորանքն եմ ուղարկում բոլորիդ, ցանկանում ձեզ քաջառողջություն, երջանկություն եւ հաջողություններ:

Քաջարանի մասին ես ավելի շուտ գիտեի: Սակայն բարեբախտություն ունեցա չորս տարի առաջ Քաջարանի գործընկերը դառնալ: Ճիշտ է, մեզ եւ Քաջարանին միմյանց հետ կապում է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը, բայց մեր եւ քաղաքի առնչություններն ու ընդհանրություններն ավելի խորն են ու բազմազան:

Անցած չորս տարվա ընթացքում ես հնարավորություն ունեցա մոտիկից ճանաչել Քաջարանն ու քաջարանցուն: Եվ ուրախությամբ նկատեցի, որ Հայաստանի Հանրապետության հեռավոր այդ անկյունում սերունդները կառուցել են բացառիկ մի քաղաք, որտեղ ապրում են արարող մարդիկ, որտեղ վեր է խոյանում լեռնահանքային արդյունաբերության համբավ ունեցող ձեռնարկություններից մեկը, որի ձեռքբերած հաջողություններում իր որոշիչ դերն ունի բնակչությունը:

Անցած չորս տարին ցույց տվեց նաեւ, որ Քաջարանի հետ մեր գործընկերությունը ստացվում է: Դա թույլ է տվել, որ մենք քաջարանցի լեռնագործների օգնությամբ նոր ծրագրեր կազմենք՝ ընկերության զարգացման, տարածաշրջանի առջեւ ծառացած խնդիրների լուծման, հանրապետության սոցիալական հոգսերի լուծման ուղղությամբ: Դրանք իրատեսական ծրագրեր են, որոնք անպայման կիրագործվեն եւ դրական անդրադարձ կունենան կյանքի վեցերորդ տասնամյակը թեւակոխող քաղաքի վրա:

Կրկին ընդունե՛ք իմ ջերմ շնորհավորանքներն ու լավագույն մաղթանքները հոբելյանի առիթով:

Բարի երթ հիսունամյա Քաջարանին դեպի հաջորդ տասնամյակ:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մշտամնա արժեքներ. քաղաքն ունի նոր խորհրդանիշներ

Սկիզբը՝ էջ 3

այդ քարից է կառուցվել: **«Հին Հայաստանում Արտաշես թագավորի ժամանակներից սահմանաքարեր գոյություն ունեին: Դրանք տարբեր տեսքի, տարբեր ձեւի էին լինում: Տարածված ձեւերից մեկը սյունն էր: Սա եմ հիմք ընդունել եւ որպես քաղաքի մուտք սյունն եմ ընտրել»,** – ասում է հեղինակը: Սյան վրա քարերով գրված է «Քաջարան»: Եվ քանի որ Քաջարանի հիմնական հարստությունը, խորհրդանիշը մոլիբդենն է, սյան վրա մոլիբդենի անմշակ հանքաքարի կտոր է տեղադրված: **«Դա մարդուն արդեն հուշում է, թե ինքը ինչ քաղաք է մտնում»,** – իր մտահղացումը պարզաբանում է ճարտարապետը:

Մուտքի կողքին կանգառ է կառուցվել. Յուրա Գեւորգյանը համամիտ չէ կարծիքին, թե այն փչացնում է ճարտարապետական կառույցի տեսքը. **«Կանգառը թեթեւ նյութից է կառուցվել, չի կարող ճնշել քարը ու նաեւ գործառնական նշանակություն ունի»:**

Քաղաքի մյուս մուտքը (կառուցվել է Մեղրու ճանապարհին) մետաղական կառույց է: Այն ուղղակի խորհրդանիշ է՝ վրան գրված «Քաջարան»: Հեղինակի պարզաբանմամբ գույները պարզապես դիզայնի պահանջներից ելնելով են ընտրել՝ արտահայտիչ դարձնելու համար: Այդ տեղանքը ճարտարապետական լուծումներ տալու մեծ հնարավորություն չէր տալիս, բացի այդ, իր ներկայացրած բազմաթիվ էսքիզներից պատվիրատուն այդ տարբերակն է ընտրել:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ



Լուսանկարը՝ Ա.Ավագյանի

Քաջարան, կեսդարյա իմ քաղաք

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարան
դասավանդող ուսուցչուհի՝ Արեւիկ Հայրապետյան

Աշխարհում ամենից շատ սիրում եմ իմ ծննդավայրը՝ Քաջարանը:

Իմ հայրենի Քաջարանը գտնվում է Կապուտջուղ լեռան ստորոտին, որտեղ վերջանում են անդունդները եւ որտեղ միախառնվում են ձյունափայլ գագաթներից գահավիժող Կապուտջուղ եւ Քաջարանց արագահոս գետակները՝ կազմելով Ողջի գետը:

Խոր-խոր կիրճերով է շառաչում Ողջի գետը: Ուս ուսի տված՝ սարերի մեջ հպարտ թագուհու նման ճերմակին է տալիս Կապուտջուղը՝ արեւի շողերի միջից մեկ՝ ծիծաղելով, մեկ՝ կիտելով հոնքերը: Դարեր շարունակ հոսել է այս գետը, հոսել մեկ՝ պարզ, մեկ՝ պղտոր, բազում փորձությունների վկա եղել, լեգենդներ են հյուսվել այդ փորձությունների մասին:

Ովքե՞ր էին նրանք, որոնց անունով էլ կոչվել է Քաջարանը: Հսկայական ուժի տեր, աժդահա մարդիկ, որոնք օտարերկրյա նվաճողների դեմ կռվելիս աչքի են ընկել իրենց անվախությամբ եւ սխրագործությամբ: Ասում են՝ քաջարանցիները Դավիթ-Բեկի ամենահուսալի զինվորներն են եղել, թշնամուն առաջին հարվածողները:

Սյունյաց լեռնաշղթայից սկսվող անդրկապուտջուղյան երկրամասը հինավուրց Գողթն գավառն է, որ տակավին հեծում է գերության մեջ: Այնտեղ են Մեսրոպավանքի ավերակները:

Քաջարանը Սյունյաց լեռների գեղեցկուհին է, այն փռված է լեռների գրկում, որոնք քաղաքին հմայիչ ու խորհրդավոր տեսք են տալիս: Նրանք հարուստ են օգտակար հանածոներով: Մարդիկ գլխատում են այդ հսկա լեռները եւ արդյունահանում պղինձ եւ մոլիբդեն: Աշխատավոր, իրենց գործին նվիրված մարդկանց շնորհիվ է, որ այսօր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ճանաչում է գտել ամբողջ աշխարհում:

Դժվար է պատկերացնել, որ մարդը կարող է այս անառիկ լեռների գրկում մի գեղեցիկ քաղաք շենացնել: Ի՞նչ կա աշխարհում հայրենիքից թանկ: Յուրաքանչյուրիս համար կա մի հայրենիք, որի համար դու ապրում ես ու աշխատում: Ի՜նչ մեծ երջանկություն է օգտակար լինել հայրենիքին, պաշտպանել հայրենիքի խաղաղ երկինքը: Իսկ Քաջարանը բոլոր քաջարանցիների հայրենիքն է, այստեղից է սկսվում նրանց հայրենիքը:

Այստեղ մարդիկ անմնացորդ աշխատում են նոր Քաջարանի լուսավոր ապագայի համար:

Ծանոթանալով իմ քաղաքի պատմությանը՝ հոգիս հպարտությամբ է լցվում:

Ժողովուրդն է հողը հայրենիք դարձնում: Մեր հողի յուրաքանչյուր թիզը հազարամյակների փառահեղ կենսագրություն ունի, եւ հենց դրա մեջ է նրա արժեքն ու ուժը:

Ես սիրում եմ իմ քաղաքը եւ մեծ հպարտություն եմ ապրում, որ իմ նախնիներն են կառուցել այս քաղաքը, որ եղել են իմ քաղաքի արժանի հերոսները թե՛ քաղաքի կառուցման, թե՛ մեր երկրի օրհասական պահերին:

Ես հպարտանում եմ, որ Քաջարանում հայրենասեր մարդկանց շնորհիվ իմ քաղաքն օր օրի գեղեցկանում է:

Ծնունդդ շնորհավոր, Քաջարա՛ն:

Ես ուզում եմ, որ զավակներդ ամեն օր մի նոր գեղեցկություն տոնեն քո մեջ, որ ստիպի նրանց ավելի սիրել քեզ, լուսավորվել քո գեղեցկությամբ, եւ ամեն մեկը մտածի ստեղծել մի նոր, անզուգական գեղեցկություն…

Արեւ… դու ավելի ջերմ ես այստեղ,
Երկինք… դու ավելի ջինջ ես այստեղ,
Իմ տո՛ւն հայրենի,
Ծաղկի՛ր եւ փառքո՛վ ապրիր:

N_158-159 (22-23).indd 6 20.12.11 5:25:57 PM

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՅՑԸ

«Քաջարան... աս հրաշք է»



ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԸ՝ ՔԱՋԱՐԱՆՈՒՄ

Ըստ ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆԻ

1962 թվականն էր: Մեծ շուքով նշվում էր Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը: Մեզ մոտ՝ Քաջարան եկան Բաբկեն Ներսիսյանը, Ժան Էլոյանը եւ Միեր Մկրտչյանը, ովքեր արտասանում էին ոչ միայն Սայաթ-Նովայի բանաստեղծությունները, այլեւ Պարույր Սեւակի ստեղծագործություններից, հատկապես՝ հատվածներ «Անլռելի զանգակատուն» պոեմից, որի նկատմամբ հետաքրքրությունը գնալով ավելի էր ահագնանում, հրատարակվելուց 3 տարի անց հսկայական հետաքրքրություն էր առաջացնում: Ես զարմանում էի, թե ինչպես կարելի է այդքան շատ բան ասել բանաստեղծությամբ: Ես հմայվեցի Պարույր Սեւակով: Երկար կարդում էի նրան ու ավելի հմայվում այդ բանաստեղծություններով...

... Կապան քաղաքի մշակույթի պալատում 1964թ. դեկտեմբերի 23-ին կայացած երեկոն տեղի ղեկավար մարմինները կազմակերպել էին այնպես, ասես գրողները եկել էին ունկնդրելու դահլիճում նստածների արտադրական հաշվետվությունները: «Մենք՝ լեռնագործներս..», այսպիսի «խանդավառ» խոսքերով էին սկսվում եւ ընթանում «խնամքով» նախապատրաստված ելույթները: Դրանցից մեկի ժամանակ Սեւակը դուրս եկավ ափերից եւ ընդհատեց «հռետորին»:

– Դուք՝ լեռնագործներդ, որ մեկ հնգամյակում երկու հնգամյակի պլան եք կատարում, ո՞ւր եք շտապում, ո՞վ է ընկել ձեր հետեւից: Հաշվե՞լ եք, թե քանի հնգամյակ է պետք, որ վերջնականապես դատարկվի էս երկրի ընդերքը: Եվ երբ վերջնականապես դատարկվի, դրանից հետո ի՞նչ պիտի անեք, ի՞նչ պիտի ուտեք, ինչո՞վ պիտի հպարտանաք: Ձեր մեդալներով ու շքանշաններո՞վ:

Այս ռեպլիկից հետո, որ ավելի շատ դահլիճում գտնվող ղեկավար այրերին էր հասցեագրված, կրակին յուղ լցրեց Սիլվա Կապուտիկյանը եւ դրանով էլ ավարտվեց հայ գրողների հետ «հանդիպումը»:

Հաջորդ օրը Քաջարանում կայացած «հանդիպմանը» Կապուտիկյանը չմասնակցեց: Այն, ի տարբերություն նախորդի, բոլորովին չէր նախապատրաստված, ավելին, նշանակված էր կինոցուցադրման ժամին եւ տեւեց ընդամենը... 20 րոպե: Տեսնել էր պետք, թե Սեւակն ինչպես էր պատին դեմ արել պալատի տնօրենին, ինչպես էր մոլեգնել:

– Եղբա՛յր, ո՞վ եմ ես քեզ համար, արտի՞ստ եմ, ջազի՞ստ եմ, ինչ եմ, ես հո չե՞մ եկել իմ ֆիգուրը ժողովրդին ցույց տալու: Մարդիկ եկել են կինո դիտելու, ինչո՞ւ եք խանգարում նրանց: Ես եկել եմ գրասեր մարդու հետ հանդիպելու...

Եվ կայացավ գրասեր մարդկանց փոքրիկ մի հավաքույթ տնօրենի առանձնասենյակում, որ տեւեց շուրջ երեք ժամ: Անմոռանալի հանդիպում: Կեսգիշեր էր արդեն, բայց ոչ ոք չէր ուզում բաժանվել բանաստեղծից:

ՀԻՇՈՒՄ Է ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԸ

1952թ.

... Երկու ճանապարհ, մեկը՝ Ղափանից Գորիս, մյուսը՝ Ղափանից Քաջարան, կարող էին գրավել գեղեցկության եւ ուժեղ զգայությունների ամենամոլի սիրահարներին: Դրանք ոչ միայն գեղեցիկ ճանապարհներ են՝ անընդհատ փոփոխվող բազմապիսի լեռնային պեյզաժով, դրանք նաեւ սարսափելի, թեպետ միանգամայն անվտանգ ճանապարհներ են:

Նրանցից յուրաքանչյուրի վրա լեռնանցքային կետ կա, մի քանի տասնյակ մետր տարածություն, որ փորված է ժայռի մեջ եւ կիսաշրջանի ձեւով պտույտ գործելով այդ ժայռի շուրջը՝ անցնում է անհատակ անդունդի եզերքի քիվով: Նրանք՝ այդ սարսափելի մի քանի տասնյակ մետրերը, ձեզ միանգամից փոխադրում են կիրճի գլխին բարձրացած գեղեցկության մի աշխարհից մի այլ աշխարհ՝ նույնպես սքանչելի, բայց արդեն բարձրացած նոր կիրճի գլխին, ուր պետք է այժմ իջնեք դուք:

Ով բարձունքից չի վախենում, այս լեռնանցքերում թողնում է մեքենան եւ գերադասում է ոտքով անցնել այդ տեղերը: Այդպիսի զբոսանքի համար նա լրիվ վարձատրվում է: Նա իր ամբողջ կյանքում չի մոռանա գլխապտույտ առաջացնող այդ բարձրության, ոտքերի տակ բացված անդունդի զգացողությունը – անդունդ, որից իրեն բաժանում է մի քայլ՝ բարի կամքը բանական մարդու, որ ակամա զսպում է իր մեջ դարձյալ մի քայլ անելու, մոտ գնալու, էլ ավելի մոտենալու գայթակղությունը... Այդ անդունդի կանաչ մառախուղի մեջ մանր, մանրագույն կետեր են թվում մարդկային կացարանները, եւ դեղին քուղի պես են ձգված այծերի քայլերով բացված կածանները:

Քաջարան տանող նոր ճանապարհն սկսվում է ուղղակի քաղաքի միջից. որոշ ժամանակ նա ուրախ անցնում է գետի երկայնքով, գրեթե նրա մակարդակի վրա: Հետո բարձրանում է:

Ձեզնից դեպի ձախ գետը քանի գնում, ցած է իջնում. ցածրում, շատ հեռվում, փոքրիկ կանաչ պուրակի մեջ երեւում է հիդրոկայանի ուրվանկարը: Ձեզանից դեպի աջ՝ մեղմ կանաչ ալիքներով, մերթ կողոսկրի պես դուրս պրծնելով, մերթ խորքը քաշվելով՝ իրար հետեւից ձգվում են ծալքավոր լեռնալանջերը, եւ խճուղին հնազանդ շրջանցում է այդ ծալքերից յուրաքանչյուրը՝ աննկատելիորեն ավելի ու ավելի վեր բարձրանալով: Այդ ծալքերի կանաչից վեր են ցցված լեռնալանջերի՝ աղյուսի կարմրություն ունեցող ատամները: Եվ կարծես ձեզ ծաղրելով՝ այդ ժայռերի վրա չտեսնված օդային վայելչագեղությամբ ցատկում են ամենավարպետ որսորդների համար անմատչելի վայրի այծերը: Նրանք ոչ մի գնդակի մատչելի չեն: Նրանք գիտեն այդ: Ահա նրանցից մեկը կանգնեց ուղղակի ժայռի ծայրին, կանգնեց անշարժ, ինչպես արձան՝ եղջյուրները թեքած, եւ թվում է, նայում է ներքեւ եւ ծիծաղում իր սաթի գույնի աչքերով:

Մոտենում է լեռնային մի հրվանդանիկ, որը Սուրիկապ է կոչվում: Ժայռի մեջ փորած անցքը շրջանցում է այն: Սուրիկապից հետո արդեն կարելի է տեսնել Հալիձորը եւ բերդի քարե ավերակները: Սկսվում է Քաջարանի լայն ընդարձակությունը՝ լեռների խստահայաց մի պարիսպ՝ Ողջի գետի հենց ակունքի մոտ: Այս խստատես բարձունքի վրա ծնունդ է առնում փոքր գետակի զարկերակի առաջին բաբախումը...

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԱՅՑԸ

Ըստ ՄԱՐՏՈՒՆ ԱՍԱՍՅԱՆԻ
26.10.1978թ.

1978թ. հոկտեմբերին, երբ Վիլյամ Սարոյանն առաջին անգամ ոտք դրեց Այունիքում, բերկրանքով բացականչեց. «Իմ սիրտը լեռներում է»: Այդ մտքին նա ավելի «կառչեց», երբ տեսավ Քաջարանն ու նրա հերոս մարդկանց: ... Տեսնելով ճերմակ Կապուտջուղը, Գանձասար լեռը, լեռան թիկունքին՝ «գործատունը»՝ հարստացուցիչ ֆաբրիկան, ճոպանուղին, նոր Քաջարանը, ընկերակիցներին ասաց. «Գիտե՞ք, եղբայրնե՛ր, Շվեյցարիայի լեռներն ալ գեղեցիկ են, սակայն հեռացել են մարդկանցից: Այստեղ՝ Քաջարանում, ասել կուզեմ՝ Հայաստանում լեռները մարդկանց քով են, սերտ են միմյանց»: Եվ հիանում է, որ մարդն իր ստեղծածով ավելի է գեղեցիկ շուք ու տեսք տալիս լեռնաշխարհին: Սիրով է լցվում, որ իր ուղեկցորդը՝ Սերո Խանզադյանը՝ Քաջարանին գիրք է նվիրել:

– Ես ալ չեմ մոռնա մի բան գրել, Քաջարանն անուշ քաղաք է, կերեւա, մարդիկ էլ խիստ գործավոր են...

Նայելով իրեն օղակած բանվորներին ու երիտասարդներին՝ ոգեւորվեց. «Երիտասարդությունը հրաշք է, կմտածեմ, որ Քաջարանն ուժեղ է անորմով...»:

Քաջարանում մի կտոր հանքաքար էր վերցրել ձեռքը եւ մանկան պես հրճվում էր՝ «Աս հարստություն է, աս հրաշք է: Ուրախ , երջանիկ եմ, որ իմ ժողովրդինն է բոլորը»:

Հրաժեշտի ժամանակ դիմեց ճանապարհողներին.

– Շատ հեռու կերթամ, բայց սիրտս ձեր քով կթողնիմ, իմ սիրտն իմ լեռներում է: Ես Լոս-Անջելես անիկա իմ հետ չեմ տանի... Ձեր պատկերնիք ու ձեր մեծ-մեծ գործերի խորհուրդը կտանիմ իմ հոգվույս մեջ:

ՀԱՃԱԽԱԿԻ ԷՐ ԱՅՑԵԼՈՒՄ

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը եւս հաճախակի էր այցելում Քաջարան, լինում կոմբինատի արտադրամասերում, անկեղծ զրույց ունենում լեռնագործների հետ: Լուսանկարում նա զրուցում է բաց հանքի աշխատակիցների հետ: Ընդ որում նա հետաքրքրվում էր ոչ միայն լեռնագործների աշխատանքային եւ կենցաղի պայմաններով, այլեւ արտադրությունում նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի հարցերով եւ իր հեղինակությամբ միշտ ցանկանում էր օգտակար լինել Քաջարանին եւ քաջարանցիներին:

Այսնյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՅՑԸ

ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԵՐԸ՝ ՔԱՋԱՐԱՆՈՒՄ

ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի եւ հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի հերթական աշխատանքային այցն է Քաջարան: Այս անգամ նրանք եղան Գեղիի ջրամբարի շինարարության ընթացքը:

ՊՅՈՏՐ ԼՈՄԱԿՈ Պյոտր Լոմակոն այցելեց Քաջարան՝ կոմբինատի ղեկավարության հետ քննարկելու ձեռնարկության արտադրական հզորություններն ընդլայնելու հետ կապված հիմնախնդիրները: Հանքաքարի հանույթը տարեկան պիտի հասցվեր 7,1 մլն խորանարդ մետր, իսկ դրանով պայմանավորված խնդիրներ էին ծագում, մասնավորապես, ձեռնարկությանը տեխնիկական ջուր մատարակարարելու համար անհրաժեշտություն էր առաջացել կառուցել Գեղիի ջրամբարը: Կոմբինատի տնօրեն Համլետ Ոսկանյանի եւ Քաջարանի ու Ղափանի կոմբինատների միացյալ կուսկազմակերպության քարտուղար Կարեն Մկրտչյանի հետ ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստր Պյոտր Լոմակոն (լուսանկարում) քննարկեց նաեւ կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայի տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման եւ նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման խնդիրներ:

ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը՝ Քաջարանում:

ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆ
«Պղնձի համար» / 16 մարտի 1962թ.
...Հիվանդանոցային ավանը դիտելուց հետո ընկ. Ա.Միկոյանը եւ նրան ուղեկցող անձինք մեկնում են Քաջարան:
Անցնելով հանքագործների նորաստեղծ քաղաքով՝ ավտոմեքենաները բարձրանում են Գանձասար, որտեղ ծովի մակերեւույթից ավելի քան երկու հազար մետր բարձրության վրա բաց եղանակով արդյունահանվում է արժեքավոր հանքաքար: Ընկ. Ա.Միկոյանը մեծ հետաքրքրությամբ ծանոթանում է հանքագործների աշխատանքին: Նա զրուցում է Քաջարանի անվանի մարդկանց՝ խոր հորատման վարպետ Վ.Ավետիսյանի, էքսկավատորավար Գ.Պետրոսյանի եւ ուրիշների հետ: Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի դիրեկտոր Հ.Սահակյանը ընկ. Միկոյանին մանրամասն պատմեց լեռնահանքային արդյունաբերության զարգացման առաջիկա տարիների մեծ պլանների մասին:
Ապա ընկ. Միկոյանը եղավ ֆլոտացիոն ֆաբրիկայի մանրատման բաժանմունքում: Այստեղ նա հետաքրքրվեց ձեռնարկության վերակառուցմամբ, պղնձամոլիբդենային կոնցետրատի թողարկման ավելացմամբ:
Կոմբինատը դիտելուց հետո ընկ. Ա.Միկոյանը, ինչպես նաեւ Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար Յա.Զարուբյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա.Քոչինյանը եւ մյուսները գնացին Ողջիի կուլտուրայի պալատը, որտեղ տեղի ունեցավ հանդիպում շրջանի աշխատավորների ներկայացուցիչների հետ:
Երեկոյան ընկ.Ա.Միկոյանը եւ նրան ուղեկցող անձինք գնացքով մեկնեցին Երեւան:

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ 1992թ. օգոստոսի սկզբին հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, այլ պաշտոնատար անձինք այցելեցին Ղափանի շրջան: Շրջկենտրոնից պատվիրակությունը մեկնեց Քաջարան: Բարձրաստիճան հյուրերը եղան Գանձասարի բաց հանքում, որտեղ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարության հետ քննարկվեց ձեռնարկության արտադրանքը լիարժեք իրացնելու հարցը: Այնուհետեւ Քաջարանի մշակույթի պալատի մերձակա հրապարակում Լ.Տեր-Պետրոսյանը հանդիպեց հարյուրավոր քաջարանցիների հետ:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը 2002-ի մարտի 30-ին աշխատանքային այցով եղավ Սյունիքում: Կապանի տարածաշրջանում նախագահն այցելեց Կապանի մեքենաշինական գործարան, թռչնաֆաբրիկա, Զանգեզուրի պղնձամոլիբդենային եւ Կապանի լեռնահարստացման կոմբինատներ, վերջիններում քննարկվեցին լեռնարդյունաբերության զարգացման խնդիրներ: Ռ.Քոչարյանը հանդիպումներ ունեցավ Կապանի եւ Քաջարանի համայնքապետերի, տնտեսական ղեկավարների հետ:
2003 թվականի փետրվարի 2-ին եւ 3-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանը նախընտրական քարոզարշավի շրջանակներում կրկին այցելեց Սյունիքի մարզ: Փետրվարի 3-ին նախագահը հանդիպումներ ունեցավ Քաջարանի, Մեղրու ու Ագարակի բնակչության հետ:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ 2008-ի հունվարին հանրապետության վարչապետ Սերժ Սարգսյանը ՀՀ նախագահի ընտրության նախընտրական քարոզարշավի շրջանակներում եղավ Սյունիքում, հանդիպումներ ունեցավ ընտրողների հետ: Քաջարանում Սերժ Սարգսյանը ոչինչ չխոստացավ: Հանքարդյունաբերության մայրաքաղաքում պղնձամոլիբդենային կոմբինատը լուծում է բնակչության սոցիալական խնդիրները, Քաջարանում այլ բնակավայրերի համեմատ գործազրկություն չկա: Նախագահի թեկնածուն իր ելույթում արծարծեց հանքարդյունաբերության զարգացման ուղիները:

N_158-159 (22-23).indd 8 20.12.11 5:25:59 PM

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԱՅՑԵՔԱՐՏ

Զանգեզուրի պղնձամոլիբդենային.

հուսալի ապագային միտված ընթացք

Քաջարանի հիմքն ու ողնաշարը՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, ոչ միայն քաջարանցիների հիմնական աշխատավայրն է, այլեւ շարունակում է ակտիվ դերակատարություն ունենալ քաղաքի կայացման, բարգավաճման գործում, որի շնորհիվ համայնքն առանձնանում է ողջ հանրապետությունում: Մասնավորեցումը կոմբինատի զարգացման ընթացքին նոր տեմպեր հաղորդեց. դրա ապացույցն են պարեցպարի գրանցվող նոր ցուցանիշները ձեռնարկության աշխատանքի ամենապարբեր ոլորտներում:

Լուսանկարը՝ Յուրիկ Մարտիրոսյանի

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

«ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունը ՀՀ խոշորագույն լեռնահանքային ձեռնարկությունն է, գործարկվել է 1952թ.: Քաջարանի հանքային դաշտը գրավում է 20-25 հազար քկմ տարածք: Այն աշխարհի խոշորագույն հանքերից մեկն է: Այստեղ կենտրոնացված է մոլիբդենի համաշխարհային հաշվարկված պաշարների մոտ վեց տոկոսը, Հայաստանի պղնձի պաշարների մոտ 80 տոկոսը: Երկրաբանական-հետախուզական աշխատանքներ հանքավայրում անընդհատ կատարվում են. վերջին հաշվարկներով այստեղ ավելի քան 100 տարվա պաշար կա:

Հանքավայրում պղնձի ամենատարածված եւ գլխավոր արդյունաբերական միներալը խալկոպիրիտն է: Հաջորդ ամենատարածված եւ գլխավոր միներալը մոլիբդենիտն է:

Հանքաքարը բաց հանքից տեղափոխվում է կոմբինատի ջարդման տեղամաս, որտեղ նախնական ջարդումից հետո մուտք է գործում հարստացուցիչ ֆաբրիկա, հզոր աղացներում ամբողջովին մանրացվում, ջրի հետ անցնում բարդ տեխնոլոգիական եւ քիմիական գործընթացներով. վերջնականորեն ստացվում են պղնձի եւ մոլիբդենի խտանյութերը:

Հարստացուցիչ ֆաբրիկայի թափոնները 36 կմ երկարությամբ թափուկատարով տեղափոխվում եւ ամբարվում են Արծվանիկի պոչամբարում:

1990-ականներին տնտեսական անկում ապրեց նաեւ այս ձեռնարկությունը: Այն ռիթմիկ աշխատանքն սկսեց 1994-ի գարնանը, եւ հաջորդ տարիներին աստիճանաբար սկսեցին ավելանալ արտադրական հզորությունները (տարեկան՝ միջինը 12 տոկոսով):

2000-ից ձեռնարկությունը սեփական ուժերին ապավինելու քաղաքականություն որդեգրեց. հիմք դրվեց մոլիբդենի եռօքսիդի արտադրությանը, վերջնականապես հիմնավորվեց պայթուցիկի արտադրությունը, կրի արտադրությունը: Ձեռնարկության տնտեսական քաղաքականության մեջ մեծ դեր ու նշանակություն ունի ներհանրապետական կոոպերացիան: Ձեռնարկությունում օգտագործվող նյութերի եւ պահեստամասերի ավելի քան 50 տոկոսն ապահովում են հայաստանյան ընկերությունները: Ընկերությունում եւ ընկերության պատվերների կատարման կամ արտադրանքի վերամշակման գործընթացում հանրապետությունում ներգրավված է ավելի քան տասը հազար մարդ:

2004-ի դեկտեմբերի 14-ին կառավարության որոշմամբ ձեռնարկությունը մասնավորեցվել է. մասնավորեցման պայմանագրով ընկերության բաժնետոմսերի հսկիչ փաթեթը (60 տոկոս) անցել է գերմանական «Քրոնիմետ» ընկերությանը, 15 տոկոս՝ «Մաքուր երկաթ» գործարանին, 12.5-ական տոկոս՝ «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» եւ «Զանգեզուր մայնինգ» ընկերություններին:

Հետմասնավորեցման շրջանի ռազմավարությունում կոմբինատը մի շարք նպատակներ է դրել իր առջեւ: Դրանք են. արդյունավետ շահագործել Քաջարանի հանքավայրը, զարգացնել հանքարդյունաբերությունը, ձեռնարկությունը հասցնել միջազգային չափանիշների, այդ նպատակով իրականացնել տեխնիկայի սերնդափոխություն, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, արդիականացնել տեխնոլոգիական պրոցեսները, 1.5-2 անգամ մեծացնել արտադրության ծավալները, ներդնելով տեխնոլոգիական նոր փուլեր՝ Հայաստանում կազմակերպել մոլիբդենի եւ պղնձի խտանյութերի վերջնական վերամշակում, ապահովել շրջակա միջավայրի պահպանության միջազգային նորմեր, շարունակաբար ավելացնել ընկերության աշխատատեղերը, սոցիալական ակտիվ քաղաքականությամբ տարածաշրջանային խնդիրների լուծման գործում ակտիվ դերակատարությամբ դառնալ Սյունիքի մարզի հետագա զարգացման գրավականը, խորացնել ճյուղի ներհանրապետական կոոպերացիան՝ հայրենական տնտեսության մեջ անհրաժեշտ նյութերի, սարքավորումների արտադրության կազմակերպման նպատակով, անթերի կատարել պետության առջեւ ստանձնած պարտավորությունները, ապահովել պետական հարկերի, տուրքերի կանոնավոր վճարումները:

Ինչպես ցույց տվեցին հետմասնավորեցման շրջանի երեքուկես տարիները, ընկերությունն իր գործունեության շրջանում առաջնորդվում է մատնանշված ռազմավարական դրույթներով եւ արդեն իսկ կյանքի է կոչել դրանցից շատերը:

Մասնավորեցումից հետո ընկերությունում միջին ամսական աշխատավարձն ավելացել է 82 տոկոսով եւ հասել 222 հազար դրամի: Նվազագույն աշխատավարձը 60 հազար դրամ է: Այսօր ձեռնարկությունում մոտ 3000 մարդ է աշխատում:

Հանքաքարի տարեկան վերամշակումն ավելացել է 46,3 տոկոսով (2008թ.՝ տարեկան 12 մլն տ), նույնքան ավելացել է հանքաքարի հանույթը, մակաբացման աշխատանքների ծավալը՝ 51,5 տոկոսով:

Բաց հանքում նորամուծություն են CAT ընկերության արտադրության բեռնատար մեքենաները, ամբարձիչները, մեծ եւ փոքր էքսկավատորները, բուլդոզերները: Հարստացուցիչ ֆաբրիկայում տեղադրվել է վեց նոր գնդիկավոր աղաց, ամբողջովին նորացվել են ֆլոտացիոն մեքենաները, տեղադրվել է պղնձի խտանյութի LAROX ֆիրմայի չորացման երեք ֆիլտր: Կառուցվել է օդամղման նոր բաժանմունք, այսօր աշխատող 65 «Բելազ» մեքենաներից միայն չորսն է հին:

Սկզբնավորման-կայացման շրջանից հետո կոմբինատի զարգացումը պայմանականորեն կարելի է բաժանել չորս փուլի:

I ՓՈՒԼ	1960-70թթ. արտադրական հզորությունը՝ տարեկան 5 100 000 տ հանքաքարի վերամշակում
II ՓՈՒԼ	1970-80թթ. արտադրական հզորությունը՝ տարեկան 7 100 000 տ հանքաքարի վերամշակում
III ՓՈՒԼ	1980-89թթ. արտադրական հզորությունը՝ տարեկան 8 500 000 տ հանքաքարի վերամշակում
IV ՓՈՒԼ	1990-2008թթ. արտադրական հզորությունը՝ տարեկան 12 000 000 տ հանքաքարի վերամշակում

Նոր տեղադրված 25 խմ տարողությամբ (նախկին 3.2 խմ փոխարեն) ֆլոտացիոն մեքենաներ

Մեծացել է շինարարական աշխատանքների ծավալը. օրինակ, եթե մինչ մասնավորեցումը՝ 2004 թ. կատարվել էր 552 մլն 470 հազար դրամի կապիտալ շինարարություն, միայն 2008թ. առաջին կիսամյակում կատարվել է 3,4 մլրդ դրամի կապիտալ շինարարություն:

Պոչուկատարի առաջին դյուկերում 800մ (1000մմ-անոց) երեսպատված խողովակաշար է անցկացվել, որը ծառայության երկար ժամկետ ունի: Աշխատանքներ են ընթանում երկրորդ, չորրորդ դյուկերում: Նոր բուլդոզերներ են աշխատում նաեւ պոչամբարում:

Այս տարվա վերջին ներդրումների ծավալն ընկերությունում (մասնավորեցումից հետո) արդեն կիսասի 157մլն դոլարի:

Աշխատանքի առավել օպտիմալ կազմակերպման համար կատարվել են նաեւ կառուցվածքային փոխություններ, բացվել են նոր բաժիններ: Դրանցից է բնապահպանության բաժինը: Ընդ որում, ավելացել են ձեռնարկության բնապահպանական վճարները, նոր հիմքի վրա է դրվել շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ տարվող աշխատանքը: Պոչուկատարում կատարվող աշխատանքները եւս դրան են միտված: Պոչամբարում ժամանակին կատարվում է ռեկուլտիվացիան, լաբորատորիայում նոր սարքեր են տեղադրվել, որոնք հնարավորություն են տալիս վերահսկել բնապահպանական վիճակը: Ստեղծվել է առանձին աշխատանքային խումբ, որը պոչուկատարի անվտանգության շուրջօրյա վրահսկողություն է իրականացնում: Ստեղծվել է նաեւ նոր՝ էսթետիկայի արտադրամաս, որի գործառույթը մաքրությունը, արտադրական էսթետիկան, աշխատանքային պայմանների սանիտարահիգիենիկ վիճակը վերահսկելն է:

«ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունը պահպանում է իր դիրքը հանրապետության խոշոր հարկատուների առաջին եռյակում:

Մասնավորեցումից հետո նույնպես այն ակտիվությամբ շարունակում է դերակատարությունը երկրի, առանձնապես Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում:

2008թ. առաջին կիսամյակի տվյալներով կոմբինատի՝ իր տրամադրության տակ մնացած շահույթի հաշվին մարզի պետական եւ համայնքային կազմակերպություններին, կրթական հաստատություններին, բարեգործական, հասարակական, առողջապահական կազմակերպություններին, անհատներին տրամադրած, սպորտային, մշակութային, սոցիալական նպատակներով հատկացրած օգնության գումարը կազմել է մոտ 1 մլրդ 400 մլն դրամ:

Հետմասնավորեցման շրջանում ապրանքային արտադրանքն աճել է 25 տոկոսով, նկատվում է որակական ցուցանիշների զգալի աճ:

Այսօր թողարկված մոլիբդենի խտանյութն ամբողջությամբ վերամշակվում է հանրապետությունում՝ «Մաքուր երկաթ» եւ «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ընկերություններում: Պղնձի խտանյութի մի փոքր մասն է մշակվում ՀՀ-ում: Այժմ կոմբինատը պղնձի վերամշակման գործարանի կառուցման աշխատանքներ է սկսել Քաջարանում՝ պղնձի խտանյութը նույնպես ամբողջությամբ երկրում վերամշակելու համար: Թողարկվող արտադրատեսակները՝ մոլիբդենի եւ պղնձի խտանյութերը, բոլոր չափանիշներով համապատասխանում են միջազգային նորմերին:

Սեփականատեր խումբը եւ կոմբինատի կոլեկտիվը կազմել են 15 տարվա (2005-2020) ներդրումային ծրագիր, որը դրույթներ է պարունակում հետագա անելիքների մասին: Նախատեսվում է աշխատանքները կատարել երկու փուլով եւ մինչեւ 240 մլն դոլարի ներդրում կատարել: Երկրորդ փուլի ավարտին նախատեսվում է հանքաքարի վերամշակման տարեկան ծավալները հասցնել մինչեւ 16-18մլն տոննայի:

Այսօրվա երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Այսօրվա աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վաստակավոր շինարարի, տաղանդավոր կազմակերպչի մասին պատմում են ընկերները:



Վոլոդյա Աբրահամյան

Կյանքի ուղին

Ծնվել է 1912-ին: Աշխատել սկսել է 1930 թվականին, նախ՝ որպես բանվոր, այնուհետեւ՝ Քաջարանի գյուղխորհրդի նախագահ, Կապանի կուսշրջկոմի հրահանգիչ, բաժնի վարիչ, շրջկոմի քարտուղար:

1954թ. նշանակվել է «Քաջարանշին» շինվարչության պետի տեղակալ:

1960թ. մինչեւ 1982թ. երկու տարի ընդհատումով «Քաջարանշին» տրեստի կառավարիչն էր:

Ավարտել է երկամյա կուսակցական դպրոցը, Քաջարանի շինարարական տեխնիկումը, Սվերդլովսկի հնժեներատեխնիկական կադրերի մասնագիտական բարձրագույն դպրոցը:

Աշխատել է «Քաջարանշին» տրեստի կառավարչի պաշտոնում՝ իրեն դրսեւորելով որպես հմուտ, տաղանդավոր ղեկավար, շինարարական գործի գիտակ ու զարգացած մարդ:

Նրա ղեկավարությամբ են կառուցվել Քաջարանի կոմբինատի հսկա կառույցները՝ ճոպանուղիներից 3-ը, հարստացուցիչ ֆաբրիկայի մեծածավալ շինությունը, Քաջարան եւ Կապան քաղաքների տասնյակ բնակելի շենքեր, սարքաշինական, «էլեկտրոն», մեքենաշինական գործարանները, տրիկոտաժի ֆաբրիկան, շինարարական իրերի կոմբինատը, մշակութային-կենցաղային այլ օբյեկտներ:

Այդ մեծ եռանդի ու կորովի տեր մարդն իր ավանդը թողեց Հայաստանի Հանրապետության արդյունաբերության, Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի տարեգրության մեջ: Նրա ղեկավարած «Քաջարանշին» տրեստը 22 անգամ արժանացել է միութենական ու հանրապետական փոխանցիկ դրոշի:

1966-68թթ. նա աշխատել է Հայաստանի գյուղական շինարարության նախարարության 5րդ տրեստի կառավարչի տեղակալ: Երբ տեղի է ունենում Քաջարանի ավերիչ երկրաշարժը, կոմբինատի տնօրեն Ֆ.Պետրոսյանի պահանջով կառավարությունը նրան նորից նշանակում է «Քաջարանշին» տրեստի կառավարիչ, որտեղ նոր թափով հանդես եկան նրա կազմակերպչական ունակություններն ու եռանդը, կարճ ժամանակահատվածում լուծվեցին երկրաշարժի հետեւանքների վերացման անլուծելի թվացող հարցերը:

Պարգեւատրվել է Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով, բազմաթիվ մեդալներով եւ գովասանագրերով: 1970-ից հանրապետության վաստակավոր շինարար էր:

1982 թվականին 70 տարեկանում անցավ կենսաթոշակի:

Հուլիսի 8-ին կլրանար վաստակաշատ շինարար Սարգիս Վարդանյանի 96-ամյակը: Չորս տարի առաջ է կյանքից հեռացել: 20 տարի ղեկավարել է «Քաջարանշին» տրեստը, եղել հարգված ու սիրված բոլոր աշխատողների կողմից: «Լավ ղեկավար, լավ ընկեր, լավ մարդ»: Այսպիսին է Սարգիս Վարդանյանը մնացել իրեն ճանաչողների, իր գործընկերների եւ, ընդհանրապես, այս մեծանուն մարդու հետ շփվելու բախտ ունեցած մարդկանց հուշերում:

Իսկ ինչո՞վ է Սարգիս Վարդանյանն արժանացել մարդկանց հարգանքին, ինչո՞ւ նրա անունը տալիս լուսատու ժպիտով են սկսում ներկայացնել նրան. մարդ, որը ծնունդ ու նոր տեսք տվեց անհրապույր, անմխիթար, խղճուկ բնակավայրերին:

Այս հարցերին կպատասխանեն հենց իրենք, ովքեր ծանոթ կամ անմիջական մասնակիցն են եղել նրա կենսագրությանը:

Վոլոդյա Աբրահամյան

1968թ. երկրաշարժն իր հետքերը թողեց Քաջարան քաղաքում: Թեեւ ոչ մի շենք չփլվեց, բայց աղետի հետեւանքները վերացնելու նպատակով ԽՍՀՄ կառավարությունը ստեղծեց երկրաշարժի հետեւանքները վերացնող հատուկ վարչություն, որի կազմում Քաջարանում ձեւավորվեց հատուկ գրասենյակ: Պետ նշանակվեց հենց ինքը՝ Վ.Աբրահամյանը, ում ղեկավարությամբ էլ կարճ ժամանակահատվածում վերականգնվեցին բազմաթիվ շինություններ: Հետագայում նրան նշանակեցին նորաստեղծ 5-րդ շինմոնտաժային վարչության պետ: Այդ տարիներին «Քաջարանշին» տրեստի կառավարիչը Սարգիս Վարդանյանն էր: Շատ բան է սովորել իր ղեկավարից, շատ հարցերում հաջողության հասել: **«Կարող եմ ասել, որ մեր հաջողությունը Սարգիս Սողոմոնիչի պահանջկոտության ու խստության արդյունքն էր»,** – այսպես սկսեց իր զրույցը Վ.Աբրահամյանը իր երբեմնի ղեկավարի մասին խոսելիս:

«Բազմաթիվ կառավարիչներ է ունեցել «Քաջարանշինը», բայց կարող եմ վստահ ասել, որ բոլոր ղեկավարները միասին վերցրած այնքան գործ չեն արել Զանգեզուրի համար (իսկ «Քաջարանշին» տրեստը իր գործունեությունը միայն Քաջարանում չէր ծավալում, այլ նաեւ ողջ Այսունիքում), որքան արել է Սարգիս Սողոմոնիչը: Չափազանց աշխատասեր, մարդասեր, դիվանագետ անձնավորություն էր: Մարդ, որ ամեն մի իրավիճակում կարողանում էր ճիշտ կողմնորոշվել: Նա հարգված եւ սիրված էր ոչ միայն իր աշխատակիցների, մտերիմ-ծանոթների, այլեւ բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում: Շատերը նախանձում էին նրան: Եթե սեղանի շուրջ նստած էր Սարգիս Սողոմոնիչը, ապա մյուսները միշտ երկրորդական դերում էին: Նաեւ մեծահոգի մարդ էր: Բազմաթիվ գողություններ եղան տրեստում իր ղեկավարման տարիներին, բայց ոչ մեկը չդատվեց, ինքն էր պատժում եւ դաստիարակում մարդկանց: Տրեստի օգուտների հաշվին Սարգիս Վարդանյանը տարեկան մի քանի բնակելի շենք պլանից դուրս էր կառուցում: Շատերի պես կարող էր իր սեփական գրպանի մասին մտածել, բայց ամեն ինչ անում էր ի նպաստ ժողովրդի: Նախ, որպես ղեկավար, պահանջկոտ էր առաջին հերթին իր նկատմամբ, հետո արդեն՝ իր ենթակաների»:

Աշխատանքը՝ աշխատանք, ընկերությունը՝ ընկերություն: Նա այս երկուսը հստակ տարանջատել գիտեր: Աշխատանքի ժամանակ պահանջկոտ ղեկավար էր, ընկերական շրջապատում՝ միայն լավ ընկեր: Խստապահանջ էր աշխատողների նկատմամբ, բայց այդ խստության մեջ կոպտություն չկար:

1968թ. երկրաշարժից հետո թեեւ շենքեր չփլվեցին, բայց ճաքեր առաջացան, եւ դրանցում բնակվելն արդեն անվտանգ չէր: Այդ տարիներին երկու-երեքհարկանի շենքերից էր բաղկացած Քաջարանը: Տարածքն էլ քիչ էր, եւ պահանջ կար, որ կառուցվեն նոր բազմահարկ շենքեր: Այդ նպատակով շենքերի մի մասը քանդեցին եւ նորերը կառուցեցին, իսկ մյուս շենքերը վերականգնեցին: Մինչեւ 1968թ. քաղաքում բնակվում էր 16-17 հազար բնակիչ, եռուն քաղաք էր, երկրաշարժից հետո աստիճանաբար քաղաքի բնակչության մի մասը հեռացավ:

«1968թ., երբ երկրաշարժը եղավ, ամբողջ կենտրոնական իշխանության ուշադրությունը Քաջարան քաղաքի վրա էր, քանի որ այստեղ էր Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը, որն այն տարիներին էլ համարվում էր մեր երկրի առաջավոր ձեռնարկություններից մեկը:

ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստր Լոմակոյի հրամանով երկրի գունավոր մետալուրգիայի ձեռնարկություններից մասնագետներ գործուղվեցին Քաջարան (որոնց թվում կային կին մասնագետներ), որպեսզի այն հնարավորինս շուտ վերականգնվի: Մի խոսքով, ողջ Խորհրդային Միության օգնությունը զգացվում էր այդ տարիներին: Վագոններն այնքան շատ էին, որ չէինք հասցնում բեռնաթափել: Նույնիսկ կոմբինատի բանվորներն էին արտահերթ աշխատում»:

Գառնիկ Հովհաննիսյանի հուշերից

Գառնիկ Հովհաննիսյանը Քաջարանի քաղխորհրդի գործկոմի նախագահն էր, երբ տեղի ունեցավ երկրաշարժը: Երկրաշարժի հետեւանքները վերացնելու, քաղաքին բնականոն տեսքը վերադարձնելու գործում մեծ էր նրա դերը: **«1968թ. երկրաշարժի ժամանակ Սարգիս Վարդանյանը Երեւանում էր, նրան պահանջեցին, որովհետեւ այդ գործը միայն նա կարող էր հանձն առնել: Կոմունալ հարմարություններից զուրկ շենքերը քանդեցինք, եւ կառուցեցինք հինգհարկանի կոմունալ բոլոր հարմարություններով բնակշենքեր: Բացի այդ լրացուցիչ շենքեր կառուցվեցին կոմբինատի համար, այդ ողջ շինարարությունը ղեկավարում էր Սարգիս Վարդանյանը: Հսկայածավալ աշխատանքներ էին իրականացվում նաեւ Մեղրու գյուղերում, դպրոցներ, ակումբներ կառուցվում»:**

Թեեւ երկրաշարժի ժամանակ տները չփլվեցին, բայց այդտեղ ապրելը վտանգավոր էր դարձել: Փոքր քաղաք էր, բայց մեծ էր բնակչության թիվը: **«Հանքավանը, Հանդը, Զեյվան մտնում էին Քաջարան քաղաքի կազմի մեջ: 17-18 հազար բնակիչ կար իմ ղեկավարման տարիներին, քաղսովետի գործկոմի նախագահ աշխատեցի 1965թ. ապրիլի 1-ից մինչեւ 1972թ. հուլիսի 1-ը: Քաղաքի վերակառուցման գործում Սարգիս Վարդանյանը շատ մեծ լումա ունի: Միայն աշխատանքով չենք առնչվել. երկու տարի էլ՝ 1959-60թթ. հարեւաններ ենք եղել: Մեծ սրտի տեր մարդ էր, գիտեր մարդուն հարգել, երիտասարդին դաստիարակել, եթե չէր կարողանում դաստիարակել, աշխատանքից ազատում էր, ասում էր՝ մենք միասին չենք կարող աշխատել: Կարողանում էր մարդուն աշխատեցնել, գիտեր՝ ով ինչ կարողության տեր է: Նրա ղեկավարած տրեստը միշտ հաղթող է դուրս եկել հանրապետական, համամիութենական մրցույթներում: Բազմիցս արժանացել է միութենական եւ հանրապետական փոխանցիկ դրոշների: Կյանքից հեռացավ 92 տարեկանում, 2004թ.»**:

ՄԵՐԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Քաջարանն ավելի բարեկեցիկ դարձնելու մտայնությամբ

Լուսանկարը՝ Ա.Այվազյանի

ՄԵԺԼՈՒՄ ՀԱԿՈԲՅԱՆ
«Քաջարան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ

Սիրելի՛ համաքաղաքացիներ

«Քաջարան» բարեգործական հիմնադրամի եւ իմ սրտաբուխ շնորհավորանքն եմ փոխանցում ամենքիդ՝ Քաջարան քաղաքի ծննդյան 50-ամյակի կապակցությամբ: Բոլորիդ՝ քաջառողջություն, հաջողություններ անձնական կյանքում, աշխատանքում:

Քաջարանի անցած ուղուն ծանոթ ցանկացած մարդ տեղյակ է, որ քաղաքի նկատմամբ ի վերուստ եղել է ու կա պատշաճ ուշադրություն: Սակայն համապետական այդ հոգածությունը կյանքի չէր կոչվի, եթե ինքը՝ քաջարանցին, տեր չկանգներ իր քաղաքին ու քաղաքն իր տունը չհամարեր: Բարեբախտաբար քաջարանցին այդպես էր մտածել ու գործել տարիներ շարունակ: Իսկ ահա ինը տարի առաջ այդ հոգածությունն ու վերաբերմունքն ավելի համակարգված տեսք ստացաց: Նկատի ունեմ «Քաջարան» բարեգործական հիմնադրամի ստեղծումը, որն իր մեջ մեկտեղեց ամեն մի քաջարանցու, քաղաքի տարածքում գործող ամեն մի հիմնարկ-ձեռնարկության եւ աշխատավորական կոլեկտիվի, նաեւ մեր գործընկերներից շատերի ջանքը՝ հանուն քաղաքի բարգավաճման: Եվ այսօր, երբ մեր աչքի առջեւ խոյանում է գեղեցիկ, մաքուր փողոցներով, բարեկարգ բակերով, նորոգ շենքերով, ժամանցի հաճելի վայրերով, գործուն ենթակառուցվածքներով քաղաքը, դրանում իր համեստ ներդրումն ունի «Քաջարան» հիմնադրամը, որը հետեւողականորեն քաղաքային իշխանության, «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հետ համատեղ լուծում է քաղաքի առջեւ ծառացած եւ բնակչությանը մտահոգող հարցերը:

Աշխատանքային բազմաթիվ հասցեներ կարող ենք մատնացույց անել, որոնք կյանքի են կոչվել հիմնադրամի ջանքերով՝ բազմաբնակարան շենքերի տանիքների, վերելակների, աստիճանավանդակների նորոգում, փողոցների, բակերի բարեկարգում, պատմամշակութային վայրերի եւ խորհրդանիշների հիմնանորոգում, երեխաների կրթությանն ու դաստիարակությանն առնչվող հարցեր, սոցիալական այլեւայլ խնդիրներ: Իսկ եթե խոսենք թվերի լեզվով, ապա անցած հինգ տարում հիմնադրամը քաղաքում կատարել է մոտ 1 մլրդ դրամի ներդրում: Կառուցապատման եւ շինարարության աշխատանքներ են կատարվել նաեւ մերձակա Լեռնաձոր, Քաջարանց եւ Փուխրուտ գյուղերում: Ուշադրության կենտրոնում են եղել Մեծ հայրենականի եւ Արցախյան պատերազմի մասնակիցների, զոհված ազատամարտիկների ընտանիքների հոգսերը: Հիմնադրամի գործունեությունը, եթե փորձենք շատ համառոտ ամփոփել, մարդու նկատմամբ հոգատարության վառ դրսեւորում է, վաղվա օրվա հանդեպ մարդու հավատի վերականգնմանը միտված քայլ: Դա, կարծում եմ, հիմնադրամի գործունեության ամենացայտուն արդյունքն է: Այդ ցուցանիշներն ու ամփոփումները վկայում են, որ «Քաջարան» բարեգործական հիմնադրամը վաղուց դարձել է Քաջարան քաղաքի անկապտելի մասը, եւ քաղաքի հետագա ընթացքը, կարելի է ասել, չենք պատկերացնում առանց հիմնադրամի արդյունավետ գործունեության:

Տոնական այս առիթով հայտարարում եմ, որ հիմնադրամն այսուհետ եւս կշարունակի իր գործունեությունը՝ Քաջարանն ավելի բարեկեցիկ դարձնելու վճռականությամբ: Այսուհետ եւս հիմնադրամը կլինի յուրաքանչյուր քաջարանցու գործընկերն ու բարեկամը՝ համայնքային հիմնահարցերի լուծման ճանապարհին:

Սիրելի՛ քաջարանցիներ

Վերստին շնորհավորում եմ բոլորիս՝ մեր հնամենի ու նորօրյա բնօրրանի ծննդյան տոնի առիթով եւ համոզմունք հայտնում, որ այսուհետ եւս մեզանից յուրաքանչյուրին կուղեկցի քաղաքի տիրող զգացումն ու սրտացավությունը, որ յուրաքանչյուրս մեր կարելիության չափով կնպաստի Քաջարանի ներկա արժանապատիվ ընթացքին:

Շնորհավոր տոնդ, Քաջարա՛ն:

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՆՈՐ ԳԻՐՔ

«Քաջարանշինը»

Արտավազդ Մաթեւոսյանի հեղինակած «Քաջերի երկիր Քաջարան» փաստավավերագրական ակնարկը «Քաջարանշին» գրեստի ավելի քան կեսդարյա շինարարական գործունեության մասին է: Այդ գրեստի հերոսական ջանքերի շնորհիվ կառուցվեցին Քաջարան քաղաքը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, ինչպես նաեւ գարածաշրջանի բազմաթիվ բնակավայրեր, քաղաքացիական եւ ռազմական բնույթի գարբեր շինություններ:
Ստորեւ ներկայացնում ենք հատված փաստավավերագրական ակնարկից:

1937-41թթ. ընթացքում կատարած երկրաբանական-հետախուզական աշխատանքները, որոնք կատարվում էին Քաջարանի տարածքում, հատկապես Փիրդավդանի (հետագայում Գանձասար) լեռան վրա, ապացուցեցին երկրաբանների այն վարկածը, թե այդ վայրերը հարուստ են պղնձի, մոլիբդենի, բազմաթիվ այլ մետաղների հարուստ պաշարներով, որոնք ունեն խոշոր նշանակություն երկրի տնտեսության համար:

Հիմք ընդունելով այդ աշխատանքի արդյունքները՝ ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհուրդը եւ ՀամԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեն 1941թ. հունվարի 30-ին ընդունեցին որոշում Քաջարանում պղնձամոլիբդենային կոմբինատի կառուցման մասին:

Ի կատարումն այդ որոշման՝ 1941թ. փետրվարի 4-ին, այսինքն չորս օր անց, ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի արդյունաբերության ժողկոմ Պ.Ֆ.Լոմակոյի հրամանով «Գլխպղինձ» վարչության համակարգում ստեղծում են Փիրդավդանի պղնձամոլիբդենային ամբողջ համակարգի կառուցող հանքվարչության տնօրինություն՝ կոչելով այն «Փիրդավդանշին»:

1941թ. հնգամյա պլանը կազմելիս նախատեսվում էր Քաջարանում կառուցել 54000քմ բնակտարածք, դպրոցներ, հիվանդանոց, պոլիկլինիկա, մանկապարտեզներ, ճանապարհներ, կուլտկենցաղային օջախներ, մի շարք այլ կառույցներ:

Ելնելով դրանից՝ 1941թ. մարտ-մայիս ամիսների ընթացքում ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայի ժողկոմի, նրա տեղակալների, «Գլխպղինձ» վարչության պետի, նրա տեղակալների մոտ տեղի է ունենում 33 խորհրդակցություն, որտեղ քննարկվել են Փիրդավդանի հանքվարչության հետ կապված բազմապիսի հարցեր: Բոլոր խորհրդակցություններին մասնակցել է «Փիրդավդանշինի» ներկայացուցիչ Ց.Ա.Ջիլավյանը:

Առաջին հերթին ուշադրություն էր հրավիրվում Կապան-Քաջարան ավտոխճուղու նախագծային, նախահաշվային փաստաթղթերի, երկրաբանական-հետախուզական աշխատանքների ծավալների ավելացման, դրանց ֆինանսավորման հարցերին՝ ճշտելով օգտակար հանածոների պաշարները, դրանց հանքաբանական, քիմիական բաղադրությունները:

Հանձնարարվում էր կազմել տեղանքի համալիր հատակագիծ՝ նշելով փորձնական եւ արդյունաբերական ֆաբրիկաները, բնակտարածքները, հանգստի գոտիները, հացի գործարանը, կուլտկենցաղային եւ այլ շինություններ:

1941թ. վաղ գարնանը Քաջարան գյուղից դեպի Ողջի գյուղ տանող, գետի աջ ափին, Սայուց մարգագետնի դիմաց սկսվում է փորձնական հարստացուցիչ ֆաբրիկայի շինարարությունը: Երեք ամսվա ընթացքում հասցնում են կառուցել գլխավոր մասնաշենքի միայն պատերը:

«Մեխանոբր»-ից ստանում են ջարդիչ եւ այլ սարքավորումներ ու մեքենաներ: (Այդ աշխատանքների համար 1941թ. ծախսվել է 95476ռ. 1949թ. գներով):

Հետագայում այդ շենքը կառուցեցին ու դարձրին «Քաջարանշին» տրեստի կենտրոնական պահեստ, իսկ փորձնական հարստացուցիչ ֆաբրիկան կառուցեցին Գանձասարի առաջին հանքի հարեւանությամբ, թեք լանջին:

1940-1941թթ. շինվարչության գլխավոր ինժեներ Վախթանգ Ջափարիձեի ղեկավարությամբ Քաջարանում կառուցվել է երկու փայտաշեն տուն: Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո շինանարության գլխավոր տնօրեն էր նշանակվել Վասիլի Կարոտկովը, որը հետագայում դարձավ Հայաստանի գունավոր մետալուրգիայի վարչության պետ: Մինչեւ քարե շենքեր կառուցելը այդ տներում էին ապրում շինվարչության պետ Ա.Օգանովը եւ գլխավոր ինժեներ Գ.Պետրովը: Դրանք հետագայում քանդվեցին, տեղը կառուցեցին Քաջարան ավանի հանրախանութը:

Սակայն 1941թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, ու բոլոր որոշումները մնացին թղթի վրա: Միայն չդադարեց գործել Քաջարանի երկրաբանական-հետախուզական արշավախումբը, որը ղեկավարում էր այդ գործի բազմափորձ եւ հմուտ գիտակ Թադեւոս Հովակիմի Թադեւոսյանը. նա այդ դժվարին տարիներին կատարեց հանքային պաշարների հաշվարկը ու պատերազմի ավարտին հանձնեց արդյունաբերական շահագործման:

Փորձնական հարստացուցիչ ֆաբրիկան հարուստ հանքաքարով ապահովելու համար 1941թ. գարնան ու ամռան ամիսներին բանվորական բրիգադը՝ կազմված միջնակարգ դպրոցը նոր ավարտած չորս երիտասարդներից, երկրորդ հանքից դուրս հանված ապարներից Քերծատեղի փոսի ցածրամասում հարուստ հանքաքար էին կուտակում հետագայում փորձնական ֆաբրիկայում մշակելու համար: Այդ բրիգադը ղեկավարում էր Գեղամ Մելիքի Արզումանյանը:

1943թ. երկիրը գտնվում էր Հայրենական մեծ պատերազմի ահեղ, ամենապատասխանատու ժամանակաշրջանում: ԽՍՀՄ ղեկավարությունը մետալուրգիական արդյունաբերության մինիստր Իվան Թեւոսյանի առաջարկով ընդունել է որոշում վերսկսել Քաջարանի ընդհատված պղնձամոլիբդենային կոմբինատի շինարարությունը: Այն բխում էր լեգիրացված պողպատի արտադրությունը շուտափույթ կազմակերպելու եւ ստանալու կարիքից: Նույն թվականի հոկտեմբերի 30-ին Հայաստանի ԿԿ կենտկոմում տեղի է ունենում խորհրդակցություն, որին մասնակցում են ԽՍՀՄ մետալուրգիական արդյունաբերության «Գլխպղինձ» վարչության պետ Բուբոկը, Հայաստանի ԿԿ կենտկոմի հանքային արդյունաբերության բաժնի վարիչ Մովսիսյանը, Կապանի կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար Թոխունցը, Հայաստանի երկրաբանական վարչության պետ Հարությունյանը, Կապանի հանքվարչության տնօրեն Չախկալյանը, «Քաջարանշին» վարչության պետ Մելքումյանը, Քաջարանի երկրաբանական արշավախմբի պետ Թադեւոսյանը, հանքանյութը հարստացնող ինժեներ Բարսուկովը: Քննարկվում է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայի փորձնական եւ արդյունաբերական բնակավայրերի կառուցման համար տարածքներ տրամադրելու հարցը:

«Գլխգուննախագիծ» ինստիտուտի տեխգրասենյակի պետ Բոյման զեկուցում է ինստիտուտին տրված առաջադրանքների կատարման մասին:

Որոշում են արդյունաբերական հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցման համար տրամադրել Ողջի գյուղի արեւմտյան մասի տարածքը, իսկ փորձնական հարստացուցիչ ֆաբրիկայի համար՝ Քաջարան գյուղի արեւելյան մասում (300մ) Ողջի գետի աջ ափի տարածքը: Հետագայում այն կառուցվեց Գանձասարի հարավային լանջի վրա, իսկ բնակչության, ավաններ կառուցելու համար՝ նշված երկու գյուղերի տարածքները:

Հաշվի առնելով նշված ու ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ խորհրդակցությունը գտնում է, որ շինարարությունը հարկավոր է իրագործել՝ համապատասխան 1939թ. կազմված հատակագծի:

Հանձնարավում է «Գլխգուննախագիծ» ինստիտուտին նախագիծը կազմելիս ավելի մանրամասն կերպով մշակել հանքաքարի տեղափոխումը ճոպանուղիով հարստացուցիչ ֆաբրիկա երկրորդ հանքից:

Ծանոթություն. Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի ու քաղաքի կառուցման համար կազմվել է երեք հատակագիծ:

1939թ. մնացել է անավարտ:

1947թ. խնամքով կազմված, մանրամասն նկարագրված է արդյունաբերական ու բնակավայրերի տարածքները, հրապարակները, մշակույթի տները, դպրոցները, մանկապարտեզները, հացի գործարանը, ջրամատակարարման կառույցները, փողոցները, ճանապարհները եւ այլն: 1965թ., իհարկե, հասկանալի պատճառներով կատարված են զգալի լրացումներ ու փոփոխություններ:

1946թ. արտասահմանից մեր հայրենակիցների վերադարձը հայրենիք ու նրանց ընդունումը պահանջեցին մեծ կազմակերպչական հարցերի լուծում: Միայն 1947թ. ընթացքում Քաջարանում տեղավորվել է 80 ընտանիք, որոնցից 13-ը տեղափոխվել էին Երեւան, մնացածներին ապահովել էին բնակարանով, աշխատանքով: Բայց դեռ անելիքները շատ էին, դրա համար էլ 1946թ. հունիսի 22-ին «Քաջարանշինի» ղեկավարությունը քննարկեց արտասահմանից վերադարձող հայերի ընդունման ու տեղավորման հարցը: Այնպես որ, այդ պետական նշանակություն ունեցող հարցը եղել եւ մնում էր ուշադրության կենտրոնում: Հայրենադարձներից ոմանք արդեն ունեին մասնագիտություն, օրինակ՝ հյուսներ, փականագործներ, էլեկտրազոդողներ էին ու ավելի կարգապահ էին, քան տեղացիները:

Բանվորական ուժի պակասը խոչընդոտում էր շինարարական աշխատանքների կազմակերպմանը: Դրա համար էլ կառավարության որոշմամբ Ողջի ու Վերին Հանդ գյուղերի արանքում՝ Ողջի գետի ձախ ափին կառուցվեց 2000 տեղանոց կալանավայր՝ դրանով քիչ թե շատ լուծելով շինարարության մեջ աշխատող բանուժի խնդիրը:

Այդպիսի գաղութ-կալանավայր արդեն կար, ներկայիս N3 հէկի տարածքում ու կոչվում էր «Բեխի լագեր»: Գաղութի պետ էր աշխատում Խիկար Ենոքի Գեւորգյանը (հետագայում Քաջարանի շինվարչության պետի տեղակալ, քաջարանի կոմբինատի կուսկոմիտեի առաջին քարտուղար, Կապանի շրջգործկոմի նախագահ): Բայց այդ գաղութը հեռու էր, կալանավորներին Քաջարան աշխատանքի տանելն ու ետ բերելը այնքան էլ դյուրին գործ չէր, բացի դրանից արդեն ավարտվել էր Կապան-Քաջարան ճանապարհի շինարարությունը, այնպես որ այդ գաղութն այնտեղ պահելու համար այլեւս տնտեսապես հարմար չէր: Շատ կարճ ժամանակահատվածում կալանավորների ձեռքով կառուցվեց, 1947թ. նորից բացվեց նոր գաղութ. ինչու նորից, որովհետեւ դեռեւս 1940թ. այդպիսի կալանավայր կառուցվել էր Խաչինանի մոտ, որը պատերազմը սկսվելուն պես լուծարվեց, կալանավորներին տեղափոխեցին Գորիս:

1949-51թթ. արդյունաբերական հարստացնող ֆաբրիկայի, կենտրոնական վերանորոգման մեխանիկական արհեստանոցի կենտրոնական էլեկտրաենթակայանի շինարարության վրա, որը կոչվում էր արդյունաբերական տեղամաս, օրական աշխատում էր 1200 կալանավոր: Որքան էլ ցածր էր աշխատանքի արտադրողականությունը եւ կային անկարգապահ մարդիկ, այնուամենայնիվ ֆաբրիկայի կառուցման գործում նրանց ներդրումը մեծ էր:

Ինչ խոսք, կալանավորների այդպիսի ներհոսքը առաջացրեց նաեւ բացասական երեւույթներ: Դրանցից տասնյակ մարդիկ ստանում էին ազատ տեղաշարժվելու անցագիր տարբեր տիպի մասնագիտական աշխատանքներ կատարելու համար, որոնք իրենց պահվածքով բնակչության մեջ առաջացնում էին դժգոհություն, ստեղծում անառողջ մթնոլորտ: Ավելի լկտի էին պահում հսկող ռազմական զորամասի 300 զինվորները:

Կարելի է շատերի մասին գրել, բայց մեկի մասին եւս ուզում եմ նշել: Երվանդ Վասակի Խաչիկյան. պատիժը կրում էր Երեւանի «Հաղթանակ» կամրջի շինարարության ժամանակ տեղի ունեցած վթարի պատճառով, որտեղ եւս կալանավորներ էին աշխատում, մի քանիսը զոհվել էին անվտանգության տեխնիկայի կանոնների խախտման հետեւանքով: Մասնագիտությամբ ինժեներ շինարար էր այդ շինարարության պետը: Նա օգնում էր հարստացնող ֆաբրիկայի փաստաթղթերը, այդ թվում նախագծերը, նախահաշիվները ճշտելուն, իր ավանդն ու օգնությունը բերելով ընկերոջը՝ տեղամասի պետ Պետրոս Թումանյանին: Պատիժը կրելուց հետո նա աշխատեց շինարարության մինիստրության 9-րդ տրեստի կառավարիչ, հանրապետության շինարարության մինիստրի տեղակալ:

Շինարարության աշխատանքներն ապահովելու համար Քաջարան բերեցին 50 ռումինացի ռազմագերիների, որոնց տեղավորեցին նրանց համար կառուցված, շատ թե քիչ կահավորված հանրակացարանային սենյակներում: Նրանց իրավունք էր տրված ազատ տեղաշարժվելու, բայց միայն Քաջարանի տարածքում: Համարյա բոլորն էլ տիրապետում էին շինարարական տարբեր մասնագիտությունների, իրենց պահվածքով օրինակելի մարդիկ էին:

Նրանցից մեկն էլ Օլարուն էր, որը ստեղծել էր հյուսների բրիգադ, բոլորն էլ ռումինացիներ: Այդ բրիգադը կարճ ժամանակամիջոցում իրեն դրսեւորեց որպես առաջավոր, նրա փորձը քարոզում էին շինվարչության կոլեկտիվներում: Նա միշտ ասում էր, որ ճիշտ է, ռումինացի է, բայց իսկական ստախանովականը ինքն է իր բրիգադի հետ: Մտնելով սոցիալիստական մրցության մեջ՝ Օլարուի բրիգադը միշտ ճանաչվում էր առաջավոր եւ խրախուսվում էր: Օլարուն ճանաչված էր նաեւ որպես լավագույն նորարար ու ռացիոնալիզատոր:

Մեկ ուրիշը՝ Կոնստանտին Մարտունյակը, սայլով հացի գործարանից հաց էր տեղափոխում Քաջարանի, Ողջու, Հանքավանի հացի խանութներ ու սննդի օբյեկտներ, երբեք չէր չարաշահում վստահությունը: Համեստ, ամաչկոտ մարդ էր, ամուսնացավ հայուհու՝ Աղավնի Սահակի Մկրտչյանի հետ, ունեցավ զավակներ, որոնք էլ այսօր ապրում, աշխատում են Քաջարան քաղաքում:

Եվս մեկը՝ Բիլսանը. փականագործ, շինվարչության մեխանիկական արտադրամասի առաջավորներից, լավագույն ռացիոնալիզատոր:

Իսկ Վասիլի Ռախլիցկին առանց արտադրությունից կտրվելու , ավարտեց Քաջարանի շինարարական տեխնիկումը, աշխատեց որպես աշխղեկ, որից հետո դարձավ տեղամասի պետ: Նրա անմիջական ղեկավարությամբ է կառուցվել իր գեղեցկությամբ ու որակով աչքի ընկնող Ողջի մշակույթի տունը, որի բակում կանգնած է լեռնագործի արձանը: Այդ արձանը Վերին Հանդ գյուղացի Քրիստափոր Մարգարյանի լուսանկարից քանդակել, կերտել է հոյակապ նկարիչ ու ճարտարապետ, ծնունդով Առաջաձոր գյուղացի Արտավազդ Մարտիրոսի Ֆարսյանը, իր եղբայր Ռաֆիկի օգնությամբ: Մշակույթի տան ներսի խոյակները եւս քանդակել են իրենք:

Վասիլի Ռախլիցկու գլխավորությամբ կառուցվել է նաեւ 1-ին միջնակարգ դպրոցի շենքը, մանկապարտեզ, բազմաթիվ բնակելի տներ նաեւ Կապանում: Ամուսնացել էր շինվարչության նորմավորող Եկատերինա Զուբկովայի հետ, 1970թ. տեղափոխվեց հայրենիք՝ Ռումինիա: Այստեղ եւս ղեկավարել է շինարարական կազմակերպություն: Մի քանի տարի անց նրան կախել, սպանել էին իր աշխատասենյակում այն բանի համար, որ կոմունիստական երկրի համար այդպիսի նվիրվածությամբ է աշխատել, հիմա էլ վերադարձել է հայրենիք լրտեսելու հօգուտ նրա: Ահա այդպիսի ողբերգական վախճան ունեցավ այդ հոյակապ, համակրելի մարդը՝ Վասիլի Ռախլիցկին:

Այսնյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այսնյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՔԱՋԱՐԱՆԸ 50 ՏԱՐԵԿԱՆ Է

Գեղեցկության, նրբագեղության եւ ներդաշնակության մրցույթ-փառատոնին 3-7 տարիքային խմբում առաջին գլխավոր մրցանակին՝ «Միսս Քաջարան-2008» տիտղոսին արժանացավ Լուիզա Փարամազյանը, իսկ «Միսսr Քաջարան-2008» ճանաչվեց Հայկ Գեւորգյանը:

... Իսկ հոբելյանական միջոցառումները սկսվել են փարեսկզբից

Տոնդ շնորհավոր, Քաջարա՛ն

Կապանի արվեստի պետական քոլեջի դասախոսական կազմն ու ուսանողությունը հունիսի 18-ին Քաջարանում կազմակերպել էին համերգ՝ նվիրված կեսդարյա կյանքի պատմությունն ամփոփող Քաջարան քաղաքին:

«Տոնդ շնորհավոր, Քաջարա՛ն»: Այս խորագիրն էր կրում քոլեջի կազմակերպած միջոցառումը, որի ընթացքում լսարանին մատուցվեց դասական երաժշտություն: Դրա հետ մեկտեղ ներկայացվեց քոլեջի ուսանողների (գեղանկարիչների, դիզայներների) աշխատանքների ցուցահանդես: Այդ օրը տոն էր ոչ միայն քաջարանցիների, այլեւ միջոցառման կազմակերպիչների համար, ովքեր այս ձեւով շնորհավորեցին 50-ամյակը բոլորող Քաջարան քաղաքին ու քաջարանցուն:

«Միսս եւ միստր Քաջարան-Կապան» մրցույթ-փառատոն

Հունիսի 13-ին Քաջարան քաղաքում կայացավ «Միսս եւ միստր Քաջարան-Կապան» մրցույթ–փառատոնը: Արդեն չորս տարի է, ինչ Կապանում եւ Քաջարանում անցկացվում է գեղեցկության, նրբագեղության եւ ներդաշնակության մրցույթ-փառատոնը: Ամենամյա մրցույթն այս տարի ավելի շատ հոբելյանական շեշտ էր կրում: Քաջարան քաղաքի 50-ամյակին էր նվիրված փառատոնը, որի առիթով էլ այն անցկացվեց երկու քաղաքների մասնակցությամբ: Կապանցի եւ քաջարանցի մասնակիցները հանդես եկան միեւնույն բեմում, բայց մրցում էին միայն իրենց համաքաղաքացիների հետ: Մրցույթում ընդգրկված 3-16 տարեկան կապանցիներն ու քաջարանցիները նրբագեղ հագուստներով եւ բեմական պահվածքով իրենց դրսեւորեցին երեք փուլերում՝ ազատ, դասական եւ հեքիաթային ոճերում: Երեխաները ներկայացան աշխույժ, ռիթմիկ պարային համարներով, դասական պարերով եւ հեքիաթային, պատմական, գրական հերոսների կերպարներով:

Մրցույթն անցկացվում էր երեք տարիքային խմբերով: Գեղեցկության, նրբագեղության եւ ներդաշնակության մրցույթ-փառատոնին 3-7 տարիքային խմբում առաջին գլխավոր մրցանակին՝ «Միսս Քաջարան-2008» տիտղոսին արժանացավ Լուիզա Փարամազյանը, իսկ «Միստր Քաջարան-2008» ճանաչվեց Հայկ Գեւորգյանը: «Մինի միսսի» կոչմանն արժանացավ Ինգա Փարսյանը, իսկ Վահե Բադալյանը՝ «Մինի միստրի»: 8-10 տարիքային խմբում գլխավոր մրցանակներ ստացան Նելլի Պապյանն ու Արա Ստեփանյանը: Մյուս՝ 13-15 տարիքային խմբում՝ Լեւոն Ստեփանյանն ու Վահան Համբարձումյանը: Կապանից առաջին պատվավոր մրցանակները հանձնվեցին Թերեզա Գալստյանին ու Գոռ Հակոբյանին, իսկ «Մինի միսս» կոչմանն արժանացավ Լուիզա Զաքարյանը: 7-10 տարիքային խմբում «Միսս Կապան-2008» ճանաչվեց Ռուզաննա Գալստյանը:

Լուսանկարը՝ Ա. Ամալյանի

Երկրորդ տարիքային խմբից լավագույնը ճանաչված 12-ամյա Գոհար Գեւորգյանը մասնակցեց «Մանկական եվրատեսիլ-2008»-ին՝ անցնելով եզրափակիչ փուլ:

Փառատոնին մասնակցելու համար մայրաքաղաքից ժամանել էին «Միսս եւ միստր աշխարհ» միջազգային կազմակերպության նախագահ Աշոտ Խաչատրյանը եւ կազմկոմիտեի պատվավոր անդամ, հայտնի քանդակագործ Լեւոն Թոքմաջյանը, որը նաեւ Քաջարանում անցկացված փառատոնի ժյուրիի նախագահն էր: Հինգ հոգուց բաղկացած ժյուրին հիմնականում ուշադրություն էր դարձնում ոչ միայն մասնակից երեխաների հագուստներին, այլեւ նրանց բեմական կեցվածքին ու տաղանդին: Բոլոր մասնակիցներն արժանացան մրցանակների, եւ որ ամենակարեւորն է, Աշոտ Խաչատրյանը բոլորին անխտիր հրավիրեց մասնակցելու «Միսս եւ միստր Հայաստան-2008» փառատոնին:

Միջոցառման ավարտին Քաջարանին ձոնված շնորհավորանքի խոսքեր հնչեցին, շնորհակալագիր ու հուշանվեր հանձնվեց Քաջարանի քաղաքապետին ու «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենին: Այս օրերին մրցույթ-փառատոնի մասնակիցները «Միսս եւ միստր աշխարհ» միջազգային կազմակերպության Սյունիքի կառույցի նախագահ Նոնա Գալստյանի գլխավորությամբ, որը նաեւ կազմակերպել էր Քաջարանում կայացած համատեղ մրցույթ-փառատոնը, մեծ խանդավառությամբ պատրաստվում են քաղաքի 50-ամյակին նվիրված շքահանդեսին, որին կմասնակցեն մայրաքաղաքից ժամանած երգիչ-երգչուհիներ եւս:

Շախմատի առաջնություն

Շախմատի բաց առաջնությունը Քաջարանում ամեն տարի է անցկացվում, բայց այս տարի արագ շախմատի առաջնությունը նվիրված էր Քաջարան քաղաքի հոբելյանին: Արագ շախմատի քաղաքային փուլին մասնակցում էին 12 քաջարանցիներ, որոնցից ամենաշատ միավոր հավաքած երեք մասնակիցները հնարավորություն ստացան մասնակցելու մարզային փուլին:

Մրցաշարն անցկացվում էր Շախմատի Սյունիքի մարզային ֆեդերացիայի հովանավորությամբ:

Նրանցից միայն Արմեն խաչատրյանը լավագույն արդյունքներ ցույց տալուց հետո մասնակցեց մայիսի 10-20-ը Ջերմուկում անցկացված հանրապետական փուլի կիսաեզրափակիչին, գրավելով երկրորդ տեղը: Իսկ Հայաստանի 69-րդ առաջնության առաջին խմբի եզրափակիչ մրցաշարին Արմեն Խաչատրյանը ներկայացրեց Սյունիքի մարզը:

«Մենք ենք, մեր մարզերը» թատերական փառատոն

ՀՀ մշակույթի նախարարության հովանավորությամբ «Խալդ» բարեգործական հասարակական կազմակերպությունը նախաձեռնել էր «Մենք ենք, մեր մարզերը» համայնքային թատրոնների առաջին

Այսնյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այսնյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

Անդրանիկ Մարգարյանի մահարձանը

փառատոնը: Միջոցառումը մեկնարկեց Սյունիքից: Փառատոնի շրջանակներում մարզային թատրոնները եւ թատերական խմբերը ներկայացումներով հանդես էին եկել նաեւ Քաջարան քաղաքում: Քաջարանում փառատոնը սկսվեց քաղաքապետ Վարդան Գեւորգյանի բացման հանդիսավոր խոսքով: Այստեղ էին ժամանել Վայքի, Էջմիածնի, Արմավիրի, Հրազդանի, Ստեփանավանի թատերախմբերը: Փառատոնի բացման հանդիսավոր օրը մայրաքաղաքից ժամանած Հասմիկ Տեր-Կարապետյանը ներկայացրեց Գառնիկ Սեյրանյանի «Երկյուղած լռություն» իրատեսական էլեգիան, որը նվիրված էր մեծանուն դերասանուհի Սիրանույշի 150-ամյակին:

Փառատոնի ավարտին հյուրերը շնորհավորեցին քաղաքի 50-ամյակը՝ լավագույն բարեմաղթանքներ հղելով քաջարանցիներին:

Ցուցահանդես-ցերեկույթ Երեւանում

Դեռեւս 2007թ. Քաջարանի քաղաքապետ Վ. Գեւորգյանը Քաջարանի ծննդյանը նվիրված տոնակատարությունները ցանկացել էր անցկացնել պետական մակարդակով: Ուստի նույն թվականի հունվարին համապատասխան գրությամբ դիմել էր վարչապետ Անդրանիկ Մարգարյանին: Նա տվել էր իր համաձայնությունը եւ անմիջապես կարգադրել ընթացք տալ ու ստեղծել կառավարական հանձնաժողով: **«Քաջարանն ու քաջարանցիներին սիրում էր մեր վարչապետը»**, – ասում է Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը: Այս ամենը հաշվի առնելով եւ զգացված լինելով նման բարյացակամ վերաբերմունքից՝ Քաջարան քաղաքի ղեկավարությունը հարմար գտավ կազմակերպել համատեղ միջոցառում՝ ի նշան նախկին վարչապետի հանդեպ տածած հարգանքի: Հունիսին Քաջարանի ծննդյան 50 եւ Անդրանիկ Մարգարյանի 57-ամյակներին նվիրված ցուցահանդես էր կազմակերպվել, որին ներկա էին Անդրանիկ Մարգարյանի ընտանիքի անդամները, ԱԺ պատգամավորներ, ՀՀԿ երկու փոխնախագահները, Սյունիքի մարզպետը, «ՋՊՄԿ» ՓԲ ընկերության ղեկավար կազմը, Քաջարանի քաղաքապետը, ինչպես նաեւ երեւանաբնակ քաջարանցիներ: Ներկայացվեցին տեսանյութեր, որոնք պատմում էին կեսդարյա ուղի անցած Քաջարանի, ինչպես նաեւ Անդրանիկ Մարգարյանի քաջարանյան այցերի մասին:

Հանդիսություն՝ բանակի ստեղծման 16-ամյակի առթիվ

Քաջարանի քաղաքապետարանը քաղաքի մշակույթի պալատում կազմակերպել էր հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայոց բանակի ստեղծման 16-ամյակին: Մինչ այդ միջոցառման մասնակիցները՝ Հայրենական պատերազմի վետերանները, 1992-94թթ. պատերազմում զոհված ազատամարտիկների կանայք, հարազատները, պաշտոնական այրերն այցելեցին զոհված ազատամարտիկների հուշահամալիր, ծաղիկներ դրեցին զոհվածների շիրիմներին:

Քաջարանի քաղաքապետարանի եւ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության աջակցության շնորհիվ զոհված ազատամարտիկների ընտանիքներն ավանդաբար հանդիսավոր նիստի ժամանակ նվերներ են ստանում: Այս տարի նվերներ են բաշխվել 50 ընտանիքի՝ կենցաղային իրեր, հուշանվերներ: «Ազատագրում» հասարակական կազմակերպությունը պատերազմի մասնակիցներին հանձնեց մեդալներ, պատվոգրեր:

Նորապսակների օր եւ Տեառնընդառաջ

Քաջարանի քաղաքապետարանն այս տարի մեծ շուքով նշեց Տրնդեզը: Դա ինքնանպատակ չէր. նախորդ տարվա համեմատ քաղաքի նորապսակների թիվն ավելացել էր 12-ով: Միջոցառումը կազմակերպվել էր «Լեռնագործների» արարողատան տարածքում: Խարույկի շուրջ հավաքված նորապսակներին իր օրհնանքն էր բերել Կապանի եւ Քաջարանի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Գալուստ վարդապետ Դարբինյանը:

Մանկական երգի մրցույթ-փառատոն

Քաջարան քաղաքում 1997 թվականից ի վեր մանկական երգի մրցույթ-փառատոն չէր կազմակերպվել: Տասնմեկ տարի անց քաղաքի մշակույթի պալատում տեղի ունեցավ մանկական մրցույթ-փառատոն, որն անցկացվեց երկու փուլով:

Մրցույթին մասնակցած երեխաները Քաջարանի ենթաշրջանից էին՝ երեք՝ 8-11, 11-14, 14-16 տարիքային խմբերով: Ընդհանուր մասնակիցների թիվը 36 էր:

Մարտի 6-ին առաջին փուլից երկրորդ փուլ անցավ 26 երեխա՝ ներկայացնելով իրենց նախընտրած երգերը: Երկրորդ փուլը տեղի ունեցավ հունիսի 6-ին: Հանդես եկողներից հաղթողներ ճանաչվեցին յուրաքանչյուր խմբից առաջին, երկրորդ, երրորդ տեղեր զբաղեցրածները:

Երկրորդ տարիքային խմբից լավագույնը ճանաչվել է 12-ամյա Գոհար Գեւորգյանը, ով մասնակցեց «Մանկական եվրատեսիլ-2008»-ին՝ անցնելով եզրափակիչ փուլ: Գոհարը հաճախում է Քաջարանի արվեստի դպրոց: Մասնակցել է նաեւ «Գառնիկ Խաչատրյան-75» մրցույթ-փառատոնին՝ արժանանալով առաջին կարգի մրցանակի:

Ազգային մարզաձեւերի մրցույթ-փառատոն

ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը կազմակերպել է Քաջարան քաղաքի 50-ամյակին նվիրված ազգային մարզաձեւերի մրցույթ-փառատոն: Քաջարան քաղաքում փառատոնի նախնական փուլը տեղի էր ունեցել մայիսի 15-ին՝ թիվ երկու դպրոցի մարզադաշտում: Այդ օրը համայնքում հայտարարվել էր առողջության օր: Կազմակերպվել էին մարզիկների շքերթ, ցուցադրական ելույթներ տարբեր մարզաձեւերից, ելույթ են ունեցել նաեւ գեղարվեստական համույթները: Մրցումները տեղի են ունեցել հետեւյալ մարզաձեւերից. ըմբշամարտ, կշռաքարի բարձրացում, պարանի ձգում, շախմատ, կշռաքարի նետում, հեռացատկ, ձգումներ պտտաձողի վրա, աքլորախաղ, որոնք անցկացվում են մեկ պարտությունից դուրս մնալու մրցակարգով: Յուրաքանչյուր թիմի կազմում ընդգրկված էին ութ մարզիկ եւ մեկ մարզիչ: Հանրապետական փառատոնի եզրափակիչ փուլին Քաջարան քաղաքը հանդես կգա առանձին թիմով, որը տեղի կունենա Քաջարանում:

ՄԵՐԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՍԱԹԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ տնօրեն

Սիրելի՛ քաջարանցիներ
«Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ-ն տնօրինության եւ ողջ կոլեկտիվի անունից սրտանց շնորհավորում է ձեզ՝ ձեր հարազատ օրրանի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ: Ձեր քաղաքի կենսագրությունը սերտորեն կապված է Հայաստանի արդյունաբերության հսկաներից մեկի՝ «ՋՊՄԿ» ՓԲԸ հիմնադրման հետ:
Անցած տարիներին շատ բան է արվել ձեր սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ: Այդ աշխատանքները նոր բովանդակություն ստացան մեր հանրապետության անկախացումից եւ հատկապես կոմբինատի սեփականաշնորհումից հետո: Կարծում ենք, որ դուք քաջ գիտակցում եք, թե քաղաքի բարեկարգման ու ձեր կենցաղը ավելի բարեկեցիկ դարձնելու ուղղությամբ ինչ հսկայական աջակցություն է ցույց տալիս ձեր հարազատ կոմբինատը եւ անձամբ նրա գլխավոր տնօրեն ձեր բոլորի կողմից սիրված ու հարգված պարոն Մաքսիմ Հակոբյանը:
Համոզված ենք, որ Քաջարանն իր ուրույն տեղն է զբաղեցնելու նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության զարգացման ռազմավարական նոր ծրագրերի մեջ: Ձեզանից յուրաքանչյուրին մաղթում ենք անձնական մեծ երջանկություն, իսկ մեր սիրելի Քաջարանը ցանկանում ենք մոտ ապագայում տեսնել ավելի գեղեցիկ ու բարեկարգ, որը իրավամբ կհանդիսանա ձեր հոյակապ լեռնաշխարհի անգնահատելի զարդը:



ՖՐՈՒՆԶԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՋՊՄԿ» նախկին տնօրեն

Քաջարանն իր աշխատանքով աչքի ընկած քաղաք է, ոչ միայն իր, այլեւ հարակից բնակավայրերի բնակիչներին կերակրող քաղաք է: Համենայնդեպս, մի բան հստակ է՝ Հայաստանի տարածքում ապրելու ամենամեծ հնարավորություններն այստեղ են: Հանրապետությունում մենք շատ քիչ օգտակար հողատարածքներ ունենք եւ՝ խիտ բնակչություն… Հետեւաբար, ընդերքը պիտի օգտագործվի, առավելեւս Քաջարանում հանդիպում են այնպիսի մետաղներ, որոնք շատ տարածված չեն երկրագնդում…
Ամենակարեւորն այստեղ մարդիկ են, լեռնային ժողովուրդ են, նրանց մեջ աշխատասիրությունը պարտադիր, արյան հետ եկող, ժառանգականությամբ փոխանցվող հատկություն է: Աշխատասեր է Քաջարանի ժողովուրդը, աշխատել, արարել, քաղաք է կառուցել եւ հանքավայրի հիմքի վրա կերակրող ձեռնարկություն ստեղծել՝ կոմբինատը:
Շնորհավորում եմ քաջարանցիներին եւ բոլորիս՝ քաղաքի 50-ամյակի կապակցությամբ, ամենայն բարիք ցանկանում քաղաքին եւ նրա բնակիչներին: Ցանկանում եմ, որ քաղաքի սովորույթները միշտ հաստատուն պահեն, իրենց պապերի, հայրերի աշխատասիրության, մարդասիրության ավանդույթները պահպանեն: Ժամանակները փոխվել են, սովորույթներն էլ են փոխվում, բայց ցանկանում եմ, որ ավանդույթների նշածս կողմերը մարդիկ երբեք չկորցնեն, այլապես կկորցնեն մարդկային իրենց դեմքը:

ԳԵՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ գլխավոր տնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր

Սիրելի՛ Քաջարանցիներ
Ինձ համար ուրախություն եւ պատիվ է շնորհավորել ձեզ ձեր քաղաքի 50-ամյակի կապակցությամբ:
Ձեր քաղաքում եզակիորեն եւ շռայլորեն համատեղված են մարդկային հարստությունը, ընդերքի բարիքները եւ բնության գեղեցկությունը, որի փայլուն ապացույցն է քաջարանցին ու Քաջարան քաղաքը:
Մեկ անգամ եւս շնորհավորում եմ՝ համոզված լինելով, որ ներկա եւ ապագա սերունդները կշարունակեն այն գեղեցիկն ու լավը, որի արդյունքն է այսօրվա Քաջարանը, եւ բոլոր հայերի համար հպարտություն կլինի, որ իրենց հայրենիքում կա քաղաք Քաջարանը:

ՎԱԼԵՐԻ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ գործադիր վարչության նախագահ

Արարողի, ստեղծողի որակներն անբաժանելի են հայ մարդու ազգային կերպարից: Հանուն գործի միավորվելով՝ հայ մարդը համաշխարհային պատմության գանձարանին բազմաթիվ հավերժական արժեքներ է հանձնել եւ իրապես վաստակել ազնիվ աշխատանքով ապրող մարդու անունը: Հայի կերպարի իրական մարմնավորումն են այսօրվա քաջարանցին եւ ընդհանուր գործի շուրջ համախմբված ողջ Քաջարան քաղաքը: Երբ գործդ արդար է, եւ շրջապատված ես համախոհներով, յուրաքանչյուր տասնամյակ, որ խլում ես ժամանակից ու հանձնում պատմությանը, դառնում է արժեքների կերտման ու նվաճումների ժամանակագրություն: Այդպիսի նվաճում է Քաջարանի սիրտը՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», որի հետ բեղմնավոր համագործակցության տասնամյակները Ալավերդու լեռնամետալուրգիական գործարանի դարավոր կենսագրության փառահեղ էջերից եւ հեռանկարային ուղղություններից են: Քաջարանցիների աշխատանքային սխրանքներով նվաճված բարձունքներն այսօր յուրաքանչյուր հայի սրտում են, յուրաքանչյուրիս հպարտության առարկան:
Սրտանց շնորհավորում եմ բոլոր քաջարանցիներին քաղաքի հիսնամյակի առթիվ, մաղթում նրանց քաջառողջություն, երջանկություն եւ աշխատանքային հաջողությունների բազմաթիվ հիսնամյակներ:

Այսնյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այսնյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՀԱՅԱՑՔ ԿԵՍԴԱՐՅԱ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Անդրադարձներ Քաջարանի մշակութային եւ մարզական կյանքին

ՋՈՒՐԱՊ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի, սպորտի, մշակույթի, կրթության գլխավոր մասնագետ

Մարզական անցյալն ու ներկան

1950-ական թվականներին երիտասարդության համար Քաջարանում սկսեցին գործել մարզական սեկցիաներ (հետագայում մարզածեւերի քանակը հասցվեց 12-ի), կահավորվեցին մարզահրապարակները, ի վերջո՝ նաեւ ֆուտբոլի մարզադաշտը:

Կոմբինատի «Գանձասար» պիոներական ճամբարում մեկնարկեցին մարզական տոնահանդեսներ ու բազմազան միջոցառումներ: Քաջարանն ականածանքով է հիշում ֆիզկուլտուրայի բազմահմուտ ուսուցիչներ Վանուշ Ահարոնյանին, Ալբերտ Գասպարյանին, Կամո Աղամիրյանին, Օլեգ Ղոնյանին, Գրիշա Մկրտչյանին, Սամվել Հայրապետյանին, Համլետ Բաղդասարյանին, Էդիկ Ավետիսյանին, մարզիչ Սերգեյ Ստեփանյանին, որոնք պատանի մարզիկների նախասիրությունների հայտնաբերման, թիմերի կազմավորման ու մրցույթների կազմակերպման նախագնացներն էին:

Մեկ տասնյակի հասնող մարզածեւերից Քաջարանն արդեն թիմեր ուներ, որոնք շրջանային եւ հանրապետական մրցումներում հաջողություններ էին գրանցում: ՁՊՄԿ-ի մարզիկները 1957-64թթ. անընդմեջ եղել են հանրապետության գունավոր մետալուրգիայի համակարգի սպարտակիադայի չեմպիոն՝ 12 մարզածեւերից: 1962թ. Քաջարանի բասկետբոլի թիմը հանրապետության գավաթակիրն էր: 1962թ. Դափանի շրջժողկրթբաժինը Քաջարանում հիմնեց մարզադպրոց(տնօրեն՝ Ռոբերտ Նազարյան, հետագայում՝ «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթի աշխատակից): Մոտ երեք տարի անց բացվեց կոմբինատի մարզադպրոցը (տնօրեն՝ Օլեգ Գրաբովսկի): Սկսվեց մարզիկների կանոնավոր պատրաստման ժամանակաշրջանը: Սպորտի վարպետ, մարզադպրոցի երկարամյա տնօրեն Սամվել Հայրապետյանի ջանքերով մարզադպրոցը համալրվեց արդիական մարզագույքով, ընդլայնվեցին հնարավորությունները: Ընդսմին տարածում գտավ դահուկային սպորտը, եւ հետագայում տարիներ շարունակ կազմակերպվում էին «Քաջարանյան ձմեռ» համաքաղաքային մարզահանդեսներ:

Ընբշամարտը Քաջարանում եղել է վաղնջական ժամանակներից: Կանոնավոր ուսուցումը սկսվել է 50-ական թվականներին (Ա. Գասպարյան): Մեծ ներդրումներ ունեն մարզիչներ Կամո Հայրապետյանը, Պավլուշա Դավթյանը, Վիգո Խաչատրյանը, Գագիկ Համբարձումյանը, Մերուժան Աթայանը:

Ծանրամարտի քաջարանյան դպրոցը նոր բարձրության հասավ ֆիզկուլտուրայի ուսուցիչ եւ մարզիչ, հանրապետության ուսանողության չեմպիոն էդիկ Ավետիսյանի ջանքերով: Ավանդույթը շարունակեցին Գագիկ Բաբայանը, ուսուցիչ-մարզիչ Պուշկին Թեւանյանը, Հովիկ Մատինյանը եւ ուրիշներ:

Բռնցքամարտի մարզիչ Ժորա Հովհաննիսյանի սաները մի շարք անգամ հաղթողներ են ճանաչվել: Նրանցից հանրապետության առաջնությունների բազմակի մասնակից, այնուհետեւ մարզիչ Գավրուշա Ահարոնյանն իր մարզածեւով արժանացել է «Թռիչքն սկսվում է գետնից» հանրահայտ ֆիլմում նկարահանվելուն:

Հայտնի անուն էր բռնցքամարտիկ Սերգեյ (Սիկո) Մկրտչյանը:

Սիրված մարզածեւերից են վոլեյբոլն ու բասկետբոլը, որոնց ակունքներում Սերգեյ Ստեփանյանի, Օլեգ Մելգերի, Մելս Մկրտչյանի, Ռոբերտ Շահնազարյանի, Արմեն Հակոբյանի նվիրական աշխատանքն է: Լավագույն լողորդներ են աճեցրել մարզիչներ Գագիկ Հակոբյանը, սպորտի վարպետ Օլեգ Գրաբովսկին, Կովկաս Ասրյանը, որոնց ավանդույթները շարունակվում են:

1960-ական թվականներից ուսուցիչ, շախմատիստ Արամայիս Առուշանյանը աճեցրեց կարգային մի շարք շախմատիստների՝ Մ.Խունց, Յու.Հունանյան, Լ.Բալասանյան եւ մի քանի անգամ մրցանակային տեղեր գրավեց հանրապետական եւ տարածաշրջանային մրցումներում:

1990-ական թվականներին քաղաքական հայտնի իրադարձությունների պատճառով մարզական կյանքը քաղաքում հետընթաց ապրեց: Միայն իր բարձունքում անվարան մնաց քաջարանյան մարզաշխարհի համառ տիրակալը՝ մարզահամալիրի բազմավաստակ տնօրեն Դերենիկ Աբրահամյանը: Հանրակրթական դպրոցներում եւ մարզահամալիրում իր էստաֆետը շարունակեց ֆիզկուլտուրայի առաջատար մասնագետ, ընբշամարտիկ Մերուժան Աթայանը, որի ջանքերի շնորհիվ քաջարանցի պատանի մարզիկներն անընդմեջ մասնակցում են մարզի եւ հարակից տարածաշրջանի մրցումներին:

Քաղաքի մարզիկների անհատական ու թիմային մեծաքանակ պարգեւները՝ մեդալներ, գավաթներ, դիպլոմներ, պատվոգրեր եւ այլն, պահպանվում են մարզահամալիրի եւ հանրակրթական դպրոցների մարզական փառքի սրահներում:

Տարբեր տարիների հանրապետության չեմպիոններ են եղել սպորտի վարպետներ Գարիկ Խաչատրյանը (1953թ.), Հրայր Աղաբեկյանը (1984-88թթ., 2000թ.), Արման Մկրտչյանը (1987թ.1988թ.1990թ.), Հենրի Հովհաննիսյանը (1996թ.): Հարկ է նշել, որ վերոհիշյալ մարզիկների մարզիչն է մինչեւ 1995թ. գործած քաղաքային մարզադպրոցի նախկին տնօրեն, առաջին կարգի մարզիչ, սպորտի վարպետ Պուշկին Թեւանյանը:

2005թ. մարտի 21-ից ստեղծվեց սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության կից Քաջարանի ՄՊՄԴ ՊՈԱԿ-ը, որի տնօրեն նշանակվեց Մերուժան Աթայանը: Երեք տարիների ընթացքում մարզադպրոց հաճախել են 541 պատանիներ եւ աղջիկներ, որոնք հմտացել են 7 մարզածեւերի մեջ՝ բասկետբոլ, վոլեյբոլ, ծանրամարտ, բռնցքամարտ, շախմատ, ընբշամարտ, գեղարվեստական մարմնամարզություն:

Այժմ ՄՊՄԴ-ի սաներին իրենց ֆիզիկական հմտություններն է ուսուցանում 11 մարզիչ:

2007թ. ՀՀ ընբշամարտի առաջնությունում, 60կգ. քաշային կարգում, Հայկ Թումանյանը դարձավ ՀՀ չեմպիոն: 2007թ. եւ 2008թ. ծանրամարտի պատանիների առաջնության հաղթող է ճանաչվել Քաջարանի ՄՊՄԴ-ի սան Ռոման Հարությունյանը, որը 2008թ. հուլիսի 20-ին մասնակցեց Ֆրանսիայի Ամեին քաղաքում անցկացված ծանրամարտի Եվրոպայի պատանիների առաջնությանը:

ՄՊՄԴ-ի սան Մանե Սեւաչյանը Երեւան քաղաքում մասնակցեց ՀՀ շախմատի վարկանիշային մրցաշարին եւ լրացրեց առաջին կարգի նորմատիվը:

2008թ. Քաջարանի ՄՊՄԴ-ի երկու բռնցքամարտիկ եւ երկու ընբշամարտիկ ընդունվել են Երեւանի օլիմպիական հերթափոխի քուլեջը: ՄՊՄԴ-ի թիմերն ավանդաբար մասնակցում են Սյունիքի մարզային եւ ՀՀ առաջնություններին:

Շնորհիվ «ՁՊՄԿ» ՓԲԸ եւ «Քաջարան» բարեգործական հիմնադրամի՝ Քաջարան քաղաքում վերջին 6 տարվա ընթացքում վերակառուցվել եւ նորոգվել են Բակունցի, Տերյանի, Չարենցի, Գայի, Աբովյան փողոցների խաղահրապարակները, թիվ 1 եւ թիվ 2 միջն. դպրոցների մարզադահլիճներն ու մարզահրապարակները, ՁՊՄԿ-ի խաղադաշտն ու մարզահամալիրը: 2006թ. Բակունցի փողոցի մարզահրապարակը արժանացավ ՀՀ նախագահի «Լավագույն մարզական բակ» մրցանակին: 2007թ. Քաջարան քաղաքն արժանացավ ՀՀ նախագահի «Լավագույն մարզական համայնք» մրցանակին:

Քաջարան քաղաքում ՁՊՄԿ-ի և քաղաքապետարանի կողմից ավանդաբար կազմակերպվում են մի շարք սպորտային առաջնություններ, որոնցից են՝

- «ՁՊՄԿ» ՓԲԸ արտադրամասերի միջեւ ֆուտբոլի բաց առաջնությունը, բասկետբոլի եւ վոլեյբոլի առաջնությունները
- Քաջարան քաղաքի մինչեւ 15 տարեկան պատանիների ֆուտբոլի բակային առաջնությունը
- շախմատի Քաջարան քաղաքի բաց առաջնությունը
- թենիսի առաջնությունը
- բիլիարդի առաջնությունը
- ընբշամարտի առաջնությունը
- բռնցքամարտի առաջնությունը
- ազգային մարզածեւերի փառատոնը:

50-ամյա Քաջարանի պարեգրության մեջ առաջին անգամ ՀՀ ազգային մարզածեւերի փառատոնի եզրափակիչ փուլն անցկացվելու է Քաջարան քաղաքում, որտեղ հանդես կգա նաեւ Քաջարան քաղաքի մարզիկների թիմը:

Մշակութային ավանդույթները շարունակվում են

Քաջարանում մշակութային կյանքը զգալիորեն աշխուժացավ 1959թ., երբ շահագործման հանձնվեց նորակառույց մշակույթի պալատը: Պալատի առաջին տնօրենը Անդրեյ Մարգարի Սահակյանն էր: Նախկին զինվորականը եռանդուն աշխատանք էր ծավալում մշակույթի պալատում կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ: Պալատում գործում էին ինքնագործ խմբեր՝ ժողգործիքների եւ էստրադային, որոնց սիրով մասնակցում էին բանվոր-ծառայողները, ինժեներատեխնիկական անձնակազմը, վարչական աշխատողները, ուսուցիչները, գրադարանավարները: Մի խոսքով՝ մշակութային կյանքը մասսայականություն էր վայելում քաղաքում:

Անդրեյ Սահակյանից հետո հետագայում մշակույթի պալատի տնօրեններ աշխատեցին Արտուշ Հարությունյանը (երկար ժամանակով), Արծրուն Ալեքսանյանը, Ալբերտ Աբրահամյանը եւ Պուշկին Թեւանյանը, որին նորից փոխարինել եւ այժմ աշխատում է Ալբերտ Աբրահամյանը:

60-ական թվականներին եւ հետագայում մշակույթի պալատում հետաքրքրական միջոցառումներ են կազմակերպվել տեղի ինքնագործ խմբերի եւ հանրապետության մշակույթի ներկայացուցիչների ուժերով:

Քաջարանի մշակույթի պալատում ելույթ են ունեցել անվանի դերասաններ Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Խորեն Աբրահամյանը, Մհեր Մկրտչյանը, Բաբկեն Ներսիսյանը: Բեմադրություններով հանդես են եկել Գաբրիել Սունդուկյանի անվան պետական ակադեմիական, Կապանի, Արտաշատի, Կամոյի, Կիրովականի եւ Ստեփանակերտի թատրոնները, համերգներով՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարած երգչախումբը (կապելլա), Կոնստանտին Օրբելյանի էստրադային նվագախումբը, Թաթուլ Ալթունյանի երգի-պարի անսամբլը, Հայաստանի պարի պետական անսամբլը: Համերգային ծրագրեր են ներկայացրել Օֆելյա Համբարձումյանը, Ռուբեն Մաթեւոսյանը, Հովհաննես Բադալյանը, Վաղարշակ Սահակյանը, գուսան Աշոտը, Շահենը եւ շատ ուրիշներ:

1962թ. մեծ շուքով ու հանդիսավորությամբ տոնվել է Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը:

Քաջարանի մշակույթի պալատում բնակչության հետ հանդիպել են անվանի գրողներ Վիլյամ Սարոյանը, Կարապետ Սիտալը (ԱՄՆ), Սերո Խանզադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սեւակը, Ռազմիկ Դավոյանը:

Քաջարանի կոմբինատն ունեցել է իր բազմատպաքանակ «Քաջարան» թերթը, որի էջերում լուսաբանվել է քաղաքի եւ կոմբինատի առօրյան, ներկայացվել անվանի լեռնագործների կյանքը: Անվանի էքսկավատորավար Սերգեյ Հարությունյանը եւ ակումբավար Համլետ Ստեփանյանը գրել են «Քաջարան» երգը («Սեգ Կապուտջուղի լանջերն ի վար, Փռվել ես իմ դեմ քաղաք Քաջարան…»):

Բնակչության մշակութային սպասարկման գործում մեծ դեր են կատարել քաղաքի հինգ գրադարանները, գրախանութը:

Երաժշտական դպրոցը հիմնադրվել է 1960թ.: Սկզբնական շրջանում դպրոցը տեղավորված էր փայտաշեն մի տնակում, ուներ ընդամենը երեք դասընթաց, տասը աշակերտ, երկու դասատու: 1975թ. արդեն սաների թիվը 160 էր, կային 22 դասատու, մի քանի տասնյակ դաշնամուր եւ երաժշտական այլ գործիքներ՝ վեց մասնագիտության դասարաններ, հարմարավետ շենք: Դպրոցի շրջանավարտներից շատերն իրենց կրթությունը շարունակել են Կապանի եւ Երեւանի երաժշտական ուսումնարաններում, Երեւանի Կոմիտասի անվան երաժշտանոցում:

1976թ. քաջարանցիները լավ նվեր ստացան, ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրության որոշմամբ բացվեց գեղարվեստի դպրոց: Դպրոցը շուտով ունեցավ իր շենքը, կահավորվեց, համալրվեցին դասարանները, պարապմունքները բնականոն ընթացք ստացան: Դպրոցի մանկավարժներն աշակերտներին կերպարվեստի գիտելիքներով զինելուց բացի, ուշադրություն էին դարձնում յուրաքանչյուր աշակերտի անհատականության զարգացմանը:

Գեղարվեստի դպրոցի տնօրեն Ա.Առաքելյանը (տնօրեն է եղել շուրջ10 տարի) սկզբից եւեթ աշխատեց նոր մեթոդով՝ սաներին մղելով ինքնուրույն աշխատանքի:

Ներկայումս Քաջարանում գործում է արվեստի դպրոց, որը կազմավորվեց գեղանկարչական ու երաժշտական դպրոցների միավորումից՝ 1989թ.:

Քաջարանի երաժշտական դպրոցի առաջին տնօրեն է եղել Սեյրան Օհանյանը (1962-65թթ.), այնուհետեւ՝ Ս.Նամչեւաձեն: 1974-75 ուստարում երաժշտական դպրոցին կից բացվում է նկարչական դասարան (դրա բազայի վրա հետագայում՝ դպրոց):

1972-75թթ. երաժշտական դպրոցի տնօրենն էր Լ.Հակոբյանը (այժմ՝ Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն), 1975-94թթ. Ալբերտ Առաքելյանը (1989թ-ից՝ արվեստի դպրոցի տնօրեն), 1994-2000թթ.՝ Սուրեն Խաչատրյանը, 2000-ից՝ Դերենիկ Մկրտչյանը:

Մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության գործում մեծ է վերոհիշյալ դպրոցի դերը՝ իր երաժշտական եւ գեղանկարչական խմբերով: Պատանի երաժիշտ կատարողները, իրենց ղեկավարների գլխավորությամբ, ակտիվ մասնակից եղան ոչ միայն համաքաղաքային եւ մարզային տարբեր համերգներին եւ փառատոներին, այլեւ մասնակցելով հանրապետական մրցույթների, իրենց ներդրումն ունեցան հանրապետության պատանի կատարողների արվեստի զարգացման գործում: Տարբեր նկարչական ցուցահանդեսների կազմակերպիչն ու մասնակիցը եղան նաեւ փոքրիկ նկարիչները:

Արվեստի դպրոցում ուսանում է 250 աշակերտ:

Քաջարանում մշակութային կյանքի տարբեր միջոցառումներ ավանդաբար կազմակերպվում են մշակույթի պալատում, արվեստի եւ հանրակրթական դպրոցներում, քաղաքի կենտրոնական հատվածում՝ մշակույթի պալատին հարող հրապարակում: Վերջին տարիներին մի շարք միջոցառումներ ավանդական են դարձել:

Քաջարան քաղաքում գործում էր 4 համայնքային գրադարան: Բացի առանձին գրքերի քննարկումից, գրադարանում կազմակերպվում էին զեկուցումներ ու զրույցներ՝ նվիրված հանրապետության մշակութային կյանքի երեւելի իրադարձություններին: Քաղաքային գրադարանները, որոնք միավորվել են քաղաքապետարանի ակումբագրադարանային միավորման մեջ (տնօրեն՝ Էլեոնորա Համբարձումյան), ոչ միայն ընթերցողների հետ կազմակերպում են տարբեր բնույթի միջոցառումներ, այլեւ մասնակից են համաքաղաքային զանազան տոնների եւ տոնախմբությունների կազմակերպմանը:

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՀԱՅԱՑՔ ԿԵՍԴԱՐՅԱ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Կրթական համակարգը. համառոտ պարեգրություն

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն

Քաջարան քաղաքը 50 տարեկան է: Ընդամենը 50 տարի առաջ նա ստացավ ՀԽՍՀ շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ: Դա շատ քիչ է թվում ժամանակի առումով, քանի որ այստեղ շատ աշխատանքներ, մեծ գործեր են կատարվել, որոնք հնարավոր չէր առանց հիմնավոր կրթություն ստացած անձանց, իսկ նրանք կամ պետք է դրսից ներգաղթեին, կամ պետք է տեղում կրթություն ստանային: Սկզբում Քաջարանում դա տեղի ունեցավ այդ երկուսի համադրությամբ: Խորհրդային Միության տարբեր վայրերից Քաջարան եկան կրթված, տարբեր մասնագիտությունների տեր մոտ 20 ազգերի ներկայացուցիչներ: Քաղաքը եւ դպրոցները դարձան ինտերնացիոնալ: Հետագայում տեղում կրթական գործի զարգացման շնորհիվ աստիճանաբար գերակշռեցին տեղական կադրերը, իսկ հետո մնացին միայն նրանք: Կրթական գործի նախապատմությունը գնում է դեպի դարերի խորքը, շատ հին է, հասնում է մինչեւ Մեսրոպ Մաշտոց եւ անգամ նրանից առաջ: Ինչպես Քաջարանն է առաջացել Վերին ձորի գյուղերի հիմքի վրա, այնպես էլ դպրոցն ու կրթությունը:

Ցարական իշխանությունների հայահալած քաղաքականության հետեւանքով մեր ձորում դպրոցական կրթությունը սահմանափակվել է ծխական դպրոցներով, որոնք տարրական գիտելիքներ էին տալիս (գրել, կարդալ, հաշվել, աղոթել): Փոխարենը Վերին Հանդ գյուղում գործել է ռուսական դպրոց, որի մասին գրեթե տեղեկություններ չկան:

20-րդ դարի 20-ական թվականներին խորհրդային կարգերի հաստատումից հետո մեր տարածաշրջանում բացվել են Վերին Հանդի, Փիրմազրայի (Կաթնառատի), Քաջարանի եւ Լեռնաձորի տարրական դպրոցները:

Քաջարան քաղաքի ներկա տարածքում առաջին դպրոցը հիմնադրվել է 1926թ., երբ Վերին Հանդի դպրոցի ուսուցիչ Սամսոն Աբրահամյանը մի խումբ աշակերտների եւ ուսուցիչների հետ տեղափոխվում է Օխչի (Ողջի) նոր ստեղծված հայկական բնակավայրը եւ հիմնում տարրական դպրոց: Սամսոն Աբրահամյանը ավելի քան 50 տարի աշխատել է Քաջարանի եւ Ղափանի դպրոցներում, արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչման եւ առաջինը պարգեւատրվել Լենինի շքանշանով:

Այս դպրոցի ընդլայնման պատճառ դարձավ Զանգեզուրի երկրաշարժը, որի հետեւանքով շրջակա գյուղերի դպրոցահասակ երեխաները տեղափոխվում են Օխչու դպրոց, որը 1931թ. գործում էր որպես 7-ամյա դպրոց: Օրինակ՝ 1932թ. դպրոցի միայն 5-րդ դասարանում սովորել է 90 աշակերտ: Այստեղ դասավանդել են նաեւ եղեռնից փրկված երեխաները, որոնք մեծացել են Լենինականի ամերիկյան մանկատանը: Այս շրջանում դպրոցում դասավանդել եւ որպես տնօրեն է աշխատել Աշոտ Հովսեփի (Օսիպի) Հարությունյանը (հետագայում՝ խորհրդային բանակի գնդապետ, Կովկասյան զինվորական օկրուգի քաղվարչության պետ, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արխիվային վարչության պետ):

1937-1938 ուստարում դպրոցը դարձել է միջնակարգ եւ 1939-1940 ուստարում տվել առաջին միջնակարգ կրթությամբ շրջանավարտները:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո վերսկսվում են հետախուզական աշխատանքները պղինձ-մոլիբդենային հանքի պաշարների ճշգրտման ուղղությամբ: Բնականաբար, սպասվող արդյունաբերական վերելքը գրագետ մարդկանց կարիք էր զգալու, դրա համար Քաջարան գյուղում 1948թ. կառուցվում է դպրոցական մեծ շենք եւ Օխչու Խ.Աբովյանի անվան դպրոցը, բացի տարրական դասարաններից, տեղափոխվում է նորակառույց շենք եւ գործում մինչեւ 1976թ.:

Օխչիում մնացած տարրական դպրոցը աստիճանաբար աճում է եւ 1950թ. դառնում 7-ամյա, իսկ 1952թ.՝ կրկին միջնակարգ եւ անվանակոչվում է Ստ.Շահումյանի անունով:

1952թ. Հանքավան բանավանում բացվում է 7-ամյա (1958թ. 8-ամյա) դպրոց, որը վերաբացվեց 1968թ. բանավանի հետ համատեղ, բաց հանքն իջեցնելու հետեւանքով այժմ Հանքավան բանավանը եւ դպրոցը գտնել հնարավոր չէ:

Տեղի էր ունենում բնակչության կենտրոնացում ներկա Քաջարանի տարածքում, ուստի 1965թ. Ողջու դպրոցի աշակերտների մի մասը որոշ ուսուցիչների հետ տեղափոխվում է նորակառույց դպրոց, որը ստանում է Քաջարանի Ե.Չարենցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց անվանումը, մայր դպրոցը՝ թիվ 2, Խ.Աբովյանի անվանը՝ թիվ 3: 1968թ. թիվ 2 դպրոցից անջատվում է ռուսական սեկտորը՝ դառնալով Քաջարանի թիվ 4 ռուսական դպրոց, իսկ թիվ 3-ից՝ ադրբեջանական սեկտորը՝ դառնալով ադրբեջանական միջնակարգ դպրոց, որոնք լուծարվեցին ազգային զարթոնքի ժամանակ:

Բացի հանրակրթական դպրոցներից՝ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի համար բանվորական կադրեր պատրաստելու նպատակով բացվում է ֆաբրիկա-գործարանային ուսումնարան, որը հարյուրավոր լավագույն մասնագետներ է պատրաստում «Քաջարանշին» տրեստի եւ պղնձամոլիբդենային կոմբինատի համար: Այն հետագայում վերածվեց պրոֆտեխնիկական ուսումնարանի եւ շարունակեց բանվորական կադրերի դարբնոցի իր դերը (տնօրեններ՝ Կառլեն Հակոբջանյան, Վլադիմիր Ալեքսանյան):

1958թ. Քաջարանում բացվում է նաեւ շինարարական տեխնիկում, որը լայն պրոֆիլի տեխնիկական մասնագետներ է պատրաստում «Քաջարանշին» տրեստի եւ պղնձամոլիբդենային կոմբինատի համար: Հետագայում այն տեղափոխվեց Կապան եւ այժմ աշխատում է ճարտարագիտական քոլեջ անունով (տնօրեններ՝ Վաղարշակ Առաքելյան, Ռազմիկ Մեժլումյան, Սվետիկ Թումանյան, Կարեն Մկրտչյան):

Դպրոցները, տեխնիկումը, ՊՏՈՒ-ն ավարտած շատ շրջանավարտներ հետո շարունակեցին իրենց կրթությունը, ստացան բարձրագույն կրթություն, վերադարձան Քաջարան՝ դառնալով արտադրության նշանավոր կազմակերպիչներ: Նրանցից էին Ֆրունզե Պետրոսյանը, Բորիկ Մկրտչյանը, Համլետ Ոսկանյանը, Մաքսիմ Հակոբյանը եւ շատ ուրիշներ: Ոմանք այլ ճանապարհ ընտրեցին՝ դառնալով ուսուցիչներ, բժիշկներ, գիտնականներ: Հիշատակելի են Ալյոշա Թադեւոսյանը (բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր), Գագիկ Դավթյանը (կոմերիտական, կուսակցական աշխատող, բանաստեղծ): Ուրիշներն ընտրվեցին երկրի օրենսդիր մարմնում. Վազգեն Ավետիսյան, Էդիկ Համբարձումյան, Արկադյա Ոսկանյան, Պավլուշա Դավթյան, Սամվել Շահինյան, Վահե Հակոբյան: Այս ամենում ավանդ ունեն նշանավոր մանկավարժներ Սամսոն Աբրահամյանը, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչներ Ռուբեն Թադեւոսյանը, Արտաշես Կարապետյանը, Շմավոն Գեւորգյանը, Ռուբեն Ավետիսյանը, Հերա Գրիգորյանը, վաստակաշատ ուսուցիչներ եւ դպրոցի երկարամյա տնօրեններ Վանյա Գալստյանը, Անդրանիկ Ստեփանյանը եւ ուսուցիչների մի հսկայական բանակ, որոնց անունները մի հոդվածում ընդգրկել հնարավոր չէ:

Առողջապահական համակարգը՝ հուսալի ձեռքերում

Քաջարան քաղաքում առողջապահության հարցը եղել ու մնում է քաղաքի եւ կոմբինատի ուշադրության կենտրոնում

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ
«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն

1957թ. քաղաքում շահագործման է հանձնվել երկհարկանի հիվանդանոցի շենքը՝ թերապեւտիկ, վիրաբուժական, մանկական, ինֆեկցիոն եւ ծննդաբերական բաժանմունքներով: Հիվանդանոցը գործել է մինչեւ 1968թ.: 1968թ. երկրաշարժից հետո հիվանդանոցը տեղափոխվել է Քաջարան գյուղը: 1976թ. շահագործման է հանձնվել Քաջարանի ազգաբնակչության համար բոլոր հարմարություններով նոր հիվանդանոցի շենքը, իսկ 1980թ.՝ պոլիկլինիկայի նոր շենքը:

Երիտասարդ կադրերի համար Քաջարանի հիվանդանոցը եղել է առողջապահության նվիրյալների դարբնոց: Մեր հիվանդանոցում են իրենց աշխատանքային մկրտությունը ստացել հանրապետության տարբեր բուժհաստատություններում աշխատող բժիշկ-վիրաբույժներ Մուշեղ Միրիջանյանը, Ռուբեն Ֆենիսյանը, Արամ Ստեփանյանը, Նիկոլայ Աղախանյանը, Նունե Գեւորգյանը, ակնաբույժ Արամ Քարամյանը, նեւրոպաթոլոգ Էռնա Նորամիրյանը, ռենտգենոլոգ Ռոզա Ադամովան, ինֆեկցիոն բժիշկ Ռոզա Գալստյանը, քիթ-կոկորդի բժիշկ Ամալյա Գաբրիելյանը, բժիշկ լաբորանտ Սուսաննա Հակոբջանյանը: Իրենց երկարամյա աշխատանքային փորձը փոխանցել են երիտասարդներին բժիշկներ Վերա Մացոյանը, Վեներա Նիկողոսյանը, Աշոտ Քարամյանը, Իրինա Ստեփանյանը, Ասյա Քարամյանը, մարդիկ, որոնց կյանքը կապված է եղել հիվանդանոցի առօրյայի եւ մարդկանց առողջության հետ:

Հիվանդանոցի գլխավոր բժշկի պաշտոնում տարբեր տարիների աշխատել են Ռուբեն Բադալյանը, Մյուդ Պետրոսյանը, Աշոտ Քարամյանը, Վանյա Հովհաննիսյանը, Սեդա Սարգսյանը, Ռազմիկ Եղիազարյանը, Վերա Մացոյանը, Սեյրան Գրիգորյանը: 2005թ. Քաջարանի բժշկական կենտրոնը ղեկավարում է տողերիս հեղինակը:

Տարիների հմուտ աշխատանքով աչքի են ընկել բուժաշխատողներ Փառանձեմ Խաչատրյանը, Էմմա Ավետիսյանը, Զուլիետա Քոչարյանը, Եվգենյա Բաբաջանյանը, Վիկտորյա Մկրտչյանը, Ժենյա Մարտիրոսյանը, Սուսաննա Մինասյանը, Էմմա Միրզոյանը, Ռոմելա Գեւորգյանը, Սաթիկ Գաբրիելյանը, Մարուսյա Հովհաննիսյանը, Փառանձեմ Գրիգորյանը, Երմոնյա Կարապետյանը, Սուսաննա Ոսկանյանը:

Արցախյան պատերազմի մութ ու ցուրտ տարիներին հիվանդանոցը չի դադարեցրել իր աշխատանքը: Բուժանձնակազմի հոգատար եւ բարեխիղճ աշխատանքի շնորհիվ այդ պայմաններում փրկվել են մարդկային բազում կյանքեր, լույս աշխարհ են եկել նորածիններ, որոնք մեր ապագան են, մեզ փոխարինողները, մեր հայրենիքի վաղվա պաշտպանները:

2005թ. ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Քաջարան քաղաքի առողջապահական համակարգում կատարվել են բարեփոխումներ:

Քաջարանի հիվանդանոցը եւ Քաջարանի պոլիկլինիկան միավորվել եւ վերանվանվել է «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ, որը համալրվել է նոր երիտասարդ կադրերով, բուժսարքավորումներով: Այս բարեփոխումները կատարվել են «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հետ փոխշահավետ համագործակցության շնորհիվ: Այսօր հմուտ եւ փորձառու բուժքույրեր Արմեդա Աբրահամյանի, Նորա Կարապետյանի, Գալյա Խաչատրյանի, Մարիետա Ավանեսյանի հետ աշխատում են երիտասարդ եւ նորավարտ բուժքույրեր:

Փառք եւ պատիվ հիվանդանոցի այն բուժաշխատողներին, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայում մարդկանց առողջությունը պահպանելու համար ամենաթանկ ու նվիրական գործում:

ՔԱՋԱՐԱՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԸ



ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
1960-1965թթ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ
1965-1971թթ.

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
1971-1984թթ.

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱԼՅՈՇԱ
1985-1986թթ.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
1986-1996թթ.

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԺՈՐԱ
1996-2002թթ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2002թ. - մ/ա

N_158-159 (22-23).indd 15 20.12.11 5:26:06 PM

Այսօրյա երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Այսօրյա աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՄԵՆՔ

Ձեւակերպումը դիպուկ է գրված, թե Քաջարանը քաղաք-ձեռնարկություն է: Բնակչության 90 տոկոսն ընդգրկված է կոմբինատում: Այստեղ կան վարորդների, հորատողների, հանքահարստացնողների, մյուս մասնագիտությունների գերդաստաններ: Բազում օրինակներ կարելի է թվարկել, երբ մասնագիտությունը հորից փոխանցվել է որդուն, իսկ այս թղթակցության գլխավոր անձի դեպքում՝ որդիներին:

Գանձասարում սերունդների երթ է

Լուսանկարը՝ Ս.Մարտունյանի

Արամայիս, Արտակ, Արմեն Համբարձումյանները

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Արամայիս Համբարձումյանը Գանձասար բարձրացավ 1976-ին Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումն ավարտելուց հետո: Նախ՝ 4,6 խորանարդ մետր շերեփի տարողությամբ էքսկավատորի մեքենավարի օգնական էր, այնուհետեւ բաց հանքում մշտական գրանցում սկսեցին ստանալ, ընդ որում Անդրկովկասում առաջին անգամ, ութ խորանարդ մետր շերեփի տարողությամբ էքսկավատորներ: Որոշեց յուրացնել ավելի հզոր տեխնիկայի լեզուն: Մեքենավարի օգնականի կարգավիճակում երկար չմնաց: 1980-ից ինքն էր բանեցնում նոր էքսկավատորի լծակները:

Եվ կարելի՞ է արդյոք հաշվարկել, թե երեք տասնամյակից ավելի տարիներին քանի տոննա հանքաքար ու դատարկ ապար է բարձել «Բելազ» ինքնաթափերին (երբ այս նյութը պատրաստելու համար զրուցում էի նրա հետ, տասը-տասնհինգ րոպեի ընթացքում նրա էքսկավատորի մոտ «Բելազների» մի իսկական հերթ էր գոյացել): Մոտավոր պատկերացնելու համար, նշենք, որ օրական նա ինքնաթափերին է բարձում 2100 խորանարդ մետր դատարկ ապար, հանքաքարի բարձման նորմը 3100 տոննա է, եթե անսարք էքսկավատորներ են լինում, ձգտում է ավելի շատ բարձել: Գերակատարելով սահմանված նորմը, այդպիսով օգնության ձեռք է մեկնում հարկադիր պարապուրդի մատնված գործընկերոջը:

Երբ Գանձասար է բարձրացել, բախտը ժպտացել է վարպետ-դաստիարակների առումով. առաջին ուսուցիչը Մարտուն Շահբազյանն է եղել, որին երախտագիտությամբ է հիշում, հանապազօրյա հաց վաստակելու, ընտանիքը պահելու համար նախեւառաջ նրան է պարտական, թեպետ մասնագիտական խորհուրդներ եւ հմտություններ է ստացել նաեւ հանքաշխարհում հայտնի եւ պետական պարգեւների արժանացած ուրիշ մեխանիզատորներից՝ Վերդի Արզանյան, Պավլուշա Դավթյան, Պավլիկ Պետրոսյան: Այնուհետեւ ինքն է աշակերտներ ունեցել՝ Վարուժան Դավթյան եւ ավագ որդին՝ Արտակ Համբարձումյանը, որն էԿԳ-84Ի էքսկավատորի անձնակազմում իր զուգընկերն է, նույն անձնակազմում իր օգնականը կրտսեր որդին է՝ Կարենը: Ահա այսպես էքսկավատորի անձնակազմի վեց հոգուց երեքը նույն ընտանիքի անդամներ են: Ասել է թե՝ իր զավակների համար ծնող լինելուց զատ նաեւ վարպետ-դաստիարակ է եղել, նպաստել նրանց մասնագիտական կողմնորոշմանը: Գուցե այստեղ էլ է տեղին հայտնի ճշմարտությունը՝ ծնողիդ լսես, ոտքդ քարին դեմ չի առնի:

Երրորդ որդին՝ Արմենը, նույնպես լեռնային արտադրամասում է, բայց նա միանգամից լեռնային արտադրամաս չբարձրացավ: Բանակում ծառայելուց հետո ընդունվեց Հայաստանի ճարտարագիտական համալսարանի էներգետիկական ֆակուլտետ՝ էներգամատակարարում մասնագիտությամբ, այնուհետեւ տեղափոխվեց հեռակա ուսուցման համակարգ եւ հիմա ուսումը համատեղում է աշխատանքի հետ. էլեկտրափականագործ է լեռնային արտադրամասում: Համբարձումյանների գերդաստանի ավագը՝ Դարվին Համբարձումյանը (Արամայիսի հայրը) նույնպես աշխատանքային կենսագրություն է հյուսել բաց հանքում. տրակտորային հավաքակայանում փականագործ էր, հետագայում տեղափոխվեց կոմբինատի էներգաարտադրամաս, որտեղից էլ անցավ վաստակած հանգստի: Մի խոսքով, սերունդների երթը շարունակվում է...

«Ծնողի երջանկությունը զավակն է, նրան բարձրացնողն էլ, ամոթով անողն էլ, ուրախ եմ, որ տղաներս հարգված են եւ կոմբինատում, եւ Քաջարանում», – անկեղծանում է զրուցակիցս: Ի դեպ, Համբարձումյաններին ակնածանքով ներկայացրեց լեռնային արտադրամասի գլխավոր ինժեներ Արարատ Ներսիսյանը. **«Աշխատանքի բերումով 17 տարի է, ինչ ճանաչում եմ Համբարձումյաններին, հարգված ու սիրված մարդ է Արամայիս Համբարձումյանը: Ավագ որդին՝ Արտակը, կարճ ժամանակում տիրապետեց էքսկավատորավարի մասնագիտությունը, այդքան արագ մեքենավար դառնալը հազվադեպ երեւույթ է, համոզված եմ՝ Կարենը եւս շատ շուտով ինքնուրույն կբանեցնի էքսկավատորի լծակները»:** Մեր զրույցին աննկատ խառնվում է էդիկ Գրիգորյանը, որ թիվ 3 էքսկավատորի երրորդ մեքենավարն է. **«17 տարի միասին աշխատում եմ Արամայիսի հետ, նախանձել կարելի է նրա ընկերասիրությունը, եթե ցանկանա էլ, չի կարող ընկերոջը հուսախաբ անել»:**

Մեր զրույցն աստիճանաբար թեքվում է դեպի ձեռնարկության անցյալն ու ներկան: Արամայիս Հովհաննիսյանը պատմում է, որ նեղ օրեր էլ է տեսել: Արցախյան գոյամարտի օրերին հանրապետության լեռնահանքային արդյունաբերության առաջնեկը հարկադիր պարապուրդի մատնվեց, մի բան, որ խորհրդային տարիներին ամենամղձավանջային երազում նույնիսկ հնարավոր չէր տեսնել:

Շատ երեխա ունեցեք, երկիրը շեն պահեք...

2008-ի օգոստոսին, երբ լրանում է Քաջարանի 50-ամյակը, քաղաքի ամենապարեց մարդը՝ Սամսոն Առաքելյանը նշում է իր 90-ամյակը:

Լուսանկարը՝ Ա.Ավագյանի

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Ծննդյան կոնկրետ օր Սամսոն պապը չունի, իր հասակակիցներից ոչ մեկի ծննդյան ամսաթիվը գյուղի քահանան չի նշել, բայց գիտեն, որ ծնվել է այն ժամանակ, երբ կալերը կավապատում էին, իսկ դա համընկնում է օգոստոսի սկզբներին: Ուստի ավանդաբար օգոստոսի 6-ին են նշել Ս. Առաքելյանի ծննդյան օրը:

Ծնվել է Քաջարան գյուղում, սովորել Օխչիի դպրոցում: Երբ դպրոցն ավարտեց, ուղարկում էին Շիշկերտ գյուղ՝ ուսուցիչ աշխատելու: **«Այն ժամանակ՝ 1935-36 թվականներին, ճանապարհ չկար, տրանսպորտ չկար, դժվար էր, ու չգնացի»,** – հիշում է Սամսոն պապը: Տան ավագ զավակն է եղել, բայց հիմա հինգ երեխաներից ինքն է մնացել...

Երեք տարի աշխատել է Քաջարան գյուղի կոլտնտեսությունում: 1939 թվականին զորակոչվել է բանակ, Ուկրաինայում տարիուկես ծառայելուց հետո 1941թ. հունիսին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, ու առաջին իսկ օրվանից մասնակցեց պատերազմին. **«Այդ ժամանակ մեր զորքերը Ստալինի հրամանով հետ էին գալիս, մինչեւ դեկտեմբերի 24-ը նահանջեցինք: Նույն՝ 41 թվականին էլ վիրավորվել եմ եւ ոտքս թողել ռազմաճակատում»:**

Մեկ տարի հոսպիտալում պառկելուց հետո վերադարձել է գյուղ: Այստեղ մեկ տարի ակումբի վարիչ է աշխատել, դրանից հետո կոլտնտեսության նախագահ Հմայակ Պետրոսյանը նկատել է ուշիմությունն ու գրասենյակում որպես հաշվետար ընդունել: Երեք տարի հաշվետարություն է արել, 6-7 տարի՝ հաշվապահ աշխատել, 1953թ. Քաջարանի կոլտնտեսությունը փլուզվել է, ավելի ճիշտ, հանձնել են Կաթնառատին:

Դրանից հետո աշխատանքի է անցել արդյունաբերությունում, մոտ 20 տարի կոմբինատի մոնտաժային վարչությունում պահեստապետ աշխատել: Քաջարանում նաեւ տնային կառավարիչ է աշխատել, իսկ 1977թ. որպես հաշմանդամ՝ ժամանակից շուտ թոշակի է անցել:

Կնոջ՝ Մարուսյայի հետ (82 տարեկան է) ամուսնացել են 1946թ.: Կյանքի 62 տարվա ուղեկցուհին գյուղի իրենց տան հարեւանի աղջիկն է եղել: Վեց երեխա են ունեցել՝ 4 որդի, 2 դուստր, 10 թոռ ու 10 ծոռ ունեն:

90-ամյա Առաքելյանն իրեն ժողովրդական մարդ է համարում. **«Այսինքն ժողովրդի հետ միշտ կապ եմ ունեցել, հիմա էլ, եթե մի քիչ ուշ գայիք տուն, արդեն դուրս էի գալու ժողովրդի մեջ՝ զրուցելու»:** Չնայած մի քանի ամիս է՝ մի քիչ տկար է զգում, հիվանդությունը նեղում է, եւ նախկինի պես չի կարողանում շատ ու հաճախ դուրս գալ. **«Մարդկանց հետ զրուցում եմ, ասում, խոսում, ժամանակս անցնում է, զավակներիս, թոռներիս հոգատարությունից էլ գոհ եմ... Հետո՝ երեկոյան ժամը 10-ին, պառկում եմ, առավոտյան 10-ին վեր կենում. ծերությունից է, տարիքն իրենն անում է»:**

Պատմում են, որ Սամսոն պապը շատ կատակասեր մարդ է, սիրում է անեկդոտներ պատմել: Ասում է, թե ջահելների հետ իրենց լեզվով է զրուցում, հասակավորների հետ՝ իրենց. **«Հենց հասնում եմ, հավաքվում են շուրջս, թե՝ Սամսոն ձյածյա, եկա՞ր. արի, տեսնենք՝ ինչ կա, ինչ չկա: Ասում են՝ առանց քեզ դժվար է, շուտ արի, որ հավաքվենք: Զրուցում ենք անցած օրերից, ներկա օրերից, ջահելությունից, աղջիկներից, տղաներից, ամեն ինչից, բալա՛ ջան»:**

Որպես պատերազմի վետերան՝ գոհ է թե՛ քաղաքապետարանի, թե՛ կոմբինատի տնօրինության՝ իր հանդեպ ցուցաբերած վերաբերմունքից: Խնամքով պահպանում է շքանշաններն ու մեդալները. Հայրենական մեծ պատերազմի առաջին եւ երկրորդ կարգի շքանշան է ստացել, պատերազմի հոբելյանական մեդալներ:

Հիշում է 1968թ. երկրաշարժը. **«Քաջարան գյուղում ապրում էին հին տներում, քաղաքում էլ երկհարկանի շենքեր էին: Երկրաշարժից հետո մարդիկ վրաններում էին ապրում, սկսեցին շենքեր կառուցել, 1970 թվականին քաղաքն արդեն լրիվ տեսքի էր եկել»:** Նույն թվականին էլ բնակարան է ստացել, տեղափոխվել ու հաստատվել Քաջարան քաղաքում. **«Այդ ժամանակ բնակավայրի կենտրոնը եղավ Օխչին, մինչ այդ կենտրոնը Քաջարան գյուղն էր համարվում»:**

Սամսոն պապի աչքի առաջ ոչ միայն կառուցվել է քաղաքը, այլեւ ամենատարբեր վայրերից հավաքվել են նրա բնակիչները: Հիշում է, որ սկզբում, երբ դեռ կոմբինատը չէր ամբողջացել, «Քաջարանշին» տրեստն էր տարածքում գործող խոշոր կառույցը, ակտիվ շինարարություն էր ընթանում. **«Ֆաբրիկայի ջարդման արտադրամասը Հանքավանի վերեւում էր, այնտեղից հանքաքարը ճոպանով գալիս էր ֆաբրիկա: Ֆաբրիկան, կարելի է ասել, ռուսները կառուցեցին: Իհարկե, բանվորական ուժը մերն էր, բայց ղեկավարությունը Մոսկվայից էր: Ռուսաստանից եկած մի քանի տնօրեններ փոխվեցին, ի վերջո, տեղական կադրեր սկսեցին նշանակել»:**

Չնայած քաղաքի բնակչությունը սկսեց հավաքվել Հայաստանի բոլոր վայրերից, հիմնական «կորիզը» տեղականն էր՝ Օխչի, Քաջարան, Հանդ, Լեռնածոր, Փուխրուտ, Փիրմազրա: Այստեղ հաստատվեցին ու աշխատում էին նաեւ Գեղվա ծորի ադրբեջանցիները: Առաքելյանի պատմելով՝ տարբեր բնակավայրերից հավաքված բնակիչների համակեցությունը ստացվում էր, մարդիկ իրար հեշտ հարմարվում, համերաշխ ապրում էին. **«Մեր ծորի ժողովուրդը շատ հյուրասեր է, ով գալիս էր, լավ էին ընդունում, այստեղ տարբերություն չկար, թե բնակիչը որտեղից էր: Բոլորն իրար հավասարապես հարգում էին, հարաբերությունները լավ էին, հիմա էլ է այդպես»:**

90-ամյա Սամսոն պապին, որը տեսել է նաեւ հին Քաջարանը, դուր է գալիս նոր Քաջարանը եւ այն, ինչ հիմա տեսնում է այստեղ. **«Աչքերս փակում եմ եւ սկզբից մինչեւ հիմա տեսնում անցածը... Բայց հիմա ուրիշ է ամեն ինչ, հիմա լիություն է, հիմա խաղաղություն է, լավ աշխատավարձ են ստանում, հիմա Քաջարանում տեղ չկա, որ շարժվես, այնքան շատացել են մեքենաները: Իսկ 1935-36 թվականներին ոտքով գնում էի Կապան, այնտեղից տան համար առեւտուր անում ու շալակով բերում»:** Նշում է, որ իր ժամանակվա ջահելները առավոտյան վաղ վեր էին կենում, «աչքերը փլղորում» ու գնում դեպի անասնագոմերը, հիմիկվա ջահելները վեր են կենում, գեղեցիկ հագնվում, մեքենա նստում ու իրենց համար քեֆ անում... Հիմա իր աչքին կյանքն ավելի լավ ու հեշտ է դարձել, իսկ ինքը նկատել է՝ երբ մարդու ապրուստը լավանում է, ուզում է շատ ապրել, մեռնելը դժվարանում է... Բայց պիտի մի քիչ էլ սիրտդ ուրախ լինի, որ ուրախանաս ամեն ինչով ու վայելես եղածը: Իսկ Սամսոն պապի սիրտը նեղվելու ու մեծ վշտից տխրելու առիթ ունի...

Իբրեւ պատերազմի վետերան՝ Կապանում էլ էր բնակարան ստացել ու կրտսեր որդու՝ Ազատի հետ տեղափոխվել այնտեղ: Երբ սկսվեց Արցախյան ազատամարտը, Ազատ Առաքելյանը կամավոր

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

Հետո, ավելի ստույգ՝ 1993-ից ձեռնարկությունն աստիճանաբար սկսեց ոտքի կանգնել, վերագտնել իր արտադրական հզորությունները: Սարքավորումները, պայթուցիկները, քիմիկատները, օժանդակ նյութերն ու պահեստամասերը արտերկրից էին ներկրում, այդ թվում՝ ԷԿԳ-8Ի էքսկավատորի պահեստամասերը: Փառք Աստծո, հիմա նյութամատակարարման խնդրում դժվարություններ չկան:

«Ի՞նչ անել, որ մեխանիզմը երկար ծառայի բանեցնողին», – հարցս որքան պարզամիտ, բայց նույնքան տեղին է: **«Մեխանիզմն էլ մանկան նման մի բան է, խնամքը ժամանակին պիտի տանես, որ երկար ծառայի»,** – պատասխանում է: **«Ինչպե՞ս է ազատ ժամանակն անցկացնում աշխատանքի մարդը»**, – հետեւում է եւս մի հարց: **«Երկու թոռնիկիս հետ շրջում եմ Քաջարանում, հիմա քաղաքը գեղեցկացել է, կանաչապատվել, ավելացել են կանաչ գոտիներն ու սիզամարգերը, շենքերի շքամուտքերն ու աստիճանավանդակները թարմ տեսք են ստացել: Քաղաքի 50-ամյակին նվիրված նոր գործեր են արվում: Քաղաքապետարանը հոգում է, որ երեկոյան ժամերին մարդիկ ժամանցի հնարավորություն ունենան, համերգներ եւ երեկոներ են կազմակերպում»,** – ասում է զրուցակիցս եւ ավելացնում, որ ինքը գոհ է նաեւ կոմբինատի ղեկավարությունից, թոռանը Երեւանում վիրահատել են, բուժման ծախսերը հոգացել է կոմբինատը, ինքը երկու անգամ բուժզննման է ենթարկվել մայրաքաղաքում, դարձյալ մեծապես զգացել է կոմբինատի օժանդակությունը: Ձեռնարկության ղեկավարության դրսեւորած հոգատարությանն աշխատանքի մարդը, որ է Արամայիս Հովհաննիսյանը, «հակադարձում» է իր մասնագիտությանն ու գործին նվիրվածությամբ:

անդամագրվեց զինված ուժերին ու զոհվեց Հորադիզում 1994 թվականին, երբ զինված հակամարտության ավարտին ընդամենը մեկ ամիս էր մնացել… **«Երբ անձնապես տխուր եմ, աչքիս էլ ոչ մի բան չի երեւում, դրա համար որդուս նկարն էլ մյուս սենյակ եմ տարել, որ հաճախ աչքովս չընկնի… Որդուս մահը շատ «հետ գցեց» ինձ. աշխույժ, ուրախ, ասող, խոսող մարդ էի»:**

Ինքը չէր ցանկանում, բայց Արամայիս որդին որոշել էր նշել 90-ամյակը: Կարծում է, որ մարդու կյանքի լավագույն տարիները մինչեւ 50-60 տարեկանն են: Խորհուրդ է տալիս ջահելներին՝ ինչքան ապրելու են, մինչ այդ տարիքը ձգտեն լավ ապրել. **«Դա սարի գագաթի պես է, դժվարությամբ բարձրանում ես, 50-ից հետո «բենզին» պետք չէ, ինքդ քեզ իջնում ես…»:**

Խորհուրդների շարքում դժգոհում է, որ թեպետ նախկինում կյանքն ավելի դժվար էր, ավելի շատ երեխաներ էին ունենում, հիմա մեկը-երկուսն ունենում են ու՝ վերջ: Նոր սերնդին կոչ է անում շատ երեխա ունենալ, բայց դժգոհում է, որ չեն լսում. **«Մ՛յ մարդ, բերե՛ք էլի, Հայաստանում մարդ չի մնացել, բերե՛ք, էս երկիրը լցրեք էլի… Իմ ընտանիքի հարսներին էլ եմ ասում, ասում են՝ պապի, քո թիվը չի, է՞»:**

Քաղաքի 50-ամյակին, որպես տան ավագ, քաջարանցի հասակավորներին երկար ու առողջ կյանք է մաղթում, երիտասարդներին՝ լավ կյանք, ուսանողներին կոչ անում՝ լավ սովորեն, որ գրագետ մարդիկ դառնան. քաղաքի ապագան իրենք են: Ուզում է, որ աշխարհում խաղաղություն լինի, երկիրը լավ կառավարվի, Կապանի ու Քաջարանի բնակչությունն էլ հարուստ ու առողջ լինի:

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոբելյանական տարի՝ եղբայր քաղաքների համար

Քաջարան եւ Ժոդինո քաղաքների եղբայրությունը թեեւ երկար տարիների պատմություն չունի, այնուամենայնիվ, սերտ կապերը նկատելի են: Երկու արդյունաբերական քաղաքները սկսել են բարեկամություն անել դեռեւս 2006թ. հոկտեմբեր ամսից, երբ նրանց միջեւ կնքվեց համագործակցության համաձայնագիր:

Ժոդինոյի պատվիրակությունը՝ Քաջարանում

Ժոդինո

ՄԵՐԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Ժոդինո քաղաքը Բելառուսի Մինսկի մարզի քաղաքներից է: Մինսկից 40կմ հեռավորության վրա գտնվող այս քաղաքի անվանումն առաջացել է քաղաքի տարածքով հոսող Ժոդինկա գետի անվանումից: Ժոդինոն երկու ծննդյան օր ունի: Առաջինը պատմական է՝ 1643թ., իսկ երկրորդը՝ 1963թ., երբ Բելառուսի Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է Ժոդինո ավանին տալ մարզային ենթակայության քաղաքի կարգավիճակ:

Սակայն Բելառուսի ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի հաստատած պատմական փաստաթղթերը հիմք ընդունելով՝ 2007թ. նոյեմբերի 1-ին որոշվել է Ժոդինո քաղաքի հիմնադրման տարեթիվ ընդունել 1643-ը:

Այսինքն՝ 2008 թվականը հոբելյանական տարի է երկու եղբայր քաղաքների համար: Քաջարանը նշում է քաղաքի կոչում ստանալու 50-ամյակը, իսկ Ժոդինոն՝ 365-ամյակը:

Ինչո՞ւ Բելառուսի Մինսկի մարզից հենց Ժոդինո քաղաքն ընտրվեց որպես եղբայր քաղաք: Բացատրությունը պարզ է. «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունը հիմնականում օգտագործում է «Բելազ» մակնիշի ինքնաթափերը, իսկ ինքնաթափերի արտադրության աշխարհի առաջավոր ձեռնարկություններից մեկը՝ «Բելազը», գտնվում է Ժոդինոյում, ինչը կարող էր երկու քաղաքների համագործակցության համար նպաստավոր պայման լինել:

«Մեր քաղաքների մերձեցումը Հայաստանում Բելառուսի դեսպանատան առաջարկությունն էր՝ հենվելով այն գաղափարի վրա, որ ՏԻՄ-երը կարող են նպաստել գործարար աշխարհի հարաբերությունների մերձեցմանը, ինչպես նաեւ տնտեսական որոշ խնդիրների լուծմանը: Եվ 2006թ. հոկտեմբերի 23-ին երկու երկրների կառավարական պատվիրակությունների ներկայությամբ Մինսկի մարզի Ժոդինո քաղաքի եւ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի միջեւ ստորագրվեց համագործակցության պայմանագիր: Նախ՝ Երեւանում հանդիպեցինք Ժոդինոյի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահին եւ նույն օրը պատվիրակությանը հրավիրեցինք Քաջարան, այցելեցինք «ԶՊՄԿ» ՓԲ ընկերություն, հյուրերին ծանոթացրինք կոմբինատի գործունեությանը, այցելեցինք դպրոցներ եւ այլ հաստատություններ, որով եւ սկսվեցին մեր բարեկամության առաջին քայլերը», – ասում է Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը: Դրան հետեւեց քաջարանցիների փոխադարձ այցը: Քաջարանի պատվիրակությունը 2007թ. հոկտեմբերի 26-ին յոթօրյա այցով մեկնեց Բելառուս: Այցի ծրագիրը հագեցած էր: Հյուրերն այցելել են Հայաստանի դեսպանատուն, որի աշխատակիցներն այցի յոթ օրերի ընթացքում Քաջարանի պատվիրակության հետ էին: Պատվիրակությունը Ժոդինոյում այցելեց քաղաքային ենթակայության կառույցներ, տեղացիների հետ մասնակցեց քաղաքի եւ մեքենաշինարարի օրվան նվիրված տոնակատարություններին: Քաջարանցիները եղան «Բելազ» գործարանում, այցելեցին Մինսկ, եղան Խատինում: Մի խոսքով, 7 օր անընդմեջ քաջարանյան կամ որ նույնն է՝ հայկական շունչը մեր երաժշտության ելեւէջների ներքո թեւածում էր այնտեղ:

«Մենք մի պետության մաս ենք եղել, մի ընդհանուր լեզու ունեցել, տասնամյակներ շարունակ մի ճակատագրի տեր եղել: Նրանք չեն ժխտում, որ մենք Հայրենական մեծ պատերազմում Բելառուսի ազատագրման գործում մեծ լումա ունենք: Մինսկում նույնիսկ պատվավոր քաղաքացի ունենք Սյունիքից:

Մեր համագործակցության ընթացքում նախատեսում ենք փոխադարձ այցեր, դպրոցականների ամառային եւ ձմեռային հանգստի կազմակերպումը եղբայր քաղաքներում եւ այլն: Ընդ որում՝ հանգստի անցկացման ծախսերը հոգում է հյուրընկալած քաղաքը: Ի դեպ ծրագրվում է յուրաքանչյուր քաղաքում բացել առեւտրի սրահ, որտեղ կվաճառվեն տվյալ երկրում արտադրված ապրանքատեսակներ, իսկ այդ առեւտրի կետերը կկրեն եղբայր քաղաքների անունները», – նշում է Քաջարանի քաղաքապետը:

Սերտ բարեկամական հարաբերություններն այս քաղաքների միջեւ արդեն նկատելի են: Վերջերս՝ հունիսի 25-ին, Քաջարանում էր Բելառուսի Հանրապետության Մինսկի մարզի պատվիրակությունը՝ շրջգործկոմի նախագահ Լեոնիդ Կրուպեցի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին նաեւ Ժոդինոյի քաղգործկոմի նախագահ Վասիլի Գրիշչենկոն, «Բելազ» գործարանի գլխավոր տնօրեն Պավել Պարխոմչիկը, Հայաստանում Բելառուսի դեսպան Մարինա Դոլգոպոլովան, դեսպանորդ Ալեքսանդր Սոլովյովը եւ այլ պաշտոնյաներ ու գործարարներ: Այցի ժամանակ կրկին կարեւորվեց Ժոդինո եւ Քաջարան եղբայր քաղաքների խոշոր ձեռնարկությունների միջեւ համագործակցությունը:

Այսնյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այսնյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ

Քաջարանցիները՝ Մեծ հայրենականում

ՀԱՍՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կապանի երկրագիտական թանգարանի գիտաշխատող

Ասում են՝ իսկական եւ անանց փառք կարող է բերել մարդկային ցեղի երջանկության համար պայքարը: Համոզված եմ, որ Մեծ հայրենականի քաջարանցի մասնակիցները գիտակցաբար պայքարել են մարդկային ցեղի խաղաղության, երջանկության ու բարօրության համար ու արժանի են փառքի ու մեծարանքի: Ու արժե օգտագործել յուրաքանչյուր առիթ եւ կրկին ու կրկին հիշել այն մարդկանց, ովքեր, հավատալով հաղթանակին, սիրելով հայրենիքը, աչքի առաջ ունենալով պատմության փորձը, արժեւորելով ներկան ու ապագան, կռվեցին նաեւ այսօրվա համար:

Քաջարանց-Քաջարան-քաջերի երկիր... Այսօր աշխարհը գիտե Քաջարանի, նրա ընդերքի, նրա աշխատող ու արարող մարդկանց մասին: Քաջարանը մեր հզորության խորհրդանիշն է. սակայն, կարող էր դառնալ հիտլերյան կայսրության կենսական տարածք, եթե չլիներ մեծ հաղթանակը, իսկ այդ հաղթանակը ձեռք բերվեց նաեւ քաջարանցիների արյամբ: Նրանք կռվեցին հայրենիքի համար այնպես, ինչպես հարազատ երկրամասի համար մաքառել էին իրենց հայրերը դարասկզբին եւ Զանգեզուրի գոյամարտի տարիներին: Քաջարանցիներ, այսինքն՝ բուն քաջարանցիներ, ողջեցիներ ու վերին հանդեցիներ, որոնցից ռազմաճակատ զորակոչվեցին 304-ը, զոհվեցին 132-ը:

Պատերազմի առաջին հարվածն իր վրա կրեց Բրեստի ամրոցը, ուր պատերազմից առաջ զորակոչված շուրջ հարյուր մեր հայրենակիցներ էին ծառայում: Բրեստի համար հերոսաբար են կռվել քաջարանցիներ Երվանդ Մկրտչյանը, Վարշամ Պատվականյանը, Շմավոն Ստեփանյանը, Միսակ Հակոբյանը, Ողջեցի Գուրգեն Խաչատրյանը: Սոս Նուրիջանյանն իր «Արյունով ներկված լուսաբաց» գրքում հիշում է քաջարանցի մարտական ընկերոջ՝ Գուրգեն Խաչատրյանի սխրագործությունները: Պատերազմի առաջին օրը՝ լուսաբացին, 8-րդ վաշտի նրա ջոկատը մարտի բռնվեց թշնամու հետ՝ ծանր կորուստներ պատճառելով նրան: Զարմանք են պատճառում Գուրգենի եւ նրա ջոկի անօրինակ սխրանքները՝ հաղթական հակագրոհի նետվելը, գերմանական հրանոթը Մուխավեց գետում թաղելը, հրաշքով կենդանի մնալը, ծարավից մեռնող զինվորների համար հնարամտությամբ ջուր հասցնելը: Ծանր կոնտուզիա ստացած, անելանելի վիճակում գտնվող Գուրգենին գերմանացիները գերում եւ պահում են Բրեստի գերմանական ճամբարում: Հայրենիքին իր երդմանը հավատարիմ՝ փորձում է կրկին վերադառնալ ճակատ, դիմակայել թշնամուն, բայց Խիմգորոդոկ ճամբարից փախուստը ձախողվում է, եւ նա ֆաշիստների կողմից տանջամահ է արվում:

Հայրենականի ամբողջ ընթացքում քաջարանցիները տարբեր զորամիավորումներում կռվեցին Մոսկվայի, Լենինգրադի, Ստալինգրադի, Ուկրաինայի, Մերձբալթիկայի համար, հասան Բեռլին: Եվ այդ ընթացքում ոչ միայն իրենց ֆիզիկական ուժն ու եռանդը, այլեւ ռազմական պրոֆեսիոնալ իմացությունը ներդրեցին հայրենիքի պաշտպանության համար: Քաջարանցիներ են գնդապետ Գարեգին Խաչատուրի Սահակյանը եւ փոխգնդապետ Վազգեն Բախշիի Արզումանյանը:

Գարեգին Սահակյանը Վ.Ի.Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիան ավարտելուց հետո աշխատում էր Անդրկովկասյան ռազմական օկրուգում: Ուներ նաեւ իրավաբանական կրթություն: Մինչեւ պատերազմը ԽՍՀՄ գերագույն դատարանի Անդրկովկասյան օկրուգի ռազմահեղափոխական տրիբունալի հայկական բաժնի նախագահն էր:

1941-45թթ. պատերազմի տարիներին 44-րդ եւ 45-րդ բանակների ռազմական տրիբունալի նախագահ էր, Անդրկովկասյան ռազմաճակատի զինտրիբունալի կոլեգիայի անդամ: Մասնակցել է Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Ուկրաինայի, Հունգարիայի, Ավստրիայի, Չեխոսլովակիայի եւ Բեռլինի գրավման մարտերին: Պարգեւատրվել է Լենինի, «Կարմիր դրոշի», «Կարմիր աստղի» երկու եւ «Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի» շքանշաններով, մի շարք մարտական մեդալներով:

Վազգեն Արզումանյանը Գոմելի ռազմական գնդացրային ուսումնարանն ավարտելուց մի քանի ամիս հետո լեյտենանտի կոչումով մեկնեց պատերազմ: Որպես վաշտի հրամանատար մասնակցել է Լենինգրադի մարզի պաշտպանական մարտերին: Ստանձնելով գումարտակի հրամանատարությունը՝ մասնակցել է Ստալինգրադի ճակատամարտին: Այստեղ փոխարինել է ծանր վիրավորված գնդի հրամանատարին եւ արդեն որպես գնդի հրամանատար մասնակցել Օրեխովո, Ենկիեւկա, Ապոստոլովո, Ստալինո բնակավայրերի, ապա Դոնբասի ազատագրման մարտերին, պարգեւատրվել «Կարմիր աստղի». «Կարմիր դրոշի» շքանշաններով:

Հերոսաբար կռվել է Ուկրաինայի, Մոլդովայի, Հունգարիայի ազատագրման համար, պարգեւտրվել Ալեքսանդր Նեւսկու, «Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի» շքանշաններով: Հրամանատարների բարձրագույն զինվորական դասընթացներն ավարտելուց հետո նշանակվել է 89-րդ Թամանյան դիվիզիայի 390-րդ գնդի հրամանատար:

89-րդ Թամանյան դիվիզիայի շարքերում կռվել են նաեւ վերինհանդեցի Ռուբեն Անտոնյանը, քաջարանցիներ Սամսոն

Մեծ հայրենականում զոհված ողջեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը

Լուսանկարը՝ Ս.Փիլոսոփյանի

Քաջարանցի ազատամարտիկներն իրենց դրսեւորեցին արժանապատվորեն

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ

1988-1989 թվականներին հերթապահություն Քաջարանի ներսում՝ քաղաք մտնող եւ դուրս եկող ճանապարհներին:

1990թ. հունիսի 12-ից մինչեւ հոկտեմբերի վերջը՝ սահմանների պաշտպանություն՝ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանի սահմանային գոտում՝ «Կապուտջուղ» սահմանահատվածում:

1990թ. հոկտեմբերից մինչեւ **1991թ.** մայիսը՝ սահմանային ծառայություն Կապանի շրջանի սահմանամերձ գյուղերում (Ագարակ, Եղվարդ, Ուժանիս, Դավիթ-Բեկ, Կարմրաքար, Շիկահող):

1991թ. մայիս-հունիս ամիսներին հրետանային ծառայության մայոր Բաղդասարյանի ղեկավարությամբ ջոկատի 12 անդամներ սովորել եւ տիրապետել են հրետանային գործին: Նույն թվականի հետագա ամիսներին 100 մմ հրետանիով ռմբակոծել են Ադրբեջանի Հանրապետության Կուբաթլուի եւ Զանգելանի շրջանները:

1991թ. դեկտեմբեր-1992թ. ապրիլ ամիսներին պաշտպանել են Կապան-Գորիս մայրուղին եւ ուղեկցել տրանսպորտային միջոցներին:

1992թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին մարտական ծառայություն են կատարել սահմանամերձ «Փայլասար» տարածքում:

1992թ. սեպտեմբերին մարտական գործողությունների են մասնակցել Լաչինի միջանցքում:

1992թ. հոկտեմբերին մարտական գործողությունների են մասնակցել Գորիսի Կոռնիձոր գյուղում:

1992թ. դեկտեմբերի 10-ին Կապանի երկրապահ ջոկատի հետ միասին մարտական գործողությունների են մասնակցել Զանգելանի շրջանի Սեյիդլար գյուղում:

1992թ. դեկտեմբերից մինչեւ **1993թ.** հունիսի 1-ը մարտական ծառայություն են կատարել Զանգելանի շրջանի սահմանամերձ գյուղերում ու ազատագրված տարածքներում:

1993թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին մարտական ծառայություններ են կատարել Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջանի «Ղազանգյոլ» տարածքում:

1993թ. հոկտեմբերի վերջից մինչեւ 1994թ. հունիս մարտական գործողությունների են մասնակցել Հորադիզի տարածքում:

Խոնարհվենք զոհված ազատամարտիկների անմար հիշատակի առջեւ

Լուսանկարը՝ Ա.Ավետյանի

Աբաղյան Արմենակ Սամվելի
Աբգարյան Արշակ Անտոնի
Ալեքսանյան Աշոտ Հրանտիկի
Ամիրխանյան Ստեփանոս Խաչատուրի
Անտոնյան Արշակ Անտոնի
Առաքելյան Ազատ Սամսոնի
Առաքելյան Ալեքսան Վահանի
Ավետիսյան Գենադի Սարոյի
Արզումանյան Սերգեյ Միքայելի
Արսենյան Արթուր Վասիլի
Բաբայան Խաչատուր Սմբատի
Բալայան Յուրիկ Բորիսի
Բալասանյան Վահրամ Լյուդվիգի
Բալասանյան Ազնիվ Ռաֆիկի
Բուդաղյան Անատոլի Ջիվանշիրի
Դադայան Ռուբեն Շմավոնի
Դավթյան Արսեն Ծերունի
Թորոսյան Գրիգոր Պավելի
Թումանյան Վարուժան Գալուստի
Հակոբյան Էռնեստ Ալեքսեյի
Համբարձումյան Արարատ Դարվինի
Հայրապետյան Արմեն Վաղարշակի
Հովհաննիսյան Արթուր Ռամզիկի
Մանուկյան Գառնիկ Օհանի
Մարգարյան Արթուր Հրանտիկի
Մարտիրոսյան Գագիկ Հրանտի
Մարտիրոսյան Սերգեյ Սուրենի
Մարության Աշոտ Սուրենի
Մելքոնյան Արմեն Սամվելի
Մելքումյան Արայիկ Հրաչիկի
Միքայելյան Վարդան Անուշավանի
Մուսայելյան Գավրուշա Լեւոնի
Նանյան Աշոտ Աղաբեկի
Նանյան Ռուդիկ Գեւորգի
Նովոշինսկի Վյաչեսլավ Իվանի
Պապյան Ռոբերտ Ալբերտի
Սահակյան Արման Պավլիկի
Սարգսյան Սասուն Շահենի
Սարգսյան Օնիկ Արտաշեսի

N_158-159 (22-23).indd 18 20.12.11 5:26:10 PM

Սյունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ

Եղիազարյանը, Արմենակ Պետրոսյանը:

Մեծ հայրենականում իր անունը փառքով պսակեց նաեւ քաջարանցի Հարություն Մանգասարյանը, հետագայում հայտնի կուսակցական եւ պետական աշխատող: Նա մասնակցել է Հյուսիսային Կովկասի, Տագանրոգի, Մարիոպոլի, Կերչի պաշտպանական մարտերին:

Կապանում քաջ գիտեն քաջարանցիներ Երվանդ, Պարգեւ, Հարություն, Վազգեն, Կարապետ Պողոսյան եղբայրներին, որոնցից միայն Բեռլին հասած Կարապետը տուն վերադարձավ: Մյուս չորսը զոհվեցին տարբեր ռազմաճակատներում: Հայրենիքի զոհասեղանին իրենց կյանքը նվիրեցին վերին հանդեցի եղբայրներ Հովհաննես, Համազասպ, Համբարձում Գրիգորյանները, Անուշավան, Գեւորգ, Վազգեն Սահակյանները:

Ամբողջ երկրում էր հայտնի «Արաքս» ծածկանունով քաջարանցի հետախույզը՝ Վաղարշակ Առաքելյանը: Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, ծառայում էր Բելոռուսիայում: Դասակի հրամանատար էր, գումարտակի կուսակցական կազմակերպության քարտուղար, երբ սկսվեց պատերազմը: Վաղարշակ Առաքելյանը Բելոռուսիայի պաշտպանության ժամանակ, Կարտուշ-Բերոզայի մոտ գերվեց գերմանացիների կողմից, նետվեց Ֆրիդրիխի, այնուհետեւ Լեհաստանի Վուստրատուի համակենտրոնացման ճամբարները:

Վուստրատուում «Սովետական հայրենասերներ» հայկական հակաֆաշիստական ընդհատակյա կազմակերպության մեջ «Արաքսի» գլխավորած խումբը գերմանական էլեկտրակայաններ է պայթեցրել, ձախողել Հիշպերկի ապակու գործարանի աշխատանքները: Գաղտնի հաղորդագրություններով օգնել է ոչնչացնել թշնամու՝ զինվորներով լի գնացքներ, ռմբակոծել արդյունաբերական օբյեկտներ:

1944թ. աշնանը «Արաքսը», կենտրոնից Խորհրդային Միություն վերադառնալով, առաջադրանք է ստանում, այն իրականացնում հաջողությամբ: Գերմանիա է վերադառնում նոր, ավելի հրատապ ու պատասխանատու առաջադրանքներով: Նա տեղեկություններ է հաղորդում Հիտլերի ռեզիդենցիայի, Բեռլինյան տանկային եւ ավիացիոն գործարանների տեղափոխության, զորքերի տեղաշարժի մասին: «Արաքսի» տեղեկությունների հիման վրա խորհրդային հրամանատարությունը իրականացրել է ճշգրիտ ռազմական գործողություններ, խուսափել մարդկային զոհերից:

Պատերազմը չխնայեց նաեւ տաղանդավոր երիտասարդներին: Նրանցից մեկն էր քաջարանցի երազկոտ բանաստեղծ Վիգո Ոսկանյանը: Թերթելով «Պղնձի համար» թերթի խունացած համարները, Վիգոյի ձեռագրերը՝ հանդիպում ենք կամավոր ռազմաճակատ մեկնած, հայրենիքի համար ցավող տղայի ստեղծագործությունները: Վիգոյի բանաստեղծությունները վկայում են Խորհրդային Հայրենիքին, լեռնաշխարհին, իր ծննդավայրին նվիրվածությունը:

Վիգո Ոսկանյանը 70-րդ գվարդիական հրածգային դիվիզիայում մասնակցել է Օրյոլի ճակատամարտին, Չերնիգով, Ժիտոմիր, Լվով քաղաքների ազատագրմանը: Կամենեց-Պոդոլսկ քաղաքի համար մղվող մարտերում ոչնչացրել է թշնամու գրոհող ջոկատը, պարգեւատրվել «Արիության համար» մեդալով: Հասել է մինչև Լեհաստան, 1944-ին զոհվել Լեհաստանի ազատագրման մարտերում:

Հաղթանակի գործում մեծ էր թիկունքի դերը: Պատերազմ մեկնածներին փոխարինեցին կանայք, ծերերը, պատանիները, նույնիսկ երեխաները: Քաջարան, Վերին Հանդ, Ողջի գյուղի աշխատավորները աշխատում էին անձնուրաց՝ գիշեր ու ցերեկ, ընդլայնում ցանքատարածությունները, արտադրում հաց, կարտոֆիլ, անասնապահական մթերքներ, ռազմաճակատ ուղարկում հագուստ, ձեռնոց, մթերք: Ռազմական փոխառություն գրվելու գործում աչքի ընկան Ողջիի աշխատավորները: Ողջիի դպրոցում ծավալվեց թիմուրական շարժում, ուսուցիչներն ու դպրոցականները ակտիվորեն մասնակցում էին կոլտնտեսության աշխատանքներին, օգնում էին ճակատ մեկնածների ընտանիքներին, օժանդակում ճակատի համար հանգանակություններին: Քաջարանցիներն իրենց ներդրումն ունեցան «Հայաստանի կոլխոզնիկ» տանկային շարասյան եւ ինքնաթիռների ստեղծման եւ Ստալինգրադի վերակառուցման գործում: Վերին ձորում ծավալված «Յուրաքանչյուր աշխօրի 5 տոկոսը պաշտպանության ֆոնդին» նշանաբանով շարժմանը կազմակերպված մասնակցեցին նաեւ Քաջարանի, Ողջիի, Վերին Հանդի գյուղացիները:

«Կոմերիտական ինքնաթիռ» էսկադրիլա ստեղծելու ֆոնդին 2100 ռուբլի կանխիկ գումար են մուծել Ողջիի դպրոցի ուսուցիչները եւ Փիրդոուդանի բանվորները:

Քաջարան, Վերին Հանդ, Ողջի գյուղացիներն իրենց միջոցներով Հայրենականի ռազմադաշտում զոհված իրենց զավակների հիշատակին կառուցել են հուշարձաններ:

Անզոր ենք փոխել պատմությունը, գոնե դրա համար միշտ պիտի խոսենք այն մարդկանց մասին, ովքեր իրենց կյանքը տվեցին հանուն խաղաղ կյանքի, հանուն այսօրվա Քաջարանի:

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՋԱՐԱՆՑԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԶԳԵՆ
Բաց հանքի խոր փորման հաստոցավար

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԷԴԻԿ
Բաց հանքի խոր փորման հաստոցավար

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
Բաց հանքի էքսկավատորավար, սոցիալիստական աշխատանքի հերոս

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԵՐԱՆՈՍ
Բաց հանքի էքսկավատորավար, Լենինի շքանշանակիր

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻԱ
Բաց հանքի խոր փորման հաստոցավար



ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՆԱՆ
Բաց հանքի խոր փորման հաստոցավար, Լենինի շքանշանակիր

ԴԱՎԹՅԱՆ ՊԱՎԼՈՒՇԱ
Բաց հանքի էքսկավատորավար

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԻԼՅՈՒՇԱ
Բաց հանքի վարորդ

ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ

ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՕԼԻՄՊՈՍԸ

Զանգեզուրի լեռնաշղթայի բարձրագույն գագաթը Կապուտջուղն է, որ երկնագույն սլացքով հսկում է ողջ Սյունյաց աշխարհը: Լեռան հետ աղերս ունեն բազում ավանդապատումներ ու լեգենդներ: Ամենասրտամոտը, թվում է, Սուրբ Մեսրոպի անվան հետ առնչվող իրապատումն է: Ինչպես հավաստում է Կորյուն Սքանչելին Սրբին նվիրված վարքագրության մեջ, երանելին շատ տարիներ ճգնել է հարեւան Գողթն (Կապանա խոսվածքում՝ Կոխտան) գավառում, ասել է թե՝ Կապուտջուղի ստորոտներում: Ցայժմ Որդվատում (Օրդուբադ) պահպանվում են Մեսրոպավանքի ավերակները: Գողթնից Մաշտոցն իր շքախմբով 408թ. Բաղք (Ղափանի շրջան) է անցել Տաշտունի (Տաշտոն) լեռնանցքով, որտեղ նրան դիմավորել է Սյունիքի իշխան Վաղինակ Սյունին:

Հայտնի չէ՝ արդյո՞ք մաշտոցյան ժամանակներում լեռան անունը Կապուտջուղ է եղել: Բարբառում այն արտաբերվում է Ղափուջուղ ձեւով: Ռուսատիրության ժամանակներից շրջանառվել են Կապուտջիղ, Կապուտժուգ, Խափուջիկ եւ այլ տարբերակներ: Լեռանվան համար տարակուսել է Ալիշանը. «ոչ գիտեմ զիարդ ի հնումն կոչէր, զի հարկ էր այնպիսւոյ բարձրութեան՝ ունել իւր անուն սեփական»: Եվ մատնանշել է. «բարձրագագաթն լեառն այն Քափուճուխ կոչեցաւ՝ Դռնակ»:

Արդ, ակներեւ է, որ լեռանունը հարմարեցված է թուրքական հնչմանը. դռնակը լեռնանցքի իմաստով է: Կապուտջուղի լեռնանցքը միակ հուսալի դռնակն է լեռնապարի վրա, որը Բաղքից (Ջորքից) բացվում է Գողթնի վրա կամ հակառակը: Ի դեպ, այս լեռնանցքով է 1920թ. մարտին Նժդեհն իր զորախմբով անցում կատարել դեպի Գողթն եւ անսպասելի հանկարծական գրոհով հարվածել թշնամուն:

Մատենագրական երկերում, ցավոք, Կապուտջուղ անունը չի հիշատակված: Այն չկա Սյունիքի պատմիչ Հայր Օրբելյանի (13-րդ դար)՝ մեզ հասած ձեռագրերում: Կապուտջուղ անունը չգիտի նաեւ Ղուկաս վարդապետը (18-րդ դար), որ գրել է դավիթբեկյանների պատմությունը: Վարդապետի՝ 1737թ. հեղինակած քարտեզում Սյունիքը (Ղափանու երկիր) արեւմուտքից եւ հարավարեւմուտքից երիզում են Ղազանգյուլի, Ալագյոզի լեռները: Ի չգոյե լավագույնի, Ալիշանը մակաբերել է Կապանի լեռներ անվանումը՝ «պար Ալանկէզի կամ լերանց Կապանայ»:

Ուշագրավ քննություն է կատարել մեր հայրենակից գրող-բանասեր Սերգեյ Ումառյանը: Անվան մեջ նա առանձնացրել է կապ արմատը, որ Կապան է: Ըստ հետազոտողի՝ հայերենին ազգակից պահլավերենում բաղ-ը հենց կապ է նշանակում, այնպես որ՝ մեր հինավուրց Բաղք եւ Կապան անունները նույնական են եւ Կապուտջուղ անվան նախնական ձեւը պետք է լիներ Կապճյուղ: Բայց թե ինչու լեռանունը պետք է ձեւվեր աստվածաշնչյան ժամանակներից ավանդված Բաղք-ից համեմատաբար ուշ շրջանառված Կապան-ից (5-րդ դար, Հ.Քս), առկախ է մնում: Ու նաեւ, խնդրո առարկա դիցական լեռը Սյունիքի Օլիմպոսն է եւ տրամաբանական չէ, որ անունն առած լինի բնակավայրի պարզունակ կապան անունից (հմմտ.՝ դիցական ժամանակների Արարատ, Մասիս, Արագած եւն): Ի դեպ, կապ արմատով Բաղքում այլ աշխարհագրական անուններ ավանդված չեն, բաղ-ով՝ հակառակը, զորօրինակ՝ Բաղաց-սար (Արեւիքի լեռնաշղթայում), Բաղացջուր (Ջորքում):

Այս հարցում թուրք գիտունների հետ քննարկման եզրեր չեն կարող լինել, որովհետեւ թուրքատիրությունը սկզբնավորվել է միջնադարում: Սակայն պետք է ընդունենք, որ թուրքն իր լեզվով լեռնանցքը եւ լեռը կոչել է գափըջըղ, որ բարբառս ցայժմ հնչաբերում է ղափըջըղ: Սա ակներեւ, պարզունակ-հովվական անվանում է եւ չի կարող կորուսյալ հայեցի անվան տարհնչեցումը լինել:

Խոսելով Տիգրան արքայի կողմից Աժդահակ Մարացու հետնորդներին Մասիս լեռան կողմերում վերաբնակեցնելու մասին՝ մեր Պատմահայր Մովսես վարդապետը մատնանշել է սակավ հայտնի մի լեռանուն. «… ավելի քան բյուր մարդ Տիգրանը բնակեցնում է մեծ լեռան արեւելյան կողմը՝ մինչեւ Գողթնի սահմանները… մինչեւ Նախճավանի ամրոցի դեմուդեմը: Նրանց է թողնում նաեւ երեք ավաններ՝ Խրամ, Ջուղա եւ Խորշակունիք գետի մյուս կողմում, ամբողջ դաշտը, որի գլուխն է Աժդանականը…»: Պարզ է, որ դաշտի գլուխը՝ Աժդանականը, լեռան անուն է: Ընդսմին, պարզ է, որ «գետի մյուս կողմը» Արաքսի ձախափնյա՝ Նախիջեւանի դաշտավայրն է (տես Ա.Այվազյանի քարտեզ-պատկերացույցը): Դաշտավայրի արեւելյան կողմում նշանավոր միայն մի լեռնագագաթ կա՝ Կապուտջուղը, որը Փոքր Կովկաս լեռնահամակարգի ամենաբարձր կետն է (3906մ):

Ըստ Հ.Կարագյոզյանի (եւ ի լրո՝ ըստ Ա.Այվազյանի), Աժդանականը Օձասարն է, որ թուրքերը թարգմանաբար Իլանդաղ են կոչում: Սակայն հայտնի չէ, թե երբ եւ ինչու է Օձասարը վերանվանվել Իլանդաղ եւ առավել եւս՝ Աժդանականը՝ Օձասար: Ըստ մի ավանդազրույցի՝ Ա.Մակեդոնացին այս լեռան վրա տեղավորել է կանանոցը եւ պահապան կարգել օձերին:

Օձասար-Իլանդաղը Կապուտջուղից ցածր է ավելի քան 1500 մետրով:

Պատմահոր մատնանշած մեծ լեռը, անշուշտ, Մասիսն է: Եվ, ըստ այդմ, խոսքի վերջում չէր դնի ոչ շատ բարձր լեռան անունը: Պատմահայրն, անշուշտ, Նախիջեւանի նոյյան դաշտը կհավերժացներ հենց այդպես՝ նրա գլուխ նշելով մոտակա ամենաբարձր լեռնագագաթը, որ է Կապուտջուղը:

Նկատենք, որ Տեղանունների բառարանը (պրոֆ. Թ.Հակոբյան եւ ուրիշներ) չի նույնացնում Օձասարն ու Աժդանականը, թեպետ վերջինիս ստուգաբանությունը հղվում է պաշտամունքային օձիժ-վիշապին:

Արդ, պիտի ընդունենք, որ հնագույն ժամանակներում Կապուտջուղ լեռն ունեցել է Աժդանական դիցական, վեհահունչ անվանումը:

Կապճյուղ-Կապուտջուղը պաշտամունքային լեռ է: Ըստ ավանդազրույցի՝ լեռան վիհերում ապրում է հոշէփը, որ է վիշապը: Լեռնապարի երկու կողմերում հայտնի են ջրի եւ պտղաբերության Նապատ կոչվող մեհենատեղիները, որոնցից մեկը՝ Քաջարանց գյուղի մերձակայքում: Ուլուբլաղ հանդանունը, որը հագարերեն է, բառացի նախնյաց վիշապածուկ է նշանակում: Ս.Խանզադյանի գրառած մի լեգենդի համաձայն՝ այս ջրածածկ կողմերով անցնող նոյյան տապանից մի սեւաթույր քար է ընկել ու մնացել վճիտ մի աղբյուրի մեջ:

Լեռան արեւելակողմում՝ ներկայիս Գանձասար բաց հանքի տարածքում էր հնամենի Սուրբ Դավիթ ուխտատեղին, որ պարսկերեն բարբառով հնչում էր Փիրդավդան: Այս սրբավայրը, որ խորհրդային տարիներին կորցրել էր իր նշանակությունը, ուներ իջեւանատուն եւ իրեն էր գրավում անգամ հեռավոր վայրերի ուխտավորներին: Իբր, չբերներին պտղավորելու զորություն ուներ, ապաքինում էր օձից խայթվածին, հովանավորում ճամփորդության անվտանգությունը:

Լեռան բարձրադիր լանջերից սկիզբ են առնում Ողջի եւ Գիլան գետերը: Ջրբաժանի բարձունքները տիրական են ոչ միայն Սյունիքի վրա: Այնտեղից տեսանելի են Մասիս սարն ու Արարատյան դաշտը, բազմաթիվ գետահովիտներ ակոսող մայր Արաքսը: Հեռադիտակով զննելի է Մակուի դաշտավայրը, որտեղ կարելի է նշմարել Զանգիմարի վտակ Տղմուտի ձորահովիտը:

Այսօրվայ երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Այսօրվայ աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԷՋԵՐ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Քաջարանի պատմության թանգարանը

Մարտական փառքի տանը

Լուսանկարը՝ Ս. Ամիրգոնի

Քաջարանի պատմության թանգարանը գաղափարախոսական, հայրենագիտական աշխատանքների յուրօրինակ օջախ է: Այստեղ ներկայացված աշխատանքներն ամփոփում են Քաջարանի կոմբինատի եւ քաղաքի պատմությունը:

Քաջարանի պատմության թանգարանը գործում է 1973 թվականից: Տեղակայված է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ մշակույթի կենտրոնում: Ալբերտ Աբրահամյանը 1975 թվականից Քաջարանի մշակույթի կենտրոնի տնօրենն է, նաեւ նույն թվականից մինչ այսօր թանգարանի աշխատանքներն է համակարգում: Մասնագիտությամբ ինժեներ-էլեկտրամեխանիկ է, ավարտել է նաեւ Քաջարանի երաժշտական ուսումնարանը:

Դեռ թանգարանի սրահ չմտած՝ մուտքին կից (ձախից) ներկայացված է գյուղացու տունը: Ցուցադրվածն արտացոլում է շինականի կենցաղն ու ապրուստի պայմանները. տատիկը, օջախի առջեւ նստած, կաթ է տաքացնում, խնոցի հարում: Կողքին դրված է ճախարակը, դիմացի պատից կախված է մանգաղը: Թանգարանի մուտքի դռան վերեւի հատվածն ապակուց է, որի վրա պատկերված է նոր Քաջարանում թափով ընթացող շինարարությունը (աջ կողմից), իսկ ձախ կողմում հին Քաջարանի համայնապատկերն է: Մուտքի դիմացի պատի վրա կախված նկարում ճոպանուղիներն են: Ալբերտ Աբրահամյանը պատմում է, որ ճոպանուղիների շահագործումը մեծ նշանակություն ունեցավ կոմբինատի համար. մի քանի անգամ կրճատվեցին հանքաքարը հարստացուցիչ ֆաբրիկա տեղափոխելու ժամանակը եւ ծախսերը: Ճոպանուղիները գործում էին միմյանցից երկու կիլոմետր հեռավորության վրա:

Թանգարանի մուտքի աջ եւ ձախ կողմերից ապակուց պատրաստված տաղավարիկներում ցուցադրվածը խորհրդանշում է նախկինում քաջարանցիների հիմնական զբաղմունքը՝ հողագործությունը եւ անասնապահությունը, մասնավորապես եզների լծման ընթացքը, որոնք գյուղացիները օգտագործել են վար ու ցանքի համար: Ներկայացված է նախկին 36-րդ հանքուղու մանրակերտը, ցուցադրված են Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի բաց հանքից արդյունահանվող քարերի նմուշները: Առանձին ցուցափեղկի վրա կոմբինատում տարբեր տարիներին աշխատած առաջավորների լուսանկարներն են, անկյունում Խորհրդային Միության տարիներին կոմբինատին շնորհված դրոշներն են՝ պետական պլանային առաջադրանքները գերակատարելու համար, կոլեկտիվի նվաճումները բնութագրող ցուցապաստառներ, դիպլոմներ: Ալբոմներում ներկայացված է նաեւ Քաջարանի առօրյան՝ լուսանկարներով:

Լուսանկարը՝ Ս. Գեւորգյանի

> Մշակույթի կենտրոնի տնօրեն **ԱԼԲԵՐՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ** թանգարանի պատմությունը ներկայացնելուց բացի հայտնեց, որ շուտով թանգարանում նորոգման աշխատանքներ կծավալվեն:

Ալբերտ Աբրահամյանը թանգարանի պատմությունը ներկայացնելուց բացի հայտնեց, որ շուտով թանգարանում նորոգման աշխատանքներ կծավալվեն: Կոնկրետ չի կարող ասել, թե երբ են սկսելու, բայց մայրաքաղաքից մասնագետներ են եկել, մակետ պատրաստել, որը կոմբինատի տնօրինության հավանությանն է արժանացել: **«Երբ թանգարանում հյուրեր են լինում, ներկայացնում ենք կոմբինատի պատմությունը, ոմանք նույնիսկ զարմանք են ապրում, երբ ասում ես, որ Քաջարան քաղաքը կառուցվել է կոմբինատի շնորհիվ: Թանգարանին մշտապես աջակցում է կոմբինատը, արվել է հնարավորը, որ քաղաքն ունենա իր պատմության թանգարանը»,** – ասում է նա:

Թանգարանի մուտքի դիմացի պատին պատկերված է բաց հանքի աշխատանքային առօրյան: Նկարի հեղինակը քաջարանցի Լեռնիկ Պետրոսյանն է, նկարել է 1960-ականներին: Ցուցադրված է լեռնագործի բանվորական հագուստը, նաեւ հանքափորի արձան է դրված:

Նախկինում Քաջարանում կար ռելեի գործարան: Ցուցափեղկի վրա ցուցադրել են պահեստամասեր, որոնք հավաքելով՝ կարելի էր ռելե ստանալ, առանձին վահանակ կա կոմբինատի նորարար-ռացիոնալիզատորների ցուցանիշների վերաբերյալ:

1994-1995թթ. մշակույթի կենտրոնում ստեղծվել է մարտական փառքի սրահ: Ներկայացված են Արցախյան հերոսամարտում զոհված ազատամարտիկների լուսանկարները, Քաջարան քաղաքի երկրապահ կամավորական ջոկատի անցած մարտական ուղին:

ՍԱԹԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԻՇԵՄԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Քաջարան-Մեղրի ճանապարհի գործարկումը

1980 թվականի նոյեմբերի 2-ին շարք մտավ 48,4 կմ երկարությամբ Մեղրի-Քաջարան ավտոմայրուղին, որն անցնում է ծովի մակերեւույթից 2335 մետր բարձրության վրա: Ճանապարհի գործարկման արարողությանը մասնակցում էին Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Ավտոմայրուղու շահագործմանը նվիրված հանրահավաքում ելույթ ունեցողները նշեցին ճանապարհի բացառիկ նշանակությունը Մեղրու եւ Ղափանի շրջանների ժողովրդական տնտեսության զարգացման, կուլտուր-մշակութային հիմնարկների փոխադարձ կապն ընդլայնելու գործում:

Արժանացավ բարձր պարգեւի

1966 թվականի մայիսին յոթնամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատն արժանացավ բարձր պարգեւի՝ Լենինի շքանշանի: Այդ կապակցությամբ Քաջարանի մշակույթի պալատում տեղի ունեցավ հանրահավաք, որտեղ հրապարակվեցին երկրի արդյունաբերական ձեռնարկություններից, հիմնարկներից, տարբեր քաղաքներից ստացված ողջույնի հեռագրերը:

Երկրաշարժը Քաջարանում

1968թ. հունիսի 9-ի վաղ առավոտյան Քաջարանի քաղխորհրդի գործկոմի նախագահ Գառնիկ Հովհաննիսյանը Կապանում էր, երբ ծանոթներից մեկը հայտնեց, թե Քաջարանում երկրաշարժ է եղել. «Քաղաքդ ավերակ է դարձել, ընկե՛ր Հովհաննիսյան, Ղափանում ի՞նչ եք անում»:

40 տարի է անցել այդ օրից, տարիքն առել է նաեւ Գառնիկ Հովհաննիսյանը, բայց այդ մասին խոսելիս նրա աչքերում այն նույն տագնապն էր, ինչ լուրն իմանալու պահին: **«Հանցած 2 ժամ՝ ես եւ Կապանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ռաֆայել Մինասյանը Քաջարանում էինք,** – պատմում է պարոն Հովհաննիսյանը: – **Տեսածներս չէր համապատասխանում այն ամենին, ինչ մեզ պատմել էին. ճանապարհին մի երկու քար էր ընկած, երկհարկանի տների աղյուսե ծխնելույզներն էին փլվել եւ տների ներսում էլ ճաքեր էին առաջացել: Մարդկային զոհեր էլ, բարեբախտաբար, չկային»:**

Նախորդ օրը՝ հունիսի 8-ին, եղանակը նման չէր ամառայինին. երկինքն ամպամած էր, հետո անձրեւ տեղաց, օդը սկսեց սառչել, ու ձյուն եկավ: Տարօրինակ էր, բայց ոչ ոք չմտածեց, որ դա աղետի նախանշան է....

Առավոտյան ժամը 5-ն անց էր, երբ Քաջարանը ցնցվեց: Մասնագետների պնդմամբ էպիկենտրոնը Տաշտունի լեռնանցքի շրջանում էր, իսկ ցնցումների առավել ուժգնությունը՝ 7-8 բալ: Բնակիչները խուճապի մեջ էին, բոլորը մտահոգված էին իրենց ընտանիքների համար, շատերն էլ թողեցին ու հեռացան քաղաքից: Աշխատանքը կանգ առավ, 3 օր չաշխատեց նաեւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: **«Շփոթության պատճառն անընդհատ կրկնվող ցնցումներն էին,** – հիշում է պարոն Հովհաննիսյանը: – **Դրանց թիվն անցնում էր 200-ից, իսկ ամենաուժգինը եղել է սեպտեմբերի 1-ին, դրանից հետո՝ 16-ին, հոկտեմբեր ամսին եւ այդպես շարունակ»:**

Երկրաշարժի օրը՝ հունիսի 9-ին, երկրաշարժի մասին տեղեկատվությունը ստանալուց մի քանի ժամ անց ուղղաթիռով Քաջարան էին ժամանել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը եւ ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Բադալ Մուրադյանը: Տեղում հանձնարարվեց ստեղծել երկրաշարժի հետեւանքները վերացնող հատուկ վարչություն, որի պետ նշանակվեց «Քաջարանշին» տրեստի նախկին կառավարիչ Սարգիս Վարդանյանը: Վարչության խնդիրն էր պարզել քաղաքին հասցված վնասի չափերը եւ սկսել վերականգնողական աշխատանքները: Երկրի ղեկավարությունը հատուկ ուշադրությամբ էր հետեւում այդ բոլոր աշխատանքներին: Հունիսի 11-ին պարոնայք Քոչինյանը եւ Մուրադյանն իրենց երկրորդ այցելությունն էին կատարում Քաջարան: Այս անգամ նրանց հետ էր նաեւ ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Նովիկովը: Երբ Վերին Հանդ գյուղում էին, պարոն Նովիկովը, տեսնելով գյուղի վերեւի քարքարոտ վայրերը, զարմացավ. **«Այս քարերի, այս սարերի ստորոտում ինչի՞ համար են տուն կառուցել...»:** Բացի դրանից ԽՄԿԿ կենտկոմը եւ ԽՍՀՄ կառավարությունը հատուկ որոշում ընդունեցին, որում նշվում էր, թե քանի մլն ռուբլի պետք է հատկացվեր քաղաքին՝ վերականգնողական աշխատանքների համար: Մեկ շաբաթ չանցած՝ վագոններով օգնությունը հասավ Քաջարան: Որոշ աղբյուրների համաձայն՝ տրամադրվել էր 1090 վրան, 1178 հավաքովի տնակ, 202 պատրաստի տնակ, 500.000 ռուբլու տարբեր տեսակի շինանյութ, 1.556.000 ռուբլու տարբեր տեսակի մեխանիզմներ եւ այլն:

Սկսվեց Քաջարանի վերակառուցման գործընթացը: Երկհարկանի շենքերը, որոնք բոլորն էլ վթարային էին համարվել, քանդեցին՝ տեղում կառուցելով բարձրահարկ շենքեր:

Չպետք է մոռանալ նաեւ այդ օրերին քաջարանցիների համախմբվածության, կազմակերպվածության, իրենց քաղաքի հանդեպ տածած հոգատարության մասին: Պարոն Հովհաննիսյանը հպարտությամբ է նշում, որ ոչ մի բողոք, տրտունջ չի լսել բնակիչներից՝ չնայած նրանք ստիպված էին 6-7 ամիս ապրել տնակներում: Նրանք, մեկը մյուսին թիկունք կանգնելով, միմյանց քաջալերելով, կարողացան կարճ ժամանակում ոտքի կանգնեցնել իրենց քաղաքը...

ՄԵԼԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

Քաջարան. մատենագիտություն

Քաջարան քաղաքի անցյալն ու ներկան ամբողջացնելուն են միտված տարբեր տարիների հրատարակված եւ ներկայումս հրատարակվող գեղարվեստական, փաստագրական, գիտահանրամատչելի գրքեր, լրագրային հրապարակումներ: Սրանց հավելենք վավերագրական կինոնկարներն ու տեսաֆիլմերը: 1974-ին Ալեքսանդր Մյասնիկյանի անվան գրադարանը հրատարակել է «Քաջարան» մատենագիտական տեղեկատուն, որը բովանդակում է մինչեւ այդ թվականը հրապարակ հանվածները: Դրանից հետո փաստական հարուստ նյութ է կուտակվել. շարունակում են լույս տեսնել նոր գրքեր ու հրատարակություններ:

Սկզբնական շրջանում Քաջարանը պատկերող գործերում գերիշխում էր ակնարկի ժանրը: Շրջանային «Պղնձի համար» թերթի նախկին խմբագիր Գաբրիել Արեւյանի «Հանքաշխարհ» (ակնարկներ, «Հայպետհրատ» Երեւան, 1959թ.) եւ «Ես էլ մի երկրախույզ» ակնարկների ժողովածուների («Հայպետհրատ» 1963թ.) հերոսները Ղափանի եւ Քաջարանի հանքագործներն են: Հայկական ԽՍՀ «Գիտելիք» ընկերության մատենաշարով լույս տեսած Արտաշես Կարապետյանի «Ղափան-Քաջարան» պատմաաշխարհագրական ակնարկում (Երեւան, 1969թ.) եւս անդրադարձներ կան լեռնագործների կյանքին ու գործին: Հայկական ԽՍՀ վաստակավոր լրագրող Արծվիկ Կարապետյանի «Քաջարանցիներ» («Սովետական գրող» հրատարակչություն, Երեւան, 1980թ.) ակնարկաշարի թեման քաջարանյան բաշխարհն է, մարդիկ, ովքեր իրենց եռանդը նվիրաբերում են հայրենի եզերքի բարգավաճմանը:

Քաջարանյան թեման արտացոլում է գտել գեղարվեստական գրականության մեջ: Լայնակտավ մի գործ է Սերո Խանզադյանի «Քաջարան» վեպը, որտեղ հեղինակը պատկերել է լեռնագործների կյանքը, ներկայացրել, թե ինչպես լեռների արանքում կորած աննշան ու աղքատ բնակավայրն իր զավակների դժվարին, բայց նվիրված աշխատանքի շնորհիվ դառնում է լիարժեք կյանքով ապրող մի քաղաք: Քաջարանցիների եւ Քաջարանի մասին է պատմում հեղինակն իր «Հայրենապատում» ուղեգրության մեջ (Ա հատոր, էջ 42-52) «Ես եղել եմ Քաջարանում» վերնագրով: Հեղինակի առաջին այցը Քաջարան 1929 թվականին էր, երբ փոստատար հոր հետ փոստը հասցրել էին Ողջի ձորի գյուղերը, որոնք թվարկվում են գրքում՝ Աթկզ, Շաբադին, Ողջի, Քաջարանց, Փիրդովդամ: «Փոստի տարի», «Կռվի տարի», «Ճանապարհի տարի» ենթավերնագրերն ինքնին ամեն ինչ ասում են: Ընդամենը տասը էջ է գրել Ս.Խանզադյանը Քաջարանի մասին. ընթերցողը դրանցում հանդիպում է հանրածանոթ շատ մարդկանց՝ կոմբինատի տնօրեն Հմայակ Սահակյան եւ Ֆրունզե Պետրոսյան, պատանի հանքագործ Ռաֆիկ Մինասյան, որ հետագայում Ղափանի կուսշրջկոմի առաջին քարտուղարը պիտի դառնար, էքսկավատորավարներ Սերյոժա (Սերգեյ) Հարությունյան, Գերասիմ Պետրոսյան եւ այդպես շարունակ:

Վերջին տասնամյակում մի տեսակ գրքային բում է սկսվել: Գիրք գրողների մեջ ցանկություն կա ներկայացնել իրենց ծննդավայրի պատմությունը, տոհմագրությունը: 2004-ին ընթերցողի սեղանին դրվեց երկու այդպիսի գիրք. «Հայաստանի Հանրապետության բնակավայրերը» մատենաշարով լույս տեսավ «Քաջարան» (Քաջարան քաղաքի պատմությունը) հատորը, որը պատրաստել են Վլադիմիր Հարությունյանն ու Գոհար Մանուկյանը: Քաջարանի մերձակա գյուղերի քաղաքային տնտեսության, մշակույթի վերաբերյալ ուշագրավ նյութեր են ներկայացրել բանահավաք, ուսուցչապետ Ռոբերտ Էջանանցին եւ Քաջարանի նախկին քաղաքապետ Ժորա Հովսեփյանը: Ռ.Էջանանցին գրի է առել մի շարք ավանդապատումներ, որոնք աղերսվում են Քաջարանի պատմությանը եւ հեղինակ է «Քաջարանի մերձակա բնակավայրերը» տեքստի: Որպես գրքի բնաբան ընտրվել է Համո Սահյանի բանաստեղծությունը: Նույն մատենաշարով լույս է տեսել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» գիրքը («ԶՊՄԿ» ՓԲԸ, կոմբինատի պատմությունը), խմբագիր՝ տեխնիկական գիտությունների թեկնածու՝ Ֆրունզե Պետրոսյան: Գրքում ներկայացված են ձեռնարկության հիմնադրման պատմությունը, մարդիկ՝ կոմբինատի գործարկման ակունքների մոտ եւ մինչեւ մեր օրերը կանգնածները:

Ուշագրավ հրատարակություններից է կոմբինատի երկրաբանամարկշեյդերական ծառայության պետ Ռուդիկ Հովհաննիսյանի հեղինակած գրքույկը՝ «Քաջարանյան հանքաշխարհ», որն ունի պատմաաշխարհագրական, երկրաբանական, հայրենագիտական բովանդակություն, հինավուրց Ձորք գավառի՝ մերօրյա քաջարանյան հանքաշխարհի ամփոփ բնութագրի առաջին փորձն է: Հընթացս հեղինակը ներկայացրել է Քաջարան քաղաքին եւ մերձակա բնակավայրերին վերաբերող տեղեկություններ, լեռնաշխարհի երկրաբանական նկարագրությունը, լեռնահանքային արդյունաբերության նախապատմության դրվագներ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 50-ամյա համառոտ պատմությունը:

Վերը հիշատակած հրատարակություններից իր բնույթով եւ հետապնդած նպատակով առանձնանում է Ա.Սաղաթելյանի, Վ.Գեւորգյանի, Ա.Արեւշատյանի, Լ.Սահակյանի «Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի վիճակի էկոլոգաերկրաքիմիական գնահատում» հետազոտությունը (Երեւան, 2008թ.) որում ամփոփված են Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի եւ հարակից երեք պոչամբարների էկոլոգիական վիճակի եռամյա (2005-2007թթ.) հետազոտությունների արդյունքները: Ի դեպ, սա Հայաստանի տարածքում առաջին համալիր էկոլոգաերկրաքիմիական ուսումնասիրությունն է, որ իրականացվել է ՀՀ ԳԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի եւ Քաջարանի քաղաքապետարանի կողմից:

Խնդրո առարկային առնչվող վերջին հրապարակումներից է Արտավազդ Մաթեւոսյանի «Քաջերի երկիր, Քաջարան» փաստավավերագրական ակնարկը, որը նվիրված է «Քաջարանշին» տրեստի շինարարներին, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի լեռնագործներին, Քաջարանին քաղաքի կարգավիճակ շնորհելու 50-ամյակին: Հեղինակը, ով գրքում ծավալվող իրադարձությունների ականատեսն ու նաեւ մասնակիցն է, փաստական հարուստ նյութի հիման վրա վերստեղծել է տրեստի տարեգրությունը:

Քաջարանին նվիրված թերթային հրապարակումների պակաս եւս չի զգացվում: Մասնավորապես «Սյունյաց աշխարհ» մարզային թերթը 2002-ի մայիսի 30-ի միացյալ համարը (թիվ 30-31) նվիրել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կեսդարյա ուղուն: «Սյունյաց երկիր» թերթը կոմբինատի մասնավորեցման մեկամյա ուղուն եւս մի համար է նվիրել («Սյունյաց երկիր», 26-ը հունվարի 2006թ.): Նույն թերթի 2003-ի նոյեմբերի 14-ի համարը (թիվ 5) նվիրված է Քաջարանին «Քաջարան՝ ստեղծագործ ոգուն ապավինած» ընդհանուր խորագրով: Քաջարանի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանն է նվիրված «Սյունյաց երկրի» 2004թ. հոկտեմբերի 28-ի միացյալ համարը (թիվ 33-35):

Այս հրապարակման նպատակը Քաջարանի մատենագիտությունը հնարավորինս ներկայացնելն էր, բայց, ինչպես նշեցինք սկզբում, Քաջարանի մասին նկարահանվել են ֆիլմեր: 1967թ. Շմավոն Մովսիսյանի նկարահանած «Գանձասարի մարդիկ» ֆիլմը գեղարվեստական ինքնագործունեության հանրապետական փառատոնում արժանացել է ոսկե մեդալի եւ ներկայացվել համամիութենական ստուգատեսին: Ֆիլմը ցուցադրվել է նաեւ Մոսկվայում: Վերջին տարիներին Քաջարանի կոմբինատի գործունեությունը լուսաբանող տեսաֆիլմեր են նկարահանվել:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԱՋԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

տարածքը / հա /	1 410
համայնքային բնակարանային ֆոնդը / քմ /	117 577
բնակֆոնդի բնակարանների թիվը	2 076
չսեփականաշնորհված բնակարանների թիվը	192
բնակչության թիվը	11 200



ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐ	216
ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ	1 100
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐ	1 430
0-6 ՏԱՐԵԿԱՆ	771
ՆՊԱՍՏԱՌՈՒՆԵՐ	94
ԱՇԽԱՏՈՂՆԵՐ	4 780
ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐ	228
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐ	619
ՄԻՋՆ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐ	1 126
ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՈՐԲ ԵՐԵԽԱՆԵՐ	1
ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՈՐԲ ԵՐԵԽԱՆԵՐ	110
ՁՈՒՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ	37
ՄԻԱՅՆԱԿ ՄԱՅՐԵՐ	18
ԲՈՆԱԳԱՂԹԱԾՆԵՐ	725
ԴՊՐՈՑՆԵՐԻ ԹԻՎԸ	4
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԻՎԸ	131
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ	320

համայնքի բարձրությունը ծովի մակերեւույթից



հեռավորությունը

սահմանից (կմ)	50
մարզկենտրոնից (կմ)	25
մայրաքաղաքից (կմ)	346
երկաթուղուց (կմ)	30

ընտրողների թիվը (մարդ)	1991-2001թթ. համայնքից հեռացածներ (մարդ)	ընտանիքների թիվը
4850	612	2371

ՑԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քաջարան քաղաքում գործում են մոտ 85 խանութներ, որոնցից 59-ն իրականացնում է պարենային, 11-ը՝ խառն ապրանքների, 5-ը՝ դեղորայքի, 5-ը՝ շինանյութի, 5-ը՝ հագուստի վաճառք: Ծաղկի ձեւավորման ու ծաղկեպսակների պատվիրումն իրականացնում են երկու կրպակներ:
- Քաղաքում առկա է գյուղատնտեսական մթերքների իրացման շուկա, որը, սակայն, չի ծառայում իր նպատակին: Մսի եւ բանջարեղենի վաճառքը նույնպես կատարվում է խանութներում:
- Մեծածախ առեւտրի կետեր քաղաքում չկան:
- Քաջարանի սպասարկման ոլորտը բավարար զարգացած չէ: Քաղաքում գործում են հանրային սննդի 3 օբյեկտ (11 աշխատող, 350 նստատեղ), 6 վարսավիրանոց (8 աշխատող), 1 հյուրանոց, հագուստի քիմիական մաքրման հավաքման 1 կետ, ավտոտեխսպասարկման եւ ավտոլվացման՝ 4 կետ:
- Քաղաքի մարզամշակութային եւ կրթական կյանքում մեծ դեր ունեն համայնքի 3 գրադարանները: «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն ունի հարուստ տեխնիկական գրադարան: Քաղաքային գրադարանները միավորվել են քաղաքապետարանի ակումբագրադարանային համակարգի մեջ:
- Քաղաքի բնակչությանը սպասարկում են Հայբիզնեսբանկի, Հայփոստի, Արդշինինվեստ բանկի Քաջարանի մասնաճյուղերը (համապատասխանաբար 7, 4 եւ 9 աշխատակիցներով):
- Քաջարան քաղաքային համայնքն ունի 75 բնակելի շենք, որոնցից 70-ը գտնվում է Քաջարան քաղաքում, 5-ը՝ Բարիկավան եւ Անդոկավան թաղամասերում: Քաջարանի 75 շենքերը սպասարկվում են 2 համատիրությունների («Քաջարան» եւ «Դավիթբեկ») կողմից: Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 125854 քմ:
- Քաղաքն ունի 7 ներհամայնքային կամուրջ:
- Խմելու ջրի մատակարարումը կատարվում է կենտրոնացված ջրամատակարարման համակարգով, որը համայնքային սեփականություն է: Ջրամատակարարումը շուրջօրյա է: Այն կատարվում է «Քաջարանի համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի կողից:
- Աղբահանություն. կոշտ կենցաղային թափոնների տեղափոխումն իրականացվում է «Կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի կողմից, կենցաղային աղբի կուտակման 40 կետերից:
- Քաղաքում հեռահաղորդակցությունն իրականացվում է «Արմենտել» ՀՁ ՓԲԸ-ի Կապանի բաժանմունքի կողմից: Հեռախոսակապով ապահովված է բնակչության 80 տոկոսը: Բջջային հեռախոսակապն ապահովվում է «Արմենտել» եւ «ՎիվաՍել» ընկերությունների կողմից: Համայնքի ողջ տարածքը գտնվում է նշված ընկերությունների ռադիոծածկույթի ներքո: Քաջարան քաղաքում կապի որակը բավարար է: Նշված ընկերություններն իրականացնում են նաեւ ինտերնետային կապի սպասարկումը: Քաղաքն ապահովված է ինտերնետային կապով, գործում են երեք ինտերնետային ակումբներ:
- Բնակչության կողմից սպառվում է մոտ 2 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա: Էներգամատակարարումն իրականացնում է «Հայաստանի էլցանցեր» ՓԲԸ-ն «Տաթեւ» մասնաճյուղին պատկանող գլխավոր ցածրացնող ենթակայանից:
- Ողջի գետի վրա՝ Քաջարան քաղաքի մոտ, նախատեսվում է կառուցել 1260 եւ 1280 կվտ հզորության երկու՝ Ողջի հէկ-4 եւ հէկ-5:
- Գազիֆիկացված է Քաջարանի բազմաբնակարան բնակելի եւ հասարակական շենքերի մոտ 90 տոկոսը: Գազամատակարարման եւ ընթացիկ սպասարկման աշխատանքները կատարվում են «Սյունիքի ԳԳՄ»-ի Քաջարանի մասնաճյուղի միջոցով:
- Համայնքում չկան լրատվամիջոցներ: Չկան թերթի իրացման կրպակներ: Թերթեր է իրացնում «Հայփոստի» Քաջարանի մասնաճյուղը: Տեղեկատվության տարածման բացը լրացնում են մարզային «Սյունյաց երկիր» թերթը, «Սոսի» հեռուստաընկերությունը: Քաղաքում գործում է կաբելային հեռուստատեսության 25 ալիք, որից երեքը՝ հայկական (Հ1, Հ2, Արմենիա):
- Տրանսպորտը եւ տրանսպորտային ցանցը. քաղաքի վարչական տարածքով է անցնում Երեւան-Մեղրի միջպետական ճանապարհի 4 կմ հատվածը, որով իրականցվում է միկրոավտոբուսային հաղորդակցությունը Մեղրի-Երեւան եւ Մեղրի-Կապան երթուղիներով:
- Քաղաքում գործում են «Կենի», հաշմանդամների «Ողջի» հասարակական կազմակերպությունները եւ «Քաջարան» հիմնադրամը: «Կենի» ՀԿ-ն Քաջարանի քաղաքապետարանի հետ կնքած պայմանագրի շրջանակներում իրականացնում է «Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի մասին տեսաֆիլմերի ստեղծում» եւ «Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի մասին բնակչության իրազեկում» ծրագրերը:

Այսօրվայ երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Այսօրվայ աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԽԱՌՆԱԿ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

1937 թվական...

ԳՐԻՇԱ ՍՄԲԱՏՅԱՆ
Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն

Վերին ծորը ճակատագրի բերումով միշտ էլ ծանր ժամանակներ է ապրել: Ստալինյան բռնությունները չշրջանցեցին Վերին Հանդ, Քաջարան, Ողջի գյուղերը: Այստեղ եւս «հայտնաբերվեցին» «սոցիալապես խորթ» տարրեր, «հակահեղափոխականներ», «տեռորիստներ», «լրտես-դիվերսանտներ», «կուլակներ» եւ կոլխոզի թշնամիներ, որոնք ընդհանուր անուն ունեին՝ ժողովրդի թշնամիներ: Այս երեք գյուղերում միասին դեռ ժամանակին ձայնազրկվել էր 14 հոգի, իսկ 30-ականներին ոչ ստույգ տվյալներով բռնարարքների են ենթարկվել 20-ից ավելի միայն տեղացիներ:

Եկեղեցու դեմ Կապանում առաջինը սուր են ճոճել Քաջարանց գյուղում: 1924-ին էր. հեղափոխական հովերով տարված ջահելների մի խումբ ներխուժեց սբ Հակոբ եկեղեցի, ոչնչացրեց փաստաթղթերը, գրքերը, սրբեց տարավ սպասքն ու մասունքները: Մի երկուսի մտքով անցավ դեն նետել նաեւ Չափաբերականք մատյանները, բայց հասկացրին, որ նրանցում գյուղի անցյալն է:

Անզոր գտնվեց Տեր-Հովհաննես քահանա Մարգարյանցը: Վշտացավ, կուչ եկավ, անկողին ընկավ ու ավանդեց հոգին: Կուչ եկավ նա, ով 1906 թվականին առաջնորդում էր համագյուղացիներին՝ թուրքական ներխուժումների դեմ կատաղի կռիվներում: Նրա նախաձեռնությամբ Քաջարանց գյուղի բնակչությունը տեղափոխվեց Քրդիկանց (Լեռնաձոր), ապա զինյալների գլուխ անցած՝ կոտրեց թուրքերի դիմադրությունը եւ քշեց նրանց մինչեւ «Կոտորածի քար»:

Եկեղեցու, հավատի, ազգային ավանդույթների նկատմամբ ծայրահեղ արմատական էին կոմերիտականները: Նրանք եկեղեցու սպասավորների նկատմամբ արհամարհական ու սանձարձակ էին: Վերին Հանդ գյուղում կոմսոմոլ Ռուբեն Փիրյանը օրը ցերեկով համագյուղացիների աչքի առաջ բռնությամբ խուզեց քահանա Տեր-Ստեփանոսի միրուքը՝ պատճառելով նրան խորը վիշտ ու դառնություն. համագյուղացիների վրդովմունքը ոչինչ չարժեր աթեիստ երիտասարդի համար:

«Տեր-Ստեփանոսը ճաշակել է Կարմիր դարաշրջանի վրահաս դառնությունները:

Կարմիրները բնակչությանը հորդորում ու ստիպում էին երես թեքել եկեղեցուց, ցիրուցան արեցին եկեղեցիների գրադարաններն ու մնացյալ ունեցվածքը եւ այդ ամենը՝ աթեիզմին մղված կոմսոմոլների ձեռամբ: Ավանդական բարոյական պատկերացումներին փոխարինելու եկան աստվածամերժությունն ու ստալինյան բացահայտ հալածանքները: Տեր-Ստեփանոսի տառապանքներին սահման չկար: Եկեղեցին փակվել ու հավակնում էր ցորենի պահեստի: Կոլխոզի ղեկավարներն անվարան դիմեցին սրբապղծության՝ քահանային ստիպում էին խուզել ալեզարդ միրուքը եւ... կոլխոզ գրվել:

Տեր-Ստեփանոսը ապաշխարանքի ուխտագնացություն ձեռնարկեց՝ այցելեց Գողթն ու Մեսրոպավանքում աղոթք մրմնջաց բոլորի եւ իր հոգիների փրկության համար: Նա հանգեավ ի Քրիստոս 1935-ին, հայրենի Վերին Հանդ գյուղում», – գրում է Ռ.Էջանանցին:

Վերին ծորում նույնիսկ հակահեղափոխական կազմակերպություններ են հայտնաբերվել: Դրանք «Ողջու ծորի» երեք խմբակներն են, որոնք հիստերիա առաջացրին Կապանում: Իշխանությունը, մամուլը, քարոզչական մեքենան համոզում էին, որ խմբակները մեկը մյուսի շարունակությունն են կազմել եւ խիստ նպատակադրված քայքայիչ աշխատանք են իրականացրել շրջանում:

Առաջին խմբակը «հայտնաբերվել է» կուսակցական փաստաթղթերի փոխանակման ժամանակ: Որպես խմբակի անդամներ մեղադրվեցին Հարություն Հարությունյանը, Անտոն Մելքումյանը (շրջկոոպի նախագահ, 1931թ. երկրաշարժից հետո շինարարական կոմիտեի նախագահ, բռնադատվեց), Տիգրան Պետրոսյանը, Փարամազ Անդրեասյանը (Զրախորհէկի պետ, բռնադատվեց), Բարխուդար Մարգարյանը (շրջկոմի հրահանգիչ, բռնադատվեց): Սրանց եւ նմանների մեղքն այն էր, որ 1918-21թթ. հարկադրված էին զենք վերցնել եւ կռվել թուրք-թաթարական ուժերի դեմ:

30-ականներին նրանք արդեն «նացիոնալիստներ» էին, որոնք իբր խոչընդոտում էին թուրքական գյուղերի հողհատկացմանը, պայքարում էին կոլտնտեսային շինարարության դեմ, վերջապես «հակառակ տեսակետից էին ներկայացնում նրանց տնտեսական հաջողությունները»:

Չբավարարվելով նացիոնալիզմի քարոզով՝ սրանք այնքան են խորացել քաղաքականության մեջ, որ քարոզչություն են արել մեկ առանձին երկրում վերցրած սոցիալիզմի կառուցման Լենինյան տեսության դեմ:

Ի դեպ՝ Ողջաձորի խմբակի մասին անձամբ տեղյակ էր նաեւ Կենտկոմի քարտուղար Ամատունին, որի կողմից Կապան գործուղված հանրապետության դատախազ տխրահռչակ Արամ Հարությունյանը ակտիվի մի մասի եւ անձամբ Մելքոն Գրիգորյանի հետ կարողացավ «բացահայտել» խմբակը:

Ողջաձորի կոմունիստներին, հավանաբար, չէր հետաքրքրում կուսակցության ներքին կյանքը: Անտարբեր էին, թե համոզված էին, որ իրենց ընկերները մեղքի տեր չեն, հանցագործներ չեն: Առանց երկմտելու «դաշնակ-նացիոնալիստ» Սեդրակ Բաղդասարյանին կուսակցության մեջ վերականգնելու համար երաշխավորել են 105 կոմունիստներ: (Սեդրակ Բաղդասարյանն ավթաբազայի տնօրենը, ապա Արծվանիկի կոլեկտիվ տնտեսության նախագահը հեռացվեց կուսակցությունից: Մեծ հայրենականի ժամանակ մեղադրեցին լուսաքողարկումը լավ չանելու համար: Ձերբակալվեց եւ երկար ժամանակ անցկացրեց բանտում): «Տրոցկիստ-բանդիտ» Հարություն Հարությունյանին վերականգնելու համար երաշխավորել են բազմաթիվ կոմունիստներ, որոնցից Բագրատ Վարդանյանը գործած մեղքի համար հեռացվեց կուսակցությունից, նրա երաշխավորյալը ձերբակալվեց հայրենի գյուղում:

Ողջաձորի հակահեղափոխական երկրորդ խմբակը «հայտնաբերվեց» 1936 թվականին, որի կազմակերպիչներն էին Սեդրակ Թադեւոսյանը եւ Ղազար Մուրադյանը: Այս խմբակի նկատմամբ մեղադրանքը նոր տեսակի էր. քայքայիչ աշխատանք մտավորականության շրջանում, Տրոցկու եւ Զինովեւի գովաբանում, խորհրդային իշխանության սխալ քաղաքականությունը դատապարտում:

Քաղաքական հոտառություն, գրագիտություն եւ ինտուիցիա պետք էր ունենալ, կասկածի տակ դնելու համար Աղասի Խանջյանի ինքնասպանության պաշտոնական հայտարարությունը: Ողջիի դպրոցի երիտասարդ ուսուցիչ Սեդրակ Թադեւոսյանը թեեւ օժտված էր այս հատկություններով, սակայն սայթաքեց: Երիդասարդ էր...

Ծնվել է 1911-ին Լեռնաձորում, սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ Թեւան Թադեւոսյանի (1-ին Աշխարհամարտի զինվոր) ընտանիքում: Ութամյա կրթություն ստանալուց հետո Սեդրակը վաղաժամկետ հանձնել է միջնակարգի քննությունները, ստացել հասունության ատեստատ: Այնուհետեւ տեղափոխվել է Բաքու, ընդունվել Բաքվի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ: Ունկնդրել է Կիրովին, Զինովեւին, Ռիկովին, ակադեմիկոս Մառին: Ուսման մեծ ծարավ ուներ, զբաղվում էր գիտությամբ, ուսումնասիրում էր լեզուներ, որի շնորհիվ տիրապետեց ռուսերենին, գերմաներենին եւ հին հունարենին: Օրերով դուրս չէր գալիս գրադարանից, շարունակ պրպտումների մեջ էր, թարգմանություններ էր կատարում Հեգելից, Էնգելսից, Արիստոտելից (այս թարգմանությունները պահվում են նրա անձնական արխիվում):

1930-ականների սկզբին ընտանիքին օգնելու, հորը կարիքից հանելու նպատակով նա Բաքվից տեղափոխվում է Կապան եւ որպես ֆիզիկայի ու ռուսաց լեզվի ուսուցիչ աշխատում է Ողջիի, Շրվենանցի դպրոցներում եւ Կապանի մանկավարժական տեխնիկումում:

Երկար ժամանակ լռել էր, չէր խոսել, չէր փորձել լռեցնել կենտկոմի քարտուղարին դատապարտող «քաղաքագետ» ուսուցիչներին: Ու մի օր էլ չդիմացավ, պայթեց: «Ո՞վ ասաց, որ Աղասին ինքնասպան է եղել: Դեն շպրտեք դ թերթերը, ես լավ գիտեմ դրանց լեզուն: Թուրքակի պես մի՛ կրկնեք, ու ամեն գրածի մի՛ հավատացեք»:

Հանդգնությունը պատժվեց: Պատերազմի նախօրյակին նրանից նամակ ստացվեց Մագադանից: Գրում էր, որ հիվանդ է, խնդրում է տաք շորեր ու ծխախոտ ուղարկել: Խնդրանքը կատարվում է եւ այլեւս ոչ մի լուր: Վերին ծորում Սեդրակի մասին խոսում են ափսոսանքով:

1937-ին հայտնաբերվեց երրորդ խմբակը, որի կազմակերպիչներն էին լուսժողկոմատից ուղարկված ուսուցիչներ Գրիգոր Գրիգորյանը եւ Սաշա Ասլանյանը:

Ուսուցիչներին մեղադրանք ներկայացվեց որպես տրոցկիստների, ովքեր ձգտում են քայքայել դպրոցը, ձախողում էին ուսումնական առաջադրանքների կատարումը:

Գյուղում տրոցկիստ զինովեւական խմբակցությանը հարելու մեղադրանքով ձերբակալվեց Հարություն Հարությունյանը:

Իսկ Բագրատ Վարդանյանը մեղադրվեց այն պատճառով, որ Հարությունին երաշխավորել է ընդունվել կուսակցության շարքերը: Այս «մեղքի» համար Բագրատն էլ հեռացվեց կուսակցությունից:

«Հայտնաբերված» հակահեղափոխականներից էր կոմունալ բաժնի վարիչ, կոմունիստ վերին հանդեցի Բարխուդար Մարգարյանը: Մեղադրվեց կուսակցական փաստաթղթերի ստուգման եւ փոխանակման ժամանակ իր անցյալը թաքցնելու, տրոցկիստական խմբակում ակտիվ գործունեություն ծավալելու եւ բազմաթիվ այլ հանցանքների մեջ:

Բանտի եւ համակենտրոնացման ճամբարի հոտ էր փչում Մարգարյանի վերաբերյալ շրջկոմի բյուրոյի որոշումից. (մեջբեր-

ՔԱՋԱՐԱՆՑԻՆԵՐ

Մինաս Պապյան. առաջին ստախանովականներից մեկը

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքի արտադրողականության, որակի բարձրացման մասին, ինչպես նաեւ հանքագործների աշխատանքից հերոսական եւ փառավոր էջեր են գրվել: Այդ գործում իրենց ուրույն տեղն են ունեցել հատկապես ստախանովական շարժման մասնակիցները: Առաջին ստախանովականներից էր Մինաս Պապյանը:

Ծնվել է 1906 թվականին Քաջարան գյուղում՝ դարբին Սմբատի ընտանիքում: Հինգերորդ զավակն է եղել, օջախում իրենից բացի հինգ տղա, մեկ աղջիկ է եղել: Հաճախել է գյուղի երկդասյա ծխական դպրոցը, ապա ուսումը շարունակելով տանը՝ ավարտել չորրորդ դասարանը, զբաղվել ինքնակրթությամբ: Մինաս Պապյանի որդին՝ Գրիշա Պապյանը, ներկայացնելով հոր կյանքն ու գործունեությունը, թախիծով հիշեց, թե ինչպես մի օր Սմբատ պապին ու ավագ հորեղբորը Փուխրուտասարում դժբախտություն պատահեց. ձյան տակ մնալով՝ մահացան: Մինաս Պապյանը, մնալով որբ, ինը տարեկանից Տաշտունում նկարիչ Կարոյի տանը բատրակ է եղել՝ տան հոգսերն իր ուսերին կրելով:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նորաստեղծ իշխանությունները ցանկանում էին վերագործարկել Կապանի պղնձահանքերի քանդված ու թալանված արտադրամասերը: Այդ ուղղությամբ կոնկրետ քայլեր ձեռնարկվեցին 1924 թվականին. «Կարմիր նոյեմբեր» կոչվեց վերանորոգված գործարանը: Հանքերում, ձուլարաններում աշխատանքի են ընդունվում բանվորներ, մասնագետներ, այդ թվում նաեւ 18-ամյա Մինասը:

Կարճ ժամանակահատվածում Մինաս Պապյանը դառնում է արտադրության առաջավորներից մեկը: Հանքում դրսեւորած ունակությունները խոսում էին Մինասի մեծ եռանդի, գործի իմացության, ճարպկության, նվիրվածության, նաեւ գրագիտության մասին:

1928 թ. զորակոչվեց Վաղարշապատի հեծելազորային գունդ: Որդին՝ Գրիշա Պապյանը հոր բանակային կյանքից դրվագ վերհիշեց. **«Մի օր շարք կանգնած զինծառայողներից հարցնում են, թե ով կարող է ձի պայտել: Մինասը շարքից մի քայլ առաջ է գալիս: Բերում են խրտնած ձի, որին ոչ ոք մոտենալ չի ցանկանում: Մուրճը ձեռքն առնելով՝ Մինասը կարողանում է ձիու ոտքը դնել իր ոտքին եւ պայտել»:** Սպայակազմի ուշադրությունը գրավեց անկոտրում մարտական ոգու, պատրաստվածության շնորհիվ: Ավարտելով զինծառայությունը՝ վերադառնում է ծննդավայր եւ 1930-ականներին մասնակցում գյուղի կոլեկտիվացմանը: Նույն թվականին մեկնում է Կապան, աշխատանքի ընդունվում Լենհանքերում՝ կրկին որպես հորատող: Այստեղից էլ սկսում է կերտել իր կենսագրության նշանավոր էջերը: Շուտով Մինաս Պապյանը դառնում է ստախանովյան շարժման առաջին մասնակիցներից մեկը Կապանում՝ հերթափոխի ընթացքում հորատելով 18 խորանարդ մետր հանքաքար. գունավոր մետալուրգիայի եւ երկրի առաջին ստախանովականների Ոսկե գրքում գրանցվեց նրա անու-

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Այունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԽԱՌՆԱԿ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

վում է նույնությամբ).

Թագնված տրոցկիստ Բարխուդար Մարգարյանին կուսակցությունից վտարելու մասին ՀԿ(Բ)Կ Ղափանի շրջկոմի բյուրոյի օգոստոսի 23-ի որոշումը

Շրջկոմում կատարված հետաքննության տվյալների հիման վրա հաստատված համարել, վոր կոմբինատի սկզբնական կազմակերպության անդամ Բարխուդար Մարգարյանը 1926թ-ից յեղել ե ակտիվ տրոցկիստ եւ այդ փաստը թագցրել ե կուսակցությունից՝ ինչպես ստուգման, այնպես ել կուսփաստաթղթերի փոխանակման ժամանակ: 1926թվին, Զանգեզուրի նախկին գավկոմի ագիտ բաժնի վարիչ, տրոցկիստ Մ. Արոյանի նախաձեռնությամբ Ոխճի գյուղում կազմակերպվում ե «կուս դպրոց», վորտեղ դպրոցի ղեկավար ուղարկվում ե տրոցկիստ Արշակ Շալունցը, վորը դպրոցի ակտիվից կազմակերպում ե տրոցկիստական խմբակ, վորի մեջ մտնում եյին Հարություն Հարությունյանը, Ահարոն Պետրոսյանը, Փարամազ Անդրյասյանը (կուսակցությունից վտարվածներ), Բարխուդար Մարգարյանը եւ ուրիշները:

Արշակ Շալունցի կազմակերպած տրոցկիստական խմբակն այն ժամանակ ակտիվ պրոպոգանդ եր տանում մի յերկրում սոցիալիզմ կառուցելու կուսակցության դրույթի դեմ, եւ գործնականում վարքաբեկում եյին այն ժամանակ գյուղերում գոյություն ունեցող հողոգտագործման եւ կաթնատնտեսական արտելները, պրոօպագանդ եյին ծավալում, վոր «բանվորը Խորհրդային միության մեջ շահագործվում ե»:

Այդ գործերին ակտիվ մասնակցում եր նաեւ Բարխուդար Մարգարյանը:

Բարխուդար Մարգարյանը կուսակցությունից թագցրել ե իր կուլակային ծագումը: Նրա հայրը մինչեւ 1925թ. յեղել ե կուլակ-վաշխառու, իսկ հայ-թաթարական կոտորածների ժամանակ՝ հայտնի թալանչիներից մեկը: Վերջին շրջանում Բարխուդար Մարգարյանը կապված ե յեղել կուսակցությունից վտարված տրոցկիստ Հարություն Հարությունյանի հետ եւ նամակագրական կապ ե ունեցել կուսակցության կյանքին վերաբերող հարցերի շուրջը՝ նախկին դաշնակ-վաշտապետի հետ:

Լինելով թագնված տրոցկիստ, իր գործնական աշխատանքի ընթացքում (հողբաժնում, ՈՐՍ-ում եւ կոմունալ բաժնում) ամենուրեք վիժեցրել եւ կուսակցության առաջադրանքները եւ իր կազմալուծիչ աշխատանքի համար յենթարկվել ե կուսակցական տուժի:

ՀԿ(Բ)Կ Ղափանի շրջկոմի բյուրոն վորոշում է

1. Հաստատված համարել վերոհիշյալ տվյալները եւ վորպես թագնված հակահեղափոխական տրոցկիստ վտարել կուսակցության շարքերից ԲԱՐԽՈՒԴԱՐ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ:

2. Խմբակի մյուս մասնակիցների դեմքը պատռելու գործի հետագա քննությունը հանձնարարել ՆԳԺԿ տեղական բաժանմունքին:

ՀԿ(Բ)Կ Ղափանի շրջկոմի քարտուղար Մ.Գրիգորյան

1936-ի սեպտեմբերի 1-ին Եռյակի վճռով դատապարտվեց 10 տարվա ազատազրկման: Տաժանակրության մեջ եղավ շուրջ տասնութ տարի: Նրա ճամբարային օրագրում մենք կարդում ենք.

Ազատություն…
Իսկ երբ կլինի այն:
Իմ ազատության օր
Կլինի նոր արեւ
Նոր արշալույս
Դա կլինի նոր լուսաբեր
Դա կլինի նոր կյանք
Ամեն, ամեն բան կլինի նոր…

Այդ ազատությունը եկավ տասնութ տարի անց՝ 1954թ. հուլիսի 6-ին: Անօրինականությունը, բռնությունն ու կամայականությունը վարկաբեկեցին սոցիալիզմի գաղափարը, մարդկության վեհ ու բնական երազանքը ընկավ ժողովրդի աչքում, որն էլ զգալի դեր ունեցավ հետագայում համակարգի կործանման գործում: 1920-30թվականների կորուստները նախադեպը չունեն, անդառնալի են, անմոռանալի, անչափելի: Խորհրդային կայսրության անցած ուղին էր դա: Պատմությունը, ցավոք, չի սովորեցնում: Վերին ձորի այս փոքրիկ գյուղերի օրինակը մեզ սթափեցնում է. երբեք, ոչ մի դեպքում եւ ոչ մի ժամանակ չպետք է մարդկանց դատապարտել իրենց հայացքների համար:

նը (ստախանովյան շարժումը

ծնունդ առավ 1935 թվականի օգոստոսին, երբ Դոնեցկի «Ցենտրալնայա Իրմինո» հանքում մեկ հերթափոխում հանքափոր Ալ. Ստախանովը հորատեց 102տ քարածուխ): 1934-ին ամուսնանում է, ընտանիք կազմում:

Իր հերոսական աշխատանքային գործունեության համար փորձառու հորատող Սինաս Պապյանը 1935թ. արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչմանը, պարգեւատրվել Լենինի շքանշանով:

1937-ին ընտրվել է ԽՍՀՄ գերագույն խորհրդի պատգամավոր, 1938-ի հոկտեմբերին նշանակվել Կապանի շրջխորհրդի գործկոմի նախագահ: 1941-ին կամավոր մեկնել է խորհրդային բանակ: Ծառայության ժամանակ զբաղեցրել է Անդրկովկասի զինվորական օկրուգի մատակարարման բաժնի պետի առաջին տեղակալի պաշտոնը, ստացել կապիտանի կոչում, ծառայել մինչեւ պատերազմի ավարտը:

1946-ից հետո Մ. Պապյանը աշխատել է պետական մի շարք կառույցներում՝ «Հայառի» Կապանի բաժանմունքի տնօրեն, ճանշին բաժնի վարիչ եւ այլն: ԽՄԿԿ անդամ էր 1929-ից: **«1947 թվականին, երբ հայրս «Հայառի» տնօրեն էր, շրջկոմից կանչեցին, եւ առաջարկեցին «Բաղաբերդ» պիոներական ճամբարի դիմացի տեղանքը պայթեցնել: Չէր կարող չհամաձայնել. սիրում էր լեռնային հորատողի մասնագիտությունը: Ընդունեց առաջարկը: Գնաց, հորատեց, իր առջեւ դրված առաջադրանքը կատարեց: Կատարածի դիմաց հոնորար ստացավ, այդ գումարով եղվարդից ցորեն գնեց, եւ քաջարանցիներին անհատույց բաժանեց: Ժողովրդին ծառայելու համար պատրաստակամ էր, մարդամոտ, հասարակ, աշխատավոր մարդ: Նաեւ լավ երգում, պարում, քամանչա էր նվագում»,** – ասում է աշխատանքի վետերան 70-ամյա Գրիշա Պապյանը:

Սինաս Պապյանի նման աշխատակիցների պրոֆեսիոնալ գործունեության շնորհիվ բարգավաճեց կոմբինատը եւ այսօր արդեն միջազգային ասպարեզում ունի մեծ համբավ:

Սինաս Պապյանը կյանքից հեռացավ 44 տարեկանում, 1950 թվականին:

ՍԱԹԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Պատմամշակութային հուշարձանները

Լուսանկարը՝ Ա.Ավետյանի

ՆԱՊԱՏ ԱՄՐՈՑԸ (ՄԵՀԵՆԱՏԵՂԻ) Ք.ա 2-րդ հազարամյակի ամրոց էր: Գտնվում էր Քաջարան քաղաքից 4 կմ արեւմուտք: Նապատ տեղանունը, ըստ Ս.Ումառյանի, ծագում է խուռիական ջրի աստծո անունից:

ԱՄՐՈՑ ՇԼՈՐՈՒՏ Միջնադարի Այունյաց թագավորության նշանավոր պաշտպանական ամրոցներից էր: Գտնվում էր Վերին Հանդ թաղամասից 1-1.5 կմ հյուսիս՝ Շլորուտ գյուղատեղիի մոտ, «Շիրմաք» հանդամասի մերձակայքում: Ավերել են սելջուկները՝ 1152թ.:

ԱՐԱԼԵԶ ԳՅՈՒՂԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐ Չորք գավառի եռյակ գյուղանուններն էին՝ Արալեզ (Արալը), Ողջի եւ Քաջարան: Արալեզ գյուղի մոտ կար հեթանոսական մի հին տաճար, որի տեղում կառուցվել էր մի մատուռ, որն այժմ ավերակ է:

ՈՂՋԻԻ ՎԱՆՔ ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Սամսոն Աբրահամյանը հուշագրել է, որ անցյալում հայտնի է եղել «Ողջիի վանքը» (գտնվել է ներկայիս հարստացուցիչ ֆաբրիկայի տարածքում):

ԱՐՋԱԴՈՒՌ Քաղաքի Գետամեջ (Աջափնյակ,Արալը) թաղամասի արեւելյան կողմում ուշ միջնադարում եղել է Արջադուռ գյուղը, որը եկեղեցու եւ այլ շինությունների ավերակներով մնացել է ԶՊՄԿ պոչամբարի տարածքում:

ԲԵՐԴԱՎԵՐԱԿ Քաջարանի բարձունքներից դեպի արեւելք՝ լեռնապարի վրա նշմարվում են Բերդավերակի մնացորդները:

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԲԱՆԱԼԻ Երբ Կապանից ոլորապտույտ ճանապարհներով բարձրանում ես դեպի Քաջարան, Ողջի գետի կիրճում՝ երկնասլաց ժայռի վրա, տեղադրված է լեռների տիրակալ Արջի արձանը: Արձանի քանդակագործն է Մարատ Նուրիջանյանը: Տեղադրվել է 1972թ.:

ՑԱՅՏԱՂԲՅՈՒՐ (ԱՐՋԻ) 1995թ. քաղաքապետարանի պատվերով Սոս Պետրոսյանի հեղինակած Արջի ցայտաղբյուրը տեղադրվում է մշակույթի պալատի շքամուտքի առջեւ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՑԱՅՏԱՂԲՅՈՒՐ Քաղաքի կենտրոնական պուրակին իր անկրկնելի գեղեցկությունն է հաղորդում ցայտաղբյուրը, որը գրկաբաց ընդունում է ամռան տապից պապակված բնակիչներին: Տեղադրվել է 1997-1998թթ. Քաջարանի քաղաքապետարանի պատվերով: Բերվել է Սիսիան քաղաքից:

ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ԽԱՉՔԱՐ-ՀՈՒՇԱԿՈԹՈՂ Քաջարանի քաղաքապետարանի պատվերով Սիսիան քաղաքից 1997թ. բերվել է խաչքարը: Տեղադրված է «Գանձասար» հյուրանոցի հարեւանությամբ: Խաչքարը նվիրված է եղեռնի, սումգայիթյան ջարդերի եւ Սպիտակի երկրաշարժի ժամանակ զոհված անմեղ մարդկանց հիշատակին:

ԶՈՀՎԱԾ ՔԱՋԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆ Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 121 քաջարանցի, որոնցից հերոսաբար զոհվել է 56-ը: 1969թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ Մեծ հայրենականում զոհված քաջարանցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի բացումը: Հուշարձանի շուրջը տնկվեց 56 խնձորենի: Ամեն տարի մայիսի 9-ին քաջարանցիներն այցելում են հին գյուղատեղիում կանգնեցրած փառք եւ անմահություն խորհրդանշող հուշարձան, թարմ ծաղիկներ դնում պատվանդանին: Հուշարձանի նախագծի հեղինակն է Երվանդ Հովհաննիսյանը: Հուշարձանի կառուցման աշխատանքները ղեկավարել եւ մեծ օգնություն է ցույց տվել պատերազմի վետերանի որդի Բորիկ Մկրտչյանը:

ԶՈՀՎԱԾ ՎԵՐԻՆ ՀԱՆԴԵՑԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Վերին Հանդից բանակ են զորակոչվել 80 հոգի: Նրանցից պատերազմում զոհվել է 42-ը:

1966թ. վերինհանդեցիներն իրենց միջոցներով Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների հիշատակը հավերժացնելու համար կառուցեցին հուշարձան (հեղինակ՝ Երվանդ Հովհաննիսյան):

Նույն թվականի մայիսի 9-ին տեղի ունեցավ հուշարձանի հանդիսավոր բացումը: Հուշարձանը կառուցված է տեղական սրբատաշ բազալտից, ունի 4մ բարձրություն: Հուշարձանի վերին մասում փորագրված է ավտոմատ հրացան, միջին մասում տեղադրված են 42 զոհվածների նկարները:

Ամեն տարի հանդեցիները հարգանքի տուրք են մատուցում զոհված համագյուղացիներին:

ԶՈՀՎԱԾ ՈՂՋԵՑԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆ Քաջարան քաղաքի Ողջի բնակելի թաղամասի հարավային լեռնալանջին վեր խոյացած հուշարձան-կոթողը խորհրդանշում է Հայրենական մեծ պատերազմում զոհված 34 ողջեցիների հիշատակը: Համագյուղացիները 1978թ. երկրորդ անգամ են կանգնեցրել անմահության հուշարձանը: Առաջին հուշարձանը կառուցվել էր 1967թ. հին գյուղատեղիում, որը քանդվեց՝ տարածքը Քաջարան քաղաքի մեջ առնելու համար: Հիմնվեց մարտական փառքի սրահ, որտեղ ամփոփված են նահատակների լուսանկարներն ու կենսագրությունները: Նոր հուշարձանը կառուցվեց Վ.Աղայանի նախագծով:

ԼԵՌՆԱԳՈՐԾԻ ԱՐՁԱՆ Լեռնագործների մշակույթի պալատի մուտքի աջ կողմում վեր է խոյանում «Լեռնագործ» 5 մետր բարձրությամբ արձանը, որը մարմնավորում է հանքագործի ուժը, արիությունը եւ աշխատանքային սխրագործությունը: Արձանը տեղադրվել է 1963թ.:

ՔԱՋԱՐԱՆՑ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑԻ Եկեղեցին կոչվում է սբ Հակոբ: Միանավ բազիլիկ եկեղեցի է՝ կառուցված 18-րդ դարում: 1906թ. թուրք-հայկական ընդհարումների ժամանակ պաշտպանական դեր է խաղացել:

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ Երբ երկիրը վտանգի մեջ էր, քաջարանցի քաջասիրտները չխնայեցին իրենց կյանքը եւ զոհվեցին հայրենիքի սահմանները պաշտպանելիս: Եղբայրական գերեզմանում 1993-1994թթ. կառուցվեց Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշահամալիրը:

ՎԵՐԻՆ ՀԱՆԴԻ ԵԿԵՂԵՑԻ Կոչվում է սբ Աստվածածին: Վերակառուցվել է 1914թ:

ԼԵՌՆԱԶՈՐԻ ԵԿԵՂԵՑԻ Վերին Հանդից դեպի հյուսիս-արեւելք, թեք սարալանջին գտնվում են Լեռնաձոր (Քոդիկանց) գյուղի ավերակները, որտեղ միակ կանգուն շինությունը սբ Մարիամ Աստվածածին եկեղեցին է՝ կառուցված 18-րդ դարում: Ներկայիս Լեռնաձորի տարածքում գտնվում է սբ Գեւորգ միանավ բազիլիկ եկեղեցին:

ՓՈՒԽՐՈՒՏԻ ԵԿԵՂԵՑԻ Գյուղում կանգուն վիճակում է 16-րդ դարի սբ Ստեփանոս եկեղեցին: Գյուղի մոտով է անցել Թավրիզ-Շուշի հին առեւտրական քարավանային ճանապարհներից մեկը, որի հետքերն այսօր էլ նշմարվում են: Գյուղի տարածքում կան հին գերեզմանոցների, մատուռների, գյուղատեղերի հետքեր:

ԱՌՅՈՒԾԻ ԱՐՁԱՆ Քաջարան քաղաքի ծննդյան օրը օգոստոսի 21-ն է: Ըստ աստղագուշակի՝ Քաջարան քաղաքը առյուծ է: Այդ իսկ պատճառով քաղաքում տեղադրվել է Առյուծի արձանը: Արձանը տեղադրվել է 2007թ.: Բերվել է Սիսիանից՝ Քաջարանի քաղաքապետարանի պատվերով: Տեղադրված է Աբովյան փողոցի մանկական խաղահրապարակում:

ԼՈՒՍԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Քաջարանի քաղաքապետարանի աշխատակցուհի

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Այունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԲՆՕՐԱՆ

Ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը

ՍՊԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն

Քաջարան քաղաքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Ողջի գետի հովտում: Ողջ հանրապետությունում հայտնի հանքագործների քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1750-1800մ բարձրության վրա, շրջապատված է Զանգեզուրի եւ Մեղրու լեռնաշղթաների ճյուղավորումներով: Զանգեզուրի լեռնաշղթայի Բարգուշատի հատվածի հարավային մասն է կազմում Կապուտջուղի լեռնաբազուկը (Քաջարանի լեռնաշղթան), որը ձգվում է Ողջի եւ Գեղի գետերի միջեւ:

Լուսանկարը՝ Ա.Ալեքսանի

Քաջարան

Ինչպես ողջ Զանգեզուրը, այնպես էլ Քաջարանը բարձր լեռնաշղթաների եւ խորունկ կիրճերի աշխարհ է: Քաջարանի արեւմտյան մասում հպարտորեն վեր է խոյանում Կապուտջուղը (3904մ): Վերջինս իր բարձրությամբ ՀՀ երկրորդ լեռն է՝ Արագածից հետո: Քաջարան քաղաքի մոտ առանձնանում է Գանձասար լեռը (2292մ), որի ընդերքը հարուստ է պղնձի եւ մոլիբդենի պաշարներով: Այստեղ է գտնվում պղնձամոլիբդենային հայտնի հանքավայրը, որը շահագործվում է բաց եղանակով եւ դրա պատճառով լեռն իջել է մոտ 150մ:

Տեղացիների մեջ վաղուց պահպանված մի ավանդության համաձայն՝ Գանձասարի ընդերքում հնագույն ժամանակներում իբր պահվել են հայկական արքունական գանձերը:

Քաջարանը գտնվում է զանգեզուրյան երիտասարդ լեռնային մասում, որտեղ լեռնակազմական երեւույթները դեռ չեն ավարտվել: Պարբերաբար տեղի են ունենում ուժեղ երկրաշարժեր (1931 եւ 1968թթ.): Քաջարանը շատ տուժեց 1968թ. հունիսի 9-ի ուժեղ երկրաշարժից (7-8 բալ), որի էպիկենտրոնը Տաշտունի լեռնանցքում էր:

● Քաջարանի հեռավորությունը մայրաքաղաք Երեւանից	345 կմ
● Կապանից	25 կմ
● Մեղրուց	48 կմ
● Մեղրու հետ Քաջարանը կապվում է Մեղրու լեռնանցքով	2535 մ:

Օգտակար հանածոներից Քաջարանում լայն տարածված է մոլիբդենը, պղինձը: Բացի այս հիմնական մետաղներից հանքանյութը պարունակում է նաեւ այլ մետաղներ՝ ոսկի, ռենիում, սելեն, թելուր եւ այլն:

Քաջարանը գտնվում է բարեխառն լեռնային կլիմայական գոտում: Գարնանը եւ աշնանը զով է, ամառը՝ մեղմ, ձմեռը՝ բավականին ցուրտ: Աշունը համեմատաբար երկար է եւ արեւոտ: Միջին տարեկան ջերմաստիճանը 6.9°C, բացարձակ առավելագույնը՝ 33.5°C, բացարձակ նվազագույնը՝ -18.5°C :

Տեղումների տարեկան քանակը հասնում է 600-700 մմ, որոնք հիմնականում թափվում են մայիս-հունիս ամիսներին: Հազվադեպ ուժեղ անձրեւներ լինում են հուլիս եւ օգոստոս ամիսներին: 1956թ. օգոստոսի 27-ին Ողջի գետի ավազանում տեղացած ուժեղ անձրեւը (80մմ), գետի վարարման եւ զգալի ավերածությունների պատճառ դարձավ: Ձմռանը տեղումները լինում են ձյան տեսքով, առաջանում է կայուն ձյունածածկ նոյեմբերից-ապրիլ: Ձյան շերտի բարձրությունը սովորաբար հասնում է 50-60սմ, երբեմն հյուսիսահայաց լանջերին հասնում է 1-1.5 մ-ի: Քամիները հիմնականում փչում են Ողջի գետի հովտի երկայնքով, գերակշռում են հարավարեւելյան եւ արեւելյան ուղղությամբ փչող քամիները: Երբեմն դրանց արագությունը լինում է ավելի քան 20 մ/վրկ:

Քաղաքի միջով հոսում է Ողջի գետը (82կմ): Այն սկիզբ է առնում քաղաքից 6կմ հեռավորության վրա՝ Քաջարանց ու Կապուտջուղ գետերի միախառնումից: Քաղաքի տարածքում Ողջի գետի մեջ է թափվում Ծաղկարի վտակը: Ողջին թափվում է Արաքս գետը՝ ծովի մակերեւույթից 350մ բարձրության վրա: Գետը արագահոս, տիպիկ լեռնային գետ է, ունի մեծ անկում: Ինտենսիվ էրոզիայի հետեւանքով առաջացել է գեղատեսիլ «Արջի կիրճը»: Գետը հորդանում է գարնան վերջին եւ ամռան սկզբին, երբ լեռներում ինտենսիվ հալվում է ձյունը, եւ ավելանում են տեղումները: Գետն ունի ջրաէներգետիկ զգալի պաշարներ, որոնք մասամբ են օգտագործվում:

Զանգեզուրի բարձր լեռնային գոտում կան ավելի քան 30 փոքր լճեր ու լճակներ, որոնցից Քաջարանի տարածքում հայտնի է Կապուտան (Գոգ գյոլ) լիճը: Այն գտնվում է Քաջարանից հարավ-արեւմուտք, Զանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում: Կապուտան լճի բացարձակ բարձրությունը 3286 մ է, մակերեսը՝ 10հա: Լիճն ունի սառցադաշտային ծագում:

Քաջարանի տարածքում կան շատ աղբյուրներ, որոնց մեջ առանձնանում են հանքային աղբյուրները: Քաղաքից արեւմուտք, Ողջի գետի աջ ափին հայտնի է Թթուջուրը: Թթուջուրը քաջարանցիների հայտնի տարածք-հանգստավայրն է: Թթուջրից ձորն ի վեր մոտ 3 կմ հեռավորության վրա կա մի այլ հանքային աղբյուր, որն իր բուժիչ հատկություններով հայտնի է տեղացիներին:

Քաջարանի տարածաշրջանում հիմնականում տարածված են լեռնադարչնագույն եւ գորշ անտառային հողերը: Ավելի վեր տարածվում են մարգագետնատափաստանային եւ լեռնամարգագետնային հողերը:

Քաղաքի մերձակայքում գերակշռում է անտառային բուսական գոտին՝ լայնատերեւ ծառատեսակներով: Անտառում հիմնականում հանդիպում են կաղնի, բոխի, թխկի, վայրի տանձենի, խնձորենի, սալորենի եւ այլն: Տարածված են մասրենին, ալոճենին, սեւ հաղարջը եւ այլ արժեքավոր թփեր:

Քաջարանի լեռնաշղթայի բարձր գոտիներում (1900-2000մ վերեւ) բուսականությունը ալպիական է: Այն բաժանվում է երկու ենթագոտու՝ ենթալպյան եւ ալպյան: Ենթալպյան գոտում տարածված են հիմնականում հացազգիներ՝ դաշտավլուկ, ցորնուկ, շյուղախոտ, մյուս խոտաբույսերից՝ երեքնուկ, եղջերառվույտ, սրոհունդ: Այս գոտին հարուստ է մեղրատու բույսերով՝ հրանունկ, խատուտիկ, թրթնջուկ, անթառամ, մեխակ եւ այլն: Ալպյան մարգագետինները սկսվում են 2900-3000մ բարձրություններից: Բույսերը կարճ են, համարյա գետնին կպած եւ հեռվից բազմերանգ գորգ են հիշեցնում: Այս մարգագետինները ոչխարների համար լավ արոտավայրեր են:

Յուրահատուկ բուսականություն է տարածված Ողջի գետի հովտի հարավահայաց լանջերին: Այս լանջերի ստորին գոտում (մինչեւ 1700-1800մ) տարածվում են գիհու նոսր անտառները: Դրանից վեր տարածվում են տափաստանային եւ փշաթփային տիպի բուսատեսակներ, որոնք հարմարված են ժայռոտ լանջերին: Դրանք խեժանյութ արտադրող փշաթփեր, բազմամյա հացազգիներ, սոխարմատ բույսեր են, չորասեր ուրցի թփեր: Խեժատուներից առանձնահատուկ է գազը (ոս), որը հանդիպում է հողից համարյա զուրկ քարքարոտ լանջերին:

Քաջարանի տարածքում կան զանազան վայրի կենդանիներ: Դրանց մեծ մասը (գայլ, արջ, աղվես, նապաստակ) տարածված են նաեւ հանրապետության այլ վայրերում: Բայց կան նաեւ այնպիսիները, որոնք առավել բնորոշ են Զանգեզուրի լեռնաշխարհին: Բարձր լեռնային գոտում հանդիպում են վայրի ոչխարներ, բեզոարյան այծեր: Այս գոտի են թափանցում գայլեր, որոնք վնաս են հասցնում ալպյան արոտավայրերը բարձրացող ընտանի անասուններին: Կան մանր կրծողներ՝ ձյունաբնակ դաշտամուկ, անտառամկներ, սրնչակներ:

Բազմաթիվ են թռչունները՝ բազե, արտույտ, կաքավ, լոր, անգղ, արծիվ եւ այլն: Զանգեզուրի լեռնաշղթայում, Կապուտջուղի լանջերում հանդիպում է լեռնային հնդուհավը (կամ ուլար)՝ փոքր խմբերով, հավերժական ձյան դաշտերի մոտ:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

Շնորհավոր հոբելյանդ, Ձորքի՛ ոստան

ՍՏԵՓԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Լեռնաձորի գյուղապետ

Մեր համայնքը, որ Լեռնաձոր, Կաթնառատ, Փուխրուտ, Մուսալամ, Ղովշուտ, Դավիթբեկ եւ Գիրաթաղ բնակավայրերի միավորումն է, բերկրանքով ու երախտագիտությամբ է շնորհավորում Քաջարան քաղաքի 50-ամյա հոբելյանը: ՁՊՄԿ հզորությունների ընդլայնումը, որ ծնունդ տվեց լեռնաշխարհի ոստան քաղաքին, խթանեց մերձակա գյուղերի բարեկեցության աճը, նորովի սահմանեց բնակչության կապը բնաշխարհի հետ: Բարձր գոտու աշխատատար երկրագործության տկարացման հաշվին ավելացավ հանքարդյունաբերության մեջ ներգրավվածների թիվը: Գյուղերում ի հայտ եկան լեռնագործների գերդաստաններ:

1958-ին, երբ Քաջարանը քաղաքի կարգավիճակ ստացավ, ՁՊՄԿ-ի աջակցությամբ Լեռնաձոր գյուղը լքեց դժվարամատչելի բարձր տեղանքը եւ վերակազմակերպվեց Ողջի գետի ձախափնյա հանդամասում: Արդ, ունենք կեսդարյա երկու հոբելյան…

Նոր Լեռնաձորի վերելքը պայմանավորվեց Քաջարանի զարգացմամբ. ունեցանք փողոցներով դասավորված նորակառույց բնակարաններ, ջրմուղ, ակումբագրադարանային երկհարկանի համալիր, ավտոբուսային կապ, դպրոցական տիպային շենք… Գյուղաբնակների մշակութային սպասարկման առաջատար դերը վերապահվեց հանքաշխարհի հառնող քաղաքին:

Ամուր հիմքերի վրա դրվեց բուժսպասարկումը. հիվանդանոցային համալիրը կառուցվեց Լեռնաձորի նախկին տարածքում:

Տարի առ տարի քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում ընդլայնվեց գյուղաբնակ ճարտարապետների, արտադրության ղեկավարների, տարաբնույթ մասնագետների կազմը, ի հայտ եկան գիտության մեջ նոր խոսք ասողներ:

Խորհրդային տնտեսության լուծարմամբ Լեռնաձորը վերաճեց «քաջարանյան պրոֆիլի» բնակավայրի եւ իր ավանդն ունի քաղաքի հիսուն տարիների հոլովույթում: Անվարան կարելի է ասել, որ Լեռնաձորի ապագան միտված է Քաջարանի զարգացմանն ու բարգավաճմանը: Եվ գյուղաբնակ մեծի ու փոքրի շուրթերից սրտաբուխ ողջույնն է թեւածում. շնորհավոր հոբելյանդ, Ձորքի՛ ոստան:

Մեր բնօրրանի անզուգական տոնը

ՌԱՖԻԿ ԱԹԱՅԱՆ
Քաջարանի գյուղապետ

Արդեն հինգ տասնամյակ է, որ քարտեզի վրա մեր հայրենի Քաջարան գյուղի ամվամբ նշվում է Քաջարան քաղաքը: Հարկավ, բացառիկ երեւույթ է, երբ գյուղանունը վերաճում է քաղաքի անվան:

Անցած դարի 50-ական թվականներին հանքաշխարհը կառավարվում էր Քաջարանց գյուղից: Հետագայում քաղաքի ընդլայնման պահանջը ներառեց նաեւ արեւելյան կողմից Ողջանց գյուղը, որի տարածքի կառուցապատմամբ քաղաքը ստացավ մերօրյա տեսքը:

1992 թվականի հուլիսի 9-ին քաղաքից անջատվելով՝ Քաջարանը վերստացավ գյուղի կարգավիճակը: Բնակչության ճնշող մեծամասնությունը շարունակեց համալրել տեխնիկական մտավորականության, լեռնագործ մասնագետների շարքերը: Այդ ամենի հետ առանց խթանման չմնացին հողագործությունն ու անասնապահությունը: Կապուտջուղի ստորոտի ընդարձակ հողահանդակները խոտի շտեմարան են մերձակա գյուղերի տնտեսությունների համար:

… Եթե սկզբնական շրջանում հանքարդյունաբերության մեջ ներգրավվում էին հրավիրված ղեկավարներն ու մասնագետները, տարիների առաջընթացի հետ իրավիճակն արմատապես փոխվեց՝ ՁՊՄԿ-ն ունեցավ տեղացի մասնագետներ: ԽՍՀՄ-ում հանքարդյունաբերության հիանալի գիտակի համբավ ուներ տնօրեն, գիտնական Ֆրունզե Պետրոսյանը: Կոմբինատի զարգացման մեջ մեծ ներդրում ունեցան գիտնականներ, տնօրեն Համլետ Ոսկանյանը, գլխավոր ճարտարագետ Բորիկ Մկրտչյանը…

Քաջարան գյուղը գոյատեւում ու բարգավաճում է ՁՊՄԿ-ի հովանավորությամբ ու ամենօրյա հոգածությամբ: Քաղաքի կեսդարյա հոբելյանը մեր բնօրրանի անզուգական տոնն է:

Շնորհավոր հոբելյանդ, հայրենի՛ բնօրրան:

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

Ավանդազրույցներ

Գանձասար Կապուտջուղ լեռան փեշերին առ այսօր նշմարվում են հինավուրց ջրանցքի հետքերը: Պատմում են, որ ջրանցքը կառուցել է Արտաշես Աշխարհակալ արքան: Արեւիք երկրամասի արեւահամ խաղողին կյանք տալու համար նա հրամայել է փորել Կապուտջուղի լանջերը եւ Կապուտանի սառնորակ ջրից բաժին հանել Արեւիքի միհրական կուռքերին: Փորողները զարմացել են, որովհետեւ ջարդվող քարաբեկորների մեջ մետաղի փայլուն ձուլակտորներ են գտել: Եվ այդպես՝ լեռան հին անունը մոռացվել ու Գանձասար է մնացել:

Ծովի հատակ Ձորքում շատ են գլաքարերի քարակարկառները, հանգած կրի ապարաշերտերը, ակնառու են անդունդների ողողամաշվածքները: Հազարավոր տարիներ առաջ Խուստուփ-Կատարի լեռնաշղթան միացյալ էր եւ թիկունքում ուներ մի հսկայատարածք ծովակ, ինչպիսին այժմ պահպանվում են Այունյաց լեռների տարբեր մասերում: Ձորք գավառի տարածքը եղել է ծովի հատակ: Խուստուփ-Կատարի լեռնաշղթան ճեղքվել է Ողջի գետով, որը հնում կոչվել էր Բաղացջուր: Ճեղքումն, անշուշտ, դարեր է տեւել:

Ոսկան մետաղի Հնուց անտի Քաջարանում եւ շրջակա գյուղերում մետաղ են մշակել: Մեր կողմերում հանդիպում են նաեւ մետաղի, օրինակ՝ կապարի ձուլակտորներ (Ողջիի արեւելակողմ Կապարաձորում), ջրառուներում կուտակվում են փայլուն մետաղի ավազաշեղջեր: Հնադարյան գեղարդ է հայտնաբերվել Գանձասարի մի խորխորատից, իսկ Ձրախորի քարանձավում՝ խոհանոցային պղնձե իրեր, Քրդիկանցում՝ բրոնզե սպասք: Լեռնաձորի դպրոցի թանգարանում ցուցադրվում են պեղածո նետասլաքներ, բրոնզե զարդեղեն:
Միջնադարում, երբ ասպատակողները հավակնել են տիրել Բաղքին, գայթակղվել են տեղական մետաղամշակությամբ, մասնավորապես՝ զինագործությամբ:

Արալեզ (Արալըղ) գյուղանվան ծագումը կապվում է Ասորեստանի թագուհի Շամիրամի եւ Հայոց թագավոր Արայի առասպելի հետ: Քաջ Արայի վերքերը բուժելու համար Շամիրամը Ասորեստանից կանչում է շնակերպ աստվածներին՝ արալեզներին: Արալեզը հին մեհենատեղի է Քաջարան քաղաքի տարածքում, Քաջարան անունն էլ ստուգաբանվում է՝ քաջ արա: Այս ավանդապատումը քննության նյութ է դարձրել Ս. Ումառյանը. «Ձորք գավառի եռյակ գյուղանունները՝ Արալեզ (Արալըղ), Ողջի եւ Քաջարան, մեր առասպելի դիցապաշտական հաստատումն են: Արալեզ գյուղի մոտ կար հեթանոսական մի հին տաճար, որի տեղում կառուցվել է մի մատուռ Փիրդավդան տեղամասում, այժմ ավերակ է (պարսկ. նշանակում է սրբավայր) (Այունիքը դիցարան, Երեւան, 1981, էջ 84):

Հոռոմ քար Ողջի գետի ձորում պարտություն են կրել եւ նահանջել հռոմեական զորավար Պոմպեոսի զորքերը: Հուշ է մնացել Քաջարանցի Հոռոմ քարը:

Նոյյան տապան Ողջի գետի ակունքներում մի վճիտ աղբյուր կա՝ մեջը մի մուգ սեւ քար: Ասում են՝ այդ քարն ընկել է Նոյ Նահապետի տապանից, երբ դեպի Մասիս լողալիս նավն անցնում էր այս կողմերով:

Ձյունահարս Ըստ ավանդազրույցի՝ Կապուտան լճում ապրում է հավերժահարսը: Պատմում են, որ Քաջարանց բնակավայրի առաջին բնակիչը մի ձյունահարս է եղել եւ լեռներում իր ոչխարի հոտը պահող մի պատանի: Մի անգամ լեռան բարձրադիր ստորոտներում անսպասելի մրրիկ է սկսվում: Պատանին կորցնում է իր հոտը, ապա ուշակորույս ընկնում: Ձյունահարսը նրան տանում է Կապուտջուղի խոռոչներում գտնվող իր ապարանքը, ուշքի բերում: Այդ հավերժահարսից ու հովվից էլ ծագել են քաջարանցիները (ըստ Սերո Խանզադյանի):

Արտավազդ Հայոց թագավոր Արտավազդը թշնամիներից պաշտպանվելու նպատակով իր գանձերը թաքցնում է մի լեռան մեջ եւ վայրն այդ կոչում Գանձասար: Գանձերի բանալին հանձնում է լեռների տիրակալ Արջին, որը բանալին տալու էր միայն նրանց, ովքեր այդ գանձերը կօգտագործեն ի նպաստ ժողովրդի:
… Առասպելական Արջն իրեն պահ տված բանալին հանձնել է քաջարանցիներին՝ գանձերն այդ օգտագործելու հայոց աշխարհի հզորացման համար:

Ավարայրի ճակատամարտ Ըստ ավանդազրույցի՝ Այունիքի ազատանի կանանց խումբը Կապուտջուղի լեռնանցքում վրան է զարկել ու սպասել Ավարայրում կռվող ամուսիններին: Կանանց խմբին Արաքսի հովիտն իջնել արգելել է Վասակ Մարզպանի կարգած կայազորը:

Կապուտջուղի լեռնանցքը՝ աղի ճանապարհ Կապուտջուղի լեռնանցքը հին բաղացիների համար աղի ճանապարհ էր: Գրաստների քարավանները անհիշելի ժամանակներից կերակրի աղ են ներկրել Նախիջեւանից: Պատմում են, որ աղը շալակով էին բերում: Այունյաց բարբառում ծանր բեռ տեղափոխողին համեմատում են աղ շալակողի հետ: Սարի մյուս կողմում աղ ներկրողների վրա, ըստ սովորույթի, ավազակային հարձակումներ էին կատարում թուրքաբնակ գյուղերի բնակիչները, հատկապես՝ Ձորքի Շաբադինի (Շիվդինանց) գյուղացիները: Այս ամենը հովանավորում էին մոլեռանդ կրոնավորները:

Քաջարանց գյուղի հայդուկները Հայոց մեծ եղեռնի տարում տեղաբնակ թուրքերը գրավել ու հսկում էին լեռնանցքը՝ ազատություն տալով Տաճկաստանից ներթափանցող լրտեսներին: Թուրքերին սաստեցին Քաջարանց գյուղի հայդուկները: Անվանի այր Գդիչը, կրկնելով Ֆիդայի Մուրադ Սեբաստացու սխրանքը, Շիվդինանցում գնդակահարեց խառնակիչ մոլլա Ջեմիին եւ պայքարի ղեկն իր ձեռքն առավ: Թուրքերը մի առ ժամանակ խաղաղվեցին: Գդիչը Կապուտջուղի Թթու ջուր աղբյուրի մոտ տապան պատրաստեց այունեցի այրի կնոջ ու նրա փոքրիկ տղայի համար, որոնց մորթել ու շալակած աղը հափշտակել էին թուրք ղաչաղները:

Գաղթականներին հովանի եղան Կապուտջուղի վիհերն ու անձավները 1918թ. ամռանն Անդրանիկ Օզանյանի աշխարհազորը Կապուտջուղով անցավ Այունիք: Նրան միացան Գողթնի գաղթականները: Երնջակի ու Գողթնի՝ գյուղերի անլուր մնացած բնակչության մի մասի համար հովանի եղան Կապուտջուղի վիհերն ու անձավները: Մյուս կողմի՝ Բիստ, Ազա, Շոռոթ, Փառակա, Ցղնա, Թիվի գյուղերում քաջ հայդուկի անուն էր հանել բիստեցի Թուրունց Ավին: Նա ահռելի ուժ ուներ: Ութ փթանոց թնդանոթը շալակել ու բարձացել է լեռն ի վեր, մինչեւ պաշտպանական կրակակետը: Նույն բիստեցի Աղավելանց Դավթի ընտանիքը չէր հասցրել միանալ գաղթականներին: Երբ հայրենի գյուղն արդեն դատարկվել էր, անհույս ճամփա ընկավ դեպի Կապուտջուղ եւ գիշերով պատսպարվեց բարձունքի մի խորխորատում: Քանի դեռ Թուրունց Ավին կրակում էր, որոտը հեռվից լսելի էր, ընտանիքն իրեն ապահով էր զգում: Բայց ետ գնալ չէր կարելի եւ տարաբախտ ընտանիքը մոլորվեց Կապուտջուղի՝ միմյանց ագուցված ձորերում: Օդը չէր հերիքում, վեց երեխաներից երկուսը ուշակորույս էին: Ուժասպառ էր եղել Ծաղիկ նանին՝ բարուրը գրկին: Բարեբախտաբար, մոլորված ընտանիքը գիշերով հայտնաբերեցին քրդիկանցցի Նիգին ու Ներսեսը, որոնք, Գողթնի աղետը լսելով, լեռնանցքով օգնության էին գնում:

Կապուտջուղի պատմական անցումը Հիշարժան իրադարձություններ են տեղի ունեցել 1920 թվականի մարտի երկրորդ տասնօրյակում, երբ Կապուտջուղի լեռնալանջերին ձյունը դեռ չէր հալվել, իսկ սառցապատ լեռնանցքը գրեթե անանցանելի էր: Գողթնեցիների թախանձանքներին անսալով՝ Նժդեհը շտապում է ազատագրական արշավանք ձեռնարկել:
Քաջարանում հավաքված զորքը Նժդեհի հրամանով առաջ է շարժվում:
Այդ արշավանքի մասին Գարեգին Նժդեհը 1923 թվականին գրել է. «… Մեզ վիճակված էր երեւակայածից ավելին տեսնել ու կրել: Դեռ լեռան կեսը չանցած՝ Ղափուճուղի «գայլ խեղդող» բուքը զգացնել տվեց իր ամբողջ ուժը:
Արշավախմբի առաջն ընկած՝ մեկը մյուսից մոտ 50 քայլի վրա ընթացող ուղեցույց «վալադները», թվով 7 հոգի, գունավոր ձողեր խրելով իրենց անցած տարածության վրա, անձայն ու անշեղ առատ ձյունի վրա գծում են մեր ճանապարհը: Մոտ երկու վերստ տարածության վրա ձգվել է մեկը մյուսի հետեւից արշավախումբը: Թվում էր, որ ամեն մեկը լուռ մտածում է եւ խոստովանում, թե կռիվը թշնամու գերադաս ուժերի դեմ ավելի հեշտ է, քան կռիվը բնության արհավիրքների դեմ:
– Կանգնի՛ր, – հանկարծ բարձրանում է ուղեցույցներից մեկի ձայնը:
– Ճանապարհ չկա, – որպես արձագանք, լսվում է մի ուրիշի ձայնը:
Անցնում եմ առաջ՝ դեպի «վալադները», եւ դեմ առնում ճանապարհի վրա փոթորիկից ստեղծված մի մեծ ձյունե բլուրի: Ուրիշ ճանապարհ չկա: Աջից Փիրմադան բարձունքն է, ձախից՝ Փառակայի ձորը: Մնում է ճեղքել բլուրը: Մի ջոկատ անցնում է գործի եւ վերացնում խոչընդոտը: Ձորքը շարժվում է առաջ: Քիչ անց կրկնվում է նույն պատմությունը:
Անցնել Ղափուջուղի լեռնանցքը, նշանակում է բարձրանալ ու իջնել, գրեթե, նույնքան ժամանակ:
Լուսաբացին զորաշղթայի առաջին զինվորները հասնում են «Ղազարյուրդ» կոչված անհիծված վայրը, ուր բուքից բռնված ճամփորդներից շատ քչերին է հաջողվում հրաշքով խուսափել մահից:
… Արշավախմբերը, անբողջովին ձյունով ծածկված, մոտենում են Մեսրոպավանի դաշտերին: Տեղական պահակները նկատում են Ղափուջուղից իջնող մեր զորաշղթան եւ ոտքի հանում գյուղը: Մինչեւ որ մեր վաշտերը կհամախմբվեն գյուղից հեռու մի վայրում, հայտնվում է տեղական զինվորականությունը: Մարտական կարգով, ամբողջապես ձյունի մեջ, զորքը մտնում է գյուղ…» (Գարեգին Նժդեհ, Երկեր, հատ. 2, Երեւան, 2003 թ., էջ 59-60):



Իսկ կապուտջուղյան ասքը վերջ չունի՞ Կապուտջուղն անցնող ջոկատի կազմում էր 20-ամյա Տիգրան Ափուն՝ հայդուկների ջոկատի սպա Բարխուդար Առաքելովի վառոդակիրը, որը հետագայում վերհիշել է Կապուտջուղի պատմական անցումը: Նրանց նպատակն էր ձմռանը ձիերով անցել անմատչելի համարվող լեռնանցքը եւ թիկունքից անսպասելի գրոհել հովտում հանգրվանած տաճկական զորամասի վրա: Ձիերի էջքը սառցապատ թեք լանջերով անհասանելի էր թվում:
– Մի հովատակ, երբ մենք երկար ստիպում էինք լեռնանցքի տափարակից վայր իջնել ու սանձն էինք քաշում, վերջապես տեղի տվեց: Հետույքը դրեց սառած գետնին, առջեւի ոտքերը ձգեց ու գլուխը վեր պահած՝ աչալուրջ հայացքով վար սահեց, չլսված մի կանչ-խրխինջ արձակելով, մերթ ընդ մերթ դեմ առնելով դուրս ցցված քարերին: Գետնասող հետույքն այս ու այն կողմ ուղղելով, զառիվար ճանապարհ բացեց: Նրան, թեպետ դժկամ, արձագանքեցին մյուս ձիերը՝ նույն կերպ հենվեցին սառած լեռնալանջին, որն ինչպես կարող էր, ներքեւ սահեցին՝ իրենց հետ տանելով բեռները: Հայդուկները հետեւեցին ձիերին եւ այդպես՝ մաքառելով ձյունահոսքի դեմ, անվնաս հասանք ստորոտները:
Ափուի պատմածն այժմ դպրոցականներն էլ գիտեն:
Այդ սխրանքն, ինչ խոսք, այնքան զարմանալի է, որքան Հաննիբալի կամ Սուվորովի անցումն Ալպերով:

Հանքավայրի անվանակոչումը 1949 թվականին ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը քննարկեց Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի կառուցման խնդիրների վերջնական պարամետրերը: Թեպետ շինարարական աշխատանքները սկսվել էին 1940-41թթ., դրանք ժամանակավորապես դադարեցվել էին վրահաս պատերազմի պատճառով եւ վերսկսվել 1944 թվականին: Քանի որ ծննդավայրը գտնվում էր Փիրդավդան կոչվող լեռնալանջին, երկրաբանական-հետախուզական արշավախմբերը եւ նոր ստեղծված շինարարական տրեստը կոչվում էին այդ անվամբ: Անվանափոխության վերաբերյալ հիշարժան դեպք է պատմել Արմմետտրեստի կառավարիչ Վասիլի Կորոբկովը: Ըստ նրա՝ կառավարության նիստին ներկայացնելուց առաջ փաստաթղթերին ծանոթացել է Անաստաս Միկոյանը: Լսելով հայերենին խորթ Փիրդավդան անվանումը՝ նա հարցրել է, թե արդյոք այլ անվամբ չի կարելի կոչել կոմբինատը: Եվ երբ Կորոբկովը հայտնում է, որ այն գտնվում է Քաջարան գյուղի տարածքում, Անաստաս Միկոյանը հենց իր աշխատասենյակում Փիրդավան բառը փոխարինում է Քաջարան բառով եւ այդպես էլ ներկայացնում Մինիստրների խորհրդի քննարկմանը:

N_158-159 (22-23).indd 25 20.12.11 5:26:15 PM

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

Քաջարան քաղաքում ներառված բնակավայրերը եւ մերձակա գյուղերը

ՔԱՋԱՐԱՆՑ

Ողջի գետի վերնագավառի ձախակողմյան գոգավորությունում տեղակայված է Քաջարանց գյուղն իր Շիվդինանց թաղամասով: Շիվդինանց անվանումը կապված է Վանի թագավորության արեւի աստծու՝ Շիվինիի անվան հետ: Դարասկզբին թուրքալեզու մի համայնք, բնակվելով այս տարածքում, անվանումը աղավաղելով, կոչեց Շաբադին: Քաջարանց անվանումը գալիս է դարերի խորքից: Տեղացիների բարբառով Քաջարանց բնակավայրը կոչում էին Քչանանց, իսկ պղնձամոլիբդենային կոմբինատի ստեղծվելուց հետո այս անունը տրվեց Քաջարան քաղաքին: Կարծիք է հայտնվել, որ Քչանանց գյուղը Ստ.Օրբելյանի հիշատակած Կաճաճուտ գյուղն է Ձորքի վիճակում, Ալիշանը ունի նաեւ մյուս տարբերակը՝ Կաճաճա: Գետի ափամերձ տարածքում կա գլաքարերով կառուցված մի եկեղեցի: Քաջարանց գյուղի հյուսիսակողմ ձորը եւ բարձրադիր սարահարթը կոչում են Նապատ: Ըստ Ս. Ումառյանի՝ Նապատը խուռիական ջրի աստծու անունից է: Այս անունով սրբավայրեր կային Սյունիքի այլ վայրերում: Դրանք ներկայացնում են հին հայերի ջրի պաշտամունքը: Բնակավայրի եւ նրա շրջակայքի անվանումները հուշում են այն մասին, որ այն բնակատեղի է ծառայել դեռեւս վաղնջական ժամանակներից:



Լուսանկարը՝ Ա.Ավետիսյանի

Ողջի Ողջին Ձորք գավառի հին գյուղերից է (այդ մասին առաջին հիշատակությունը գտնում ենք Ղուկաս Սեբաստացու 1737թ. քարտեզում): Հարավարեւելյան կողմից նրան հարեւան է գետի աջ ափին գտնվող Արալեզ (Արալըզ) գյուղը, արեւելյան կողմից՝ Վերին Հանդը եւ Լեռնաձորը, արեւմտյան կողմից՝ Քաջարանցը:

Դարերի ընթացքում պատերազմների հետեւանքով գյուղում մշտական բնակություն են հաստատել թուրքալեզու ցեղերը: Օխչի՝ թուրքերենով նշանակում է նետաձիգ: 1919թ. գյուղը դատարկվեց թուրքերից: Տարեցները Օխչի անունը «ստուգաբանում» են որպես օխտը ղոչի (յոթ իգիթ), մերթ նաեւ որպես օխա՝ գորգագործական արհեստում օգտագործվող ուղղահայաց դրվող գերան:

1922թ. Վերին Հանդի 38, Լեռնաձորի յոթ ընտանիք կազմավորեցին Ողջի գյուղի համայնքը: 1926-ին արդեն Ողջին ուներ 350, 1939-ին՝ 439 բնակիչ:

Քաջարան քաղաքում ներառվելուց հետո նրա տեղում վեր խոյացան բնակելի շենքերը, մշակույթի պալատը, դպրոցները, հարստացուցիչ ֆաբրիկան, առեւտրի եւ կենցաղի օբյեկտները:

Հանքավան (Փիրդովդան) Ողջի գետի աջակողմյան վտակներից է Ծաղկարի (տեղացիները կոչում են Սախկառ) գետակը, որը հոսում է Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի հարավային թեւով: Մինչ հանքավայրի շահագործումն այստեղ կային հին շինությունների ավերակներ եւ հանքափորվածքներ: Քաջարանի հանքավայրում էքսկավատորավարներ Ս.Հարությունյանը եւ Ի.Խաչատրյանն աշխատանքի ժամանակ ապարների մեջ հին հանքափորվածքներից հայտնաբերեցին ածխացած փայտե պոչով բրոնզե սակր, որը պատրաստվել էր բրոնզի դարում: Հանքավայրի տարածքում մինչեւ 1980-ական թվականների սկիզբը դեռեւս կանգուն էր Փիրդովդանի հեթանոսական ժամանակաշրջանի շինությունը, բայց հանքավայրի շահագործման ընթացքում այն իսպառ քանդվեց: Այս բոլորը վկայում է այն մասին, որ Ծաղկարի գետի շրջակայքում գոյություն է ունեցել հին հայկական բնակավայր, որտեղ զբաղվում էին նաեւ պղնձի հանույթով: Վերջին դարերում այստեղ թափանցած օտարները բնակավայրը կոչեցին Փիրդովդան (պարսկերեն նշանակում է Դավթի սրբավայր), որոնք հեթանոսական շինությունը ծառայեցնում էին իրենց հոգեւոր պետքերին:

1946 թվականից Փիրդովդանի տարածքում լեռնային աշխատանքները սկսելիս աստիճանաբար կազմավորվեց եւ հիմնադրվեց Հանքավան բանվորական ավանը, որտեղ գործում էին ութամյա դպրոց, մանկապարտեզ, ակումբ-գրադարան, ջեռուցման կաթսայատուն, ճաշարան, խանութներ եւ այլ հաստատություններ: Հանքավայրում կատարվող լեռնային աշխատանքներից առաջացած փոշին, հաճախակի պայթեցումները եւ մոտիկությունը բաց հանքին բավականին վտանգավոր իրավիճակ ստեղծեցին Հանքավանի բնակչության համար: Այդ պատճառով 60-ական թվականներից Հանքավանի բնակչությունն աստիճանաբար տեղափոխվեց Ողջի բանվորական ավան: Ներկայումս Հանքավանի տեղում մնացել են ավանի ստորին հատվածի շենքերի կիսաքանդ պատերն ու ավերակները:

Շլորուտ Վերին Հանդ գյուղից դեպի հյուսիս, գյուղի ձորակով 1 կմ վեր բարձրանալով, կհասնենք մի սարահարթի, ուր տեղակայված էր Սյունիքի թագավորության նշանավոր պաշտպանական կառույցներից մեկը՝ պատմական Շլորուտ բերդը: Ներկայումս բերդի գրաված տարածքը վերածվել է արոտավայրի եւ քարակույտերի: Երբեմն կարելի է հանդիպել տապանաքարերի, որոնց վրա փորագրված խաչերը հազիվ են նշմարվում: Եթե մոտակա բարձրադիր սարահարթից բարակ ձյան շերտի առկայության դեպքում ուշադիր դիտենք բերդի ավերակները, ապա կնկատենք բերդի պատերի հետքերը, եւ մտովի կարելի է ուրվագծել պաշտպանական կառույցի պատերի տեղադրությունը եւ գրաված տարածքը: Բերդի ստորին հատվածում աճում են մեր տարածքին անսովոր սպիտակաբուն կեչիներ, որին տեղացիները սուրբ են համարում: Հավանական է, որ այդ ծառերը տնկել են Շլորուտի երբեմնի բնակիչները: Տեղացիների կողմից այս հատվածում պատահականորեն գտնվել է եկեղեցու՝ մոտ 20սմ երկարությամբ զանգ, որի վրա վազող հովազի փորագրություն կար: Շլորուտը, որպես պաշտպանական կառույց, համարվում էր նաեւ Սյունիքի թագավորության կարեւոր ռազմական հանգուցային կետերից մեկը: Բերդն իր բարձրանիստ դիրքով իշխում էր շրջակա ամբողջ տարածքի վրա: Այդ պատճառով էլ թուրք սելջուկները մինչ Բաղաբերդին տիրելը նախընտրել են Շլորուտի գրավումն ու կործանումը, որն էլ իրականացրել են 1151 թվականին:

Բնակչությունը Շլորուտը սրբատեղի է համարում եւ ինչ-որ զորություն վերագրում նրան: Ըստ հնավանդ մի զրույցի՝ Շլորուտի աղբյուրը (Շլրոտին նավը) զորացնում է սիրահարված երիտասարդին:

Կաթնառատ (Փիրմազրա) Կաթնառատը հին գյուղատեղի է, որի մասին վկայում են գյուղի շրջակայքում գոյություն ունեցող հին գերեզմանոցները: Ներկայիս գյուղը ստեղծվել է, հավանաբար, 18-րդ դարի վերջերին կամ 19-րդ դարի սկզբին՝ Փուխրուտ եւ Վ.Հանդ գյուղերից վերաբնակեցված մի քանի ընտանիքներից: Գյուղն ունեցել է եկեղեցի:

Կաթնառատ է վերանվանվել 1949թ. հունիսի 29-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ, մինչ այդ՝ Փիրմազրա: Ըստ ժողովրդական ստուգաբանության՝ Փիրմազրան նշանակել է սրբացված մարգագետին:

Արտ. Կարապետյանը գրել է. «Պղնձի նոր հանքավայրեր հայտնաբերելու նպատակով 20-րդ դարի սկզբներին շրջանի արեւմտյան հատվածում հետազոտական աշխատանքներ է սկսում Մելիք Փարսադանյանը: ....Եղած հնարավորությունները տրամադրում է Ղափանից 33 կմ արեւմուտք ընկած Փուխրուտ եւ Կաթնառատ (Փիրմազրա) գյուղերի շրջակայքի հետախուզությանը, որտեղ պղնձի եւ արճճի առկայությունն ամենահավանականն էր»:

Խորհրդային իշխանության օրոք Կաթնառատում կար 7-ամյա դպրոց, ակումբ, խանութ: Գյուղը շրջանի ճանաչված կոլեկտիվ տնտեսություններից մեկն էր, որը պետությանը մատակարարում էր միս, բուրդ եւ կաթնամթերք: 1950-ական թվականներից սկսած՝ մեծ հոսք սկսվեց դեպի նորաստեղծ կոմբինատ: Այսօր գյուղում մի քանի ընտանիքներ է, որ զբաղվում են անասնապահությամբ եւ հողագործությամբ:

Վերին Հանդ Ողջի գյուղից 3 կմ դեպի արեւելք, գետի ձախափնյա մասում, ձորակով բաժանված թեք սարահարթում տեղակայված է Վերին Հանդ գյուղը, որն այժմ գտնվում է Քաջարան քաղաքի շրջագծում:

Վերին Հանդ գյուղի պատմական անվանումը եղել է Բանիս, որը, ըստ Ս.Ումառյանի, ծագում է եգիպտական փյունիկ թռչունի՝ Բանուի անունից: Այս անունը մարմնավորում է արեւի աստծուն եւ քրիստոնեության ժամանակ դարձավ Քրիստոսի խորհրդանիշը: Հետագայում գյուղի անունն օտարների կողմից աղավաղվել եւ կոչվել է Բանիսլու կամ Փանուսլու: Գյուղի տարածքում գոյություն ուներ երեք գերեզմանատուն, որից մեկը միջնադարյան է եւ գտնվում է այժմյան գյուղի վերին հատվածում:

Ըստ տեղեկությունների՝ Ա.Մարգարյանի կազմած տոհմածառի՝ Վերին Հանդ գյուղը վերաբնակեցվել է 18-րդ դարի սկզբին՝ նախկին պատմական Բանիս գյուղատեղում:

Դավիթ-Բեկի իշխանության հաստատման տարիներին Պարսկահայքի նահանգից (Խոյ, Սալմաստ) երեք ընտանիք գալիս եւ Բանիս գյուղի մոտակա տարածքում (այժմյան Խաչենի գյուղակի մոտ՝ Քաշինձոր տեղանքում) տեղավորվում են վրաններում, քանի որ բուն գյուղում ժամանակավոր ապրում էին մի քանի եկվոր քուրդ ընտանիքներ, որոնք զբաղվում էին անասնապահությամբ: Ըստ ավանդության՝ նորեկները Շահ Աբասի ժամանակներում կամովին Պարսկաստան գաղթած տեղաբնիկների սերունդներն էին: Պատմում են, որ կտրիճներից մեկը Թաքերքի բարձունքից մի հրացանազարկ է տվել, որի արդյունքում քրդերն ինքնակամ լքել են գյուղի տարածքը: Բանիսը, որ կոչվում էր Փանուսլու, նորեկները կոչեցին Վերին Հանդ, ի տարբերություն Ներքին Հանդի, որը գտնվում է հին Կովսական գավառում եւ գոյություն ունի ցայժմ: Ենթադրվում է, որ վերաբնակները Հանդ անունը բերել են Պարսկահայքից: Նաեւ կոչվել է Հանդ Վերին Մեծ, Բանուսլու, Հանդիշեն (Ալիշան): Եկեղեցին, որ առայսօր կանգուն է՝ վերաշինված 1914 թվականին (վարպետներ՝ Մազրեցի Եփրեմ, Հանդից՝ Աբգարենց Կուքի, Թումանենց Ակի, Կյուքուց Նազար), կոչվում է սբ Աստվածածին: 1870-ական թվականներին Մեծ Հանդի սբ Աստվածածին եկեղեցում հովվել է Պողոս քահանա Մելիք-Ստեփանյանցը, որի ջանքերով 1872 թ. Հանդում բացվել է ծխական դպրոց:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ գյուղում գործում էր «Արամազդ» ընկերության երկդասյա դպրոցը, որտեղ ուսում էին առնում նաեւ շրջակա գյուղից եկած երեխաները: 1913թ. Վերին Հանդի ծխական դպրոցում ուսուցչություն է արել Ավետիք Իսահակյանի եղբորորդի Իսահակ Իսահակյանը (հետագայում զոհվել է էրզրումի ճակատամարտում):

1881 թվականի ամռանը մեծ վիպասան Ռաֆֆին Զանգեզուրում շրջագայելիս այցելել է նաեւ Վերին Հանդ:

1918թ. արեւմտահայերի գաղթը կազմակերպելիս Անդրանիկ զորավարը գիշերել է Վերին Հանդում՝ Դալաքենց (բժշկին այդպես էին կոչում) Հովհաննեսի տանը: Այդ տարիներին հայկական ջարդերից փրկված մի քանի ընտանիք համալրեց Վերին Հանդ գյուղի բնակչության կազմը:

Անվանի ազգագրագետ Ստ.Լիսիցյանը 1931թ. եղել է Վերին Հանդում եւ նկարագրել թաղումներին առնչվող մի քանի հավատալիքներ:

Մինչեւ 1968թ. երկրաշարժը գյուղում բնակվում էր 70 ընտանիք: Երկրաշարժից գյուղի տները բավականին վնասվեցին, եւ անհնար էր այնտեղ բնակվելը: Բնակիչների մեծ մասը վերաբնակվեց Քաջարանում, մնացած մասը հանգրվանեց Կապանում, Արարատում, Աբովյանում, Երեւանում եւ այլուր:

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

Լուսանկարը՝ Ա.Ալեքսանի

Լեռնաձոր (Քրդիկանց) Վերին Հանդի հարեւանությամբ, դեպի հյուսիս-արեւելք, թեք սարալանջին գտնվում են Լեռնաձոր (Քրդիկանց) գյուղի ավերակները, որտեղ միակ կանգուն շինությունը սբ Աստվածածին եկեղեցին է՝ կառուցված 18-րդ դարում: Այդ եռանավ, թաղակապ կառույցը հիմք է տալիս ենթադրելու, որ վաղնջական ժամանակներում այստեղ գոյություն է ունեցել խոշոր բնակավայր: Ըստ Ումառյանի՝ գյուղը միջնադարում կոչվել է Տիրնիք կամ Տիրնիք: Տիրը հեթանոս հայերի «դպրության եւ երազահանության աստվածն է», որի դիցարաններից մեկը ենթադրվում է հին Ձորքում:

Ուշ միջնադարում Տիրնիք գյուղանունը փոխվել է Քրդիկանցի՝ Քրդիկ իշխանի անվամբ, որին պատկանում էր գյուղը: Հայտնի է նաեւ, որ 11-րդ դարում Տիրնիքը, որպես աղանդավորների գյուղ, բանադրվել է հոգեւորականների կողմից:

1920-ական թվականներին լեռնաձորցիները բարեհունչ չեն համարել հին, պատմական գյուղանունը եւ գյուղը վերանվանել են Լեռնաձոր:

1931թ. Զանգեզուրի մեծ երկրաշարժի ժամանակ, ի թիվս այլ գյուղերի, վնասվել է նաեւ Լեռնաձորը:

1958թ. գյուղը տեղափոխվեց 2 կմ դեպի հարավ-արեւելք, Կապան-Քաջարան մայրուղու հարեւանությամբ՝ միավորվելով Խաչենի եւ Տիրնիք գյուղակներով: Լեռնաձոր գյուղի տարածքը տեղացիների մոտ պահպանվել է նաեւ Դիլար անվանումով:

Ներկայումս գյուղը թաղված է այգիների մեջ, կառուցվել են հարմարավետ առանձնատներ, ութամյա դպրոց, մշակույթի տուն, փոստատուն, մանկապարտեզ:

Փուխրուտ Փուխրուտը հին բնակավայր է: Գյուղում կանգուն վիճակում է 16-րդ դարի սբ Ստեփանոս եկեղեցին: Գյուղի մոտով է անցել Թավրիզ-Շուշի հին առեւտրական քարավանային ճանապարհներից մեկը, որի հետքերն այսօր էլ նշմարվում են:

Տաթեւի վանքի հին հարկացուցակում՝ Ստ.Օրբելյանի «Պատմություն տանն Սիսական» գրքում, գյուղը կոչված է Բեխորոտ:

Ըստ ավանդության՝ Դավիթ-Բեկի ազատագրական բանակին գյուղերից ամենաշատ քանակով ձի է նվիրել Փուխրուտը: 1736թ. այս գյուղով անցել է Աբրահամ Կրետացի կաթողիկոսը, որ գնացել էր Մուղան՝ մասնակցելու Նադիր-շահի թագադրությանը: Գյուղում բնակություն են հաստատել նաեւ Հին Ձուղայից եկած մի քանի ընտանիքներ:

Գյուղի տարածքում կան հին գերեզմանոցների, մատուռների, գյուղատեղերի հետքեր: Գյուղը խորհրդային իշխանության տարիներին հայտնի տնտեսություններից մեկն էր: Այսօր գյուղում ապրում են մի քանի ընտանիքներ, որոնք զբաղվում են անասնապահությամբ եւ հողագործությամբ:

Ձագեձոր Ողջի գետին աջից միախառնվում է Բաղաց ջուր վտակը, որի գետաբերանի երկու կողմերում տարածվում է Ձագեձորը (ոչ վաղ անցյալում Մուսալլամ գյուղը): Այս գետակի վերնագավառում գտնվում են Արջաձոր եւ Թունիս գյուղերի ավերակները՝ իրենց եկեղեցիներով եւ գերեզմանատներով:

Գետակի աջակողմ տեղանքի Արջաձորի եկեղեցին կառուցված է 14-րդ դարում եւ առայսօր կիսականգուն է, իսկ Թունիսինը գտնվում է ավերակ վիճակում: Արջաձորի եկեղեցու գավթի խոյարձաններից մեկը վերատեղակայված է Կապան քաղաքի երկրագիտական թանգարանի մուտքի մոտ:

Տարածքն ունի հիանալի բնություն՝ կուսական անտառներով եւ սառնորակ աղբյուրներով: Դարասկզբին այս գյուղերում ադրբեջանցիներ էին, որոնք խորհրդային իշխանության օրոք տեղափոխվեցին եւ միաձուլվեցին Մուսալլամ գյուղին:

Աթկըզ Նախկինում գյուղ՝ Քաջարան քաղաքի հյուսիսային կողմում, Ողջի գետին միացող վտակի ձորն ի վեր: Ղ.Ալիշանի կազմած քարտեզի վրա արեւմտահայերենին հարմարեցված տառադարձությամբ՝ Աթքյուզի, իսկ «Սիսական» աշխատության էջ 102-ում՝ Աթքիզ: Սերո Խանզադյանը թյուրիմացաբար Աթկըզ գյուղը նույնացրել է Աջիբեջի հետ: Գյուղը Քաջարանի մեջ է առնվել 1959 թվականին: Կարծիք կա, որ Աթկըզ գյուղը միջնադարում եղել է Քաշունիքի Աթղոյք գյուղի յայլատեղին, որից էլ մնացել է Աթղոյք անունը՝ հետագայում ձեւափոխվելով Աթկըզի (թուրքերեն բառ է, թարգմանաբար՝ ձի եւ աղջիկ): Աթկըզի թուրք բնակչությունը տեղահանվեց 1919թ., որի մի մասը վերադարձավ եւ բնակվեց մինչեւ 60-ական թվականներ: Աթկըզի գյուղատեղը հետագայում մտավ Լեռնաձորի պետական տնտեսության տարածքի մեջ:

Արջադուռ (Արալըղ) Ողջի գյուղի հարեւանությամբ, հարավարեւելյան կողմում՝ գետի աջ ափին (Քաջարան քաղաքի աջափնյակում) Արջադուռ գյուղն էր: Ըստ Ս.Ումառյանի՝ Արալըղ անվանումը բարբառային է եւ առաջացել է Արալեզ տեղանվան անվանափոխությունից եւ ունի տեղական հայկական ծագում: Արջադուռ գյուղը 1897թ. ուներ 148 բնակիչ: 1920-ականներին Արջադուռը միացվեց Օխչի (Ողջի) գյուղին:

Ձեյվա Ձեյվա ավանն այժմ համարվում է Քաջարան քաղաքի մի թաղամաս: Հին բնակավայր է: Հնագույն ժամանակներում բնակավայրն ունեցել է այլ անվանում, որը դեռեւս ճշգրտված չէ: Ձեյվա տեղանունը հիշատակվում է 18-րդ դարից՝ կապված Դավիթ-Բեկ զորավարի ղեկավարած ազատագրական կռիվների հետ: Ձեյվան մտնում էր հնագույն Բաղաց երկրի Ձորք գավառի մեջ՝ հին անվամբ:

Ձեյվա կամ Ձեւա անունը նորամուտ է: Վաղ միջնադարյան աղբյուրներում այդ տեղանունը չի հիշատակվում: Հին պարսկերեն այն ամրոց կամ բերդ է նշանակում:

Խորհրդային ժամանակներում Ձեյվան ադրբեջանաբնակ գյուղ էր: Ձեյվայից վար եղել է Մոլլալու գյուղը, որը 1940թ. ապաբնակեցվել է: Ձեյվայից վեր՝ նրա հարեւանությամբ, Ղովշուտ գյուղն է, որից 2 կմ հյուսիս-արեւելք՝ գետի ձախ ափին, կառուցվող ջրամբարի տարածքում եղել է Բահառլու գյուղը (նախկինում՝ Ծաղթանու), որից 2 կմ հյուսիս-արեւելք՝ Կարաբաշ գյուղը (նախկինում՝ Բեշ):

Ձեյվայի համար 1990թ. առաջարկվել է նոր անուն՝ Բաբիկավան՝ ի հավերժություն Բաբիկ Սյունու անվան:

«Քաջարան» բարեգործական հիմնադրամ. իննամյա ճանապարհի մեկ տարին

Ստեղծման տարվանից (1999թ.) հիմնադրամը սոցիալական ուղղվածություն ուներ. օգնություն էր հատկացնում սոցիալապես անապահով խավին: Բայց վերջին մի քանի տարում, քանի որ քաջարանցիների սոցիալական վիճակը էականորեն բարելավվել է, հիմնադրամն իր գործունեության ոլորտը սոցիալականից տեղափոխել է քաղաքի կառուցապատման եւ բարեկարգման ոլորտ: Այն վերջին մեկ տարվա ընթացքում ակտիվ գործունեություն է ծավալել Քաջարանի եւ շրջակա բնակավայրերում շինարարության եւ կառուցապատման գործում: Հիմնադրամի գործադիր տնօրեն Ռուբեն Ղազարյանը, ով 2007-ի հունիսի 1-ից ղեկավարում է ոչ առեւտրային այդ կազմակերպությունը, ներկայացնում է ընթացիկ տարում կատարված եւ կատարվելիք աշխատանքները:

Լուսանկարը՝ Ս.Գեւորգյանի

Ռուբեն Ղազարյան Հիմնադրամի գործադիր տնօրեն

Հիմնադրամի միջոցներով Քաջարանում շարունակվում են փողոցների բարեկարգման, ասֆալտապատման, եզրաքարերի տեղադրման աշխատանքները: Մոտ 70 բազմաբնակարան շենքի տանիքապատումը մինչեւ տարեվերջ կհասցվի ավարտին, ավելի ստույգ՝ ընթացիկ տարում նորոգվել է 11 տանիք: Հիմնադրամի նշանակալից գործերից կարելի է առանձնացնել տասը բազմաբնակարան շենքի վերելակների նորոգումը, որոնք ԽՍՀՄ փլուզումից հետո չեն գործել: Հիմնովին նորոգվում են Լեռնագործների փողոցի շենքերի աստիճանավանդակները: Տեսադաշտից դուրս չեն մնում քաղաքի շրջագծի մեջ մտնող Ներքին Հանդը, շրջակա Քաջարան եւ Լեռնաձոր գյուղերը: Լեռնաձորում լուծվում են փողոցային լուսավորության, իսկ Քաջարան գյուղում՝ դեպի գերեզմանոց տանող ճանապարհի նորոգման հարցերը, իսկ վերջերս սկսվել են Վերին Հանդ գյուղի սբ Աստվածածին եկեղեցու վերականգնման, նրա շրջակայքի բարեկարգման աշխատանքները:

Քանի որ տարին հոբելյանական է Քաջարանի համար, հիմանդրամի հիմնադիրների խորհրդի եւ հոգաբարձուների խորհրդի համատեղ որոշմամբ բազմաթիվ միջոցառումներ են իրականացվում եւ իրականացվելու: Մասնավորապես, քաղաքի մուտքը խորհրդանշող կոթողի նախագծանախահաշվային եւ կառուցման աշխատանքներն իրականացվում են հիմնադրամի միջոցներով, ինչպես նաեւ Արցախյան գոյամարտում ընկած քաջարանցի ազատամարտիկների հուշահամալիրի վերակառուցման-վերականգնման աշխատանքները: Հիմնադրամի գործունեության մի մասը միտված է մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության համար բնականոն պայմանների ստեղծմանը. Շիրվանզադեի փողոցում կառուցվում է խաղահրապարակ, Քաջարանի թիվ 1 մանկապարտեզի հիմնանորոգման եւ խաղահրապարակի կահավորման մեջ եւս լուսա ունի հիմնադրամը, որի տեսադաշտում շարունակում են մնալ դպրոցաշինության խնդիրները: Քաջարանի թիվ 1 եւ 2 դպրոցների համար ուսումնական գույք է ձեռք բերվել, բարեկարգվում են դպրոցների շրջակայքը, նաեւ յոթ դպրոցի յուրաքանչյուր ամիս դրամական միջոցներ են հատկացվում:

Այս ամենն իրականացվում է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության, Քաջարանի քաղաքապետարանի եւ «Քաջարան» հիմնադրամի սերտ համագործակցության շնորհիվ. երեք կառույց, որոնք ունեն մի նպատակ եւ ուղղվածություն՝ Քաջարան քաղաքը դարձնել ավելի բարեկարգ, նրա բնակիչների համար ստեղծել բարեկեցիկ կյանք: Իսկ շինարարական-նորոգման աշխատանքները կատարվում են եռակողմ պայմանագրի (կոմբինատ՝ վճարող կողմ, քաղաքապետարան՝ պատվիրատու եւ կապալառու կազմակերպություն) հիման վրա:

Եվս մի հանգամանք. «Քաջարան» հիմնադրամի շնորհիվ լուծվել է առաջնային սոցիալական մի հարց՝ մարդկանց զբաղվածության խնդիրը: Միայն այս տարի հիմնադրամի հետ համագործակցել են շինարարական եւ նորոգման աշխատանքներ կատարող մի քանի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ:

Մեր զրույցի ավարտին հիմնադրամի գործադիր տնօրեն Ռուբեն Ղազարյանը քաղաքի հոբելյանի առիթով իր մաղթանքի խոսքն ասաց. **«Շնորհավորում եմ քաղաքի հիմնադրման 50-ամյակի առիթով այն ակնկալիքով, որ մեր հանրապետության հանքարդյունաբերության կենտրոնը դառնա նաեւ արվեստի եւ սպորտի կենտրոն: Թող էլ ավելի հզորանա կամբինատը, որովհետեւ նա ոչ միայն քաջարանցիների բարեկեցության երաշխավորն է, այլեւ անհրաժեշտության դեպքում օգնության ձեռք է մեկնում մարզի մյուս բնակավայրերին: Քաջարանի բնակիչներին մաղթում եմ արեւշատություն, քաջառողջություն: Ցանկանում եմ՝ ոչ մեկին երբեք չլքի հպարտության այն զգացումը, որ ինքը քաջարանցի է»:**

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Այսօրվա երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ. հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այսօրվա աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԱՐԽԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՍՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ

ԱՅԺՄ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ

УКАЗ
ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА
АРМЯНСКОЙ ССР

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ԶԱՓԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՎԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻՆ ԴԱՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Սովետի Նախագահությունը ՈՐՈՇՈՒՄ Է.

Զափանի շրջանի Քաջարան քաղաքային տիպի ավանը դասել Հայկական ՍՍՌ շրջանային Ենթակայության քաղաքների կատեգորիայի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Ե.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.ՓԱՇԵՎԱՆՅԱՆ

21 օգոստոսի 1958թ.
քաղ. Երևան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1 ԿԵՏ № 1 - 7 - հոկտեմբեր 1958թ.
ПРОТОКОЛ ПУНКТ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
ЗАСЕДАНИЯ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА АРМЯНСКОЙ ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԶԱՓԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՔԱՋԱՐԱՆՑ ԳՅՈՒՂԸ ԵՎ ԴԱՎԻԴ-ԲԵԿ ԹԱՂԱՄԱՍԸ ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՎԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՏ ՄԵՋ ԵՎ ՆՈՅ ԳՅՈՒՂ ԿԻՑ ԹԱՂԱՄԱՍԸ ԶԱՓԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՏ ՄԵՋ ՄՏՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն Սովետի Նախագահությունը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Զափանի շրջանի Քաջարանց գյուղը եւ Դավիդ-Բեկ թաղամասը մտցնել Քաջարան քաղաքատիպ ավանի սահմանագծի մեջ, անջատելով Դավիդ-Բեկ թաղամասը Վերին Գիրսախաղի Սովետի կազմից:

2. Ն.Օ.3 ԳՅՈՒ-ին կից թաղամասը մտցնել Զափան քաղաքի սահմանագծի մեջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՂԵՎՈՆԴՅԱՆ

УКАЗ
ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА
АРМЯНСКОЙ ССР

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

О ПЕРЕИМЕНОВАНИИ РАБОЧИХ ПОСЕЛКОВ ДЗАГИДЗОР И КАДЖАРАНЦ И ОТНЕСЕНИИ ИХ К КАТЕГОРИИ ПОСЕЛКОВ ГОРОДСКОГО ТИПА АРМЯНСКОЙ ССР

Президиум Верховного Совета Армянской Советской Социалистической Республики
П О С Т А Н О В Л Я Е Т :

Переименовать рабочий поселок Дзагидзор в рабочий поселек Туманян и рабочий поселок Каджаранц в поселок Каджаран.

Рабочие поселки Каджаран и Туманян отнести к категогории поселков городского типа Армянской ССР.

Председатель Президиума Верховного
Совета Армянской ССР - М.Папян

Секретарь Президиума Верховного
Совета Армянской ССР - С.Гевондян

4 июля 1951 года
Протокол N 3, п.2

УКАЗ
ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА
АРМЯНСКОЙ ССР

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

О ПЕРЕИМЕНОВАНИИ РАБОЧИХ ПОСЕЛКОВ ДЗАГИДЗОР И КАДЖАРАНЦ И ОТНЕСЕНИИ ИХ К КАТЕГОРИИ ПОСЕЛКОВ ГОРОДСКОГО ТИПА АРМЯНСКОЙ ССР

Президиум Верховного Совета Армянской Советской Социалистической Республики
П О С Т А Н О В Л Я Е Т :

Переименовать рабочий поселок Дзагидзор в рабочий поселек Туманян и рабочий поселок Каджаранц в поселок Каджаран.

Рабочие поселки Каджаран и Туманян отнести к категогории поселков городского типа Армянской ССР.

Председатель Президиума Верховного
Совета Армянской ССР - М.Папян

Секретарь Президиума Верховного
Совета Армянской ССР - С.Гевондян

4 июля 1951 года
Protokol N 3, п.2

Այունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ՎԵՊ

Քաջարան

ՀԱՏՎԱԾ

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

...Վահան Մինասյանն իրեն գցեց ակումբ: Չպետք է սպասել մինչեւ երկուշաբթի: Ժողովը պետք է գումարել հիմա: Ակումբում զանազան խաղերով զբաղված երիտասարդներին ցրեց ավանով մեկ՝ տներն ու գիշերային հերթափոխի տեղամասերը՝ բոլոր կուսակցականներին շտապ ժողովի կանչելու հանձնարարությամբ: Ակումբից նա զանգահարեց ֆաբրիկա ու հանքերը:

Հավաքվեցեք ակումբ, ընկե՛ր կոմունիստներ:

Զանգ տվեց նաեւ Փոլադյանին, սրան եւս ժողովի հրավիրելով: Սակայն դիրեկտորը կտրականապես հրաժարվեց մասնակցել նման ժողովի:

Տագնապը սաստիկ էր: Կես ժամ հետո ակումբի դահլիճն արդեն աղմկում էր: Կոմունիստները ժողովի եկան տներից, հերթափոխերից, ֆաբրիկայից, ճոպանուղու գլխամասից: Շատերը լեռնագործի արտահագուստով էին: Մեծ մասը չգիտեր, թե ինչու է կոմիտեի քարտուղարը իրենց շտապ հրավիրել: Արտակարգ տագնապից մղված ժողովի էին եկել նաեւ շատ անկուսակցական բանվորներ, վարպետներ, ինժեներներ: Եկավ նույնիսկ Արտեմ Ոսկանյանը: Նա մռայլ էր, բայց ոչ զարմացած: Եկավ նստեց ետեւի շարքերում ու սրվեց:

Եկան նաեւ Ավդոտյան ու Սերաֆիմը: Շուշանը Սերաֆիմի ականջին էր հասցրել ծանր լուրը: Սերաֆիմը գունատ էր, ջղային, չարացած: Նա հորատողի արտահագուստով էր, նույնիսկ երկաթե չափիչ ձող կար ձեռքին: Դահլիճ մտավ լայն քայլերով՝ ճոճելով իր հսկա ուսերը, գնաց կանգնեց շարքերի առաջ:

– Այս ի՞նչ է կատարվում, ընկերնե՞ր, – որոտաց նա: - Սա ի՞նչ հրեշավոր չարիք են բերում մեր Ադամյանի գլխին: Լսե՞լ եք, որ նրան արտաքսում են:

– Ի՞նչ, ի՞նչ, – դեպի նա նետվեց Արսենը, որը նույնպես ժողովի էր եկել երեկոյան հերթափոխից: – Ի՞նչ ես ասում, Սերաֆի՛մ:

– Բագրատին արտաքսում են, – նորից գոչեց Սերաֆիմը: – Ահա թե ինչ եմ ասում: Մենք քնած, թշնամին արթուն: Ահա թե ի՞նչ:

Արսենը կոշտուկներով ամրացած մատներով բռնեց նրա ուսը:

– Գժվե՞լ ես, ո՞վ ասաց: Ինչպե՞ս եղավ: Ինչո՞ւ: Գժվե՞լ ես:

– Նման բարիք ուրիշի գլխում որոնիր, – Սերաֆիմը թքեց գետնին: Հայրենիքի զինվորին են անպատվում, լսո՞ւմ եք, մարդի՛կ: Հերի՛ք է, ինչքան լռել ենք: Ժողովն սկսիր, ընկե՛ր Մինասյան:

Արսենի աչքերը լցվեցին արյունով: Մտքում կենդանացան իր չորս զոհված եղբայրները: Թվաց՝ անպատվում են նրանց հիշատակը, պղծում են նրանց անհայտ շիրիմները: Թվաց՝ թշնամու ձեռքից հիմա էլ զոհվում է իր մյուս եղբայրը՝ Բագրատը: Ու՞ր է նա: Ի՞նչ է անում: Հիմա ո՞վ կա նրա ու Շուշանի մոտ: Նրա սիրտը արյունոտվեց:

– Չի՛ լինի, – գոռաց նա: – Չե՛նք թողնի: Այդ բանն անողի մեջքը կփշրե՞նք… – Նա ձեռքերը բռունցք արեց:

Վահան Մինասյանը բարձրացավ բեմ: Այնտեղ դրված էր մի սեղան եւ միայն մի աթոռ: Աթոռը ոտքով մի կողմ հրեց: Դահլիճի ծալովի աթոռներն աղմկեցին, եւ իսկույն քար լռություն տիրեց: Կարծես դեմները դիակ կար: Մինասյանը համրեց կոմունիստներին՝ երկու հարյուր ութ հոգի էին եկել ժողովի: Նկատեց միլպետի սարսափած դեմքը: Նրանցից քիչ հեռու սփրթնել էր Ցականյանը: Փոլադյանը չի եկել, արհամարհեց ժողովը, երեւի Ցական Ցականյանին էլ ժողովի է ուղարկել բանին իրեն տեղյակ պահելու: Վահանը հազաց ու որքան կարող էր հանդարտ ասաց:

– Ես ստիպված էի ժողովի օրն առաջ գցել: Կարճ կլինի մեր ժողովը, ընկերնե՛ր: Երեւի ձեզնից շատերին արդեն հայտնի է եղելությունը: Մեր բանվորական կոլեկտիվի անդամ, բոլորիս կողմից լավ ճանաչված Բագրատ Ադամյանին Ներքին գործոց մինիստրության հրամանով աքսորում են Քաջարանից: Պատճառը հայտնի չէ մեզ: Հայտնի էլ լինի՝ հորինած է ու անարդար: Ընկերնե՛ր, մենք պետք է պաշտպանենք մեր ընկերոջը: Կանխենք այդ անարդար գործը: Առաջարկում եմ ժողովի անունից հեռագիր ուղարկել մեր հանրապետության կառավարությանն ու Կենտրոնական Կոմիտեին, որպեսզի վերացվի, չեղյալ համարվի Ադամյանի արտաքսման հրամանը: Խոսեցեք, ընկերնե՛ր, ձեր կարծիքները հայտնեցեք:

Սերաֆիմ Պրուտովը տեղից գոչեց:

– Համաձայն ենք: Բացի դա, պահանջում ենք պատժել Ադամյանին հալածողներին:

Ցական Ցականյանը տնկվեց իր բարակ՝ լողլող հասակով.

– Ըստ կարգի մի ձայն, ընկե՛ր քարտուղար: Այստեղ անկուսակցականներ կան: Կարծում եմ կանոնադրության խախտում է նման հարցը դռնբաց ժողովում քննելը:

– Տեղդ վե՛ր ընկիր, – նրա փեշը քաշեց Բաբկեն Միքայելյանը: – Կանոնադրություն պաշտպանողիս մռութի՞ն նայեցեք:

– Կա՜րգը, կա՜րգը, – չզիջեց Ցականյանը: – Այստեղ անկուսակցականներ կան: Այ, մեկը նախկին գլխավոր ինժեներ Ոսկանյանը: Նա ի՞նչ գործ ունի այստեղ:

Ոսկանյանը տեղը կանգնեց: Դահլիճն իսկույն լռեց: Նույնիսկ Ցականյանը շփոթվեց, չիմացավ նստել, թե մնալ կանգնած: Ոսկանյանը պատկառելի էր իր ճերմակ մորուքով, ակնոցներով, իր մագաղաթե դեմքով: Դահլիճը հարգանքով նայեց նրան ու սպասեց, թե ինչ կասի իրենց նախկին գլխավոր ինժեները:

– Դուք ի՞նձ ակնարկեցիք, ընկե՛ր Ցականյան, – ծերունական հաճելի ձայնով խոսեց նա՝ ուղիղ նայելով իրենից ոչ հեռու կանգնած Ցականին: – Ե՞ս այստեղ գործ չունեմ, այո: Հիմարությունը սահման ունի, ընկե՛ր ավանսովետի նախագահ: Եթե անգամ ժողովը դռնփակ էլ լիներ, միեւնույն է, ես պետք է գայի ու իմ խոսքն ասեի: Ես թեեւ անկուսակցական եմ, բայց իմացեք, ես տասնապատիկ ավելի պիտանի մարդ եմ, քան դուք: Դրա ապացույցը Քաջարանն է, որի համար դուք մի քար էլ չեք ստեղծել:

– Ճիշտ է, – գոչեցին այս ու այն կողմից:

– Լավ հուպ տվեք այդ ծրիակերին, Արտե՛մ Իվանիչ:

– Ցականյանին քշել ժողովից:

– Նաեւ կուսակցությունից:

Ոսկանյանը ձեռքը բարձրացրեց ու դահլիճը նորից հարգանքով ականջ դրեց նրան:

– Ես Ցականյանին պատժելու համար չեմ եկել այստեղ: Նրա գոյությունը ոչնչով չի անհանգստացնում



ինձ: Ես եկել եմ իմ խոսքն ասելու ձեզ, սիրելի՛ կոմունիստներ, Ադամյանի կապակցությամբ: Ախր սոսկալի բան է կատարվում: Ինքներդ գիտեք: Ադամյանին արտաքսելն անօրինական է ու մեկ-երկու մարդու արարք: Ո՛չ իշխանությունը մեղք ունի, ո՛չ օրգանները: Ադամյանին արտաքսում է Գեորգի Փոլադյանը՝ այս Ցականյանի հետ, իմացե՛ք: Փոլադյանին դուր չի գալիս ո՛չ Ադամյանի, ո՛չ էլ իմ գոյությունը: Զարմանում եմ, թե ինչպե՞ս է, որ նա ինձ էլ չի արտաքսել տալիս: Նա օգտվում է իր դիրքից եւ կապերից ու մի անմեղ, արդար մարդու է ցանկանում մեջտեղից վերացնել: Ի՞նչ է, դուք քնա՞ծ եք, թե այնքան անզոր, որ չկարողանաք սանձահարել մի կապը կտրածի, ինչպիսին Փոլադյանն է:

– Նրա ձեռքերը կարճ են, չե՛նք թողնի, – գոչեցին մի քանիսը:

Ոսկանյանը մի քանի վայրկյան լռեց, ապա նորոգված ձայնով շարունակեց:

– Հենց հիմա պետք է խնդրել կառավարությանը, որ դադարեցվի Ադամյանի դեմ եղած հալածանքը: Ամոթ է: Նաեւ պետք է պահանջել, որ պատժվի Փոլադյանը: Եվ ինչո՞ւ եք հանդուրժում, որ նա շարունակի ձեր գլխին քար ջարդել, նույնիսկ վիրավորական է: Ափսոս է Ադամյանը, ընկերնե՛ր: Պաշտպանեցեք նրան Փոլադյանի մագիլներից:

Նորից Ցականյանը ծառս եղավ տեղը:

– Փոլադյանը այդ բանում խառը չէ, – գոչեց նա: – Ինչի՞ եք վարկաբեկում մեր ղեկավարին: Ես բողոքում եմ:

– Նստիր տեղդ, – դեպի նա նետվեց Արսենը: – Մեկ էլ դու չես մեղավոր: Ամեն օր մատերիալներ ես գրում սրա-նրա հասցեին:

– Քո հասցեին էլ կգրեմ, որ պաշտպան ես կանգնել մի թշնամու, – չզիջեց Ցականյանը: – Հակաէլեմենտ փեսայիդ ես պաշտպանում, պարզ է:

– Տո ես քեզ հիմա հակա ցույց կտամ, – գազազեց Արսենն ու իրար ետեւից ապտակեց Ցականյանին: Սա գոռաց ու դուրս փախավ...

Դահլիճը խլրտաց: Միլպետից պահանջեցին բացատրություն տալ: Սա նախ չեմուչում արեց, ապա առաջ գալով՝ ասաց.

– Հրամանը վերեւից է, ընկերնե՛ր, այստեղ մեզանից ոչ մեկը մեղք չունի:

– Սպասե՛ք, սպասե՛ք, – նրան ընդհատեց Մինասյանը: – Դուք այն ասացեք, այստեղ Քաջարանում որեւէ թշնամական գործ կատարե՞լ է Ադամյանը:

Միլպետը կարծես համրացավ: Միայն զարմացած, չռված աչքերով նայում էր Մինասյանին: Նա քրտնեց:

– Ի՞նչ եք լռել, պատասխանեցե՛ք:

– Դահլիճը շունչը պահեց:

– Ոչ մի վատ արարք Ադամյանի կողմից մենք չենք նկատել, – ասաց միլպետը:

– Հապա ինչո՞ւ չեք պաշտպանում նրան, – նրա երեսին գոչեց Ավդոտյան: – Ինչո՞ւ քո վերադասին չէիր զեկուցում, որ Ադամյանն անմեղ մարդ է: Չուչե՞լ ես դու, թե մարդ:

– Ես բան չգիտեմ, – ձեռքերը թափահարեց միլպետը: – Ես փոքր մարդ եմ: Ես ոչ մի մեղք չունեմ, ընկերնե՛ր: Ես հրամանի ենթակա ծառայող եմ:

Նա նստեց, կարծես այլեւս վեր չկենալու համար: Նրա փոխարեն նորից Պրուտովը թռավ բեմ: Գլխից պոկեց հորատողի սաղավարտն ու թափահարեց ցասումով:

– Ընկերնե՛ր, ընկե՛ր հանքագործներ, եղբայրնե՛ր, մի պահ լսեցեք ինձ: Ինչ-որ մեկը Ադամյանին հակա էլեմենտ է համարում սրիկայաբար: Ես վիրավորվում եմ: Դա վիրավորական է բոլորիս համար: Ե՜ս, ե՜ս… Ես ներողություն. բոլորիցդ լավ եմ ճանաչում Բագրատ Ադամյանին: Նրա հետ միասին ես կռվել եմ ֆաշիզմի դեմ: Նա իր արյունով է պաշտպանել սովետական իշխանությունը, մեր հայրենիքը: Նա հերոս էր ռազմաճակատում: Ութ շքանշան ուներ: Պատերազմից հետո նրան բանտարկել են անարդար, անօրինական: Նա հերոս է նաեւ այստեղ: Պարզ չի՞ միթե: Մենք ինքներս չե՞նք տեսել դա:

– Պարզ է, դղրդաց դահլիճը:

– Նա անաղարտ մարդ է:

– Մենք չպետք է թույլ տանք, որ մեր ընկերոջն աքսորեն: Մենք գիտենք, որ այդ անարդար բանը մեր կառավարության արածը չէ, այլ, իհարկե, ինչ-որ մեկ-երկու տականք մարդու գործ, ինչպիսին Ցականյանն է կամ Փոլադյանը: Դիմենք մեր իշխանությանը, որ Ադամյանին չպոկեն մեր ընտանիքից: Դիմենք կառավարությանը, նա կլսի մեր ձայնը, թույլ չի տա, որ անմեղ մարդուն պոկեն իր գործից, իր տնից, նորից անպատվեն, տանջեն: Այս է իմ խոսքը: Ամոթ է: Ամենաազնվագույն մարդուն են ոչնչացնել կամենում: Չե՛նք թողնի:

Բաբկեն Միքայելյանը, որ կյանքում երբեք ոչ մի ժողովում չէր խոսել, բարձրացավ բեմահարթակ, ու ձեռքերը թափահարելով, շփոթվելով, ձայնը բարձրացնելով խոսեց, պահանջեց մերժել մինիստրության հրամանը:

– Բա սա ի՞նչ բան է, ընկե՛ր կոմունիստներ, – գոչեց նա: – Բա այս կոմբինատի առաջին ստեղծողներից մեկի՝ Ադամյանի նկատմամբ նման ստորություն կանե՞ն: Մենք լեռնագործներ ենք, կոմունիստներ: Մենք մերժում ենք նրան արտաքսելու հրամանը: Միլպետի ուսադիրները պետք է պոկել, որ թույլ է տալիս նման անարդար գործ: Նաեւ մյուս մեղավորներին պիտի պատժել: Խոսեցեք, է՞: Պատասխանատվության պիտի կանչել Փոլադյանին: Ինչո՞ւ չի եկել ժողովի: Խուսափո՞ւմ է բացատրություն տալուց:

Խոսում էին, աղմկում տեղերից, իրար խանգարելով պահանջում փոխել տալ հրամանը, պատժել մեղավորներին: Պահանջեցին քննել Փոլադյանի ու Ցականյանի հարցը:

– Բագրատին չե՛նք տա, – տեղից ճչում էր Ավդոտյան: – Չե՛նք տա: Թեկուզ հազար հատ Փոլադյան տրաքվի:

Հեռագիր կազմեցեք, ընկե՛ր Մինասյան: Մեր պահանջն անհապաղ հայտնեցեք կառավարությանն ու Կենտկոմին:

– Հեռագիր տանք նաեւ Մոսկվա: – Պնդում էր Արսենը: – Իսկ միլպետին ու Ցականյանին պետք է հենց հիմա հեռացնել կուսակցությունից:

Մինասյանը բռունցքով թխկթխկացրեց լերկ սեղանը:

– Լսեցե՛ք, ընկերնե՛ր: – Աղմուկը կոտրվեց միանգամից: – Մեր անելիքը պարզ է: Մենք պաշտպանում ենք Ադամյանին: Ժողովի անունից հենց հիմա կհեռագրենք մայրաքաղաք, կպահանջենք վերացնել Բագրատ Ադամյանի արտաքսման հրամանը: Համաձա՞յն եք:

– Բոլո՜ր, – գոչեցին ժողովականները:

– Ես ձեռնպահ եմ, – ձեռքը տնկեց միլպետը: Բոլորը հռհռացին նրա երեսին: Իրար օգնելով, խանգարելով մի ընդարձակ որոշում կայացրին եւ բոլորն ստորագրեցին որոշման տակ:

Մինասյանը ժողովը փակեց, գնաց փոստի բաժանմունք իրենց որոշումը կայծակ հեռագրով կառավարությանը հաղորդելու:

Ցականյանը ծեծեց դիրեկտորի տան դուռը: Շեմքին երեւաց Մայան:

– Ի՞նչ կա:

– Ներողություն, Մայա՛ Արտեմովնա, – հեւաց Ցականյանը: Գեորգի Անանովիչը տա՞նն է:

– Ի՞նչ կա, – չար հարցրեց Մայան:

Մեծ վտանգ է սպառնում մեզ, Գեորգի Անանովիչին:

– Հրդե՞հ է:

– Չէ, ակումբում ապօրինի ժողով է: Բունտ է: Ժողովում հարձակվել են Գեորգի Անանովիչը վրա: Հաչում են նրա դեմ:

– Ի՞նչ են անում, չեմ հասկանում, – ուսերը ձգեց Մայան:

– Ասում եմ Մինասյանը բունտ է կազմակերպել Գեորգի Անանովիչի դեմ: Պաշտպան է կանգնել Ադամյանին: Վտանգ կա, Մայա Արտեմովնա:

Մայան երկու սպառնագին քայլ արեց դեպի նա:

– Ի՞նչ վտանգ: Ինչպե՞ս ես համարձակվում քո տիրոջ քունը խանգարել, շո՛ւն, – բղավեց նա: – Կորիր այստեղից եւ այլեւս չերեւաս այս շեմքին: Դե՛, հեռացի՛ր:

Փոլադյանը, որ նրանց խոսակցությունը լսում էր միջանցքի բաց դռան արանքից, քմծիծաղեց: Ամեն ինչ պարզ էր նրա համար եւ հարկ չկար նորից նույնը լսելու Ցականյանի հոտած բերանից:

Ցականյանը ետ-ետ գնաց՝ բերանը բացուխուփ անելով: Փոլադյանի մեջ անզուսպ քրքիջ առաջացավ: Բայց նաեւ ծանր ահ ընկավ սիրտը: Նրան թվաց, թե ինքը հանցանք է գործում: Դա սարսափեցրեց նրան: Ժողովը կփրկի Ադամյանին: Կփրկի՜… Իսկ ի՞նքը: Նա թափով մտավ սենյակ, տան ծառայողին ուղարկեց Ադամյանի ետեւից:

Այսօրվա երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

ԱԿՆԱՐԿ



Քաջարան

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Վերձիգ խճուղին ներքեւներում է թողնում թուզը, խաղողը, շոգը, Ղափանը: Իսկ ավելի ներքեւներում շոգը դառնում էր տոթ: Ճանապարհի հետ մեծ գյուղերի փոխարեն երեւում են փոքր գյուղեր եւ խճուղուց պոկվող խոշոր երակների տեղ՝ փոքր երակներ: Զգացվում է, որ այդ փոքր երակների վերջը մի երեք տասնյակ տուն ունեցող գյուղեր են: Քանի գնում, նեղանում են խճուղուց պոկվող ճանապարհները, դառնում արահետներ, եւ թվում է, թե մեքենան մեզ դուրս է բերելու մերկ տարածություններ երկնքի տակ: Այդպիսին է տեղանքի տրամաբանությունը. քաղաքները՝ ձորում, մեծ գյուղերը՝ ձորագլխին, իսկ փոքր գյուղերը կծկված են լինում սարահովիտներում, մի բռաչափ տեղ: Մեքենայի մեջ, տեղացիները պատմում էին, որ արջն անցյալ ամառվա այս օրերին, քոթոթների հետ, դուրս էր եկել խճուղի եւ քոթոթները խաղ էին անում ասֆալտին, որ վայրի ոչխարը..., որ վարազը... – եւ թվում է մեքենան մեզ դուրս է բերելու որեւէ ուրթ՝ շների հաչոցով եւ հանդարտիկ ծխացող լուռ վրաններով: Իհարկե այդպես չի լինում: Դեմներս միանգամից կանգնում ու շչում, շխկրտում, պայթում, քիմիա է բուրում, զրնգում, քսանհինգ տոննանոց մեքենաներով հռնդում է Քաջարանը:

Մեծ քաղաքներն իրենց ուղղանկյուն ձեւերի ու գործարանային գալարվող խողովակաշարերի գծագրության տակ կորցնում են տեղանքի ելեւէջները. բլուր չի երեւում, այլ լինում է պարզապես քաղաք: Քաջարանը չի կարողացել այդքան իրեն ենթարկել բնության վայրուվերումները: Հռչակավոր ֆաբրիկան կպել է լեռնալանջին, չի կարողացել այդ լեռան վրա իր համար գործարանային մի կարգին հրապարակ լայնացնել, եւ կառուցումները ենթարկվել են լեռան դիք թեքությանը: Տեղամասերը կամ նույն տեղամասի տարբեր բաժինները եւ կամ նույն գործողությունը կատարող մեքենաները տեղակայված են դարավանդ առ դարավանդ: Մի անգամ ինձ ասել էին Զանգեզուրի մասին՝ «Վայրենի է, դժվար է ենթարկվում, կարծես թե բոլորովին չի ենթարկվում մարդուն»: Ես ասել էի. «Լոռի՞ն է գեղեցիկ, թե Զանգեզուրը» եւ այդպես էին պատասխանել, ավելացնելով թե Լոռին նազուկ է, բահ ես խփում՝ առվին ճանապարհ է տալիս, մի ուժանակ ես պայթեցնում՝ բացվում է խճուղին:

Այո, այդպես էր: Այստեղ խրել են եւ բահ, եւ քլունգներ են բթացել, եւ ծռվել են պողպատե նիգեր եւ գերհզոր բուլդոզերներն են ընկրկել երկրի կարծրությունից, եւ ներկը մի կարգին դեռ չչորացած այդ բուլդոզերները քարի դեմ մի երկու ամսվա պայքարում թրթռացող շարժիչից, հզոր կազմվածքից վերածվել են անկենդան ջարդոնի, եւ ուժանակը, նույնիսկ ուժանակն է ընկրկել այս երկրի դեմ, – մինչեւ որ հարմարեցված տեղանքում սանտիմը սանտիմին նստել է ֆաբրիկան: Ընտելացված ոչ մի ավելորդ սանտիմ, որովհետեւ մի սանտիմի ընտելացումը միլիոն է նստում: Ֆաբրիկան հազիվ «իրեն է քաշել ոտքերը» ճանապարհ տալու անցնող խճուղուն, որ գնում ու հանգստանում է մի քիչ վերեւում Քաջարան: Դրանից դենը խճուղին շարունակվում է որպես արահետ ոտքի կամ ձիու: Ինչքան անսպասելի էր Քաջարանի հայտնվելն այդ լեռների ուսին, նույնքան տրամաբանական է խճուղու արահետ դառնալը, որովհետեւ այդ արահետի դեմը, ամբողջ հորիզոնը մինչեւ վերջին ծերպը, բռնում է Կապուտջիղը՝ վառ կանաչի ու ճեփ-ճերմակի զարմանալի համադրությամբ: Երկինքը լազուր է, արեւը մեծ է, – ձյան գոյությունը Կապուտջիղի լանջերին անհավանական է թվում: Թվում է, որովհետեւ Քաջարանը քաղաք է ըստ ամենայնի, մենք այդ քաղաքում ենք, մեր ընկալումների մեջ քաղաքը շոգն է, տոթն է, պաղպաղակն է, իսկ զովն ու ցուրտը մեր մտքի մեջ սրսփում են արվարձաններից, ավաններից, գյուղերից, արտերից դենը, ամպերի տակ, սարերի վրա: Իսկ այստեղ, Քաջարան, մի ափի մեջ են դրված մեր ընկալումների տոթ քաղաքն ու կապույտ սառույցների լեռը: Եվ լեռը թվում է անիրական, առնվազն՝ դեկորատիվ, ախար շատ միագույն են քսված եւ ձյան սպիտակը, եւ ցածրիկ խոտի կանաչը: Զարմանալին այն է, որ դեկորատիվը քաղաքը չի թվում: Փոքր է, նոր է, եթե հնուկ լիներ ինչպես մերձակա գյուղը, եթե արդեն խամրած լինեին վարդագույն տուֆի երանգները, թեքված էլեկտրասյուները, ժանգոտած՝ կամրջի մետաղը, եւ տրորված լինեին շրջապատի կանաչ տարածությունները, այդժամ քաղաքը կլիներ տեղանքին անօտարելի մաս: Բայց նոր է, փոքր է, – եւ դեկորատիվը լեռն է թվում: Որովհետեւ կան հյուրանոց, քաղխորհուրդ, ճաշարաններ, փափուկ տաքսիներ, կուլտուրայի տուն, կանացի ծնկներ ու շրթնաներկ, կա հեռախոսային հանգույց, որտեղ պատվիրում են «մի հատ միացրու Լենինգրադ», եւ բոլորովին էլ չեն զարմանում, թե այս լեռան ծայրին Լենինգրադ անունն ինչ գործ ունի, կան մոդայիկ տաբատ ու կոշիկ, հրածգարան, աստիճաններ: Այս ամենը եւ հազարավոր ուրիշ անորսալի մանրամասներ վավերացնում են քաղաքը: Այ թե գործ է արվել, հա՜...

Մոռացա նշել մի երեք բան...

Խճուղուն հանդիպակաց իջնող Ողջի շրխկան գետը պղտոր էր եւ ձորում ծծմբահոտ կար: Առաջին պահ, քանի դեռ այդ հոտը չես մասնավորել ծծմբով, մտածում ես, որ դա քիմիայի հոտն է: Բայց ասելիքս այս չէ, դրանից հետո Ողջին անընդհատ հիշեցնում է թե ինքն անցել է քաղաքի միջով: Եվ վերջապես՝ ավտոբուսի ճակատին գրված է «Ղափան-Քաջարան» եւ ավտոբուսը լավագույններից է, եւ ուղեւորները քաղաքաբնակներ են հագուստով էլ, բառապաշարով էլ, – բայց որ խոսակցությունն անընդհատ դառնում էր անցած տարի խճուղի ելած արջի շուրջ եւ կարկուտի շուրջ, որ կիլոմետրանոց երակով Կապուտջիղից իջել է դեպի ձորագյուղերի այգիները, դա վկայում էր անժխտելի մի բան. այս մարդիկ երեկվա գյուղացիներ են, էության խոր ծալքերում դեռ պահում են վախը կարկուտից ու արջից, դեռ չեն հավատում, որ կարկուտը չի ջարդելու իրենց բալը եւ արջը չի ուտելու իրենց խոզը:

Կապուտջիղը երկրորդ դժվարության լեռ է: Կապուտջիղ բարձրանալը Զոմոլունգմա մագլցել չէ, բայց եւ այնպես դժվար է, բարձրացողները ալպինիստի կրծքանշան են ուզում: Մեր լեռնամագլցողները ժամանակին մի անհավատալի ռեկորդ են խփել, շալակել բարձրացրել են առաջնորդի միլիոնավոր կիսանդրիներից մեկը, բազմեցրել Սյունյաց աշխարհի կատարին: Իսկ ներքեւում մրոտում էր Քաջարան գյուղը: Ուշացած վրդովմո՞ւնք: Ոչ, ես պարզապես արձանագրում եմ: Հետո նպատակահարմար գտնվեց գահընկեց անել այդ միլիոներորդ կիսառաջնորդին եւ ներքեւի ձորահովտում ամրացնել այս Քաջարանը: Այս վերջինը գուցե եւ չի հնչում այնպես հանդիսավոր, գուցե թե այս վերջինը իր վրա ներբող-բանաստեղծություն դժվար վերցնի կամ չվերցնի, իսկ այն եղածանցածը ինֆորմացիոն-բանաստեղծական ինչ-որ շապիկ ուներ, – բայց նոր Քաջարանի հիմնադրումը հազարապատիկ ավելի խելացի գործ էր: Պարզ ճշմարտություն: Հազար անգամ ասված: Բայց ամեն անգամ ասում ես գյուտի նման, որովհետեւ այդ քո կյանքը, քո միջոցները, ոգեւորություններն ու ծափերն են ծախսվել մոլորության վրա: Գուցե այս պարբերությունը պիտի պահեի վերջի համար, հը՞:

Երրորդ բացթողումը բոլորովին իմիջիայլոց բան է, կարող եմ ասել, կարող եմ եւ չասել: Լեռնային հստակ օդում թվում է՝ իրերը խորք չունեն, դրանից էլ՝ Կապուտջիղ ծանր սարի դեկորատիվ ընկալումը: Դրանից էլ դեկորատիվ է թվում եւ Քաջարանը՝ հանրապետության նոր քաղաքներից այս մեկը, երբ կանգնած ենք, թվում է նրա կտուրին, դիմացի Գանձասար մեծ բլուրին, որը պատճառն է քաղաքի ստեղծման, անընդհատ լայնացվող խճուղու, ֆաբրիկայի, բազմաթիվ թղթակցությունների, ակնարկների եւ այն վեպի, որ գրվել է վերջերս: Գանձասարը, որ լեռ է, բայց այդպես չեն կոչում, որովհետեւ դիմացը Կապուտջիղ կա, այդ Գանձասարը կտրում են: Եվ որովհետեւ հզոր բան են կտրում-կտրում են գերհզոր միջոցներով: Նորագույն տեխնիկայով զինված մի ամբողջ բանակ դեցիմետր առ դեցիմետր տաշում է Գանձասարը: Գանձասարը տոննա առ տոննա հոսում է ճոպանային վագոններով դեպի հարստացնող ֆաբրիկա, ֆաբրիկան հունցում է Գանձասարը եւ խնամքով, մի բուռ իսկ չթափելով, խմորն իջնում է Ղափան: Հիմա Գանձասարը մի մասով սար է, մի մասով խմոր, մյուս մասով, ասում են, Գանձասարը թռչում է տիեզերքում: Արժեքավորն անարժեքից այնպիսի հոգածությամբ է առանձնացվում, գործող տեխնիկան այնքան անթերի է, խանգարման կամ վթարի դեպքում այնպիսի տագնապ է առաջանում, որ Գանձասարի թանկագինությունը ներծծվում է եւ քո՝ կողմնակիիդ մեջ, եւ ուզում ես կռանալ, վերցնել մի բուռ Գանձասար, բռիդ միջինը, կարծում ես, կարժենա մեկ միլիարդ ռուբլի:

Մեքենաները տանկի ուժի են, երբ երեկոյան դրանց մի մասը (ոչ ամբողջը, որովհետեւ Գանձասարը վերցվում ու տեղափոխվում է կլոր օր) կուտակվում է գետափնյա գարաժում, գարաժը թվում է ննջացող լեռնային ջրամբար, որ բաց արձակվելու դեպքում կքանդի ամեն ինչ կամ, մարդու կամքով, կշինի ամեն ինչ, եւ ոչինչ չի դիմագրի նրան: Եվ այն պատճառով, որ այդ մեքենաների հզորությունը տեսնում ես նաեւ խուփ աչքերով, – չես ուզում այդ մեքենաների աստվածային ուժը այդպես ննջի գարաժում, ուզում ես այդ ուժը հռնդա, տեղափոխի, քանդի, շինի ամբողջ հզորությամբ: Դրանք այնպիսի մեքենաներ են եւ առհասարակ Քաջարան նետված տեխնիկան այնպիսին է, որ, կանգնելով դրանց մեջ, ծծելով դրանց ծխահոտը, դրանց համար վախի եւ հպարտության խառն զգացումով, մի միտք է գալիս գլուխդ, անհնար է կանգնած լինել Գանձասարի հորատման տեղամասում եւ մտածել մանր բաների մասին: Ես սա լրջորեն եմ ասում: Այդ մեքենաների մոտ դժվար է մտքով անցընել կոպեկ, ջուբակ, մանրանկարչություն, հաշվապահ հասկացությունները: Այլ ուզում ես շրխկացնել՝ մեկ միլիարդ ռուբլի, տիեզերք, օվկիանոս: Հետո իմ գլուխն էր մտել մի կապակցություն՝ «կապիտալիստական տենդ», եւ մի պահ քիչ էր մնում հասկանայի այդ տենդը:

Վարորդները ստանում են 400-500 ռուբլի: Ինչքա՞ն: Դե, 450-550 դա միջինն է: Մյուսնե՞րը: Քաջարանում, ասացին, 200-ից պակաս աշխատավարձ չկա: Ուռա՜: Սա այն փաստն է, ինչը վեր նետել է տալիս գլխարկդ: Այսպիսի խոսակցություն ընկավ ականջիս, իբր ոչ ոք չի ուզում լինել քաղխորհրդի նախագահ, որովհետեւ այդ հաստիքի համար նախատեսված փողը վերջնահաշվում ամենաքիչ աշխատավարձն է: Այն ժամանակ ես այդ խոսակցությանն ուշք չդարձրի, բայց դա երեւի զարմանալի բան էր, մտել է ու դուրս չի եկել իմ ականջից: Այդ խոսում էին թունելի ամրակապողները: Նրանք նստել էին ընդմիջման, եւ խոսակցությունն այն մասին էր, թե վերջին սառնարանը վերցրել է պահեստապետը-բեզրազմերնի գուլպան՝ պահեստապետին, փոշեծծիչ մեքենան՝ պահեստապետին, դաշնամուրը պահեստապետին, հետո՜, – ասում էր վաթսունամյա մի փայտագործ հայրենադարձ: Ես նրա հետ չէի զայրանում, ուրախանում էի. ուրեմն, եթե խանութը ստանա սառնարան, անչափս գուլպա, փոշեծծիչ, – այս մարդը ձեռքը հանգիստ կտանի գրպանը, կհանի փող, կհաշվի դրանց գինը եւ մնացածը նույն հանգստությամբ գրպանը կդնի: Իսկ նա ամենեւին էլ այստեղի շատ ստացողներից չէ: Առանց աչքը թարթելու, այս մարդը կարող է դաշնամուր գնել:

– Ուրիշ բողոք չունե՞ք:

Չունեն: Եվ խոսքը դառնում է մեր գլխավերեւը, երեք հարյուր մետր հանքաշերտի վրա հռնդացող ու պտտվող էքսկավատորի շուրջ, երբ այդ էքսկավատորի գտնված տեղը կամ անցման գիծը հատվում է երեք հարյուր մետրի խորքերում գտնվող թունելին, թունելն այդ մասերում ճկվում է, դառնում է վտանգավոր: Ամրակապողները նետվում են թունելի այդ մասը: Երեւի հողաշերտը փո՞ւխր է: Հողաշերտ չկա, ասացին, քար է: Էքսկավատորն է ծանր: Վիթխարի է ու դանդաղաշարժ, թվում է ծանրամիտ է, եթե հումոր անես՝ չի հասկանա: Այդպիսի նուրբ բաները չի հասկանա: Եթե անհամ հանաք անես՝ մի ժամ հետո գուցե թե հասկանա եւ հռհռա այդ էքսկավատորը:

Ամրակապողները լրագրողներիս չեն հարցնում՝ ի՞նչ կա, ի՞նչ չկա քաղաքում: Այս հարցը ծնվել է շատ վաղուց, երբ ճանապարհն ինչով էին կտրում եւ լուրը տեղ էր հասնում իշի դանդալոշությամբ: Թերթի, ռադիոյի, ինքնաթիռի, խճուղու, ռելսերի, ամեն օր գնացող-եկողի առկայությունը հիմա մեռցնում է այդ հարցը, որ երբեմն-երբեմն է ապրում որպես միայն ձեւ: Երեւանում ու Մոսկվայում եղածը նույն պահին եւ երեւանցուն ու մոսկվացուն է, եւ թունելախորշի այս ամրակապողինը: Հիմա հարցուփորձը կարճ է տեւում, կես րոպե, եւ մենք դուրս ենք գալիս հռնդացող ու սպիտակ լուսավոր աշխարհ: Ամրակապողները, այնուամենայնիվ, բողոք ու գանգատ ունեին: Մեզ ետ կանչեցին եւ իրար խոսք կտրելով ասացին, որ իրենց մոտ քաղժամեր չեն անցընում. քնա՞ծ են, ասացին, քաղժամ անցընողները: Ընդամենը:

Սյունյաց երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից ■
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Սյունյաց աշխարհ» ՍՊԸ ■

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

Դուրսը զրնգաց արեւի ու հռինդի աշխարհը, ապա ամեն ինչ մի պահ լռեց, ինչպես ամպրոպից առաջ, եւ ապա որոտաց հարյուր ամպրոպի ուժով: Պայթեցրին: Շերտ առ շերտ պայթեցնում են Գանձասարը: Փոշին դանդաղ, ծանրումեծ ելավ գետնից ու ճոճվելով գնաց Կապուտջիղի ուղղությամբ: Հաջորդած լռությունն այնքան հանդիսավոր էր, ասես համազարկը տրվել էր գեներալի աճյունի վրա: Թվում էր լսում ենք դիմացը փրփրող ձնաջրե գետակի զնգոցը: Եվ ապա ճոպանավագոնների շխկրտոցով, բեռնատարների տնքոցով, ծակիչների կտկտոցով, էքսկավատորի զայրույթով հռնդաց Գանձասարը:

... Երեկո է: Քաղաքի եւ հանքի արանքում, իջնող ոլորանների տակ, մեկը խոտհարք է ջրում: Բահը ձեռքին վազվզում է ջրի կողքերից, կանգնում նայում է, հետո նորից վազվզում:

– Գնա՞նք լսենք Քաջարանի պատմությունը:

– Գնանք:

Ջրվորը ծերունի էր լինելու, իմաստուն-իմաստուն խոսելու էր եւ վերջացնելու էր այնպես «Հապա, երեխեք»:

– Բարի իրիկուն:

– Բարի իրիկուն: Հարեւանս մեծ մարդ է, ես իրեն տղա կգամ, չի ամաչել, ջուրը լոբուս միջով տարել է: Հողը ծծել է ջուրը, դարձել ցեխ: Լոբին էլ նոր ցանած: Լոբին փտել է: Կարտոլի սերմը փտել է: Չի էլ ամաչում:

Մեր հասակի տղա է, ֆաբրիկայի բանվոր-ատաղձագործ, Քաջարան գյուղի գյուղացի (Քաջարանը մի մասով գյուղ է), բանակում ծառայել է, չորս երեխա ունի, աշխատավարձը 170-220 է, իր այգին գործարանը վերցրել էր (հիսունհինգ թվի պատմություն է), դիմացը տվել էր երկու այգու գին, բայց այդ փողը իրեն չէր հասել, գյուղխորհրդի նախագահը տակով էր արել, հետո բռնվեց...

– Դատավորը հարցրեց, ասաց Դարվին Համփարձումյան (Դարվին Համբարձումյան ես եմ), դու այդ փողը... էդ փողը վերջը եկավ հասավ ինձ:

Նրա ամբողջ կենսագրությունը, գումարած Քաջարանի կառուցման, Գանձասարի հետախուզման եւ շահագործման պատմությունը, մեզ համար երեւում է ընդամենը հինգ րոպեում: Այդ Դարվինի անմիջականությունն այնպիսի նվաճում է, ինչպիսին Քաջարանն է. թաքցնելու ոչինչ չունի, կասկածելու ոչինչ չունի:

– Դե ես գնամ:

– Սպասիր զրուցենք:

– Չէ, վաղը գործի եմ, պիտի հանգստանամ:

Տավարը բառաչելով իջնում է դռները, կովկիթներում փխփխալով ջերմում է թանձր կաթը: Թվում է՝ սարերում ես: էքսկավատորն ու կովկիթը նույն քառակուսի կիլոմետրի վրա: Դա Հայաստանի խորհրդանշանն է: Մի մասով գյուղ, մյուս մասով քաղաք Քաջարանը: Մեզ ասացին, որ քաղաքային խորհրդի նախագահին հաճախ են անհանգստացնում «ցանկապատային» վեճերով: Համբարձումյան Դարվինն, օրինակ, փտած կարտոֆիլի ու լոբու համար, դիմել էր քաղխորհուրդ: Այստեղ մուրճն ու մանգաղն իրար այնքան են մոտիկ, իրար այնպես են ագուցված, ինչպես գերբի մեջ է: Հետո, մի ուրիշ տեղ, ես տեսա մի ավելի հատկանշական բան: Ծիծեռնակը բույն էր ծեփել ճաշարանում, էլեկտրահոսքի հաշվիչի վրա: Դա Քաջարանի խորհրդանշանն էր:

1964թ.



Երկիրն ավեյաց

Իմ երազները՝ ծիածանաթեւ,
Իմ երազները շատ էին թեթեւ:

Իմ երազները թեւին փվեցին,
Դեպի ավեյաց երկիր չվեցին:

Ինչքան ման եկան ու չարչարվեցին,
Ավեյաց երկրում կուպ չճարեցին:

Կուպ չճարեցին, ու ջուր էլ չկար...
Ավեյաց երկրում՝ ավազ էր ու քար:

Ավեյաց երկրի ավերակներից
Իմ երազները եր եկան նորից...

Ու գլխիս վերեւ, ա՛խ, հոգնած երամ,
Երկինք խմեցին ու աստղեր կերան:

Եվ հեյտո իջան կյուրին իմ թաց.
- Սա է, - ասացին, - երկիրն ավեյաց:

Մենք այստեղ պիտի ճախրենք ու մնանք,
Թե մահ կա, այստեղ պիտի մահանանք:

Իմ երազները՝ ծիածանաթեւ,
Իմ երազները շատ էին թեթեւ:

Իմ երազները գնացին մեռան
Քարանձավներում Կապուտջիղ լեռան:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

N_158-159 (22-23).indd 31 20.12.11 5:26:23 PM

Այսօրվա երկիր
տասնօրյա թերթ

տպագրվում է 2003թ.
հոկտեմբերի 1-ից
հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Այսօրվա աշխարհ» ՍՊԸ

№ 22-23
158-159
27 օգոստոսի 2008

Վարդանանք

Ֆրագմենտ Գրիգոր Խանջյանի համանուն գոբելենային մեծածավալ ոլաստառից

Գոբելենի կենտրոնում ծիրանավոր, խոյասաղավարտ Վարդան Մամիկոնյանն է՝ հայոց հնամենի ցասման վահագնակերպ խոյանքով: Նրա գլխավերեւում Ռազմի ու Արդարության հրեշտակն է՝ Փառքի պսակը ձեռքին: Շուրջը՝ Վարդանանք: Շուրջը՝ զայրույթի ժայթքող լավա՝ ընդդեմ փղամարմին ու ճզմող օղակման՝ վասն հայրենյաց, վասն առասպելաբուխ Արարատի:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Ես իմ անուշ Հայաստանի

Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նահիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արեւն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սեւ
Եւ հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ո՛ւր էլ լինեմ, - չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

Քաջարանը կունենա իր հոգեւոր տունը

Լուսանկարը՝ Ա.Ավագյանի

Վերին Հանդի սբ Աստվածածին եկեղեցի

Մինչեւ այժմ Քաջարան քաղաքը չուներ իր հավատի տաճարը: Տարբերակներից մեկը Քաջարանում նոր եկեղեցու հիմքեր գցելն էր: Բայց որոշվեց վերականգնել կանգուն մնացած եւ իր նախաստեղծ տեսքը փոքրիշատե պահպանած Վերին Հանդ գյուղի (ի դեպ, այն մտնում է Քաջարանի շրջագծի մեջ) սբ Աստվածածին եկեղեցին: **«Պատմական գյուղ է Վերին Հանդը. եկեղեցին վերականգնելով՝ երկրորդ կյանք կհաղորդենք բնակավայրին, բացի այդ պատմաճարտարապետական արժեք ունեցող կառույցը փլուզումից կփրկվի»,** – իր կարծիքն է հայտնում «Քաջարան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մեժլում Հակոբյանը, որը այս գործի նախաձեռնողն է: Նա տեղեկացնում է, որ կառույցի եւ ճանապարհի շինարարությունը կարժենա մոտ 150 մլն դրամ: Մեր՝ եկեղեցի այցելության օրը շինարարները զբաղված էին հենապատ կառուցելով, ինչպես երեւում է, նրանք արդեն ավարտել էին եկեղեցու հիմքի ամրացման աշխատանքները: Իսկ ահա կառույցի տանիքը, որը պատված էր բուսականությամբ, ամրացնելու, բետոնապատելու անհրաժեշտություն ունի: Վերին Հանդ տանող արահետն աստիճանաբար վերածվում է կարգին ճանապարհի: Բացի դրանից՝ բարեկարգվում է եկեղեցու տարածքը, իսկ նրա հարեւանությամբ կիսախարխուլ շինությունները եւս պիտի քանդվեն: Շինարարների հետ էր նաեւ սեյսմակայուն շինարարության գիտահետազոտական ինստիտուտի առաջատար ինժեներ, փորձագետ Սերգեյ Սիմավորյանը: **«Եկեղեցին ակտիվ միջամտության կարիք չունի, կառույցը պիտի համապատասխանեցնել այսօրվա սեյսմիկ չափանիշներին, ամրացման աշխատանքներ պիտի կատարել ներարկումների հաշվին, որպեսզի պահպանվի կառույցի նախաստեղծ տեսքը»,** – ասում է փորձագետը: Ինչպես տեղեկացանք, Վերին Հանդում ընդամենը երկու ընտանիք է բնակվում: Եկեղեցու վերականգնմամբ գուցե պատմական գյուղը սկսի ապրել փոքրիշատե աշխույժ կյանքով: Եվ դրա հիմքերը կան. տակավին շինմորգման աշխատանքներ են ընթանում, հավատացյալների հոսքը եկեղեցի չի դադարում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Այսօրվա երկիր
տասնօրյա թերթ
գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այսուհայց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 8 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 3300 գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 26.08.2008թ.: